ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱԳԻՐՔ

Դ ՏԱՐԻ

ԿԱԶՄԵՑԻՆ
Վ. ՆԱՒՈՒՐՅԱՆ
Լ. ԽՈՒԴՈՅԱՆ

491.99-8
Կ-14

ՊԵՏՀՐԱՏ 1933 ՅԵՐԵՎԱՆ
ՈՒՍՄԱՆԿՀՐԱՏԲԱԾԻՆ

09.07.2013

491.99-8
Ե-14

1005-10

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱԳԻՐՔ

Դ. ՏԱՐԻ

ԿԱԶՄԵՑԻՆ՝ Վ. ՆԱԴԻՐՅԱՆ
Լ. ԽՈՒԴՈՅԱՆ

141182-ՀՀ

2498

ՊԵՏՀՐԱՏ 1933 ՅԵՐԵՎԱՆ

Տկբ. խմբագիր՝ Գ. Զհնյան
Սրբագրիչ՝ Վ. Դերոյան
Հանձնված է արտադրության 10/IV 1933
Մատրաշրված է տպագրելու 30/IV 1933
Հրատ. № 2545. Ծավալ 62×90 1 թերթում 69.200 տպ. նշ.

Գլխ. տպարան Գլավլիտ № 8117 (ը) Պատվեր № 918 Տիրաժ 40.000

ԿՐՈՒՊՍԿԱՅԱՅԻ ՆԱՄԱԿԸ ՅԵՐԵԽԱՆԵՐԻՆ

Սիրելի՛ յերեխաներ, դուք արդեն կարդացել եք Կամկուսի Կենտկոմի վորոշումը տարրական և միջնակարգ դպրոցի մասին: Դուք արդեն մշակած կլինեք կոնկրետ միջոցառումները, թե ինչպես իրականացնեք Կենտկոմի վորոշումը: Ցես ուզում եմ ձեզ հետ խոսել մի չարք խնդիրների մասին: Առաջին խնդիրը դպրոց հաճախելու մասին է, թե ինչպես պետք է կանոնավորել հաճախումը: Դուք վորոշում եք պայքարել ուշացումների և բացակայումների դեմ. այդ ճիշտ է. յեթե դուք լավ աշակերտ եք՝ պարտավոր եք անել այդ. բայց ի՞նչպես:

Նախ և առաջ պետք է տանել լայն բացատրական աշխատանք, թե ի՛նչ մեծ վնաս է բերում աշակերտին ուշանալը և դասերից բացակայելը:

Դուք ծանոթացե՛ք, թե ինչպես եր աշխատում Լենինը, ինչպես նա միշտ վորոշ ժամին, թեկուզ վորքան ել հոգնած լիներ, գնում եր ժողովի, զեկուցման: 1918 թ., յերբ Լենինը վիրավորված եր, նա շատ եր անհանգստանում, վոր ինքը հնարավորություն չուներ ներկա գտնվելու ժողկոմխորհի նիստերին, վորտեղ քննվում եյին մի չարք կարևոր խնդիրներ: Հենց վոր մի քիչ առողջացավ, այլևս հանդիստ չեր մնում, շարունակ խնդրում եր բժիշկներին, վոր չուտով թույլ տան վեր կենալու և գնալու ժողկոմխորհի նիստերին: Վերջապես նրան թույլ տվին անցնելու իր գործին:

Լենինը մոտ մի ժամանակ չեր բացակայում ժող-

կոմխորհի նիստերից: Նիստերը սովորական կերպով սկսվում էին ժամը 6-ին: Հենց վոր ժամի 6-ը խփում էր, նա անմիջապես զանգահարում էր քարտուղարին. «Լսո՞ւմ ես, դեռ վոչվոք չի՞ յեկել: Վա՛յ վոչվոք: Լա՛վ, հենց վոր 2 հոգի գան՝ անմիջապես ինձ զանգահարի՛ր»:

Հենց վոր քարտուղարը զանգահարում էր, թե յերկու կամ յերեք հոգի յեկել են, նա անմիջապես հավաքելով այդ որվա նիստի համար անհրաժեշտ թղթերը, արագ քայլերով գնում էր դեպի Ժողկոմխորհ: Նա չէր սպասի, վոր բոլորը հավաքվեն. ինքը միշտ պետք և լիներ ժամանակին: Հետևելով Լենինի որինակին, բոլորն սկսեցին գալ նիստերին՝ առանց ուշանալու: Այս պատմությունից հետո յուրաքանչյուր պլիներ և դպրոցական կուզենա անել այնպես, ինչպես Լենինը: Բայց կարող և պատահել նաև, վոր մի քանիսը սկզբում ուղղվեն, դպրոցի և կոլեկտիվի պարապմունքներին զան ժամանակին, բայց անցնի մի քանի որ, և դարձյալ ուշացում, դարձյալ բացակայում:

Լինում են դեպքեր, յերբ ծնողները թույլ չեն տալիս յերեխաներին դպրոց գալու: Ընտանեկան վատ պայմանները հաճախ ստիպում են աղջկան տնային մոնելու, կամ տանը նստելու, յերեխային խնամելու, և այսպիսի մի շարք պատճառներ, վորոնք խանգարում են յերեխաներին՝ կանոնավոր դպրոց հաճախելու: Ընկերները պետք և պարզեն և ոգնության գան:

Կարող և նաև մեղավոր լինել հենց լինքն աշակերտը, վոր ժամանակին տանից դուրս գալով, առանց չտապելու, կանգ և առնում այստեղ-այնտեղ. նայում և խանութների ցուցանակներին, կամ մի տեղ կռվի յե բռնվում մեկի հետ, կամ թե մի խումբ ընկերների հետ խոսակցության և բռնվում և ուշանում դասից: Այդ դեպքում էլ ոգնության պետք և գան լավ ընկերները: Մի վորոշ ժամանակ հարկավոր և, վոր ամենաորինակելի աշակերտներից, պիոներներից մեկնումը կցվեն

այդ աշակերտներին. նրանք պարտավոր են առավոտներն անցնել ուշացողների մոտ և մեկին գալ դպրոց, կամ ոգնել նրանց դասերին և աշխատանքներին և այսպիսով պայքարել ուշացումների դեմ: Փնտրեցե՛ք այս նամակը և ուղարկեցե՛ք ձեր կարծիքները:

Պատանե՛ք Լենինցիները, բանվոր դասակարգի պայքարում յեղե՛ք պատրաստ:

ԱՌԱՋԻՆՆ ՈՒ ՎԵՐՋԻՆԸ

I

Ճես այն տարին յերկրորդ դասարանումն եյի: Մեր դասարանում յերեք-չորս հոգի կային, վորոնք թե՛ հասակով, թե՛ տարիքով մեծ եյին մեզնից. նրանք հրամայում եյին մեզ. ուսուցիչներն անգամ նրանց հետ մի ուրիշ տեսակ եյին վարվում: Մենք փոքրիկս վախում եյինք նրանցից ու ամաչում: Թեև դասերը միշտ չդիտեյին, բայց դասերից դուրս ուրիշ ամեն բան գիտեյին: Դուրսը, խաղերի ժամանակ, նրանք եյին գեհավարն ու պարապղուխը. դասարանի ներքին գործերում միշտ նրանք եյին ամեն բան կարգադրողն ու վորոշողը. հերթով որապահ եյինք լինում բոլորս, բայց իսկական, մշտական որապահները նրանք եյին. նրանք եյին դասարանը վարում, և չարությունների աղբյուրն ել նրանք եյին և մենք բոլորս հնազանդվում եյինք նրանց, մեկ՝ վախենում եյինք ծեծ ուտենք, յերես չլսենք, մեկ ել՝ զղում եյինք նրանց գերազանցությունր և խոնարհվում:

II

Այդ արհամարհանքն ինձ շատ եր վիրավորում. յես ել եյի ուզում նրանց պես քաջ լինեմ, նրանց պես մեծ լինեմ, մարդու չարք ընկնեմ, յես ել եյի ուզում ծխեմ:

վճռել եյի մեջս, բայց սկսելը հետաձգում եյի. մի ներքին բնազդական քան պահում եր ինձ, չեր թողնում. մեկ ել վոր հայրս չատ բարի, բայց չատ ել խիստ մարդ եր. վոր իմանար, հոգիս կհաներ:

«Ա՛յ, վախկոտ եմ, ա՛յ, յերեխա յեմ. նրանք դրուստ են ասում»,—անցավ մտքովս. և այդ միտքը ոտտիկ դիպավ ինքնասիրությանս:

Պատկերացավ աչքիս առաջ մեր դասարանի ամենից մեծը, պապիրոսը դնչին, ինքնաբավական ու մի սպանիչ արհամարհանքով ինձ նայելիս...

Ել պրծա՛վ. առանց այլևայլության մտա մեր դահլիճը, ուր սեղանի վրա միչտ պապիրոսներ կային դրած հյուրերի համար, վորովհետև վոչ հայրս եր ծխում, վոչ մեծ յեղբայրս:

Վերցրի մի պապիրոս, արագ դրի դրպանս ու դուրս յելա. բայց վո՞րտեղ ծխեյի. միտք արի, միտք...հարմարը խոհանոցն եր:

Ճաչերից հետո մայրս այնտեղ իսկի չեր մտնի, և առհասարակ այդ ժամերին անցուդարձն այնտեղ դադարում եր:

III

Մնացել եյինք յես, իմ պապիրոսը և խոհանոցը: Ինձ թվում եր, թե յերեքս ել իրար եյինք սպասում: Հանդարտ քայլերով մտա և դուռն անձայն փակեցի:

Սիրտս ու վոտներս դողում եյին...

Արագ-արագ սկսեցի լուցկի վորոնել:

Լուցկի չկար վո՛չ պլիտայի վրա, վո՛չ պահարանում, վո՛չ սեղանի աչքում, վո՛չ մի տեղ:

Փետացած կանգնել, մտածում եյի՝ ի՞նչ անեմ:

Հանկարծ դլխի ընկա, վոր վառարանում կրակ կարող և լինել: Բաց արի դռնակը, դեռ պսպղում եյին փոքրիկ կայծեր:

Փոխանակ ունելիքով կամ ուրիշ բանով մի կտոր կրակ դուրս քաշելու, չոքեցի պլիտի առաջ և պապիրոսի մի ծայրը միչտ բերանս՝ մյուս ծայրը հասցրի կրակին և մի պինդ ու յերկար ձիգ տվի պապիրոսի ծուխը:

Կուրծքս լցվեց ծխով: Բարձրացա, պլիտի դուռը փակեցի և սկսեցի ագահաբար ու իրար յետևից ավելի ու ավելի խորը ներս քաշել ծուխը, միաժամանակ վախով նայում եյի դռանը, հետևում սմենմի վոտնաձայնի:

Հանկարծ զգացի, վոր սիրտս խառնում է ու դուրս պռուստ է գալիս. դեն դցեցի պապիրոսը, վազեցի դեպի դուրը և... ել չեմ հիշում:

IV

Յերբ աչքս բաց արի, տեսնեմ՝ մեր սենյակումն եմ, մայրս կողքիս նստած՝ քնքշաբար չոլում է ինձ: Տեսնում եմ նաև պես և իմ չարաբաստիկ պապիրոսը՝ առաջս, սեղանի վրա դրած:

— Ծխախոտը թույն է, աչքի՛ս լույս,— սկսեց մայրս լուրջ ձայնով, յերբ արդեն ուշքի եյի յեկել ու քիչ հանդստացել.— նա քայքայում է մարդու առողջությունը, մանավանդ մատաղ հասակում: Ինձ տուր ինձ, արևիդ մեռնեմ, պոնիկ խոսք տո՛ւր, վոր ել յերբեք ծխախոտ չես դնի բերանդ, մինչև հասուն մարդ դառնաս. իսկ նրանից հետո ինքդ կիտես,—վերջացրեց մայրս և խանդաղատանքով համբուրեց ճակատս:

Յես լալով փարվեցի մորս կրծքին:

— Մայրի՛կ, խոստանում եմ, վոր ել յերբեք ձեռս պապիրոս չեմ առնի, յերբի՛ք:

— Ո՞ւղում ես,—վրա բերեց մայրս,—այս թեթատ պապիրոսը մեկենք քո դրասեղանի պատին, իբրև հիշատակ քո ուխտի:

— Ա՛յո՛, մայրի՛կ ջան,— պատասխանեցի յես՝ իսրատես հուզված: Ցնվ մայրս իր ձեռքով մեխեց պապիրոսը պատին: Մինչև այսօր դրասեղանիս պատի

վրա տեսնում եմ այդ պապիրոսը: Ցերեսուն տարի չի անցել արդեն:

Ցես հաստատ պահեցի իմ խոսքը:

Ցեվ ամեն անգամ, երբ տեսնում եմ, որ աշակերտները, կամ հենց մեծահասակ ուսանողները պապիրոսը բերաններին՝ զրույց են անում, կամ փողոցները չափչփում, երեսս շուռ եմ տալիս նրանցից...

ՊԱՏԱՆԻ ՌԱԶՄԻԿՆԵՐ

Պիոներ ենք մենք զգաստ,
ռազմի գործին միշտ արթուն.
պիոներ ենք մենք պատրաստ,
կերթանք դեպի հաղթություն:
Պետք է մեկնեն հուր ճեռքեր,
պետք է հորդեն նոր տարափ,
մինչև ընկնեն դոռ կուռքեր:
Պետք է վառեն հրդեհներ
աշխատանքի վերելքի,
պետք է յերգեն միլիոններ
շուրջն ընդհանուր խարույկի:
—Այժմ լսե՛ք, ընկերնե՛ր,—
դարձավ նրանց կոլվարը
և սկսեց նա պատմել՝
ո՛նց է տանջվում աշխարհը...
Ցերդ ու կատակ լսում են.
և լսում են նրանք լուռ.
մատաղ սրտեր տարվում են
ու վառվում են ինչպես հուր:
—Ցերբ մենք այստեղ, ճամբարում,
ուրախ չրջան բոլորած՝
ազատության ենք տոնում
աշխատանքով իև առած,
դիտե՞ք վորքա՛ն բանվորներ

յերկրներում չատ հեռու
դեռ կրում են չղթաներ
մեծ տերերի վաչխառուս:
Բանվորների յերեխաք
այնտեղ ճնշված են ապրում.
ձեզ պես ազատ, ուրախ կյանք
նրանք դեռ չեն վայելում:
Նրանց հայրերը վորում են

վոսկինները հանքերում.
ըմբոստները տանջվում են
չղթայակապ բանտերում:
Հարուստները ապրում են
նրանց հաչվով պալատում.
բանվորները հեծում են,
նկուղներում տառապում:
Մարանչում են նրանք դեռ,
բռնության դեմ մարանչում,
վոր խորտակեն արյունկեր
կապիտալը անկշռում...
—Ցերբ վոր փորձը ճամբարի

կվատարենք մենք պատվով,
կգա որը մեծ կռվի,
մենք ել կերթանք նոր թափով,
մենք ել կերթանք կռվելու,
յերբ հրդեհվի աշխարհը...
Հե՛յ ջա՛ն, հե՛յ ջա՛ն, ջանե՛ ջա՛ն,
մեծ ե յերթը, թափը մեր,
վողջ գյուղերը քրանալան
պետք ե դառնան կոլխոզներ:
Կատակներ չեն փոփոսում
նրանք իրար ականջի...
Հերթով գնում են, շրջում
շուրջը մատաղ բանակի:
Ու գրկում ե ամենքին
դղատա քունը ճամբարում.
Հեյին քնում անմեկին
պահակները զերքերում:
Պահպանում ե ընկերը
հանգիստ քունը ընկերի,
մինչև կանգնի դիշերը
խորհրդավոր ճամբարի:
Միայն գետն ե չիշխում,
անվերջ խաղում ափերով,
կարծես նա յել ե հակում՝
քնած ճամբարն աչքերով:

—Ինչի՞ մասին ե պատմում կռվարը պիոներներին՝ խաղալիք շուրջը, ճամբարում:

—Նկարագրեցեք «Գիշերը ճամբարում» և գրի առեք՝

ա) խաղալիքի պատկերը.

բ) գրույցը խաղալիքի շուրջը.

գ) պահակները գիշերվա լռության մեջ:

ՈՒԶՈ

Ինճուղին կեռմաններով բարձրանում ե վեր:

Փխրուն, քարքարուտ ե. խանձված: Ցերեկն-յերեկն աչքովդ ե ընկնում վորևե կանաչ թերթիկ քարաբույսի, վոր արևից վախս տված, գլուխը կոխել ե քարի տակ, ապրում ե: Ժայռը կյանք ե առնում կարծես, գլարթանում: Ժայռը ժպտում ե:

Ճամբան ծանոթ ե, վոտանգավոր. անցնում ե անդունդների յեզրով. աննչան անզգուշություն—կգլորվես: Ավտոբուսը դռռալով կարում ե ճամբան, բեռը ծանր ե. մեքենան յուրահատուկ ձևով անքում ե ամեն անգամ կեռմանը շրջելիս, բնազդարար բռնում ես ավտոբուսի կողքից. վա՛յ թե հանկարծ գլորվի...

Քաղաքի ոտքն այլևս չկա. դեմքդ չոյում ե լեռնային քամին, խաղում մազերիդ հետ. դուրեկան ե: Վորքան բարձրանում ենք, այնքան ողը խտանում ե կարծես: Վերջին կեռմանն ենք պտտում: Հարևանս հազավ վերարկուն. ցուրտ ե:

Կոջոր: Առաջ՝ Թիֆլիսի առևտրական դասի ամառանոցը: Այժմ՝ մանկական քաղաք: Վերացել ե առևտրական դասը, վերացել ե և նրա ամառանոցն իր հին կյանքով ու կենցաղով: Աշխատավորության մանուկներն են այժմ ծլվլում այստեղ: Կոջորը մանուկների առողջության վրա շատ բարերար, շատ լավ ե ազդում ամառը:

Մեքենան կանգ առավ: Իջանք: Ուղեկիցս—ընկեր Սոկրատը, մի աշխույժ ու զվարթ կոմյերիտական, պիոներական ինստերնացիոնալ լազերի կոլվարներից ե: Ծռվում ենք դեպի աջ, բարձրանում փիչ վեր, դնում ենք լազեր:

Առաջներս անտառ ե, խիտ, բայց յերիտասարդ անտառ: Մատղաշ կաղնի ծառերը, բոխին, հաճարին, թզկին քամու բնթիռ հպումից որորում են գլուխները, վողջունում: Անտառի մի կող ճամբով իջնում ենք

ցած: Զով է, քիչ խոնավ: Ցերեկվա անձրևից է այդ ախորժելի խոնավությունը:

Ֆաներայից չինած տնակ— բուդկա: Կարմիր Կտոր— կամարաձև կապած. վրան դրված տաները հայտնում են, որ լազերի մուտքն է այդ:

Պիոները պահակ: Ցերկու հոգի չին. հսկում են մուտքին: Ճանաչեցին Սոկրատին և այնպիսի հրճվանքով մոտեցան ու փաթաթվեցին, կարծես տարիներով տեսած չլինեին: Մինչդեռ Սոկրատը, յերկրորդ որն է ,ինչ բացակայում է լազերից:

Ծռվում ենք դեպի աջ, կարմիր կամարի տակից անցում և նեղ կածանով իջնում ցած: Ուռո:

Անտառի մեջ դրված տնակները—մուշ-կանաչ զույնով ներկված. փեթակները լինեն կարծես:

Փեթակները:

Դուրս են թափվում այդ փեթակներից մեր ժրաջան մեղուները—պիոներները, վաղում, դիմավորում մեզ, ճիչտ կլինի ասել՝ ընկ. Սոկրատին: Անտառն աղմըկում է, ժպտուն դեմքեր, ծիծաղկոտ, վառ աչքեր, տուրդ դեմքեր, զիլ ձայն, ամուր, բրոնզե մերկ թևեր ու սրունքներ: Ինչքա՜ն սազում է այս բոլորին պիոներական կարմիր վզկապը:

***

Շեփոր: Արձագանքը բռնում է անտառը: Պիոները հավաքվում են գծին: Ցերեկոյան հաչվետվություն է: Որվա ռեժիմը կատարվա՞ծ է արդյոք...

Լազերի որապահը, գուրիացի աղջիկ Կլարա Մենարդեն կատարում է տուրդումը: Ծուրաքանչյուր կոլեկտիվի նախագահ զեկուցում է պահապանին, թե իր կոլեկտիվում քանի՛ հոգի կա, ո՛վ է բացակա, ի՛նչ պատճառով, ո՛վ է հիվանդ: Ապա Կլարան հայտարարում է, թե որվա ռեժիմը կատարված է լիովին, միայն յեղել են անկարգներ, վորոնք «մեռյալ ժամը» խանգարել են: Կարդում է անկարգների անունը, հրավիրում իր մոտ, վոր բոլորը տեսանեն:

Շեփոր: Իջեցնում է պրոչակը:

«Պիոնե՛ր, բանվոր դասակարգի պայքարի համար յեղի՛ր պատրաստ»:

«Միչա պատրա՛ստ ենք»:

Թնդում է միահամուռ, վորոտալից «միչա պատրաստ»-ը:

Կրկնվում է բոլոր լեզուներով—ռուսերեն, վրացերեն, թուրքերեն, հայերեն, գերմաներեն...

Ինտերնացիոնալ լազեր:

Պիոներները գնում են ընթրիքի, վորից հետո լինելու յե կինո-նկարի ցուցադրում:

***

Ցոյուն-Ցու:

Շեղ աչքեր: Կիսամոնղոլական թուխ դեմք, այտոսկրները դուրս ցցված: Ժիր, կայտառ մի տղա, բասկետ-բոլի վոգին: Այստեղ նրան ասում են՝ Վիկտոր-Թե: Կորեայից է յեկել: Վորբ է: Սպրում է վլադիվոստոկի ինտերնատներից մեկում: Ազատ խոսում է ռուսերեն: Ամենքը սիրում են, փայփայում, գուրգուրում: Ցոյուն-Ցուն յերգում է իր լեզվով.

«Ցյանըն ցըմուրը սոցան նոմլաե
Նայի Ֆյալկիրըն կըըդոյին գոյլը,
Նայի բումոնըն նարըլ բարիկո
Ղոյոհըն ցանցոդ է ցամարըրը խոտոդա»:

Ցոյուն-Ցույի կյանքն է այս թերևս: Կորեացի վորբը, վորբ յերեխա, կորել եր անտառում, նրան գտել եյին բարի մարդիկ և պատսպարել:

Ցոյուն-Ցույի կյանքն է այս թերևս: Կորեացի վորբը, կորած իմպերիալիստների «անտառում», ուր պատանները կարող եյին նրան հաչոտել: Ցնկել է «բարի մարդը»—խորհրդային իշխանությունը, պատսպարել իր ինտերնատում, հիմի յել ուղարկել Ուռո: Վլադիվոստոկից—Ուռո:

***

Ահա և մի աղջիկ...Տարիքին անհամապատասխան լոյով, նուրբ, համաչափ կազմվածքով, դեմքի ու մարմնի գծերը չիպ-չիտակ, բայց չիհահեր գլխով:

Գերմանուհի պիոներ:

Ոտաբ լեզու չգիտեմ, չգիտեն և նրա լեզուն: Թվում է, թե պիտի տերի աղջիկը: Բայց...

Բայց լեզու չգիտենալը բնավ արգելք չի հանդիսանում, որ պիոներները իրար հասկանան:

Ճեվ հա ճանում են...

Կոմինտերնի լեզուն:

***

Ծաւիչ կախած սահաւակ: Վրան իրար տակ նկարած—աչերոպլան, ավտո, չոպչարժ, վագոն տրա, նչ, սայլ, կրյա:

Նկարների դիմաց համարներ են կպցրել: Առաջին ոդակ, յերկրորդ ոդակ և այլն: Վերևի մասում տեղավորված և ամատիվը: Սա յուգոսլավական հաչվեառւթյուն է ամբողջ լաղերի առաջ, թե այսինչ կոլեկտիվի այսինչ ոդակն ինչպես և աշխատում: Թվանշաններն, իհարկե, փոխվում են կատարված աշխատանքի համաձայն:

Կրյայի դիմաց ոդակ չկա: Ջի յել յեղել: Այս լավ է, ուրախալի յե: Հաճախ իրար ապատնում են ոդակի անդամները.—«Ուղո՞մ ես կրյա դառնանք»...

Ո՞վ կուզի կրյա դառնալ, յերբ աչերոպլանն է սավառնում: Վոչվոք: Ահա և մի ուրիչ տախտակ: Սոցմրցման պայմանագիր և կնքված ոդակների մեջ. այդ պայմանագիրն է, վա՛յ նրան, ով թերացավ:

***

Ուձո—ինտերնացիոնալ լաղեր:

Այս—մեր Խորհրդային Միության է՝ փոքրիկ ձևով ներկայացրած: Բազմատարը, լայնալեզու:

Նոր մարդիկ են այստեղ, նոր հոդեբանությամբ, նոր կենցաղով, նոր հարաբերություններով, նոր գաղափարախոսությամբ:

Այստեղ ծանոթանում են իրար հետ, ապրում մի կյանքով, մի գործի համար, մի աչխատանքի համար, սոցիալիզմի կառուցման աչխատանքով տարված:

Վաղը մեծանալու յեն իրրև հարազատներ, իրրև վաղեմի ծանոթ-բարեկամներ, ընկերներ ու յեղբայրքույրեր, ձեռք-ձեռքի տված արչալեզու յեն առաջ, դրավելու համար նորանոր բարձունքներ, նվաճելու նորանոր դիրքեր:

Վողջո՛ւյն ձեր նոր յերթին:

— Բաժանեցեք մասերի և համապատասխան վերնագիր դրեք:

— Ինչի՞ յե նմանեցնում հեղինակը լաղերը և լաղերի աչխատանքը:

— Ո՞վ եր Ցոյուն-Ցուն, նկարագրեցեք նրա կյանքը մինչև Ուձո-ինտերնացիոնալ լաղեր դալը:

— Վորտե՞ղ և դանվում Ուձո-լաղերը և ովքե՞ր եյին ցարի ժամանակ ամառանոց գնում այնտեղ:

— Շարադրություն դրեցեք «Պիոներական աչխատանքը լաղերում» նյութի չուրջը:

ՓՈՔՐԻԿ ՆԱՎԱՍՏԻՆ

I

Սիմոնը, մի կարճահասակ, նիհար ապա, նավաստի յեր մտել Ամերիկա մեկնող նավը:

Մենակ եր յեկել, վոչվոք նրան ճամբա չեր դցում, վորը եր:

Հաղցրեն նավատուռ կտպուտյա չատիկը, կաչվե անդրավարտիկը, ան դլխարկը կարմիր ժապավենով և բզեզ դուլպաները:

Շատ սիրուն եր նա այդ դլեստով, իր մեծ-մեծ, մի

վոքը տրտում, կապույտ աչքերով և դունատ դեմքով։

Նավը հեռացավ ափից, եւ ցամաք չէր յերևում։ առջևից, յետևից, աջից ու ձախից միայն ջուր եր ու ջուր։ Անսահման, անծայր, ուժեղ, բարկացկոտ ու չարունակ որոլվող։

Ցասներկու տարեկան տղան առաջին անգամն եր այդպիսի ծով տեսնում, չփոթված եր ու անհանգիստ։

— Մի դիշեր, յերբ փոքրիկ նավաստին անուշ քնած եր, մի սաստիկ ձայն արթնացրեց բոլոր ծառայողներին։

— Եհե՛յ, եհե՛յ։ Տախտակամա՞ծ։ Դեպի առագաստները, ա՛—ռագաստ—նե՛րը։

Նավաստիներն իսկույն տեղներից վեր ցատկեցին, կարծես ուզում էին կռվի մտնեն փոթորկի հետ, վորն ավելի ու ավելի սաստկանում եր։ Մինչև անգամ ամենից մատաղահասները պետք է պատրաստ լինեին։ Ամենքին սպասում եր ծանր, լարված աշխատանք։ Ուժերը պետք եր լարել։

— Ողի տվե՛ք,—հրամայեց սպան։ Ցեվ բոլոր ծառայողները հերթով մոտենում էին, նախ հասակավորները, ապա ավելի ջահելները, իսկ վերջը՝ նույնիսկ փոքրիկները, դատարկում էին մի—մի դավաթ, վոր իսկույն լցվում եր յետևից յեկողի համար։

Միայն Սիմոնն եր, վոր չէր մոտենում։ Նրան ել կանչեցին, ու բաժանողը դավաթն առաջարկեց։

— Ներեցե՛ք, պարո՛ն... յես չեմ խմի,—արտասանեց նա դրնթե մանկական ձայնով։

— Ա՛յ քեզ անխելք,—վրա բերեց ավազ նավաստին ու ինքը դատարկեց նրա բաժինը։

Տախտակամածից իջնելիս սպան բռնեց Սիմոնի ոձիքից և յետևից զրթելով՝ բերավ նավապետի առաջև։

— Պարո՛ն նավապետ, ահա այն հիմար տղան, վոր չի ուզում ողի խմի։

— Անունդ ի՞նչ է,—հարցրեց նավապետը։

— Սիմոն։

— Պետք է սովորես ողի խմել, յերթե ուզում ես իսկական նավաստի դառնաս։

— Ներողություն, պարո՛ն նավապետ, թույլ տվեք, վոր չխմեմ։

— Նավապետը բարկացավ. եղ մի պատառ տղան ի՞նչպես եր համարձակվում իր հրամանին հակառակել։

— Պատժե՛լ սրան,—ձայն տվեց նա։

— Պահակի պաշտոնը կատարող նավաստին չարաչղուդությամբ վոլորեց պարանը, ուժեղ ձեռքով մի յերկու անգամ պատեցրեց ողի մեջ և հասցրեց Սիմոնի մեջքին։

Ամեն մի զարկին արտասունքի կաթիլները գլորվում էին Սիմոնի մեծ—մեծ, կապույտ աչքերից։

— Հիմա կխմե՞ս,—հեգնանքով. հարցրեց նավապետը։

— Շնորհ արեք, պարո՛ն, թույլ տվեք՝ չխմեմ։

— Ա՛խ, իչի գլուխ, յես քեզ համառության ցույց կտամ, բարձրացի՛ր մեծ կայմի վրա. դիշերն այնտեղ կմնաս։

Տեղ տղան աչքերը դարձրեց դեպի բարձր կայմի ծայրը, բայց հնազանդվեց և պարանի յեյարանով մագլցեց վերև։

II

Սարսափելի դիշեր եր. նավն որորվելիս կայմի ծայրն ամենից սաստիկ եր ճոճում ու թեքվում մինչև ջուրը. ալիքներն ու քամին միացրել էին իրենց վայրագ ճիգերը, վոր պոկեն այսունին կպած այդ փոքրիկ եակը։

Առավոտյան վաղ, նավապետը տախտակամածի վրա զբոսնելիս հիշեց փոքրիկ ըմբոստին։

— Հե՛յ, դու փոքրիկ,—կանչեց նա։

Լռություն։

— Իջի՛ր, չե՞ս լսում։

Վոչ մի պատասխան։

11187-ՀՏ

Մի նավաստի արագ վեր մագլցեց յելարանով և պատվ նրան կիսամեռ: Տղան վախենալով, վոր նավը թեքվելիս ինքը ծովը կընկնի, ամբողջ ուժով ու յերկու թևով զրկել եր կայմն այնպես պինդ, վոր հազիվ-հազ վայտից պոկեցին նրա սառած ձեռները: Նավաստին նրան իջեցրեց տախտակամածը, և ծառայողներից մի քանիսը արդրում եյին նրա մարմինը, մինչև վոր ուշքի յեկավ:

Ցերը կարողացավ նստել, նավապետը մի մեծ բաժակ ոդի ածեց.

— Դե հիմա խմի՛ր տեսնեմ:

— Ներեցե՛ք, պարո՛ն, Թուլլ տվեք՝ չխմեմ:

— Ցես հակառակություն չեմ սիրում: Մինչև չխմես, ուտելու բան չես ստանա:

— Մի՛ նեղանաք, պարո՛ն նավապետ, յես չեմ կարող. ուզում եք ասեմ՝ ինչու չեմ կարող:

— Ասա՛ տեսնեմ՝ ի՛նչ ես ասելու,—հեգնեց նավապետը:

— Ժամանակով մենք չատ բախտավոր եյինք, լավ եյինք ապրում, բայց հայրս սկսեց հարբել և այլևս այնքան չեր վաստակում, վոր կարողանար տունը պահել: Պարապի տակ ընկանք: Ծախեցին մեր տունը, մեր բոլոր ունեցած-չունեցածը: Այդ բոլորն այնպես ազդեց իմ խեղճ մայրիկի վրա, վոր նա հիվանդացավ: Մեռնելուց առաջ եր, վոր կանչեց ինձ և ասաց. «Սիմո՛ն, դու դիտես, թե հարբեցողությունն ինչ դարձրեց քո բարի հորը: Ցերդվիր ինձ, վո՛րդի, վոր յերբե՛ք, յերբեք ոդի չես տանի բերանդ»: Ո՛հ, պարո՛ն նավապետ, մի՞թե կուզենայիք, վոր մեռնող մորս տված յերդումս մերժեյի: Ցեմ կարող, պարո՛ն նավապետ, չեմ ուզում:

— Նավապետի անչքերին արցունք յերևաց: Զզացված՝ զրկեց վոքրիկին և ասաց.

— Վո՛չ, վո՛չ, հրաշալի՛ տղա, պահի՛ր յերդումդ և յերբեք մեկը քեղ ստիպի խմել, յե՛կ ինձ մոտ: Իսկ քո

դուր կրած պատժի փոխարեն ահա ա՛ռ այս հարյուր ֆրանկանոցը և ինչ ուզում ես՝ արա:

Հետո դիմելով չուրջը կանգնած հին նավաստիներին, ասամների արանքով արտասանեց.

— Աչքի լույսի պես պահպանեցե՛ք այս տղին, ե՛յ դուք, ծովի հրեշներ. սրանից մարդ դուրս կգա:

— Հարբեցողություն ի՞նչ վնասներ և տալիս և ո՞վ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՅԵՐԳԸ

Մի յե՛րգ դիտեմ յես աննման—
Հզոր մուրճի թափի նման,
Վորոտի պես հատո՛ւս, խրո՛խտ—
Մի յե՛րգ դիտեմ յես աննման:

Ծնվել ե նա մութ հանքերի
Մեռտալական յերակներից
Ու ճայն առել քլունգների
Ցասկոտ ու չեշտ հուր զարկերից:

Մնունդ առել, ջիղ ու արյուն՝
Բանուկ, ուժեղ բազուկներից,
Գործարանը խանդ ու ավյուն
Ընչել նրան իր ժխորից:

Չմայք ունի յերգս այնպես,
Հոգսի ժամին թե վոր յերգես՝
Թախիծ ու վիշտ կչքանա—
Լքված հոգուն նեցուկ ե նա:

Չե՛յ, իմ յերգը միշտ աննման—
Հզոր մուրճի թափի նման,

Վորոտի պես հատո՛ւ, խրո՛խտ
Մի յե՛րգ գիտեմ յես աննման։

— Վո՞րն է բանաստեղծի «աննման յերգը»։
— Ի՞նչն է այդ յերգի հմայքը։

ՅԵՐԲ ԹԱՓՎՈՒՍ ԵՅԻՆ ՋՐԵՐԸ

(ՀԱՏՎԱԾ ՎԻՊԱԿԻՑ)

— Մեր բրիգադ, եսա՛ղ...
— Հավաքվե՛ք, տղե՛րք...
— Հե՛յ, Ներսե՛ս, վազի՛ր...
— Եսոր եվ ամոթով դուրս չգանք, հա՛, թե չե սարը կծիծաղի...
— Թեղ ոլ չանըմ, ե՛...
— Ընկերնե՛ր, ջուհարը սառավ...
— Բրիգադների ջոկվենք...
— Մեր բրիգադ, առա՛ջ...
— Սառա՛ջ...

Յերկու վիթխարի ժայռեր, ասես կախ ընկած ոդից, մի հոյակապ կամար եյին կապել լեռնանցքի մուտքի վրա։

Այդտեղ հավաքվել եյին գորշ հանքահատուտանեքով, պղնձի լեռան հետ անվերջ մարտնչող, պղնձի նման դեղին, ամուր մկանունքներով հանքափորների խմբեր։

Այդտեղից բացվում եր լեռան յերեսքը։

Այդտեղից ճյուղատատ յեղևնու նման անցքերը յերկաթնաճիպ ուխտերով նետվում են դեպի լեռան ժայռահատ կրծքավանդակը։

Ամեն առ խոսք յերգելով կովի վոգևորիչ յերգեր, գնում եյին հանքափորները գորշ հանքահատուտանեքով, բահերով ու քլունգներով զինված։ Գնում եյին կռիվ լեռան դեմ։ Գնում եյին, վոր քլունգով պոկոտեն լեռան մարմինը։

Ձե՞ վոր յերկիրը պղինձ է ուզում։

***

Ուզինները բաժանվեցին։

Գետի Ղևոնդի ղեկավարությամբ Մարտունու անվան հարվածային բրիգադը յերբրդ վերստի վրա թեքվեց դեպի ճախ ու կանգ առավ Նոյեմբերյան նախամուտքի առաջ։

Ցետևից չարքերը սեղմվեցին առաջիններին։ Կանգ առան։

Նույն այդ ժամանակ հոսող ջրերի հետ փլվեց յերկու ահագին հողաթումբ, և լճացած ջրերը ճողփացին ուժգին թմփոցից։

— Դե՛, ի՞նչ եք կանգնել, առա՛ջ...

Ցետևի չարքերից սրան ու նրան հրելով, կամյերթին հասուկ աշխուժությամբ, առաջ յեկավ Հրանտը։ Գորշ գեմքի վրա մխայն աչքերն եյին, վոր փայլում եյին խանդավառ և վորոնց մեջ եր պոնվում նրա ամբողջ յեռանդը։

— Վանդալներ ե...
— Պահա՛...եղ ի՞նչ վանդ ե...
— Փուլ կգա...
— Դե՛, տղե՛րք...
— Առա՛ջ...

Գետի Ղևոնդն աջ ձեռքում կարբիտի պլպլացող լամպը, ձախում յերկաթյա բրիչը, առաջինն ինքը ճեղքեց ահագին ցեխաջուրը, իսկ նրանից հետո քոլեգի Ներսոն, Հրանտը, Սեյֆուլլան, հետո մյուս Լլապինդ հանքափորները, յերիտասարդ քանդողները բրոնզե դեմքերով։

Նոյեմբերյան նախամուտքը քան մեծ յերկարությամբ ծածկված եր ցեխաքլուններով ու ջրով։ Նրան-

ցից հետո ամուր պատնեշներն արդելում էին ջրերի հոսանքը դեպի հանքահորերը:

Բրիգադները պայքարելով ջրի հոսանքի դեմ, անցան իրենց հանքահորերը:

Յերբեմն-յերբեմն նախամուտքից ահռելի թմփոցներ էին հասնում հորերում աշխատողների ականջներին. բանվորներից վոմանք կանգ էին առնում մի պահ և պոչում՝ քրտնաթոր ճակատները սրբելով:

— Պա՛հ, քու տերը մեռնի...

— Փլելու յե անտերը...

— Վախել մի՛...

— Զթուլանաք, տղե՛րք...—հնչում էր քեռի Ղևոնդի վոգևորիչ ձայնը, վորից հետո բարձրանում էին հաբալածող քլունգներն ու պոկոտում պղինձը լեռան հևացող կրծքից:

Մուտքի առաջ հանդիստ էին ջրերը: Սառրերիբյա առվակներով թափվում էին նրանք, ճողփյունով թափվում էին պատերից ու վերից և իրենց հոսանքների հետ թափում նաև քար, ավազ, հողաթմբեր:

Ու յերբ թափվում էին ջրերը, յերբ ահագին հողաթմբերը պոկոտվելով չրըխում էին ջրերի մեջ, լքած տեղից յելնում էր «սարի բանաստեղծ» Հրանտ Ջուհարենցն ու իր վառվռուն աչքերը փայլեցնելով՝ պոչում վոգևորված:

— Ե՛խ, տղե՛րք, և այսպես, թափվում են ջրերը, և հողն է քանդվում, և քարը, ու յերդում են ջրերը, նրանք էլ մեր յերդի հակառակն են յերդում...

Թող թափվեն ջրերը, նրանք մեզ այսպես հաղթել չեն կարող, մենք կբարձրացնենք մեր քլունգները և այսպես, նրանց հակառակ յերդը կերդենք...

Ցեվ նրա բարձրացած քլունգն իջնում էր ժայռի կրծքին, ղրնգում, յերգում ինչվոր յերգ:

Այդ պղնձի յերգն էր՝ մելիոնավոր յեղանակներով:

Նախամուտքից լսվող թմփոցների հետ, մի պահ հանքափորների մոտով անցնում էր, վոր նախամուտքը կարող է փուլ գալ և իրենց հավիտյան գրկել յուր աչքարհից... Սակայն մի պահ միայն, իսկ յերբ բարձրանում էր «սարի բանաստեղծ» Հրանտ Ջուհարենցի քլունգը՝

— Վապռնեակա, դավա՛յ...

— Լցրե՛ք, տղե՛րք...

— Հո՛պ...ատա՛յ...

— Դը՛ռա, հայդա՛...

Ցեվ պղնձով լցված վագոնեական դուրս էր սլանում պղնձահանքից դեպի ձուլարան: Իսկ հանքահորերում գրնգացող քլունգների հետ միասին՝

— Առա՛չ, ընկե՛ր, մի՛ վհատիր,
Անվախ նետվենք դեպի կռիվ...

Ու յերգը հնչում էր մելիոնավոր յեղանակներով:
Պղնձի յերգն էր այդ:

ՖՍԱՆՎԵՏԻՆ

Անապատում նրանք ընկան,
Դատակարգի աչքից հեռու:
Անդրկասպյան ավազներում,
Անապատո՛ւմ նրանք ընկան:
Լիքը բորենին բրիտանական
Վոխից վոռնում էր, հրհռում,
Անապատո՛ւմ նրանք ընկան,
Դատակարգի աչքից հեռու:

Միշա նույն կրակն է ինձ հուզում—
Կռվել ձեզ պես հերոսաբար.
Անմահրելի ու անզուգար
Միշա նույն կրա՛կն է ինձ հուզում:
Մահն ընդունել ձեզ պես հզոր
Ու թշնամուն նայել հպարտ—

Միշտ նույն կրակն ե ինձ հուզում
Մեռնել ձեզ պես հերոսաբար։

Նրանք ապրում են կենդանի
Ամենօրյա մեր պայքարում.
Թարմ ու վառման, վորպես արյուն,
Նրանք ապրում են կենդանի։
Ըմբոստ վոգին Շահումյանի
Շրջում ե դեռ, դնկավարում.
Նրանք ապրում են կենդանի
Ամենօրյա մեր պայքարում։

Կարմրակրակ լուսաբացի,
Լույսի համար նրանք ընկան
Այն վիթխարի հերոսական
Կարմրակրակ լուսաբացին։
Ցեվ արյունով Քոռնվեցի
Լուսաբացը աչներկ հագավ.—
Դրա համար նրանք ընկան
Կարմրակրակ լուսաբացին։

ՎԵՐՋԻՆ ԽՈՍՔԸ

Սպիտակների հեծելազորը չղթայեց գյուղը։ Աչալուրջ հետևում եյին նեցս ու դուրս անողներին։

Խուզարկում եյին տները, տակն ու վրա եյին անում ամեն ինչ։

Նրանց հեռանալուց հետո տունն ավերակի յեր վերածվում, կարծես ամեն ինչ դլխիվայր եր շուռ տված. իսկ յերկաթապատ ծաղկավոր անղուկները դատարկվում եյին խուզարկության ժամանակ. նրանց միջից կտորեղենը, սիրուցներն ու չալերն անհետանում եյին...

Հերթը հասավ Վանյայի տանը։

— Ա՛հա, ա՛յ թե վորսող ե։

Վանյուշան չհարցրացավ տեղնել՝ ո՛վ եր այդ տղը։ Հարձակվեցին նրա վրա, բռնեցին ու քարշ տվին։

— Մայրը վրա վազեց, ուզում եր պաշտպանել, չթողնել, վոր տանեն, սակայն չարաղեմ սպան թաթախարեց ձեռքն ու տարձանակի կոթով խփեց մոր դլխին։ Մայրը ճչաց. աչքերը դուրս թռան կոպերից, ցնդվեց, ընկավ հատակին։ Արյան ալ չվիճերը ներկեցին հատակը։

Վանյուշային բերին վարչություն։ Բազկաթոռի վրա նստել եր հրամանատարը՝ սաթե ճխտամորճը բերնին, բեղերն եր վոլորում։ Նրա կողքին կանդնած եյին յերկու քաղաքացիներ։

Վանյան նայեց ու ճանաչեց յերեկվա հետապնդողներին։

Վաչտապետան ակնոցները քթին դրեց, վոտից դլուխ չափեց Վանյային և դիմելով մյուս յերկուսին, հարցրեց.

— Սա յե, այնպես չե՞,

— Ճիշտ այդպես, ձե՛րդ աղնվություն։

— Մոտեցի՛ր. լսի՛ր. մենք դիտենք, վոր դու թուռցիկներ եյիր տարածում։ Գիտե՞ս՝ ինչ ե նշանակում այդ։

— Գիտեմ,—համարձակ պատասխանեց Վանյան, կարծես նրան դյուղի ճամբան եյին հարցնում։

— Դե ուրեմն պատմի՛ր ամեն ինչ անկեղծորեն։

— Իսկ ի՛նչն ե ձեզ հետաքրքրում։

— Լռի՛ր, ավել-պակաս մի՛ խոսի,—գոչրացավ վաչտապետը։

Մենք գիտենք, վոր դու բայլևիկի տղա յես, գիտենք, վոր հայրդ թաղնված ե...

— Ավելի լավ. ել ինձնից ի՞նչ եք ուզում։

— Դու պետք ե ասես՝ վո՞րտեղ ե հայրդ։

— Ջե՞ վոր դուք գիտեք, ել ինչո՞ւ յեք ինձ հարցնում։

— Սրիկա՛, ասա՛՝ վո՞րտեղ ե հայրդ։

— Ջղխտեմ,—հանդիմա պատասխանեց Վանյան. իսկ մտքում չարունակ կրկնում էր.—

«Դու բանվորների ու գյուղացիների բարեկամն ես»:

— Թե չես ասի, քեզ կթնդանեք:

— Իսկ մենք չենք ուզում ձեզ պատասխանել:

— Այդ ո՞վ է «մենք»-ը, թույլ ավելք հարցնել,—նենդությամբ վրա բերեց վաչտապետը:

— Մենք, կոմսոմոլներս ու կարմիր հետախույզներս, մենք չենք դավաճանի աշխատավոր ժողովրդին:

— Իսկ չա՞տ եք դուք,—դռռաց վաչտապետը:

— Շա՜տ, ամբողջ աշխարհը:

— Ա՛խ դու...քեզ ցույց կտանք վողջ աշխարհ, հասը-եղուց Մոսկվան կվերցնենք...Ամբողջ աշխա՛րհը...

— Վո՞նց չե. գորտը փքվեց, բայց տրաքվեց:

— Ինչ ասացի՞ր, լակո՛տ,—ու ձեռքի մտրակը չրխկաց, ճաղկելով Վանյայի այտը:

Վանյուշան հեգնելով ժպտաց:

— Ուժը ձեր կողմն է, հետո՞,—հարցրեց նա:

— Հետո-կտեսնես. եյ՛, պատրա՞ստ ես:

— Հրաման քեզ, պատրաստ ե:

— Դո՛ւրս տարեք:

Վանյային դուրս տարան. բերին պարտեզը. կանգնեցրին ծառի տակ. ճյուղից կախված եր պարանը:

— Հագցրե՛ք տղակը:

Վանյայի վիզն անցկացրին տղակը:

— Ցերեկ չես ասի՝ վորտեղ են ձեր բայլեխիները, կխոսանք. մնալիս ենք ցերեկ լրիվ ժամանակ:

Վանյան լուռ եր.

— Մի լրիվ...

Վանյան նայեց չուրջը. կազակներն ու սպանները խռնված եյին այդտեղ. ահա և բանվորները—նրանց զոռով եյին բերել, վոր ներկա լինեն Վանյայի մահապատժին...

Ցերը նա աչքերը բարձրացրեց, տանիքների վրայով տեսավ իր ծանոթ անտառը հեռվում, ուր նա գնում եր կաղին հավաքելու:

Լեռան կանաչազարդ գագաթին աչնան արևի չողերից գորգրգուրված, վոսկեզոծվել ու ժպտում եր:

Այս բոլորը՝ արևը, լեռները, թռչուններն ասես խոսում եյին, կանչում Վանյային.—

Ինչպես լա՛վ և ապրելը, տե՛ս, իսկ դա՛ս, վանյուշա, ուզում ես մեռնել. ինչո՞ւ. ասա՛, հայտնի՛ր նրանց, և դու կապրես, կաչխատես, կչքնես, և այս բոլորը քեզ հաճույք կպատճառի. դե ասա՛, ասա՛ նրանց ամեն բան:

— Ցերկու բոպե,—հնչեց լռության մեջ, ասես զանգի դողանջ լիներ:

Վանյան սթափվեց. բերանը բաց արեց, վոր խոսի, կարծես մեկը հուսլ եր տվել կոկորդը:

— Ընկերնե՛րդ մահը քո մահն ե. եյլի պիտի մանես Հանքերը և այնտեղ քո գերեզմանը դանես: Ո՞վ ես դու. աշխատավոր ժողովրդի զավակ: Ի՞նչ են վատածում քո բախտակից ընկերները:

— Կարմիր հետախույզը կմեռնի, բայց թշնամու գերեհին ճշմարտությունը կասի.—հիշի՛ր ի՛նչ և ասել Լենինը:

Լ Ե Ն Ի Ն

Նա ինքը չարեց այդ բառը ոպտրանում, գետնի տակ. ի՞նչ, այժմ մատնե՞ւ ես այդ ոպտրանը:

Մարքեն արագ սլանում եյին Վանյայի գլխում, մեկը մյուսին անդն տալիս:

— Կմատնես—ամեն ինչ կսրած ե. այն ժամանակ մահ բանվորներին, Թող ապրեն կատավաբչի կուշտ ցերեխաները:

— Ցերեք...

Կարծես էլեկտրական հոսանքն անցավ Վանյայի մարմնով. նա սթափվեց, բացեց աչքերն ու գոռաց.

— Սպասեցե՛ք, կասեմ:

— Հապա՛,—ծուխը բաց թողնելով, խոսեց վաշտապետը:

Վանյուշան աչքը գցեց կանդնած ամբոխի վրա. նա տեսավ իր մոտիկներին, վորոնք ահն աչքներին սպասում էին ու կարծես ասում.—

«Վանյո՛ւշա, մի՛ մեռ կմատնես»...

Նրա հայացքն ընկավ անների, գոռալ իր խրճիթը, վորի կտրին նստած չեռանկյունի կտրիչը դրոշակ՝ աղվեսի մաշ դնչով. այդ իր վաշտի դրոշակն եր, վոր թափառականներին զայրացնելու համար կախել էին ընկերները:

Դրոշակը նոր ուժ տվեց Վանյային, աչքերը վառվեցին:

— Ե՛յ, ընկերնե՛ր,—ուղեց գոռալ նա: Ցավ մտածեց—«մեռնեմ, բայց մեր գործը թող ապրի»:

— Դե՛, վերջին խոսքդ,—կանչեց վաշտապետը:

Վանյան աչք ածեց շուրջը, մեկ էլ նայեց դրոշակին ու բարձր ձայնով գոռաց...

— Լսեցե՛ք...

Ամբոխը ցնցվեց. կոզակները բարձրացան՝ ապտակներին կանդնած. վաշտապետն աչքերը հառեց Վանյայի դեմքին:

Իսկ նա խոսքը չունչ առավ, թափահարեց գլուխն ու բարձր կանչեց.

— Կեցցե՛ Լենինը:

— Կեցցե՛ կոմսոմոլը.

— Կեց-ցցե՛...

Սև, մաղոտ բռունցքն իջավ Վանյայի գլխին, աչքերը մթնեցին. նա ցնցվեց. ոշակը սեղմեց կոկորդը...

Լուռ եր ամբոխը. լուռ եր ամեն ինչ:

Ցավ մեկն արձագանքը հնչում եր հեռվում, լեռներում և այդ արձագանգն եր.

— Լե...լե...նի...նի...ն...ն...

Ցավ մեռնում եյին այդ ձայները լեռներում, ձուլվելով մի բառի մեջ՝

— Լենին:

***

Ցերեկ որ կախված եր մնալու դիակը:

— Թող տեսնեն ու սովորեն,—հրամայել եր վաշտապետը:

Մահվան մյուս որը Վանյայի դիակը չկար. նրան դիչերը տարել ու թաղել եյին Մաթվեյն ու ընկերները:

Զորքը մի չաբաթ մնաց դյուղում, տակն ու վրա արավ ամեն ինչ. հերթը հասավ հանքահորին:

Իջան յերեքը. բայց փտած սանդուխքները չդիմացան, և իրենք էլ չարդուփշուր յեղան հանքերի խորքում:

Ամբողջ յերկու չաբաթ բանվորները դեռևի տակ եյին, առանց հացի, անվում եյին միայն ջրով:

Ցերը զորքը հեռացավ, Մաթվեյն իջավ, կերակուր տարավ նրանց:

Լեռներում արդեն կռիվն սկսվել եր. պարտիզանները մոտեցել եյին. Վոլգայի ափերից նոր ուժեր յեկան, ապիտակներին քշելով դեպի լեռները:

Գարնանային մի որ կարմիրներն անցան լեռներով, քշեցին ապիտակներին, և Ոպալիխը նորից խորհրդայնացավ:

Վանյուշայի դիակը հանեցին ու թաղեցին հրապարակի մեջտեղում:

Ցերը Մաթվեյն անցնում եր իր նոր վաշտի հետ, պլուխ եյին իջեցնում պատանի հերոսի դերեզմանի առաջ:

***

Աչնան ցերեկով, արևի գուրգուրող ճառագայթներն ամակ Ուրալը առնում էր իր ազատագրման տարեդարձը:

Ահա պիոներներն անցնում են քայլերթով, հրազարկում չինած ամբոխի կողքով:

Նրանց կարմիր փողկապները վառվռում են ամբոխի գորշ շորերի մեջ: Արևը գունավորում էր կարմիրն իր վոսկե-ծիրանի շողերով:

Ցերը պիոներները մոտեցան ամբոխին, հարյուր աչքեր ուղղվեցին դեպի վերևը կանգնած Ծերունին:

Խորհրդի նախագահն էր այն, Վանյայի Ծերուկ հայրը:

Ցերը տեսավ պիոներներին, նրա դեմքը պայծառացավ. նա ուղղեց իր կորացած մեջքն ու ձայն տվեց, բոցավառված աչքերը ներքև հառելով.

— Կեցցե՛ հոմսոմոլը: Պիոներնե՛ր, հեղափոխության գործի համար պատրա՛ստ:

Ցևվ հարյուրավոր մատաղ ձայներ գոռնան ընդդեմ կանչեցին միաբերան:

— Միշտ պատրաստ ենք:

Զվարթացավ Ծերունու դեմքը, ժպտում էր արևը, ծիծաղում էր ալեղարդ Ուրալը:

— Ինչո՞ւ համար ոպիտահները Վանյային բանտարկեցին:

— Ինչ եղեն պահանջում նրանք Վանյուշայից և ի՞նչ միջոցներ եղեն գործադրում:

— Ինչ ապրումներ ունեցավ Վանյուշան:

— Ինչո՞ւ Վանյուշան չմատնեց իր ընկերներին և վերադասից ծանր:

— Ինչ եք կարդացել կամ լսել պատանի հեղափոխականների հերոսություններից մասին:

ՀՐԱՄԱՆ

— 1919 թվականի աչնանն էր այդ: Մենք Ուկրաինայից վռնդել էինք Պետլյուրային, իսկ այժմ Դոնբասում նեղում էր մեզ Դենիկինը: Այդ ժամանակ մեր կարմիր բանակային էր և կռիվներից մեկում վիրավորվել էր: Սանիտարական գնացքով ինձ ուղարկեցին Մոսկվա, հիվանդանոց... Առողջացրին: Մատծում էր ընկնել նորից Դենիկինի ճակատը, բայց այդպես չեղավ: Ինձ ուղարկեցին Վոլգա, պահեստի գումարտակ, իսկ այնտեղից Արխանգելսկի ճակատը, կռվելու անոտոռներում և ճահիճներում...

Բնությունն այնտեղ բոլորովին այնպես չէ, ինչպես այստեղ. վոչ սարեր կան, վոչ խորը ձորեր—հարթ տեղ է, ուրիչ վոչինչ... Ձորս կռվող տեսակ է, խիտ անտառ:

Իսկ կռվել անտառում բաց տեղ գտա գաս, անպատճառ ճահճի կհանդիպես:

Մեր թշնամիներն էլ այլ էին—անգլիացիներ, ամերիկացիներ, Ֆրանսիացիներ և էլ ո՛վ պիտի ինչ ազգից: Ոտա ոպիտաներն էլ քիչ չէին: Մթերքներ շատ ունեյին, դնդացիրներ, թնդանոթներ—ինչքան ասես, հագնված էին՝ կարծես զորահանդեսի համար: Իսկ մերոնք—մերկ, անունդը սառած, դենքներս քիչ, ատաք հագուստի պաչար չունեյինք... Թվում էլ քչվոր էինք: Վո՞րտեղից կարող էինք ձեռք բերել ինչ վոր հարկավոր եր մեզ: Մեր հանրապետությունն այն ժամանակ չէր ապահովված եր թշնամիներով, և մենք կռված էինք ամեն ուղղությամբ:

Ցնկա չես գունդը և պաչտան սառցա կապի գորտաժնի մեջ: Գունդը կանգնած եր լայն ճակատում. նրա ալ թևը հասնում եր Հյուսիսային Դվինային, (այս անունով պետ կա այնտեղ), իսկ ձախ թևը հենված եր անանցանելի ճահճին: Գնաի մյուս կողմում գտնվում եր մեր դիվիզիայի հարևան գունդը, վորի հետ մենք

պետք է կապ պահպանեինք գետի վրայով... Այնտեղ էր գտնվում նաև դիվիզիայի շտաբը:

Մի անգամ ամերիկացիները և անգլիացիներն անցան մեր թիկունքը, և մենք ստիպված յեղանք թողնել մեր դիրքը, այն էլ վոչ թե թողնել, այլ ուղղակի փախչել, թե չե կսեղմեյին մեզ գետին և նահանջի ճանապարհը կկտրեյին: Գործի տաք ժամանակը բոլորովին մոռացել եյինք գետի մյուս ափին գտնվող մեր հրամանատարը և հրաման և տալիս գնալ դիվիզիայի շտաբը և հայտնել, վոր դունդը թողել է իր դիրքերը և յետ է նահանջում:

Ինչպես կարգն էր, հրամանը կրկնեցի և ուղղվեցի դեպի գետափը: Մոտենում եմ այն տեղին, վորտեղ առաջ կապի պահակ կար, իսկ այժմ այնտեղ մի մարդ անգամ չկար: Սկսեցի վնտրել նավակը, բայց նրա հետքն անգամ չկար յերևում: Ուզում եյի գնդի յետևից գնալ, բայց մտածեցի, վոր դրանով գործին ոգնած չեմ լինի: Հրամանը տրված է և պետք է կատարել այն, ինչ գնով ուզում է լինի: Փորձեցի գետի մյուս ափում գտնվող կապի պահակի հետ հարաբերության մեջ մտնել,— վոր կապի պահակի հետ հարաբերության մեջ մտնել,— չէ՞ վոր այնտեղ էլ նավակ կար: Կապեցի ծառի ճյուղից թաչկինակս, սկսեցի կանչել... պատասխան չկար: Նորից կրկնեցի,—նույն անհաջողությունը: Մտածում եմ՝ ի՞նչ անեմ:

Նայեցի չորս կողմս, տեսնեմ՝ ափին մի ահագին ծառ է վայր ընկած: Ճյուղերի կեսը կտրված է: «Լավ',— մտածում եմ,—ահա իմ նավակը: Գերանի վրա կանցնեմ մյուս ափը»:

Կապի հին պահակի տեղում մի կոտրած թիակ գտա, վորը հետո ինձ շատ պետք յեկավ: Քարշ տվի ծառն ուղիղ մինչև գետի ափը, մերկացա, չորերս կապոց չինեցի, դրի պատրոնները նրա մեջ և կապեցի մեջքիս: Հրացանն էլ մեջքիս գցեցի: Հետո ծառը գցեցի ջուրը, նստեցի վրան, հրեցի և սկսեցի լողալ:

Գետի հոսանքը միանգամից տարավ ինձ: Սկզբում յես պինդ նստած եյի և ուժգին թիավարում եյի: Բայց զարմանալի բան. ինչքան թիավարում եմ, գետի ափից չեմ հեռանում, վոչ մի կերպ չեմ կարողանում կտրվել գետափից. ափի ուղղությամբ ուժեղ եր գետի հոսանքը:

Այդ ժամանակ գործ դրի ձեռներս ու վոտներս: Մի կերպ անցա գետի մեջտեղը և չունչ քաշեցի. վոտներս մրսում եյին:

Սկսեցի հերթով բարձրացնել վոտներս և թիակի յերեսով խփել նրանց, վոր տաքանան: Այս ձևով քաշքըշվեցի ջրի մեջ մի ամբողջ ժամ և այնուամենայնիվ չկարողացա ինձ պահել գերանի վրա... հենց ափի մոտ գետը դլորվեցի. բարեբախտաբար տեղը ծանծաղ եր, վոտի կանգնեցի և քարշ յեկա մինչև ափը:

Հագուստս թրջվել եր, ատամներս սրթսրթում եյին, իսկ տաքանալու վոչինչ չկար: Սկսեցի չորս կողմս նայել: Տեսնեմ՝ գետի հոսանքն ամբողջ վեց վերստ քշել տարել է ինձ, ուրեմն յես գտնվում եյի ճակատի յետևը, թիկունքում: Մտածում եմ՝ դրությունս վատ է, ի՞նչպես գնամ մերոնց մոտ:

Տեսնում եմ՝ անտառը հետս յե, իսկ ափի ուղղությամբ ձգված է մարգագետինը: Վճռեցի ամենից առաջ հասնել անտառին, թե չե թշնամին կնկատի, կրակի և վերջ կտա կյանքիս... Հաղա չորերս... թաց են, սառը: Բայց ուրիշ յելք չկա, պետք է համբերել: Ուղղվեցի դեպի անտառը, գնում եմ, շարունակ չորս կողմս նայում:

Մութն արդեն ընկել եր, յերբ հասա անտառին:

Վայր ընկա մեջքիս վրա՝ մի փոքր հանգստանալու:

Հանգստանալուց հետո վերստին շարունակեցի ճանապարհս, վոր արդեն շատ ավելի հեշտ եր առաջվանից: Գնում եմ անտառի յեզերքով. հողը չոր է. գնում եմ ուղիղ գծով, վստահությամբ... Սկավեց առատ մթնել:

Հանկարծ ճյուղերն սկսեցին չըթչըթալ:

Անտառի մի ջից մի ճանապարհից վեց հոգի հարձակվե-ցին ինձ վրա: Ժամանակ իսկ չավին մտածելու, ձեռ-ներս մեջքիս կապեցին և հրելով՝ առաջները դցեցին: Մեր լեզուով չէին խոսում, միայն մի բառ էլի հասկա-նում՝ «բայլևիկ, բայլևիկ»: Ինչպես յերևում է՝ այդ խոսքը բոլոր լեզուներով էլ մեկ է:

***

Բերին ինձ իրենց ոպայի մոտ: Նա ինչ որ մի բան մրմնջաց և ձեռքով ցույց տվեց հեռուն: Ցերեկ հոգի մնացին նրա մոտ, իսկ մյուս յերեք հոգին ինձ քշեցին ավելի հեռուն...Բերին մի գյուղ, մացրին խրճիթ,— այնտեղ էլ մի ոպա կար: Կոտրտված ռուսերեն լեզուով հարցնում է.—«Կարմիր բանակի՞ցն եմ, թե՞ վոչ»:— «Վո՛չ,—ասում եմ,—յես գյուղացի յեմ, գնում մյուս ափից», և տալիս եմ գյուղի անունը, վորտեղ մեր գնդի չտարն էր դանվում... Այն ժամանակ, ցարական սա-տերազմից հետո չէ՞ որ համարյա բոլորն էլ զինվորա-կան բաճկոնակներ էին հագնում... «Իսկ ի՞նչ ես անում այնտեղ,—հարցնում է,—ինչո՞ւ այսպես ծրջված և ազատազված ես»:

Պատասխանում եմ, վոր պատվեր հավաքելու՝ ճահիճն եմ ընկել...ել ուրիշ բան այդ ժամանակ մըտ-քովս չանցավ: Ինձ ազելով ասում է՝ «առայժմ կաց այստեղ, իսկ վաղը մենք կպարզենք, թե ի՞նչ պատուղ ես դու»:

Տարան ինձ, վանկեցին մատանում և դռան մոտ էլ պահապան դրին:

Մութն է մտնում... Գյուխս չի դործում: Սա-մոքս էլ սկսել է բողոքել: Չե՞ որ առավոտից վոչինչ չէի կերել: Մթության մեջ նստած մնացի յերկու ժամ, բոլոր պատերը անազեցի—չինչն սմուռ է, ինչպես գա-լոր չինքերը հյուսխոնում. կատղյած և գերաններից: Հանկարծ լսում եմ պահապանին վանում են: Դուռը բացվեց, լապտերով լուսավորեցին մատանի ներսը,

մի համալեցին, վոր յես այնտեղ եմ. ինչպես մտքը թա-փոցրի մեջ՝ նստած եմ. նորից ծանրացին գնդերը: Մի հինդ րոպեյից հետո նորից լսվեց դռան ձայնը: Ցերեկ ուտելիք են բերել, մոտծում եմ յես: Իսկ դռան մյջից մաքուր ռուսերեն լեզվով ինձ հարցնում են.—«Ե՛յ, ընկե՛ր, վա՞ղուց ես...»,— «Այստեղ եմ,—պատասխա-նում եմ,—ի՞նչ կա վոր: Դո՞ւ ինչ մարդ ես», իսկ նա ինձ պատասխանում է.—«Ցես ռուս եմ, թեև ամերի-կական հագուստ ե վրաս: Կամաց խոսիր—դրուցենք մի քիչ, խոսելու բան կճարվի»: Դուռը մի քիչ բացել ե և խոսում է դռան ճեղքից...

Ցես չքաշվեցի, սկզբում խնդրեցի մի բան ասել ու-ոիս: Պահապանը ավել ինձ պաքսիմատ և յերկու կտոր շաքար, վոր յես մի վայրկյանում կուլ ավի: Սկը-սեցինք խոսել: Պարզվեց, վոր նա հրդա չէ, արևմտյան նահանգներից, ցարի ժամանակ գաղթած և յեղել Սամ-բիկա: Բայց թեև այնտեղ թագավոր չկա, կյանքը քաղ-ցրը չէ, տերերն այնպես են սեղմում բանվորներին, վոր չես կարողանում շունչ քաշել: Հենց վոր լսմանում է Խորհրդային Իշխանության մասին, վճռում և վերա-դառնալ հայրենիք, այդ նպատակով, վորպես կամա-վոր մտնում այն դունդը, վորը նշանակված ե Սրբան-դեկիը պրավելու համար: Այժմ հնարներ ե փնտրում, թե ինչպես փախչի կալմիկների մոտ, բայց այդ դժվար բան է. ամեն մի քայլափոխում հետևում են ոպրպիխին-ները: Իշխանությունը նրան բայլևիկ ե համարում և չի հավատում: Մանավանդ սպանները հանդատություն չեն տալիս: Ցերեկ խուզարկել էին նրա իրերը և, իհարկե, վոչինչ չէին գտել:

***

Ճիշտ ասած սկզբում մտածեցի՝ պրովակատոր հո չի, վոր ուզում է ինձնից խոսք քաշել: Իսկ հետո վճռեցի: Ի՞նչ եմ կորցնում վոր, մեկնուն է, չեն հա-վատալու, վոր յես դյուղացի եմ. շատ հարելի չէ, խոր-

Հըրդեհին իշխանության համակրողներից մեկն է դա: Այն ժամանակ այդպիսի մարդկանց հաճախ էինք պատահում...

Սկսենք ամենից անկեղծորեն խոսել հետաքրքրական պատմության, թե ինչպես են ապրում Կարմիր բանակում, բացատրենք, որ մենք վոչ վոքի վրա չենք հարձակվում, այլ մխայն պաշտպանում ենք Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումները, վորոնք փորձում են այդ նվաճումները վոչնչացնել: Նա յել սկսեց պատմել իրենց բանակի մասին: Ասում է, որ համարյա բոլոր գինվորները համակրում են կարմիր բանակայիններին, բայց սպաները նրանց խստությամբ պահում են իրենց ձեռքերի մեջ և ամեն մի չնչին բանի համար պատժում են, և այն էլ ինչպես են պատժում. կարգապահության ամենաափոքրիկ խախտման համար հրացանազարկ են անում: Միայն դրա չնորհիվ է, որ զորքը չի քայքայվում:

Խոսքով բռնված՝ վոգևորվեցինք: Հանկարծ մյուս կողմից ներս է թռչում մեկը և սկսում է դոռդոռալ պահապանի վրա, և այն էլ ինչպես է գոռում, ուղղակի կատաղածի նման: Բղավում է իրենց լեզվով. վոչինչ չեմ հասկանում, պարզ է միայն, որ հայհոյում է պահապանին՝ բանտարկյալի հետ խոսելու համար: Զայնից ճանաչում եմ, որ դա ինձ հարց ու փորձ անող սպան է: Տեսնեմ՝ դռան ճեղքը բաց է մնացել. նշանակում է՝ պահապանն այնպես եր սարսափել սպայի առաջին հերթով հայտնվելուց, որ չեր կարողացել դուռը կողպեքով փակել...

Մի խելառ միտք անցավ գլխովս: Քաշեցի դուռը, դուրս թռա բակը, խլեցի պահապանի ձեռքից հրացանը և մի ակնթարթում ավինը խրեցի սպայի մեջքը... Գոչեցի՝ «վազի՛ր յեռևից»— և սլացա դեպի անտառ: Պահապանն ուրիշ յելք չուներ, նա յել վազեց իմ յետևից:

Ամբողջ գիշերը թափառում եյինք անտառում:

Առավոտյան դեմ դուրս յելանք մերոնց մոտ. յես մոտ գնվիգիայի չարքը: Այնտեղ վոչինչ չգիտեյին այն մասին, վոր մեր դունդը նահանջել է, և չատ զարմացան իմ տված տեղեկության վրա: Հաղորդեցի նաև այն, վոր վոչ մի կերպ չհարցացա նշաններով կանչել կապի պահակին, թե յես գտնվում եմ դետի մյուս ափում:

Քննություն կատարվեց: Պարզվեց, վոր պահակի ծառայողներն անվստահելի մարդիկ են... Գերի ընկած ամերիկացիներից սպիրտ են խլել, խմել, հարբել ու քնել: Դիվիզիայի հրամանատարը նրանց դատի տվեց: Տեղն եր: Ցեթե ինձ չհաջողվեր դերությունից փախչել, ամերիկացիները կչըջապատեյին մեզ և կկարելյին Մոսկվայից: Ամբողջ դիվիզիան կարող եր վոչնչանալ մի քանի մարդկանց պատճառով: Ռազմական ծառայությունը կատակ բան չի. յեթե մի կարմիր բանակայլին գինվորական կարգը խախտի, դրանից կարող են տուժել հարյուրավոր մարդիկ: Ցեթե գործի յեն դրել քեզ, պիտի հետևես այդ գործին: Թեկուզ տրաքես, հրամանը պիտի կատարես: Այդ հրամանը տվողը հույսն ունի, վոր կատարվելու յե, և գործում ես այնպես, վոր կարծես հրամանն արդեն կատարված է...

ԼՈՒՍԱԲԱՑԻՆ

Նորից յեկա այցելության
Գործարանի պարիսպներին,
Ցերկաթակուռ այն չենքերին,
Վորոնք մի որ
Շունչ տվեցին իմ յերգերին:

Ահա մատս նրա չեմքով—
Ինձ վողջունեց արթուն սուլիչ.
Մեքենաները ուրախացած՝
Ու խենթացած՝
Արձակեցին յերկաթե ճիչ:

Իրար անցան ճախարակները,
Ժկը փոկերն ու պտուտակները,
Շոգեմուրճը հպարտ թնդաց
Ու վարպետը՝
— Դեռ չե՛մ հոգնել, դեռ չե՛մ հոգնել:

Երան՝ խմբով ճանապարհեցին
Ջարտճճի հպարտ մուրճերը.
Ծլվլալով զրնգացին,
Կկկացին՝
Վորպես ուրախ դեղձանիկները:

Ցեխ այս ժխոր—համբույրի մեջ
Մեծ քուրայից ժայթքեց վոսկեման.
Այդ անհանդիստ կայծն եր անչեջ—
Առավոտյան՝
Նոր կյանքի յերդն եր պատշաճատուն:

— Ինչո՞ւ չունէ ավելց բանատուղծի յերդերին:

— Այս վոսկեվարի մեջ բանատուղծն ի՞նչ և պատկերացնում:

— Ի՞նչն և համերգ համարում բանատուղծը և ինչո՞ւ:

ԸՆԿԵՐՆԵՐԸ

Երանք փոքրիկ եյին՝ յերեխան ու կատուն,
Մեկտեղ խաղում եյին տախտակների վրա.
Մինչև մութն իջնելը, մինչև հայրը գար տուն
Ու հոդնածուն հացով կերակրեր նրանց:
Հայրը բանվոր եր: Միշտ առավոտ ծեղին
Նա գործարան կնըստար ու յետ կգար մութին.
Հոգ կքերեր իրա յերեխային մի քիչ,
Յերեխան ել կտար կեսը կատուն ուտի:
Ընպես ապրում եյին: Հայրը նրանց մեկ-մեկ

բան կպատմեր գրքի, հարուստների մասին,
Վոր կուշտ են միշտ նրանք, բայց չեն հոգնում յերբեք,—
Ինտերնացիոնալ կերգեր՝ յերեխան լսի:
Ու կպատմեր, վոր միշտ ինքը հոգնի պիտի,
Պիտի արյուն թքի, վոր չոր փշրանք գա տուն:
Ու լուսթյուն տարածվ՝ երիկնային մութին
Կրտեյին նրան՝ յերեխան ու կատուն...
Բայց մի որ—մի որ կարմիր—
Գործարան չդնաց ել հայրը.
Աչքերում վճիռ կար մի,
Ժպիտը հաստատ ու անծայր եր:
Փողոցում—մարդիկ, մարդիկ,
Գրոշները ալվան, կարծես ծան եր...
Ու նման եր մայիսյան վարդի,
Որերում այդ—հոր խնդությունը:
Ցեխ մի որ համբուրեց գալակին
Բանվոր հայրը՝ ձեռքին հրացան.
Համբուրեց աչքերը կատվի
Ու դնաց անձայն...
Բայց դարձավ դռնից բանվոր հայրը,
Համբուրեց նրանց վերստին:
— «Հասկանո՞ւմ եք,—ասավ,—ժամանակն և,
Գարիկելու յենք եսար հարստին»:
Ու յելավ: Փողոցում կրակոց եր:
Փողոցում չոքեց բանվոր հայրը:
Ձորքերով լեցուն եր փողոցը.
Փողոցում կռիվ ու պայքար եր:
Ջարկեցին... Ճչաց բանվոր հայրը.
Հարվածը կրծքին եր հասավ:
Բայց հառաչը խոր ու անծայր այն,
Լսեցին յերեխան ու կատուն...
Վազեց, վազեց փողոց փոքրիկ յերեխան.
Կատուն վազեց հետքից իր ընկերոջ փոքրիկ,
Նրանց դլխին կարկտաց հարմիր զնդակ առատ
Ե յերկուսն ել ընկան հայր-բանվորի կողքին:

Զնաշակին նրանք էլ հատակի վրա,
չոպասներն էլ զուր, վոր հայրիկը պա տուն.
Նրանք փոքրի՛կ-փոքրիկ նահատակներ յերգան—
յերեխան ու կատուն...

— Ցե՞րբ և կատարվել հեղինակի նկարագրած դեպքը:

— Ինչպե՞ս բաժանվեց հայրը վորդուց, նրա վերջին խոսքերն ի՞նչ եյին:

— Ի՞նչ պատահեց հորը և ի՞նչ պայմաններում:

— Ի՞նչ պատահեց յերեխային և կատվին:

ՀՈԿՏԵՄԲԵՐ

... Գիշեր եր, տասից անց եր քառասուն րոպե...

Մեր առջև դանվում եր Ռուսհուրդների ծվացող ու յեռուն յերկրորդ համառուսական համագումարը:

Անմխիթար լուրեր հասան այն մասին, թե Կորնիլովը վախել և կալանքից, այն մասին ևս, թե զեներալ Կալեդինը դալիս և Պետրոգրադի վրա: Բուրժուազիան ցնծում եր և անհամբեր սպասում բայլևիկների մոտալուտ անկման: Այս բոլորը վախեցնում եր և քայքայիչ ազդեցություն ունենում բայլևիկյան կուսակցության վորոշ մասի վրա ու ստիպում նրան հավիվել զիջումներ անելու կողմը, վորչափով խոսքը վերաբերում եր սոցիալիստական մի այլյալ կառավարություն ստեղծելուն:

«Մենք չենք կարող զիմանալ,— բացականչում եյին նրանք.—հակառակորդի ուժը չափազանց մեծ և, մենք մարդիկ չունենք, մենք մենակ կմնանք, իսկ մենակ՝ մենք չենք կարող զլուխ հանել, և ամեն ինչ կկորչի»:

Այդպես եյին ապացուցում կամեննեվը, Ռյազանովը և ուրիշները: Բայց Լենինն անսասան եր, ինչպես ժայռ:

Նվաճված իշխանության բախտը վճռվում եր Սմոլնում, Ռուհուրդների չորսնակվող համագումարում, ուր և ուզեցի յես քայլերս:

Նիստի մեծ դահլիճում, վոր լեփ-լեցուն եր բանվոր հանդիսատեսներով, յես տեղ գրավեցի: Ց-ից պակաս եր 20 րոպե, յերբ Ծափահարությունների վորոտաձղաձայն նախադահության դալուստը, նախադահության, վորի անդամների մեջ եր Լենինը, մեծ Լենինը:

Վոչ բարձրահասակ, ամրակազմ մի կազմվածք՝ ուսերին մոտ դանվող մեծ, ճաղատ և ուռուցիկ գլխով, վոչ մեծ աչքեր, լայն, ազնիվ ճակատ և ծանր կզակ:

Հագին ուներ մի անփույթ կոստյում՝ լայն, յերկար անդրավարտիքով: Այսպես եր ժողովրդական այդ արտասովոր առաջնորդը, առաջնորդ՝ իր բացառիկ մեծ մտքի ուժով, առաջնորդ, վոր անկարող և համաձայնության մեջ մտնել, առաջնորդ, վոր ընդունակ և պարզ արտահայտություններով բացատրելու խոր մտքերը:

Նիստում հանդես յեկան համաձայնողական կու-

ռակցութիւններին պատկանող հեռուորները և պահանջում էին բայլեւիկներից դիջումներ անել, քննադատում էին բայլեւիկներին և ոտքոնում հեղափոխութեան անհումով:

Բոլորն ոտքոնում էին, թե ինչ կատի Լենինը:

Ցերեւաց Լենինը:

Ծափահարութիւնների վորոտը չնջեց դահլիճը:

Ցերը լռեցին մի քանի րոպե տեւող ծափահարութիւնները, նա պարզապես ասաց.

«Մենք այժմ ձեռնարկում ենք սոցիալիստական հասարակակարգի շինարարութիւնը»:

Ցնվ այդ խոսքերը կրկին վոգեւորվելին արտասովոր դուռում-դաշումով:

«Առաջին հերթին պետք է ձեռք առնվեն գործնական միջոցներ՝ հաշտութեան կնքելու: Մենք պետք է հաշտութեան առաջարկենք բոլոր պատերազմող ժողովուրդներին խորհրդարին պայմանների հիման վրա, այսինքն՝ առանց անեքսիայի (երկրամասերի գրաւման) և առանց կոնտրիբուցիայի (պատերազմական տուգանքի) ժողովուրդների ինքնորոշման իրաւունքով: Միաժամանակ, համաձայն մեր խոստումների՝ մենք պետք է հրապարակենք գաղտնի պայմանագրերը և հրաժարվենք այդ պայմանագրերը պահպանելուց: Պատերազմի և հաշտութեան հարցն այնքան պարզ է, վոր կարծում եմ՝ կարելի չէ առանց առաջարանների կարդալ դեկրետագիտի նախագիծը՝ ուղղված բոլոր պատերազմող երկրներին»:

Նրա ձայնը հնչում էր այնքան ահեղ, վոր առաջվում էր այն տպավորութիւնը, թե անվերջ կարող է հնչել... Վորևե միտք ընդգծելու համար նա թեթեւակի առաջ էր թեքվում: Իսկ նրա ետևից նրան ուղղված հաղարավոր պարզ դեմքեր նայում էին նրան սիրով և խանդաղութեամբ: Լենինն ահեղ կարդալ դիմումը:

Ծափահարութիւնների վորոտը վոգեւորեց հրապարակած դիմումը ժողովուրդներին: Լենինի բոլոր

առածների մեջ կար մի ինչ-վոր հանդիսաւոր և դրամիչ բան, վորը խորապես տպավորվում էր մարդկանց հոգու մեջ: Դժվար չէր հասկանալ, թե ինչ մարդիկ հաւատում էին, յերբ Լենինն էր խոսում:

Հուժկու հնչյունները տարածվելին դահլիճում՝ թափանցելով պատուհաններից ու դռներից դեպի յերկինքը:

«Պատերազմը վերջացել է»,—ասաց կողքիս յերիտասարդ բանվորը՝ ուրախութեանից փայլող դեմքով:

Հեղափոխութեանը չարունակում էր իր գործը:

Այնուհետև Լենինը կարդաց հողին վերաբերող դեկրետը, ուր ասված էր, թե հողի կալվածատիրական, ցարական և վանական սեփականութեան անհատաղ վերացվում է: Հողն անցնում է ամբողջ հողային կոմիտեների անորինութեան: Դեկրետը քննելուց հետո՝ դրվեց քվեարկութեան. մեկն էլ մի պատվիրակ հակառակ ձայն տվեց, իսկ գյուղացիական պատվիրակները բուռն կերպով արտահայտեցին իրենց ուրախութեանը:

Այդպես առաջ գնին ընթանում բայլեւիկները, վերացնելով իրենց ճանապարհին յեղած բոլոր խոչընդոտները. բայլեւիկները, մեկ խմբակը ռուսաստանում, վորն ուներ իր գործունեութեան հատուկ ծրագիրը:

— Պատմեցեք, թե ինչ եր ներկայացնում Սմոլնին հոկտեմբերյան հեղափոխութեան որերին:

— Ի՞նչ ուժեր եին բանում իրար հետ այդ որերին:

— Լենինի դերը, վորպես հուսակցութեան և հեղափոխութեան դեկավարի:

— Ընդգծեցե՛ք հոդվածում այն տեղերը, վորտեղ հեղինակը տալիս է Լենինի պատկերը:

ՏՈՒՖԻ ՈՒ ՅԵՐԿԱԹԻ ՑԵՐԳԸ

Են որը ուրիշ եր,
Են որը չեմ կարող մոռանալ,
Են որը վոսկեթել մի հուշ է
Ինձ համար:

Քաղաքից դյուղ յեկան նոր մարդիկ,
Անծանոթ դեմքերով չորս հոգի.
Շրջեցին մեր սարերն ու յետ դնացին,
Վոչ մի բան չասեցին վոչ վոքի:

Մեր դյուղի ծերերը տխրեցին,
Եեր նրանք մեր սարը բարձրացան,
Քաղաքից գործիքներ բերեցին,
Ջափեցին մեր սարերն ու անցան:

Անցավ մի չարաթ:
Քաղաքից դյուղ յեկան նույն մարդիկ,
Ճեկան ու բարձրացան լեռները.
Ես անգամ ավելի չատացան—
Բանվորները և ինժեներները:

Քաղաքից յեկան բանվորները,
Ճ ան ու մեծ սատր փորեցին,
Ամեն տեղ դինամիտ հորեցին,
Դողացին մեր հսկա լեռները...

ՇՄՐՎԱԾՈՑԻՆՆԵՐԻ ՔԱՅԼԵՐԳԸ

Շչում և նա ժայռ փորելով—
աչխատանքը հարվածային,
տարածվում և կարմիր յերգով
աչխատանքը հարվածային:

Աչխատանքը քլունդների
պատռում են կոշտ կուրծքը յերկրի,
տրակտորները հանդում, դաչտում
հռնդում են, բարձր յերգում.
ամենո՛ւր, ամենո՛ւր, ամենո՛ւր
Իլյիչի
ծրագիրը տուր:

Ամեն մի փորվածք բահի—
աչխատանքը հարվածային,
թշնամուն և մատնում ահի—
աչխատանքը հարվածային:

Հինը կորչում և և պայթում,
նոր կենցաղն և ճամբա հարթում,
մի նոր աչխարհ մեղ կրնկի
աչխատանքը հարվածային.
ամենո՛ւր, ամենո՛ւր, ամենո՛ւր
Իլյիչի
ծրագիրը տուր:

Դնեպրոստրոյի հարուստ հանքում
աչխատանք և հարվածային,
հզորություն, ուժ ենք կուտում
աչխատանքով հարվածային:

Իսկ բուրժուան իր սահմանից
նոր թալանի ահ և տալիս.
բայց ածուխով ու պողպատով
մենք կխեղդենք նրան չուտով.
ամենո՛ւր, ամենո՛ւր, ամենո՛ւր
Իլյիչի
ծրագիրը տուր:

Մարտի դաշտում խնայել չկա՝
աչխատանքն և հարվածային,
պատակարգն ամբողջովին
մի բրիգադ և հարվածային:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄԸ

Քաան թիվն եր: Աչուն: Այն գյուղը, ուր մենք եյինք ապրում, չատ պեղեցիկ եր աչնանը:

Ախտ անտառի տերևները գեղնել, կարմրել եյին. անտառը լիքն եր հատած պատուղներով. վայրի տանձը, սալորը, խնձորը, ղիեռը հատած թափվում, ծածկվում եյին տերևների չերտերով, մնում փտելու: Նուշը և կաղնի ու հաճարի պատուղները: Վոչ վոք սիրտ չեր անում գյուղից հեռանա, գնա անտառը, ձմեռվա պաչար հավաքի: Վտանգավոր եր գյուղից դուրս գալը. թալանը, մահն ամենքին վախեցնում եյին:

Դաչնակների տիրապետության վերջին օրերն եյին: Ազգամիջյան կռիվները քայքայել եյին յերկիրը: Ամեն որ փոքրանում ու փոքրանում եր դաչնակցական Հայաստանը. ավելի ու ավելի կատաղի եյին դառնում դաչնակները:

Մեր գյուղը Ազբրնջանին մոտ եր և աչխատեղից յեկող լուրերը մի փոքր հանգստացնում եյին տանջված գյուղացիներին: Շատերը սարերն եյին վախել, գյուղ չեյին գալիս: Մուխտան ապստամբություններից հետո նրանք վախել եյին Ազբրնջան և մխացել եյին կարմիր բանակին:

Սրտատրոփ սպասում եյին կարմիր բանակի գալուն: Բայլևիկները գաղտնի աչխատում եյին:

***

— Դո՛ւրս,—գոռաց սպան, հրելով հորս,— դու ի՞նչ չուն ես, վոր խոսում ես:

—Ի՞նչ պատրոց. կռիվ է, հասկանո՞ւմ ես, ապո՛ւշ,— գոռում եր, ջգրհացած՝ քայլում մարակը ձեռքին:

Նրա հրամանով բանն են անում մեր պատրոցի նուռատարանները, դրքերը, քարանձները, աթոռները: Հայրս, վոր այդ պատրոցի ծառան եր և միչտ իր աչքի լույսի պես եր խնամում պատրոցական իրերը, չեր կարողանում հեռանալ. արտասուքն աչքերին կռվում եր, խնդրում, աղերսում, վոր պատրոցը չքանչեն, իրերը չփչացնեն:

— Ախր Ամերատրովանց տանը ոթման կա, գնացիք [illegible]...

— Ա՛, դու բայլևիկ ես,— հարձակվեց սպան ու մի-յերկու հատցրեց հորս: Հայրս վազեց պատրոցի վարիչի մոտ. նա վոչինչ չարեց, վորովհետև ինքը դաչնակցական եր: Նա չմիջամտեց նույնիսկ, յերբ յերևկոյան պինվորները բակում պատրոցի նուռատարանները կոտրտելով խարույկի վառեցին:

— Քավթա՛ռ, ի՞նչ ես մրթմրթում, աբի տաքացի, ո՞ւմ համար ես պահում,— հրհռալով գոռում եր սպան պատրոցի պատուհանից: Պատրոցը փակվեց. իմ արտում ծնվեց մի մեծ ատելություն դեպի դաչնակները:

Մի քանի որից հետո սպային ու պինվորներին քշեցին Ֆրոնտ. պատրոցը պրավեց հայտնի խմբապետ Սեպուհն իր «տղաներով»: Սեպուհին յես առաջ եյի տեսել:

Մեր գյուղում նրանից սարսափում եյին: Կասկածելով, վոր մեր գյուղը բայլևիկների բուն է, նա համարյա ավերել եր մեր գյուղը: Ում բռնում, Ֆրոնտ եր ուղարկում. նա տարիք չեր հարցնում, տանդուհինդ է Թե հիսունհինդ: Թալանը հո կար ու կար. նրա «տղերքը» լավ ուտել եյին սիրում. թալանը լցնում եյին իրենց անվուչտ փորերը, կամ գրպանները: Գոմում անասուն չեր մնացել, վոչ էլ անդրում հաց, յուղ ու պանիր: Կանայք մենակ վախենում եյին ջրի գնալ. Սեպու-

հի հարբած տղերքը, կեռ Բրերը կապած, մատղնեբով, մինչ կարող էին հանդիսել ու վիրավորել։

Միայն գյուղի զորբաններն էին ուրախ. նրանց ուշնեցածը մատղերիանների ոգևորությամբ բազմանում էր։ Զղվելի Թալանն որհնում էր տերտերը։

Այդ որերին Սեպուհը կատաղած էր։ Դեմ որ խոժոռած, գազանի աչքերն արյունով լի, նա չէր խոսում— մռնչում էր, կատրում, հարվածում՝ ինչ ձեռքն ընկներ։

Հայրս կուչ էր յեկել։ Արդեն գալրոցի ներսում ամեն որ կրակ էին անում, հատակին այրվել էր։ Որեր, ժամեր եմ հաշվում, վոր բայլևիկները գան։ Ցես Թեպետ փոքր էի և վոչ մի գործ չէի արել, ինձ բայլևիկ էի համարում և ուզում էի ամեն բան տեսնեմ, իմանամ, գոնե մերոնց հայտնեմ։

Մտնում էի Սեպուհի գրասած սենյակի կողքի միջանցքը, նստարանների յետևը ու ականջ դնում. այդտեղ պատը ճեղք ուներ, և յես վոչ միայն լսում էի, այլև կարողանում էի դեմքերը տեսնել։

— Սեպուհը կատաղած՝ հեռախոսով խոսում էր, հրամաններ տալիս փրփուրը բերանին, հայհոյանք թափում...իսկ դաշնակները ճղում էին. մի ինչ-վոր մի-նիստր յեկավ, իսկույն ավտոյով փախավ։ Վո՛րը կառքով, վորը ձիով, ֆայտոնով ճղում են, վո՛նց են ճղում դեպի Ցերևան։ Ցես մեկ փողոց եմ վազում, փախչողներին մոխիկ անում. գյուղացիք կանդնած նայում են, բերդի տակ ծիծաղում. մեկ էլ դալիս եմ, նորից դեպք մտնում, լսում։

— Վեցերորդ գունդն անցավ բայլևիկների կողմը,—հևիհև ասաց Փրոնտից վախած մատղերիատը՝ Սեպուհին։ Սեպուհը վեր թռավ տեղից և այդ մատղերիատին վոր չհասցրեց, մատղերիատը գետին փռվեց...

Ցես դուրս պրծա. հորս հայտնեցի ուրախալի լուրը։

Սեպուհն է՛լ ճղեց ավտոյով։ Իսկ «տղերքը» հեծան ձիերը և ավտոյի յետևից դնալով, անհետացան մեր գյուղից։

Դեռ նրանք գյուղից չէին հեռացել, գյուղացիները դաշ ու դունով, ուրախ յերգերով դուրս յեկան՝ կարմիրներին դիմավորելու։

Շուտով կարմիր բանակը մտավ գյուղը։ Կարմիր բանակի հետ եկին մեր գյուղի և շրջանի ապստամբ կարմիր պարտիզանները։ Ի՛նչ ուրախություն եր։

Անմիջապես դուրս յեկան մեր գյուղի կոմունիստները, հեղկոմ կազմակերպելուն և աշխատանքի անցան։

Դա նոյեմբերի 29-ին եր, 1920 թվի։

— Վորտե՞ղ է կատարվում գործողությունը։

— Նկարագրեցե՛ք այդ գյուղի դրությունը՝ դաշնակների իշխանության որերին։

— Ինչո՞ւ զորքի և ապրանակության համակրանքը բայլևիկների կողմն եր։

ՏՈՂԵՐ ԱԼԼԱՇՎԵՐԴՈՒՆ

Ցես ուզում եմ հիմա մեր պղինձը յերգել,
Պղնձի լեռները դեղին և պղինձն հոսում.
Շարել այրող յերգեր, պայքարի վառ յերգեր,
Վորպես այս պղինձը՝ հրահոսուն հեղուկ։

Ահա քլունդները իջնում են ու քանդում,
Պղնձադեմ մարդկանց ձեռքերի ուժով։
Մենք լարում ենք վերջին մեր մկաններում
Հաղթանակի զարկը ու ճիգը մեզ հուզող։

Հարվածային լինել։ Լինել մարտիկ.
Պլանների համար. պլանների համար։
Այս է վորոշումը մեր յերիտքի—
Լինել այս պայքարում ամրակամ ու համառ։

Այս ժայռոտ լեռների խորխորատում
Ինչքա՜ն ձեռքեր են յերկաթացել.
Ինչքա՜ն զարկեր են իջել հատու
Եւ մոխրագույն չերտեր— պղնձացել:

Պղնձի ամեն մի չերտ, հողի տակից յելնող,
Տէղ է բացում թշնամու գազազի համար.



Մենք ամբացնում ենք դիրքերը մեր նոր—
Նահանջում է թշնամին մեր զրոհից համառ:

Ճեռ ուզում եմ հիմա մեր պղինձը գովել,
Պղնձի լեռները դեղին, պղնձի հանքն հոգում,
Շարել այրող յերգեր, պայքարի վառ յերգեր,
Վորպես այս պղինձը՝ հրահոսուն հեղուկ:

I

Զորագնդում սովորություն եր դարձել, բոլոր վտանգավոր աշխատանքներում առաջին հերթին հանդես եր գալիս Իվանը: Մահն արհամարհելով՝ նա մբռնում եր վտանգի ծովն ու կուռ բազուկներով ամեն մի դժվարության հաղթահարում:

Ճերկիս յեր: Մութը դեռ չեր պատել:

Իվանը հենց այդ գեղեցիկ մայրամուտին վիթխարի ժայռի մեջքով, գոտկանման, նուրբ փորված մի նեղ ճամփա կանգած, դիտում եր ներքևի անդունդը:

Իվանի մոտ բարձրացան տեխնիկ Ֆյոդորովը և բանվոր Ալեքսանը:

Ֆյոդորովը լուռ եր. նրա ուռատկան վճիտ, լազուրաչող աչքերում կարելի յեր կարդալ այն ամենը, ինչ վոր մտածում եր, կարծես թե նրա աչքերը լեզու առած աղաղակում եյին.

— Ի՞նչ անենք, վոր անվտանգ, առանց մարդկային զոհերի դուրս գանք այս վիճակից: Ճե՞րբ կլինի, վոր ահարիկ այս խուճքը պոկենք:

Մերթ ընդ մերթ ծառերի քնքուշ ծլվլոց եր բարձրանում: Մուտակա գյուղերից չների հաչոց եր լսվում: Զորը հետզհետե խաավարով լցվում եր:

— Սարդի՛ս, Հանո՛ս, Մուքե՛լ, Թևա՛ն—ուժի լուռ յուրաքանչյուրով բարձրաձայն կոչեց Իվանը— յեկե՛ք, ընկերնե՛ր, դե յեկեք, ե՛:

Զորս րոպե չանցած՝ մոտ քսան հոգի խճուղուց կողմից բարձրացան վեր:

Ներանք բարձրանում եյին և սարսափով նայում դեպի ձորն ու վիթխարի պատնեշաձև ժայռին, վորի կուրծքը պետք և պատռվեր:

Ճերը բանվորները հավաքվեցին, Ֆյոդորովը հապաց, կոկորդը մաքրեց ու դիմեց բանվորներին.

— Ընկերնե՛ր, ինչպես դիտեք, տեխնիկական հե-

ծաղոտությունը յեկել է այն յեզրակացության, վոր առաջ գնալու միակ յելքը ձորի վրա ուղղահայաց պատնեշ կանգնած ժայռի կուրծքը պատռելն է: Ցերեկ վորևէ ձենք նկատելից պատ կանգնեցնել, հազար հոգով յերեք ամսում չենք վերջացնի: Գործը կդանդաղի: Գիտենք, վոր այդ չատ թանդ կնստի մեզ: Մենք պետք է բարեխղճորեն մոտծենք: Մեզ համար ենք աշխատում: Զորագնդը մեր սեփականությունն է: Շատ վտանգավոր կլինի յենք հասել, բայց հույս ունեմ և համոզված եմ՝ յերեք զգուշությամբ չարժվենք, վոչինչ չի լինի, անյերեկ դուրս կգանք այդ անպիտան փակուղուց: Ցես փորձ դուրս կգանք այդ անպիտան փակուղուց: Ցես դժվարանում եմ մեկ կամ յերկու ընկերոջ առաջարկել, թե՝ վար իջնեք: Մենք բոլորս էլ պետք է չհապրդված լինենք մեր պետական գործերով: Ընդամենը պետք է տասը լազում պայքեցնենք: Ընկերնե՛ր, նրանից հետո աշխատանքը կլեհենանա: Կարիք չի դպացվի վերից մարդ իջեցնելու: Ո՞վ է համաձայն ինձ հետ իջնելու:

Իվանը մոտյլ, ունքերը խոժոռած, պռոշներն առամների տակ կրծոտելով կանգնեց ու ձեռքը ձեռքի մեջ գնելով՝ բղավեց.

— Ընկերնե՛ր, խայտառակվեցինք... Ա՛յ, մենք արանով յուրյ ենք տալիս, վոր տղամարդ չենք:

Իվանի ձայնը թրի պես կտոր-կտոր եր անում լողների սրտերը: Նրանք բոլորն էլ ամբողջ մարմնով դողդողում եյին: Նրանց վրա ազդում եր Իվանի կապտած դեմքը, բառերի դղրդյունը, նրա հուժկու ձայնը: Իվանը մի քիչ հանգիստ չարունակեց:

— Ընկերնե՛ր, գործը խաթալու յե, համա չպետք է վախենանք: Եզուց պետք ա են քարափի սիրտը հանենք: Մենք ընկեր տեխնիկին Թողալ չենք կարա ըլի: Եզուց առավոտը ո՞վ ա ինձ հետ:

Նա ասաց ու թափանցող հայացքներով փորձեց ընկերներին մեկ-մեկ բռնել: Բոլորն էլ խուսափում եյին Իվանի հայացքներից, միայն Ալեքսանն եր, վոր ժպտաց ու տեղից ցատկեց:

— Ցե՛ս, Իվա՛ն, յես քեզ մենակ չեմ Թողնի:

Հետո մյուսները բարձրաձայն աղաղակեցին: Մինչ այդ նրանք մի տեսակ քարացած եյին: Ալեքսանի «յես»-ը քարացած վիճակից նրանց հանեց:

— Ցես,—ձայն տվավ յերկրորդը:

— Ցես,—բղավեց յերրորդը:

Ցեվ բոլորն էլ «յես» կանչեցին ու ժպտացին:

— Ցես ու Ալեքսանը,—վորոտաց Իվանի ձայնը:

— Ուռա՛, ուռա՛, ուռա՛,—իրոխտ ու հպարտ հընչեց Ալեքսանի ձայնը:

— Ուռա՛, ուռա՛,—վոմանք մեքենայաբար, վոմանք դիտակցաբար ու խնդասիրա՝ գոչեցին մյուս բանվորները:

Տեխնիկ Ֆյոդորովը, քաղցր ժպիտը չրթունքներին մոտեցավ, Իվանի գլուխը գրկեց: Իվանը կիսախավարի մեջ հազիվ նկատեց տեխնիկի ժպիտը:

— Ընկերնե՛ր, մութն ընկնում է, խավարը պատում է, ել չենք կարող գնալ, չո՛ւտ արեք—նեղ արահետը բռնելով ասաց մի բանվոր:

— Հա՛, տղե՛րք չան, գնանք,—ասաց Ֆյոդորովը,—մխմխան խնդրում եմ՝ գրուչչ:

II

Գարաններով Իվանի, Ալեքսանի թևերի տակից կապեցին ու բարձր ժայռից՝ պատնեշի ճակատով ներքև կախեցին: Նրանք հետները վերցրել եյին լոմ, մուրճ ու դինամիտի պայթեցման փոս փորելու համար այլ պարագաները: Վերից վեց մարդ զսպված և ուշադրությամբ՝ հերթով պարանները պահում եյին: Իսկ այդ պարանները միամամանակ կապված եյին և վերի քարերից:

Գետը ձորում վորոտում եր, արծաթաչող փրփուրն ու կոհակները ցրում կողերի քարերին: Գետն անչափ զեղեցիկ եր, հրապուրիչ: Բայց նրանք տերևի պես դողդողում եյին: Իվանն ու Ալեքսանը վորոշված տեղերում

վոտք դնելու համար քարի հազիվ դուրս ընկած մասեր պտան ու վորպես թե սմբացան:

Ներքև նայելիս նրանց թվում եր, թե դլորվում են անդունդը, կործանվում են: Իվանը հասկանում եր, վոր զերեզման մանելու համար միայն մի քայլ ե մնում անել:

Արյունն Ալեքսանի յերակներում հեռվհեռե սառչում եր: Բոլորովին անծանոթ ու խիստ ցուրտ քրանքի հաթիլներ եյին հոսում նրա թշերով:

Յերբ Իվանն Ալեքսանին նայեց, ցնցվեց, նրան թվաց, թե դիմացինը դիակ ե:

— Ալեքսա՛ն, Ալեքսա՛ն, վախել մի՛, ընկնե՛ր, վախել մի՛...

Նրանք գործում եյին: Գետք ե ժայռի կրծքին փորվեր սառը փոս:

— Ես ա հա՛, ես ա հա՛, բան չի մնացել, պրծել ենք,—Ալեքսանին միչտ սիրտ եր տալիս Իվանը:

Նրանք բնավ ներքև չեյին նայում: Վախենում եյին, վոր չաղվեն:

III

Մինչև անցքեր փորել-վերջացնելը նրանք յերկու անգամ վեր բարձրացան հանդստանալու: Յերբ ամեն անգամ հասնում եյին վեր՝ ընկերներին, ջերմ փարվում եյին նրանց: Կարծում եյին, թե զերեզմանից են դուրս յեկել: Ժայռի պարանոցը, ուր հանգիստ նստեու տեղ կար, Իվանին թվում եր, վորպես «ընկերը Լենինի գույց տված կոմունիզմի չեն ու ազատ աշխարհը»: Իսկ վայր իջնելիս կարծում եյին, թե վազ-վազ զերեզման են իջնում: Այդպես եր թվում նաև վերևում մնացողներին: Նրանք սառույի մեջ եյին, թե ահա մեկին ու մեկը՝ Իվանը կամ Ալեքսանը կընկնեն, ջարդ ու փշուր կլինեն:

Տևեցին ամբողջ ժամանակը ցնորված պես, անհանգիստ, ժայռի կատարից, պարաններով մահից մի քայլ հեռու չեր պնում: Մատները բերանը դրած՝ կրծոտում եր, հևում:

— Ի՞նչպես կվերջանա... Յե՞րբ կվերջանա...

Յերբ վերջացավ սառերտող խողովակը, փորելու աշխատանքը, արդեն ժամը հինգն եր:

Ամեն վոտանգավոր բոպեները հեռվհեռե մոռանում եյին: Իրիկնադեմի վոսկեշող արևը պեղեցիկ եր: Ալեքսանն իրեն այնքան հանգիստ եր զգում, վոր քիչ եր մնում ծիծաղե: Նայում եր, ժպտում: Չե՞ վոր չորս ժամ առաջ նա միայն դիակի չեր նման: Ի՞նչպես փոխվեց, ի՞նչպես սովորեց: Յերբ ժպտալու պատճառ ու կարիք չկար, Ալեքսանը ժպտում եր: Ինչո՞ւ:

Իվանը վոչ միայն չեր ժպտում, այլև չատ անհանգիստ եր: Նրա կրակոտ խոշոր աչքերը դալկանում եյին, անհրապույր դառնում: Շնչել չեր կարողանում, ջրմունքները չորացել եյին: Ջրմունքների միջտեղերից արյան կաթիլներ եյին գլորվում: Ծնոտները չարժվում եյին, իրար դիպչում, չխչխկում: Իվանին թվում եր, թե ժայռն ամբողջովին իր կրծքին ե նստած:

Պարանը քաշելը նչան եր: Դինամիտն իջեցրին: Իվանին թվաց, թե չուրջը հրդեհ ե վառված, ու բոցերը լիզում են իրեն:

Ալեքսանը հիմարացած՝ հա ծիծաղում եր: Իվանը կատիածում եր Ալեքսանի մոտի աուղջության վրա: Բայց նեզ ուշ եր, պետք եր նրան ել ոգտագործել:

Իվանը դինամիտների ամբացնում եր փողերում այրվեցնելու համար: Նա խնդրեց Ալեքսանին, վոր յերբ ինքը վերջին դինամիտը կդնի, քող նա առաջինը պատրաստը վառի և պարանը քաշի: Ինդրեց ու չարժվեց:

Ալեքսանն չուռպեց: Իվանը դեռ ուզերզող դինամիտը չեր դրել, յերբ ընկերը յերկուսի պատրաստները մեսային վառեց: Իսկ այդ յերկու պատրաստից պետք և պայթեցին բոլորը: Ալեքսանը պատրաստները վառեց ու մոռացավ պարանը քաշել՝ վերև ձգելու նչան տալ:

Իվանը, յերբ վերջին դինամիտը դրեց ու յետ նայեց, կրակն արդեն հասել եր։

— Կորա՛նք,—ճչաց նա ու պարանը քաշեց։

— Կրա՛կը... կրա՛կը... չո՛ւտ, քաշեցե՛ք... կորա՛ն...—աղաղակեց Ֆյոդորովը խելագարի նման։

Դինամիտները դղրդացին...ժայռակող ձորը հինդ րոպե անընդհատ վորոտում, դղրդում, մռնչում եր։

Մայրամուտին հասած արևը սովորական ժպտով նայում, ծիծաղում եր։ Ծառերը ծլվլալով ոդում ճախրում եյին, ուրախ թռչկոտում։ Փրփրաբերան դետափին տեխնիկը ծնկաչոք հևհևում եր հերոսական մահով ընկած բանվորների ջարդված, այլանդակված դիակների առաջ։

Ցերեկ հարյուրի չափ բանվորներ հուղված՝ իրար հրելով առաջ եյին չարժվում։ Նրանք առաջ եյին հոսում ընկերների տրորված դիակը տեսնելու։

Պատնեշաձև ժայռը՝ կուրծքն անճոռնի ճեղքված՝ դիտում եր տրորվածներին ու հուղվածներին։

IV

Իվանի և Ալեքսանի յեղբայրական մահվանից յերկու շաբաթ չանցած՝ տոննելի բերանը բացվեց։ Արնոտ պատնեշը կործանված ե, աշխատանքը հոսում ե, գարնան հեղեղի պես առաջ ե մռնչում։ Ցերկու շաբաթվա ընթացքում քարհատ Թևանը, Սարգիսը, Հանեսը և մյուսներն այնքան արտառուքյուն ու համառքյուն են ցուցաբերել, վոր նրանց համբավը պոկված ընկերների համբավից ել անցել ե։

— Տղե՛րք ջան, դե հա՛, ջան. տոննելը բանանք, եդ տոննելը մեր մեռած ընկերների գերեզմանաքարն ե։

Աստմ են նրանք ու քարերը կրծոտում, պոկում, ցրիվ տալիս։

— Ի՞նչ անուն կտաք դուք Իվանի և Ալեքսանի վարմունքին։

— Գտեք պատմվածքում այն հատվածները, վորտեղում հեղինակն արտահայտում է հերոսների տպրումները։

ԶՈՐԱԳԵՏՈՒՄ

Ախորժալուր ձենիդ մատա՛ղ,
Զորագետի ուրախ դիզե՛լ,
Զվարթ յերգիդ ուրախանում
Ու հրճվում եմ ահա յես ե՛լ։

Մի ժամանակ ես ձորերում
Հովվի չվին եր չընգչնգում,
Հիմա թնդուն քո գուդակն ե
Այս վայրերի մեջ պրնգում։

Մի ժամանակ ես սարերին
Սոված գայլերն եյին վոռնում,
Հիմա նրանց ծմախներին
Հապարաչյա լույսեր վառում։

Ույժ ես տալիս Զորագետի
Շենք ու չնորք բետոններին,
Կուչ ե գալիս ու գալարվում
Քո լույսերից մեր թշնամին։

Կլկլացող ձենիդ մատա՛ղ,
Զորագետի յերգիչ դիզե՛լ,
Հաղթանակիդ ուրախանում,
Ծո՛ւմ եմ սալիս յես ե՛լ, յես ե՛լ...

— Փորձեցե՛ք այդ վոտանավորը վերածել արձակ պատմվածքի։

ԼՈՒՅՍԵՐԸ

Ամեն յերեկո, յերբ խավարը սև քուլաներով սիրտվում ե ձորում, հիդրոկայանի բանվորական չենքերի

մոտ պայծառ ու պվաբիթ չարվում են լուսյակը։ Շարվում են էլեկտրական լուսյակն ու ժպտում ուրախ ցոլքերով։ Ասես կանչում են նայողներին դեպի ժամանակավոր չենքերը, ուր մինչ ջնելը լսվում է բանվորների խոսք ու զրույցը, ծիծաղն ու կեղտաժխտությունը։

Բայց ահա հետզհետե մարում են ճայները քամվորական տներում ու համատարած լռության մեջ սկսում է իշխել գետի վրայը, կարծես գիշերները, ոգևորվելով խավարից, գետը թաղում վարարում է։

Շերբեմն այդ միալար համերգը խանգարում է կերկաթուղու չդադարչի անհանգիստ սուլոցը, վոր կրկնվում է ձորում արձագանքելով ու հետզհետե մարում։ Շերբեմն էլ մի մոլոր քամու կտոր է թռչում ձորն ի վեր, թեթև սուլում ու պատեպատ ընկած՝ ճամբա չի փընտռում իր համար։

Իսկ ձորի յեզրին, ժայռերի վրա ձգվում են, պառկում տակ ——լռությունը, նայում չարաչուք աչքերով ներքևի լուսյակներին ու մեղամաղձ հոգով սկանջ դնում գետի հին, հին վշշոցին։

Գիշերվա այս հանգստյան ժամերին տոնեներում անընդհատ յեռում է աշխատանքը։ Ամեն տեղ, լեռան ներսը, ինչ վոր խորհրդավոր մարդիկ, իրենց լարված մկանները միացրած մեքենային, համատարած պատռում են ժայռի կուրծքը, ճամբա չեն բանում ջրի համար։

Գիշերվա այս ժամերին ձորամիջի կածաններով լուսյակ են չարժվում, յերբեմն խումբ-խումբ, յերբեմն պատ-պատ։ Տոննելի բանվորներն են դրանք, վոր իրենց հերթը վերջացրած, վերադառնում են մոտակա գյուղերը հանգստանալու։ Ներսը բոլորը լապտերներ ունեն ճակատներին—վտանգավոր նեղ կածանները լուսավորելու համար։ Ուրախ-ուրախ են թափառում այդ լուսյակը։ Ներսը մերթ ծածկվում են ժայռերի յեռանը, մերթ նորից հայտնվում։ Ու թվում է հեռվից, թե մարդիկ չեն չարժվողները, այլ լուսյակն իրենք են թրվռում հակա

լուսատուների նման—ամառային կածաններով վրայով։

Այս գիշեր Սիրն էլ լապտերը ճակատին բարձրանում է ձորամտի կածանով։ Նա մենակ է, ինչ վոր դործով ուշացել է, յետ մնացել ընկերներից։

Ծանր է վերելքը, բայց նա սովոր է, չի նկատում. նա քայլում է, մտածում որվա դեպքերի շուրջը և այս ու այն թվի, ծառի նշանով՝ սովոր աչքերով չափում է մնացած տարածությունը։ Յերբեմն նա կանգ է առնում, շունչը յետ բերում, նայում ներքևի լուսյակներին։ Ու մի իշա այդ բոպեներին մի արտասովոր ուրախություն է հորդում Սիրի սրտի մեջ, կարծես մի նոր, խանդավառ աշխարհ է այնտեղ, ուր ընկնողը մոռանում է, իր անձնականն ու առորյան։

Բազմից է յեկել Սիրը, յեկել է այնպիսի բուռն յեռանդով, ասես մի յերկու որում ուզում է գլուխ բերել ամբողջ հիդրոկայանը։ Տոննելի աշխատանքից հետո, հանգստի ժամերին էլ նա հանգիստ չի նստում, պյուղում—կոլխոզին է լծվում ու իր թափով վարակում, շարժում է բոլորին։

Կանդնում է Սիրը, ճամբին շունչ առնում, նայում ներքևի լուսաչխարհին, մտածում է—ահա կանցնի մի յերկու տարի, հիդրոկայանը կյանք կտա նոր գործարաններին, իսկ այնտեղ, ձորի լանջին, ժայռի վրա կբարձրանա Լենինի հսկա արձանը և լուսյակով վողոջված աչքերը կղարձնի դեպի հեռուները...

Յեվ այն ժամանակ Սիրը, նայելով այդ բոլորին, կզդա, վոր ծանր աշխատանքի որերից մեկն էլ մեծ, քաղցր հիշողություն է մնացել մեջը...

Յերբ Սիրը մոտեցավ ապրյուրի ժայռին, հանկարծ ինչ վոր չիմացող ընկավ ականջը,—կարծես մեկը կածանի մի կողմից մյուսն անցավ, յեռևից չարժելով մանր քարերը։ Նա կանգ առավ, ականջ դրեց։ Լուռ եր չորս կողմը, հեռվից լսվում եր միայն գետի վշշոցը։

«Դուցե դայլ եր, կամ թափառական շուն», անցավ նրա մտքով. բայց իսկույն նրան ցնցեց մի ուրիշ կնճռաբություն.—«Իսկ չեթե թշնամի լինի, գյուղի կուլակներից մեկը...չե՞ վոր ամեն որ նրանք սպառնում են կոլխոզի պատճառով»...

Նա չարժվեց առաջ՝ դանդաղ, զգույշ քայլերով: Արդեն մտածում եր, թե ինչպես պիտի անդեն պատժի հարձակման դեպքում.—դուցե հանդցնի լապտերը և փոխի ճամբան...

Բայց մինչ այդ անելը, հանկարծ յեռևից՝ թագտից դուրս պրծան յերկու հոգի ու հարձակվեցին նրա վրա: Պայման եյին արել—լուռ մնան, վոր չճանաչվեն. բայց մեկը նրանցից չհամբերեց, կատաղած ձայն տվեց.

— Ա՛յ յես քո յեկած ճամբեն անիծե՛մ:

Մի ակնթարթում Ակոբը յես զարձավ, նկատեց խանչալի փայլը, նույն վայրկյանին մյուս հարձակվողը փայտի հարվածով կոտրեց, փշրեց նրա լապտերը: Ու սկսվեց կռիվը մթության մեջ: Ջնայած տեղացող հարվածներին, Ակոբը վրա ընկավ, ձեռքերն արյունոտելով բռնեց մեկի խանչալը, ու ճղնում եր խլել նրա ձեռքից, բայց այդ ժամանակ մյուս ընկերը մեկ—մեկի վրա խփում եր յեռևից խանչալի բերանով, վախենալով ծայրը խրել մարմնի մեջ, վոր սպառնություն իր վրա չընկնի: Յերբ Ակոբը մի ուժեղ հարվածով դեսին գլորեց իր դիմացինին, իսկույն յերեսը զարձրեց դեպի մյուս սխոյանը, բայց վերջինս նկատելով իր ընկերոջ անկումը, թողեց ու փախավ:

Ակոբը նորից դիմեց դեպի առաջին հարձակվողը, բայց սա յել անհետացել եր:

Նա մի վորբ առաջ անցավ, ականջը ճայնի պահած՝ կանդ առավ մի քանի րոպե, վոր թվաց մի յերկար ժամ, բայց ճայն—ծպտուն չկար: Վերջապես համոզվելով, վոր վտանգ չկա, չարունակեց իր ճամբեն: Հանկարծ վոտքի տակը ապակու կտորներ զգնգացին: Նա խորը թափով կանգնեց իր կոտրած լապտերի մոտ, ետևս հրաժեշտ եր տալիս մեռած ընկերոջ, ու վերցնելով լապտերի յերկաթե կմախքը, առաջ անցավ:

Հազիվ մի քանի քայլ արած, նա զգաց, վոր արյունահոսությունն ուժեղանում է: Վերքերը մրմռում եյին. արյունը ծծվում, սառչում եր շապկի մեջ: Նըստեց մի քարի վրա, հանեց չոքերն ու պատառոտելով շապիկը, մի կերպ կապկպեց վերքերը: Յերբ վեր կացավ տեղից, գլուխը պտտվում եր, թուլացած մարմինը հրաժարվում եր չարժվելուց: Մթնում խարխափելով, չարունակ ընկնելով ու դեմ առնելով քարերին, թփերին, նա յերկար չարչարանքից հետո ուժասպառ տուն հասավ:

***

Դոմունիզմը կգա սրտերի,
Սրտերի վրայով կգա նա,
Համամնական հասուն սրտերի,
Սրտերի վրայով կգա նա,
Իմ յերկրի փրփրաբաշ ջրերի,
Ջրերի վրայով կգա նա,
Լույսով լի պղնձե լարերի,
Լարերի հոսանքով կգա նա:

Կզնգան ռելսերը յերկաթի,
Յերկաթի ճամբեքով կգա նա.
Կփլչեն կարգերը դարերի,
Դարերի վրայով կգա նա.
Թշնամին կլինի մահով լի,
Մահերի վրայով կգա նա.
Ընկե՛ր իմ, չառաչուն մեր կռվի,
Մեր կռվի չառաչով կգա նա:

Իսկ յեթե չհասնեմ այն որին,
Չհասնեմ այն որին, յերբ գա նա,

Իմացե՛ք, վոր սիրտս քայլերի,
Բայլերի ձայներից կարթնանա.
Միայն թե, ընկերնե՛ր իմ անթիվ,
Աստգե՛ք—յեղել ե մի պոյետ,
Վոր հառած աչքերը քո ճամբին՝
Շնչել ե քո ամեն քարի հետ:

ԱՌԱՋԻՆ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

Տաք քամին հալեցրեց դաշտերի ձյունը ու դրոհեց դեպի Մացմեխի լեռնալանջերը. առատ ձյան դերությունից ազատված գետինը չնչում եր հողի դուրալի հոտով, ուռել եր, փափկել:

Մի չարաթ ե, ինչ հինգ բրիգադն էլ մեղվի նման ներս ու դուրս էին անում գյուղից դաշտ, պարարտանյութ չաղ տալիս, ամեն մեկը դիտեր իր հողը, իր պարտականությունը:

Դաննելանց Սերգոն չատ գոհ եր բրիգադների վերակազմությունից: Ջմեռը պահած իր յեզները համարյա չփոխեցին և թողին իր դուքանի վրա:

Իրիկունը, յերբ Սերգոն յեզների կերն եր տալիս, բրիգադավար Մացակը յեկավ, ասաց, թե առավոտը վարի յեն դուրս գալու, հենց վոր սիգնալ լինի՝ դուքանն ու յեզներն իրենց սարքով պատրաստ լինեն, վոր հավաքվեն կոոպերատիվի առաջը:

Վողջ իրիկունը Սերգոն չքնեց:

Գնաց գոմ, յեզների առաջ խոտը մի-մի խորոմ ավելացրեց, դուրս յեկավ բրիգադավար Մացակի բակը, ջոկեց իր դուքանը, անտղեց անիվները, վնաները, խոփը, դանակը, կանչեց Մորենին, դուքանը նրա հետ բարձրացրեց, տալլի մեջ դրեց, Մորենին պատվիրեց, վոր ամբողջ ողակը գոմը հավաքի, յետ դարձավ տուն:

Սերգոյի կինը կաթը նոր կթել, դարակի վրա յեր դրել: Յերեխաները հորը սենյակում պես՝ յետ քաշվեցին

ծրակի առաջից. մեծ աղջիկը՝ Հերիքնազը ջուր բերեց, վոր հայրը ձեռները լվանա, հաց ուտի, քնի և չատ զարմացավ, յերբ հայրը պատվիրեց աղն ու քրեզանը հանի, աղաջուր սարքի:

Մի յերկու պատառ հաց ու պանիր ուտելուց հետո, Սերգոն ճրագը մի ձեռին, աղաջուրը՝ մյուս, գոմ մտավ: Մորենն ու հոտաղները արդեն սպասում եյին նրան:

Սերգոն թևերը քշտեց ու ջահելներին դործի դրեց. սկսեցին յեզների ոտն աղաջրով տրորել մինչև ուշ գիշեր:

***

Թե յերբ մտավ անկողին և յերբ վեր կացավ Սերգոն եդ դիշեր, վոչ վոք չիմացավ: Դիշերը կուսքնկի քարտուղար Եմինը, կոլխոզի նախագահ Հմայակը քաղաքից յեկած մարդկանց հետ նստել եյին մինչև կես գիշեր: Սիգնալն ուշանում եր, մինչդեռ յեզները կուշտ կերել սպասում եյին: Դուլակ Բարսամը Սերգոյի տան կողքից անցնելիս՝ խոր բարև տվեց ու խոսքի բռնվեց:

Թե—եդ ի՞նչ թափարեքի մեջ եք, Սերգո՛, վար եք անե՞ս, կեսորից հետո՞:

— Հա՛, կոլխոզի բրիգադներով հիմա գնում ենք վարի,—ասաց Սերգոն:

— Դե կոլխոզ ա, վարը կեսորին կսկսեք, գարնանացանն էլ աշնանը հազիվ պրծնեք,—կուչտ ծիծաղելով յեզրակացրեց Բարսամն ու ասաց,—ձե՛ռ քաշի, ա՛յլի կոլխոզից. բրիգադս վո՞րն ա, աղակս վո՞րը, քանի կոլխոզում մնաս, ենքան վատ:

Սերգոն հազիվ զսպեց իրեն ու նրա խոսքը կտրեց.

— Հա՛, եզպես ե մեր բանը, գնա՛, խրատներդ քեզ պահի, մենք լավ գիտենք, թե ում վերջն ե վատ:

Բարսամը թշնամական հայացքով նայեց ու չուռ յեկավ:

Մինչդեռ Սերգոն մտքի մեջ հաչվում եր, թե ինչ

եր անհրաժեշտ վարի համար ու ինչն և ինքը մոռացել, թե ամեն ինչ իր տեղն է արդյոք։

Հետո Սերգոն դոմ մտավ ու նրա յետևից ողակը. դուրս բերին տաս յեզն էլ։ Բուրչիկն ուրախությունից սկսեց որոնգ տալ, Ղարագյոզը հեզ աչքերով Սերգոյին էր նայում։ Լուծերը հագցրին ու հերթով կապեցին չղթայով։ Հորիքչի Համայակը նստեց սարքաստակի լծին և գլուխը չուռ տվեց ու յեզների գլուխը չուռ տվեց դեպի դղամեջ։ Սերգոն հանկարծ նոր հիշեց, վոր խոփը մաքրելու համար բահ չի վերցրել, մեկ էլ ուրագը։

Մինչև Հերիքնազին կանչելը, մինչև բահն ու ուրագը ճարելը, Սերգոն գութանից յետ ընկավ ու վորպեսզի յետ չընկնի հարվածային մանկալներից՝ վազվազ, չնչակոտոր հազիվ հասավ։

***

Առաջինը դուրս եր յեկել Հակոբ Անտենյանի ողակը։

Հրապարակի մեջ կանգնել եյին Եմինը, Համայակը, քաղաքից յեկած բրիգադն ու կոլխոզնիկները։

— Բարի լուս ձեզ,—ասաց Սերգոն ու դարձավ դեպի Ռորենը, վոր յեզնատյլով գութան եր բերում,— քչի՛ր գա, քչի՛ր գա, խա՛նելի մի։

— Բարի լուս, քեռի՛ Սերգո,—կանչեց Համայակը։

— Մրցանակի յես սրժանի, Սերգո՛ բիձա, 30 րոպեյում ես դուրս յեկել. ամեն ինչ սարքին ա՞, յեզները կուշտ ե՞ն, թխմարած է՞ն,—սկսեց հարց ու փորձ անել Եմինը։

— Սարքինը՝ սարքին ա, հնամա մեզ չատ ոպասեցնե՛լ մի՛ք, ձեզ մատաղ. գործը գայլի՛մ բանե՛ք՝ բարատի հոգին հանեք։

— Ուրադն ինչի՞ համար ես վերցրել, կոխվ չկիսի գնաս հա՛,—մեկ ընկավ են կողմից Վահանը, ծաղրանքով ցույց տալով, թե ինչպես ուրագը Սերգոն խրել եր գոտին։

— Չե՛, գո գլուխը թոցնել պտեմ. բան ա, պատահմունք ա, մի բան կկոտրի՝ կսարքենք,—խոսքի տակ չմնալով՝ պատասխանեց Սերգոն։

Մինչ այս, մինչ այն, մի քանի րոպեյում հրապարակը լցվեց մարդկանց, յեզների բառմությամբ, գութաններով, սայլերով։

Ամենից վերջը հրապարակ հասան հինգերորդ բրիգադի յերկու գութանները։

Տղերքն սկսեցին վերջին յեկողներին ձեռ առնել.

— Ա՛րա՛, Լևո՛ն, յեզնե՞րն են շաչ, թե Հորիքչին, Ռեյրուեթի ողակը ճամբեն չչկլել ե, դրա համար ե ուշացել.—սկսեց մեկը, ակնարկելով Հորիքչուն, վորի աչքերը չիլ եյին։

— Ռեյրո՛ւեթ, Ռեյրո՛ւեթ, սելիդ ակը պատառ ա դալիս,—իրրև թե անսովոր մի բան ե պատահել, դուռում եր մեկը ծաղրանքով։

— Ա՛րա՛, յեզան նալը վեր ընկավ...

Խեղճ Ռեյրուեթը գլուխը կորցրեց, ինքն իրեն վրա բարկանալով, թե ինչու յե ուշ յեկել։

***

Մինչև բոլորի հավաքվելը, Համայակը դասավորեց բրիգադները ողակ-գութաններով հրապարակում և մոտակա փողոցներում։

Սիգնալից 40 րոպե անց՝ ամեն ինչ պատրաստ եր, բոլորը հրապարակումն եյին։

— Պատրաստե՛լ գութանները,—գոռաց Համայակը։

— Գութանը վե՛ր բեր,—ձայն տվեց Սերգոն Ռորենին, վոր նստած եր սայլին։ Գութաններն իջեցրին ու հազցրին անիվներին։

Քիչ եր մնում Ռորենի խամության պատճառով գութանն ամրացնելու գործն ուշանար, չղթան կարճ եր, չեր հասնում։

—Ծռի՛, թիկի՛ գութանը ձախ,—սղղեց Սերգոն ու տնքալով, գոռով հազցրեց չղթան։

— Բրիգադ առ բրիգադ, լաո ոդակների, դեպի Ստարատի դաշտը, մա՛րշ...—գոռաց կոլխոզի նախագահ Հմայակը ճիշտ այնպես, ինչպես կարմիր բանակում յեղած ժամանակ։

Գումաններին յերկար չարանը ձգվեց դեպի դաշտ, վողջ բազմութիյունն ել նրա յետևից։

Համազհման այդպիսի բան իր օրում չեր տեսել։ Սերգոն ուրախութիյունից արտասվում եր։

Վարուչեցին փորձնական վարն սկսել դպրոցի հողամասում։

Հինգ բրիգադների առաջին ոդակները բաց արին առաջին սև ակոսները, տասնուհինգ գուման միքանի րոպեյում սևացրին դաշտը։ Ցեղները խամաքել եյին ու դժվար եյին լուծը քաշում, ծռում եյին գումանն ալ ու ձախ. ենքան չարաչել եյին չաո յեղներ, վոր կոտրում եյին լուծն ու փախչում։ Ներգյանի գումանի անիվը դուրս յեկավ ու հաջորդ գումաններն ել կանդնեցրին։

Համազհման կոլխոզն առաջին քննութիյունը բռնեց. փորձնական վարը հաջող անցավ։ Հրահանգ տրվեց վարը զարգացնելու։

Սերգոն գումանը չուռ տվեց ալ, թափեց վերջին հողակոշտերը խոփի բերնից ու պատկերից ձախ կողմի վրա։

Դեղամիջում բացվեց բազմամարդ միտինգ. գումանավարներին ընդունեցին առաջնորով։ Ցերք կոլտնտեսին պարգևատրվողների ու խրախուսանքի արժանացողների ցուցակում Սերգոյի անունն ել, Սերգոն բարձրացավ սայլի վրա ու ասաց.

— Ընկերնե՛ր, մենք հիմա չե՛նք, վոր մրցանակ պիտի առանանք. յերբ ցանենք, հնձենք, կալենք, լաո բերք առանանք, ե՛ն ժամանակ տվե՛ք իմ մրցանակը։

---

1. Նկարագրեցե՛ք կոլխոզի աշխատանքային կյանքը։

2. Ինչո՞ւ կոլեկտիվ-բրիգադային աշխատանքն ավելի արագ արտադրութիյան է առաջացնում աշխատողների մեջ։

3. Այս պատմվածքում բարբառով արտահայտված նախադասութիյունները վորձեցեք գրական վերածել։

ՍԻՔԻՐՈՒՄ

Տեսա Սիբիրը յես,
Կուզնեցկատրոյը մեծ,
Վիթխարի գումաններ
Ու մարդիկ,
Հաղթանակ տեսա յես
Ու հալոցք մեսաղի,
Մեսաղի պես ոսկուն
Բյուր մարտիկ։

Տեսա հերոսական
Այն մեծ բանակը մեր,
Պանդավառ տեսա յես՝
Պայքարում,
Նրանց կամքը հաղթող
Ցեվ ուժը տեսա յես՝
Ամեն մի պայտասում
Ու քարում։

Այնտեղ վիշերը յես
Ցերեկի պես տեսա,
Ցերեկը՝ նույնպես
Ցերեկի,
Աշխատանքը համառ,
Կյանքն անմահ տեսա—
Սոցիալիստական
Վերելքի։

Տայգաները կարած
Մարդիկ տեսա այնտեղ,

Վորոնք յեկել եյին
Պայքարի,
Վորոնք յեկել եյին
Իրենց ույժը տալու
Սիբիրի յերկաթին
Ու քարին։

Կիրզիզների հղոր
Բանահյուսը տեսա յես,
Քրտնած ճակատներով
Ցեվ արի,
Աչքերի մեջ նրանց
Ուժի կրակ տեսա,
Ձայների մեջ կամքը
Վիթխարի։

Ցեվ այս բոլորի մեջ
Ցես արևը տեսա
Սոցիալիստական
Սբիրի,
Սիրտս վառվեց նրանց
Կրակներով անմար,
Բարևները տվի
Իմ յերկրի։

ՌՈՒՇԱՆԻ ՔԱՐԱՓԸ

Ձաթնանց գերդաստանն անհուշ որերից
Ցեղել է գյուղում անվանի, հարուստ։
Նա գավթել է միշտ լավը հողերի։
Ցորենն է փռել Ձաթնանց ամբարում։
Աճել է ժամու, ամպհովանու տակ,
Վորպես զարավոր մի ընկուզենի։

Փռելով գյուղում արմատներն անտառ՝
Ծծել է նրա հյութը վայրենի։
Իշխել է գյուղում, վորպես տանուտեր,
Վորպես մի վայրի կառավարություն։
Ցեվ կուչ է յեկել Թյվառ գյուղացին
Ձաթնանց զարավոր ընկուզենու տակ՝
Աչքերը հառած ավելցուկ հացին,
Իր վաղորմելի բախտին անդիտակ։
Իսկ Ձաթնանց Սանթրոսն անողոք բահով
Ձեղքել է գլուխն աղքատ Ռուշանի,
Հափշտակել է ընտիր սեւահողն
Ու սովի մատնել մի տուն ընտանիք։
Մեռել է Ռուշանն եղ վերջից հետո
Ցեվ ման է յեկել Սանթրոսն անպատիժ։
Դատարան մտած հիսուն մանեթով
Դարձել է չհաս, չենթակա գատի։
Ջավթել են այսպես ու կիրել, մարսել
Ձաթնանք Ռուշանի հողը բերքատատ։
Բայց հին անունն է վրան մնացել.
Գյուղում ասում են «Ռուշանի քարափ»։

— Վո՞ր չքնաղ գրվածք է «Ռուշանի քարափը»։

— Ո՞վ եր Ռուշանը, ինչո՞ւ նրան սպանեց Ձաթնանց Սանթրոսը։

— Լավ հողերն ո՞ւմ եյին պատկանում։

ՑԵՂԶԵՐՈՒՆ

Աշխատությից առաջ յես ու վորսկան Ռսեյը զարան եյինք մտած Ցեղնուտի կիրճում։ Ցես իմ գիրքից պատմում եյի առաջիս ընկած բացատը։ Դիմացս կանդնած եր խոր ու անթափանցելի մութն անտառը։

Հեռվհեռուն գիշերվա խաղարն սկսեց նռռացնալ։ Ժայռերը խոժոռ, քնաթաթախ դուրս նայեցին աղջա-

մուղձի մէջէն: Ցերեկինքն սկսեց գունաւորել ու պարզ-
ւել: Ապա յերեւաց լուսատուը: Վերկացաւ վաղորդեան
զեփիւռը: Ծաղիկները շարժեցին իրենց գլխիկները,
խոտերը դողդողացին, տերեւները շշշան արձակեցին:
Անտառն սկսեց զարթնել: Մառախլա թիթեղ մի ծխա
ճկաց, մի ուրիշը՝ մյուս թիթեղ, մեկին ել հեռվից...

Ցես աննկատելի դուրս եյի յեկել իմ թագստից ու
զմայլած դիտում եյի չուրջս-բնութիւնը, են սրբ-
բազան ժամին, յերբ ծագում է առաջին լույսը:

Հանկարծ մի ձայն... չորացած ճյուղ կոտրվեց
մոտիկ անտառում: Նայում եմ են կողմը: Անտառը
տակավին մութն է: Աչքս չի վորոշում, թե ի՛նչ կա
ենտեղ, մխայն պարզ լսում եմ զգուշ վտռնաձայն, վոր
խաշամը կոխելով առաջ է գալի—խը՛չա, խը՛չա,
խը՛չա... Բան չի յերեւում, բայց դարձյալ խը՛չա,
խը՛չա, խը՛չա—մոտենում է ավելի ու ավելի... և ահա՝
դուրս յեկավ...

Ցես առաջին անգամն եյի յեղջերու տեսնում ազատ
բնութեան մեջ: Նա դուրս յեկավ մի խաղաղ հպարտու-
թեամբ, վեհ ու չքնաղ, ինչպես բնութեան են ամեն զե-
ղեցկութեանների տերն ու թագավորը: Անտառի մթու-
թեան մեջ կանգնեց, թուխ դունչը դրավ դետնին, ապա
թե գլուխը բարձրացրեց, վայրենի չնորհքով վոլորեց
յերկայն վիզն ու նայեց իմ կողմը:

Ամենագեղեցիկ հայացքը, վոր յես տեսել եմ իմ
կյանքում:

Ցես չփոթվեցի, ամաչեցի, ուզեցի թաքցնել հրա-
ցանս... Շարժվեցի թե չէ, նա չտապով յետ թեքեց իր
կարապի վիզը· վիզը յետ թեքելուն պես հարևան դեր-
քից վորոտաց վորսկան Ռաուիի հրացանը: Հրացանի
ձայնից անտառը վորոտաց ու սկսեց ճրճռալ: Են յեղ-
ջերուն եր փախչում:

— Հայ քո տունը չքանդվի,—ինձ հանդիմանելով
դուրս թռավ վորսկանն ու վազեց դեպի մոտիկ բլուրը,
վոր տեսնի, թե վոր կողմից կերևա փախած վտրաը:

Առավոտը բացվում եր, և ինքան լուս եր, վոր կարող-
ացանք հանուչ խոտերի վրա դտնել թարմ արյան հետքը:

Վիրավորված եր յեղջերուն: Արյան հետքը բռնե-
ցինք ու դնացինք վորոնելու:

— Ենքան վոր արյուն է ռվիլ, ինչքան ուզում է
դնա՝ մերն է,—հայտնեց վորսկան Ռաուիը:

Իրիկնապահին նրան գտանք մի խոր անտառում:
Նա ընկած տեղից իր յերկայն վիզը մեկնեց մեզ վրա:
Ցես տեսա՝ ինչպես չեր կարողանում գլուխը պահի,
շարժում եր անդադար ու նայում եր մեզ իր պղտոր,
չբշկած, անորոշ հայացքով: Հանկարծ կարծես գլխի
ընկավ, աշխատեց վեր կենա, ծնկները վեր բարձրացրեց
ու կրկին ճղփալով ընկավ իր արյան մեջ՝ մի ծանր,
անզոր թառանչով:

Վորսկանը վրա վազեց... յես ուզեցի մի բան ասեմ,
ամաչեցի... Նա բռնեց յեղջերվի գլուխը, վոլորեց
գեղեցիկ վիզը... յես կրկին ուզեցի մեջ մտնեմ... Դար-
ձյալ սիրտս չարի... Ցավ ահա դաշույնը վայրատակեց:

Ցես յերեսս չշկեցի, իրավ թե սարին եմ նայում:
Ցետևից մի խուլ տնքոց լսեցի... ու, չգիտեմ ինչո՛ւ,
սկսեցի մտածել կյանքի ու մահվան մասին, և ինչես
ոգեղ եր թվում ինձ կյանքը...

ՓՐԻՍՏԱՓՈՐ ԿՈԼՈՒՄԲՈՍ

I

*Սրանից մոտ հինգ հարյուր տարի առաջ Հնդկաս-
տանն աշխարհիս ամենահարուստ յերկրներից մեկն եր·
այնտեղից արտահանում եյին թանկագին ապրանքներ՝
թեյ, մարգարիտ, ադամանդ, մետաքսեղեն, վոսկեթել
մանվածքներ, թեյ, սուրճ, դարչին, բրինձ: Վաճառա-
կանները հարիր եյին հապրում, ուղտերին բարձում, կա-
րավաններ կազմում ու ճամփա ընկնում: Կարավաններն*

անցնում էին լեռների կիրճերով, ափսոտա անապատներով, ովազիսից ովազիս, քաղաքից քաղաք. ուղտերը կոտորվում էին արևակեզ ավազից ու ծարավից, մարդիկ հիվանդանում էին, ավազակները կողոպտում էին կարավաններն ու գերի էին տանում կամ սպանում մարդկանց: Սմեն տեսակ վտանգների չենթարկվելով մեկ-յերկու տարուց վերջապես վաճառականները հասնում էին Միջերկրական ծովի ափերին, վորտեղից ապրանքները նավերով փոխադրում էին Յեվրոպա:

Շատերն արդեն սկսել էին վորոնել մի այլ ճամփա դեպի Հնդկաստան, ավելի կարճ, ավելի ապահով: Ջենովացի Քրիստափոր Կոլումբոսն էլ ամբողջովին տարված էր այդ մտքով:

Բախտը նրան գցել էր Պորտուգալիայի մայրաքաղաքը՝ Լիսաբոն: Նա գիտեր, վոր յերկիրը կլոր է, և համոզված էր, վոր Պորտուգալիայից չարունակ դեպի

արևմուտք գնալով՝ անպատճառ պիտի հասնի Հնդկաստան: Նա դիմեց Պորտուգալիայի թագավորին, բայց լսուր: Կոլումբոսը դիմեց իր հայրենի Ջենովա: Գնում եր Սպանիայով: Այստեղ մի վանահայր, վոգևորված նրա ծրագրով, խորհուրդ տվեց դիմել Սպանիայի թագավորին: Գիտնականները նրա առաջարկն անմիտ էին համարում, պալատականները ծաղրում էին: Յերկար տարիներ թագավորը խոսք չեր տալիս, վերջապես բոլոր խոչընդոտների դեմ պայքարելով՝ Կոլումբոսն ու վանահայրը հասան իրենց նպատակին:

Թագավորը խոստացավ ոգնել, յեթե Կոլումբոսը բոլոր գտած յերկրները կհպատակեցնի Սպանիային:

Պալոս նավահանգստում պատրաստված եր հին, քայքայված յերեք նավ. նավաստիներն ընտրված էին սմեն տեսակի վոճրագործներից ու հանցավորներից: Կոլումբոսը տեսնելով այդ, սաստիկ մտատանջության մեջ եր—ճամփա ընկնի՞, թե՞ հրաժարվի: Տասնութ տարիների չանքերից ու չարքաշությունից հետո հրաժարվե՞ր այս առիթից: Ուրիշ անգամ կաջողվե՞ր արդյո՞ք: Կոլումբոսը վորոշեց ապավինել իր ճակատագրին:

Հենց վոր փչեց բարենպաստ քամին, Կոլումբոսը նավը մտավ, հրամայեց խարիսխները քաշեն ու առաջ գնան:

— Բարի ճանապարհ,—կանչում եր ժողովուրդն ափից, մինչև վոր նավերն աչքից չքացան:

Այդ որը 1492 թվի ոգոստոսի 20-ն եր:

II

Նավերին դեպի Կանարյան կղզիները: Ղեկավարներից մեկը դիտմամբ կոտրեց ղեկը, վոր նավերն ստիպված լինեն յետ դառնալ: Բոլորն էլ չփոթվեցին և վատ նշան համարելով՝ պահանջում էին վերադառնան: Կոլումբոսը մի կերպ ուղղել տվեց ղեկը և հրամայեց առաջ գնալ: Սմենքը սրտնեղում էին, «իր հիմար քա-

հաճույքին ուղում և մեզ զոհել. բոլորիս կորսած չե մատնելու»:

Վերջապես հասան Կանարյան կղզիները: Ամենևին էր, որ այդ նավերով անկարելի չեր ճամփորդությունը շարունակել անծանոթ ովկիանոսով. նորոգելու համար մի ամբողջ ամիս պետք չեկավ:

Ղեկերը նորոգեցին, բոլոր փշած մասերը լուծեցին, թարմ ջուր, միս, վայտ վերցրին, ու մի կեսգիշերից հետո կոլումբոսը ճամփա ընկավ դեպի արևմուտք: Ցերը լույսը բացվեց, ել ցամաք չեր յերևում. չուրջը մխայն ծով եր ու յերկինք, անսահման տարածություն: Նավասաինեերին յերկյուղը ալրեց:

«Ուր և տանում մեզ. չորս բոլորը մխայն ծով և ու ծով, և որեցոր ավելի հեռանում ենք ցամաքից: Զենք ուզում, չե՛, նոր յերկրներ. Թող յետ տանի մեզ մեր հայրենիքը»:

Մի քանիսն զղուշացնում եյին, թե ծովային օրենքները խիստ են և մահի ու կյանքի իրավունք են տալիս նավապետին:

«Մեզ ի՞նչ,—կանչում եյին նավասաինեերը.—նա մենակ է, մենք չատ. ինչի՞ց ենք վախենում, ել ի՞նչ ենք վախենում, ել ի՞նչ ենք մտիկ անում»:

Կոլումբոսը լսում եր այս որոտունչները, հորդորում, համոզում, իսկ հարկ յեղած տեղը սատսում, սպառնում: Վեցերորդ որը տեսան ջրի յերեսին լողացող մի մեծ ղեբան, ուրախացան, կարծելով, թե ցամաքը մոտիկ է. հեռավոր ամպերը ցամաքի տեղ եյին դրել:

Շարունակում եյին նավել: Հասան մի տեղ, ուր ջուրը ծածկված եր խիտ խոտով, վոր խանգարում եր նավարկությունը: Բոլորն ել վախենում եյին՝ չլինի թե ծովի վերջն է ու խոտի տակ խութերը են ծածկված: «Նավերն ես և ծառերին կդիպչեն ու կփչրվեն. ամենքս կխեղդվենք»,—մտածում եյին նրանք: Բայց Կոլումբոսը սիրտ եր տալիս՝ «Զենք խեղդվի, ջրախոտ է, տակը քարեր չկան»: Լողում եյին խոտի միջով՝ կարծես մի կանաչ դաշտով: Վերջապես դուրս յեկան այդ խոտերից ել. կրկին միևնույն կապույտ ծովը, միշտ միևնույն յերկինքը:

Անցավ ել մի քանի որ, յերեացին բազմաթիվ թռչուններ. դիշերները նստում եյին կայմերի վրա, բայց արև ծագելուն պես թռչում, հեռանում եյին: «Յերեթ թռչուններ են թռչում, անշուշտ ցամաքը մոտիկ է»—ուրախանում եյին նավասաինեերը: Հաջորդ որը տեսան թռչող ձկներ, մի քանիսն ել նավերի վրա ընկան. յերբեք այդպիսի ձկներ չեյին տեսել:

Բայց զո՛ւր հույսեր, որեր եյին անցնում—ցամաքը չեր նշմարվում: Նավասաինեերը բացե իրաց հրաժարվում եյին ավելի հեռու նավելուց: Կոլումբոսը կանդնեց ապստամբների մեջտեղ ու կարուկ հայտարարեց. «Այսքան ժամանակ յեկել ենք, ելի մի յերեք որ սպասենք: Յերեթ այս յերեք որն ել ցամաքը չտեսնենք, կվերադառնանք տուն»:

III

Ապստամբները խռնարհվեցին. Կոլումբոսը հույս ուներ, վոր յերեք որում անպատճառ կհասանեն ցամաքին: Շատ նշաններ կային. հատակը չափելով նկատել եր, վոր հեռահար խորությունը պակասում եր, թռչունները պատվում եյին արդեն յերամներով. կային և փոքրիկ թռչուններ, վորոնք ծովափից հեռու թռչել չեյին կարողանա: Յերեկոները փչում եր մի այնպիսի տաք քամի, վոր ծովից չի փչում:

Ելի մի որ անցավ, և դեռ վոչինչ չեր յերևում: Կոլումբոսն ել հուզվում եր, բայց ցույց չեր տալիս և նավասաինեերին խրախուսելու համար հայտարարեց, թե յերկու հազար հինգ հարյուր ուրբի չե նշանակված նրան, ով ամենից առաջ կտեսնի ցամաքը: Ամբողջ գիշերը մարդիկ քնած չեյին. չատերը կայմերի վրա լսացրին: Իսկ Կոլումբոսը մտատանջության մեջ ինքն իրեն ասում եր. «Յերեթ այսոր ել ցամաքը չերևաց,

ինչ պետք է անեմ: Նավաստիները կապստամբեն, եւ ամեն ինչ կորած է»:

Լուսաբացից առաջ Կոլումբոսը չհլալ տախտակամած եւ հեռվում մի կրակ նկատեց. իր աչքերին չհավատալով՝ հանչեց մի նավաստու եւ ցույց տվեց հեռուն: Բերկուան էլ օրտատորոի նայում էին. կրակը չարժվում էր: Անհասկած՝ մի նավակ էր, իսկ նավակով ափից շատ հեռանալ վոչ-վոք չէր վստահանա: Կոլումբոսի ուրախությունը չափ չուներ:

Լուսյոր նոր էր բացվում, վոր առաջավոր նավից Ճայն տվին՝ «Ցամա՛ք, ցամա՛ք»: Կոլումբոսի նավն ամենից յիսուն էր. հետով այնտեղից էլ նկատեցին: Բոլոր յերնք նավերի վրա յեղ մի խելառ ցնծություն բռնկրացավ: Նավաստիները համբուրում էին Կոլումբոսի ձեռները, վոտները, զգեստի փեշերը: «Ների՛ր, ների՛ր, Կոլումբո՛ս, վոր չեյինք հավատում քո խոստումներին ու ըմբոստանում եյինք քո դեմ. ովկիանոս չտեսած՝ սարսափել եյինք»: Իսկ Կոլումբոսը յերջանիկ՝ կրկնում էր. «Ամեն ինչ մոռացված է, յես չեմ բարկանում ձեզ վրա»:

Բերնք ամիս անծայր ջրերով նավելուց հետո վերջապես հասնում էին ցանկալի ցամաքին:

Կոլումբոսը հրամայեց՝ մակույկներն իջեցնեն ու իր ոչնաական նավապետների ու նավաստիների հետ դիմեց դեպի ափը: Քանի ավելի եյին մոտենում, այնքան ավելի եյին զարմանում: Ափին բարձրանում էր վիթխարի անտառ, վորի ամեն մի հսկայական ծառը հարյուր մարդ կարողանար գրկել, իսկ ամեն մի տերևը պիվ չորս մարդ կծածկեր: Ծառերը, ծաղիկները, թռչուները՝ բոլորն էլ այնպես չեյին, ինչպես Եվրոպայում: Անտառից դուրս վազեցին վայրենի մարդիկ՝ մորթին կարմիր, գլխի մազերը սև, յերկար ու կոշտ, անմորուք.. ամբողջովին մերկ եյին, միայն գլխին փետուրներ ու զարդեր. մարմինն ու յերեսը նախշած բազմերանգ ներկերով, ականջներից ու ռունգներից ոսկիներ

ու վոսկու կտորներ կախ տված: Նրանք ապշած նայում եյին նորեկներին:

Ցնծությամբ, Կոլումբոսը գրոշակը անկեց ու հայտարարեց.—Այս յերկիրն ու ինչ վոր այստեղ կա —առնում եմ Սպանիայի թագավորի իշխանության տակ:

Նավերից վորոտացին թնդանոթները, քահանան խաչ ու խաչվառով առաջ անցավ, բոլորն էլ ծունկ չոքեցին ու գոհություն տվին ամենաստծուն աջողության համար:

Այդ կղզին Կոլումբոսն անվանեց Սան-Սալվատոր, այսինքն՝ Սուրբ փրկիչ, ի հիշատակ իր փրկության:

Վայրենիները, տեսնելով սպիտակամորթներին ու լսելով թնդանոթների վորոտը, կարծեցին, թե սպանցիք աստվածներ են ու յերկինքի վորդիք, վոր յեկել են ծիածան ամերով և կարող են փայլակ ու կայծակ հանել, և յերկրպագում եյին նրանց:

IV

Կոլումբոսն այնուհետև մի քանի ուրիշ կղզիներ էլ գտավ ու հավատացած լինելով, թե գտել է Հնդկաստանի մերձավոր կղզիները, յերկիրն անվանեց Վեստ-Ինդիա, այսինքն Արևմտյան Հնդկաստան, իսկ վայրենիներին՝ հնդիկներ: Հիմնելով կղզիներից մեկի վրա մի ամրոց ու մարդկանց կեսն այնտեղ թողնելով՝ նա վերադարձավ Սպանիա:

Յերբ Կոլումբոսի նավերը մտան Պալոսի նավահանգիստը, քաղաքի բոլոր յեկեղեցիների զանգերը բարձրաձայն զողանջեցին, թնդանոթները վորոտացին, և ժողովուրդը ցնծությամբ դիմավորում էր:

Յերբ նա ներկայացավ թագավորին ու թագուհուն, առջևից գնում եյին հետը բերած հնդիկները, տանելով նոր յերկրի բերքերը՝ վոսկի, հարստոֆիլ, սմբնդեղ, պտուղներ, թռչուններ և այլն: Կարստոֆիլն ու սմբնդե-

քը մինչև այդ ժամանակ անծանոթ եյին յեվրոպացի-
ներին:

Այժմ բոլորը խոնարհվում եյին Կոլումբոսի առջև, և ավելի նրանք, ովքեր առաջ խելառ եյին անվանում նրան: Թագավորը Կոլումբոսին պարգևեց դրամ, պատիվներ, պետական աշխատանք. Կոլումբոսը փողոցներում թագավորի կողքին եր գնում ձիով. դեռ վոչ վոք այդպիսի պատիվ չեր արժանացել:

Հաջորդ ճամփորդություններին Կոլումբոսի հետ նոր աշխարհը գնացին բազմաթիվ զաղթականները, վարունք վորոնում եյին վոսկի և անհաչիաս հարստություն: Նոր և նոր յերկրները եյին բացվում: Հիմնվեցին նոր քաղաքներ: Կոլումբոսը պահանջում եր, վոր զաղթականները մեղմ վարվեն վայրենիների հետ և չխաթաղեն նրանց, և խիստ պատժում եր վոճրագործներին ու ծուլերին: Բայց զրանով բազմաթիվ թշնամիներ վաստակեց, վորոնք զրպեցին թագավորին, վոր նրա տեղ մի ուրիշ կառավարիչ նշանակի: Այդ կառավարիչը հանեց Կոլումբոսին պաշտոնից և չղթայակապ ուղարկեց Սպանիա: Թեև թագավորը հրամայեց չղթաները խախուն հանեն, բայց Կոլումբոսը յերբեք չեր մոռանում այդ ապերախտությունը և ատում եր իր ազգականներին.

«Ցերը մեռնեմ, այս չղթաներն էլ ինձ հետ դրեք դագաղիս մեջ»:

Այնուհետև նորից մեկ անգամ Կոլումբոսը փորձեց արևմտյան ճամփով Հնդկաստան հասնել ու յերկար չդրեց մի անծանոթ մայր ցամաքի ափերի մոտ: Նավաստիները ուրախ չարամիտ մարդկանցով չդժգոհեցին, հոգնած՝ նա վերադարձավ Սպանիա: Այս անգամ թագավորն էլ յերես դարձրեց նրանից և չուզեց նույնիսկ ընդունել իր մոտ: Վշտից, անհաջողությունից արտաբևված՝ Կոլումբոսը հիվանդացավ և մեռավ: Նրա հետ թաղեցին և նրա չղթաները, մեկ պարգևը, վոր մնացել եր իրեն այնքան յերախտիքների փոխարեն:

Նա մեռավ՝ հավատացած լինելով, վոր գտել է Հնդկաստանի արևմտյան կողմերը: Բայց չստով պարզվեց, վոր նրա գտածը մի նոր աշխարհ է: Այդ աշխարհին հետագորդները նույնիսկ չամչին Կոլումբոսի անունը. նա կոչվեց Ամերիկա, մի յերկրորդական ճամփորդի անունով, վոր իր մի զրված քով առաջին անգամ նկարագրել եր այդ նորագյուտ յերկրները:

ՓՈՔՐԻԿ ՎԱԼՏԴՅԱՆ

Ընկեր Լենինի քույրը պատմում է.—

«Մեր Վալոդյան վազում եր բակում, այդտեղ, բուրթանում եր ծառերի վրա, մեզ հետ զանազան խաղեր եր խաղում: Առանձնապես սիրում եր կրոկետ խաղալ: Ձմեռը սիրում եր փոքրիկ սահնակով սղոցել սառցե բլրակից, վոր շինված եր լինում մեր բակում, սիրում եր նաև ընկերների հետ ճնապնդի խաղալ:

Մեր մենք մեր ծնողների հետ հաճախ հյուր եյինք գնում Կազանի նահանգի Կոկուշկինո գյուղը, մեր աղգականների մոտ: Այստեղ Վալոդյան չարունակ գյուղի յերեխաների հետ եր լինում: Նա քաղաքից իր հետ գյուղն եր բերում զանազան գյուռնի կոճիկներ և գյուղացի յերեխաների հետ կոճի յեր խաղում և հպիվ եր պատահում, վոր տարվեր, և գյուղացի յերեխաներին մեծ ցավ եր պատճառում այդ:

Ցերբ հասակավորները գնում եյին դաշտ գիշերապահության, Վալոդյան նրանց խնդրում եր, վոր իրեն էլ տանեն, աղերսով.—«Ցնա ձեզ համար հրաշարաստեմ թեյ, շաքար. կրակ կանեմ, ճյուղեր կկոտրեմ»: Բայց նրանք մերժում եյին ու ասում.—«Չե՛, Վալոդյա, դու փոքր ես, ի՞նչպես կարող ես մեզ հետ գիշերապահություն անել»:

Բայց Վալոդյան ինքն իրեն արտասվելով, հա-

ճախ նրանց հետքը բռնած՝ դիվերսիոն տեղն էր գնում։

Վալոդյայի ամառային սիրելի զվարճություններից էին ձկնորսությունը և լողալը, իսկ աշնանը սիրում էր թռչուններ վտրաել ու այլ և այլ թռչուններ դնել։ Նա թռչուններին յերկար չէր պահում վանդակում, շատ չուտով արձակում էր։

Վալոդյայի հասակակից ընկերներից վոչ վոք չդիտեր նրա նման զվարճանալ և չարություն անել։ Նա շատ ուրախ և ընկերություն սիրող յերեխա յեր։

Վալոդյան սիրում էր չարություն անել, բայց և սիրում էր լավ սովորել։ Նա գրել-կարդալ և սովորել հինգ տարեկան հասակում, մեր մոր ողնությամբ։ Վալոդյայի հետ միասին կարդալ և սովորել նաև քույրը—Ոլիան։ Նրանք յերկուսն էլ ընթերցասեր էին։ կարդում էին մանկական գրքեր, մանկական ամսագրեր։

Նրանք չուտով սկսեցին ռուսաց պատմություն պատմվածքներ կարդալ, վոտանավորներ սովորել։ Ընթերցանությունը վերջացնելուց հետո քույրը ու յեղբայր գուրս էին վազում, գնում խաղալու։

Ինն ու կես տարեկան հասակում Վալոդյան մտավ գիմնազիայի առաջին դասարանը։ Նա սովորում էր հեշտ և սիրով. նա շատ ընդունակ էր ու աշխատասեր։ Հայրս եր սովորեցրել թե՛ նրան և թե՛ մեզ բոլորիս—լինել ջանասեր և դասերն ու աշխատանքները կատարել ճիշտ և ուշադիր։ Վալոդյան թե՛ իր բացառիկ ընդունակությունների և թե դասարանում դասերին ուշադիր լինելու չնորհիվ, տանը դասերի վրա շատ ժամանակ չէր գործ գնում։ Նա միայն թեթևակի վերատուգում էր գրած անցածները։

Ցերեկոները մենք յերեխաներս ու մեծերը նստում էինք սեղանատան մեծ սեղանի չուրջը՝ մեկ ընդհանուր լապտերի տակ՝ մեր դասերն ու աշխատանքները կատարելու. Վալոդյան իր դասերն արդեն վերջացրած

եր լինում և սկսում եր կատակներ անել, փոքրերին ծաղրել, բարկացնել։

— Վալո՛դյա, բավական է, հանգիստ կաց։

— Մայրի՛կ, Վալոդյան խանգարում է։

Բայց Վալոդյան նստելուց ճանճրացած՝ սկսում էր չարություն անել, դես ու դեն պտտվել։

Վալոդյան բոլոր դասատաններումն էլ լավ եր սովորում և բոլոր առարկաններից էլ հավասարաչափ առաջադեմ եր։

Նա չափազանց բարի յեր և ուրիշների կարիքների մասին մտածող։

Վալոդյան դեռ վաղ հասակից հետաքրքրվում էր քաղաքական կյանքով ու աքսորյալների վիճակով, վորոնց մասին նրան պատմում եր նրա մեծ յեղբայր Ալեքսանդրը. Վալոդյան շատ եր հետաքրքրվում բանվորների ու գյուղացիների վիճակով։ Նա իրեն հուզող բոլոր ինդիրները քննում եր իր մտավիկ բարեկամների, դպրոցի և խաղընկեր հասակակիցների հետ միասին։ Նա աչքի յեր ընկնում իր բացառիկ յեռանդով՝ կամքի ուժով և ընկերների վրա ազդելու հմտությամբ, համոզելով և ապացուցելով նրանց իր կարծիքների ճշտությունը։

Ցերը նա ավելի մեծացավ, ամբողջ որերով գրքերից գլուխը չեր բարձրացնում։ Նա վոչ միայն գիտեր գրքեր կարդալ, այլև գիտեր ուսումնասիրել—կազմում եր կոնսպեկտները, արտագրում հատվածները, վորպեսզի հիշի ամենակարևոր տեղերը—

Նա գրքերից բաժանվում եր միայն զբոսանքի կամ գրույցի ու վիճաբանության համար իր այն փոքրաթիվ ընկերների հետ, վորոնք նույնպես պատրաստվում եյին իրենց նվիրելու հեղափոխական գործունեության։

Վալոդյան իր հարազատներին շատ եր սիրում, մանավանդ մորս, վորի կարծիքներին շատ ուշադիր եր։ Վալոդյան սկսել եր ծխել. մայրս վախենալով, վոր

Ծխելը նրա առողջությունը կվնասի, սկսեց համոզել նրան, որ ծխելը թողնի. բայց մորս բերած պատճառաբանությունները ծխելու վնասակարության մասին՝ չազդեցին Վալոդյայի վրա: Այն ժամանակ մայրս հիշեցրեց նրան, որ նա չունենալով սեփական աշխատանք, ավելորդ ծախս, թեկուզ մի կոպեկի, չպետք և թույլ տա իրեն (այդ ժամանակ մեր ամբողջ ընտանիքն ապրում էր մորս ստացած փոքրիկ կենսաթոշակով):

Մորս այդ խոսքերից ազդված՝ Վալոդյան ընդմիշտ թողեց ծխելը:

Վերջը փոքրիկ Վալոդյան փոխվեց, դարձավ ընկեր Լենին, բանվորների ու գյուղացիների առաջնորդ և ուսուցիչ: Նա մեծամեծ գործեքի հետ չմոռացավ առանձին մարդկանց կարիքը: Նա իր ամբողջ կյանքը նվիրեց բանվորներին և գյուղացիներին, ոգնելով նրանց մեծ թե փոքր կարիքները ժամանակ: Նա մի առանձին ջերմ սիրով զբաղում էր նրանց հետ, խորհուրդ տալիս, սովորեցնում էր նրանց հեղափոխական պայքարին, աշխատում էր ոգնել ամեն մեկին, որքան կարող էր: Բայց մեկնում ժամանակ դեսեր ուրախ կատակներ անել:

Լ Ե Ն Ի Ն

(ՀԱՏՎԱԾ)

Գիտե՞ք, թե աշխարհի արդանդից
Ինչքա՜ն հանճարեղ մարդիկ,
Ինչքա՜ն, ինչքա՜ն կրոմվել,
Կամ հնդիկ Գանդի—
Անթիվ
Ծեղել են,
Կան դեռ
Ու կգան—
Այնինչ Իլյիչը—մեկ է,

Ուրիշ Իլյիչ—դժվա՛ր թե,
Ուրիշ Իլյիչ—չկա:

Դասակարգը
Դար գարի յեռանից
Կերտել է Իլյիչին,
Դասակարգը



Դար գարի յեռանից
Հյութեր և նյութել:
Անգամ ջրկիրը Տիբեթի
Տվել է Իլյիչի ուղեղին—
Մի քիչ:

Թել-թել,
Նյարդ-նյարդ ի յեռանից,
Նյարդից թե քո,
Թե իմ—
Առել է դասակարգը:

Տվել ե Լենինին։
Թել–թել,
Դար–դարի յեռանից
Հյուսել ե դասակարգը—
Բարդ
Կանվա։

Ցեվ հիմա—
Իլյիչը
Վախճանվա՞ծ...
Մեռա՞ծ կամ,
Կամ չկա՞։
Ջե՛,
Պրոլետա՛ր,
Իլյիչը—մեջդ ե,
Իմ մե՛ջ ե,
Նրա մե՛ջ ե,
Իլյիչը—կա՛։

Կա՛ դասակարգը։
Դասակարգը—
Պարզել ե Լենինին իբրև դեմքիդ,
Դասակարգը հակադրել ե հնին—
Իր
Լենինին։
Ու կպարզե հնին—
Լենինիզմ։

Ե՛յ,
Դո՛ւք,
Ռոկֆե՛լլեր,
Մոր՛ննես,
Մո՛րգան կամ.
Լսո՞ւմ եք՝
Մենք դեռ կզա՛նք

Մեր բանակը կանցնի դեռ ձեր աչքաթոզով։
Դեռ կզա Իլյիչը,
Վ.որ մանի համաշխարհային Սովնարկոմ։

ԻԼՅԻՉԻ ՄՈՏ

Ցենիտասարդական Միության համագումարը վորոշեց համագումարի պատվավոր անդամ ընտրել մեր ղեկավար, մեր առաջնորդ և ուսուցիչ ընկեր Լենինին։ Անդադար աշխատությամբ վորոշեցինք ներկայացուցիչներ ուղարկել նրան վողջունելու։

Այդ պատվավոր դերը վիճակվեց համագումարի նախագահության։

Պարզ կերպով հիշում եմ, թե ի՛նչպես եյինք հուզված մենք, նախագահության անդամներս։ Հավաքվեցինք և սկսեցինք քննել, թե ինչպես գլուխ բերենք այս մեծ գործը։

— Բայց ի՞նչպես պիտի մոտենանք նրան, ի՞նչպես պիտի խոսենք նրա հետ,—հուզված ասաց մեկը։

Ո՞վ պետք ե խոսի համագումարի անունից— բոլո՞ր, թե՞ մեկը։

Ո՞վ պետք ե ասի առաջին խոսքը։ Ի՞նչ պետք ե ասի։

Այս հարցերը մեզ չատ եյին զբաղեցնում։

Վերջապես վորոշեցինք ղեկուցողի պաշտոնը հանձնել ընկ. Սերգեյին։

— Ամբողջ գիշերը չպիտի քնեմ,— հայտարարեց նա։

Հետևյալ որը գնացինք։ Բայց պարզվեց, վոր այսոր Իլյիչը մեզ ընդունել չի կարող։ Կուսակցության կենտկոմից կրեմլի հետ հեռախոսելով լմացանք, վոր պետք ե դնալ վաղը, ժամի 12–ին։

Դարձյալ մի անհանգիստ որ ու գիշեր։

Համագումարի առավոտյան նախօրից հետո վերջա-

այս դնում ենք կրնկի։ Կատակում, ծիծաղում ենք իրար հետ, բայց, ինչպես ասում են, ծնկներս դողում են։

Գնացինք, մտանք ընդունարանը։ Այնտեղ մեզ հայտնեցին, թե մի ընկերոջ զեկուցումից հետո ընկ. Լենինը կընդունի մեզ։

Սպասում ենք... Հուզված ենք...

— Վոչինչ,—ասում է Լազարը Սերգեյին,—յես քո կողքին եմ լինելու։ Հենց վոր հիմարություն դուրս ասաս, վոտքդ կսեղմեմ, ինչքան չլինի՝ կդնի...

Ծիծաղում, հուզվում ենք...

Վերջապես...նրան յոնկից Իլյիչի առանձնասենյակին ենք մոտենում։

Ընկ. Լենինը մեզ ընդունում է սիրալիր։ Ծպտում, վոլշևնում է։ Մենք նստում ենք։

Իլյիչը յերևի հասկանում է մեր դրությունը։ Սերգեյը հազիվ եր մի քանի խոսք մի կերպ իրար կապել, յերբ Լենինն ընդմիջեց։

Զանցավ մի րոպե—և մեր հուզմունքի հետքն անգամ չմնաց։ Նա, համաչխարհային պրոլետարիատի առաջնորդը, այնպես մոտիկ և ուշադիր եր դեպի մեզ։ Սերգեյը հպարտությամբ հայտարարում է, վոր համագումարը վորոշել է Միությունը կոմունիստական անվանել։

— Բանն անունը չի,—նկատում է Իլյիչը։

— Բայց մենք կարդարացնենք այդ անունը,— դուրս է թռչում Ցեֆիմովի բերանից։

Ընկ. Լենինը ժպտում է։

Հարցնում է Միության անդամների թվի, համագումարի կազմի մասին։

— Քանի՞ աղյուկ կա համագումարում,— հարցնում է Իլյիչը, մեզնից մեկին դառնալով։

Այստեղ կարծես մեկը բերանս լեզու դրեց։

— Ինձը,—ասացի յես։

Բոլորն էլ ծիծաղեցին։

Ընկերը Լենինն էլի շատ տրիչ դործնական հարցեր է տալիս։

— Իսկ ի՞նչ վիճակում են ձեր դրամական միջոցները։

— Ծրագրով նախատեսված են, բայց առձեռն վոչինչ չկա։

Ընկ. Լենինը թուղթ և վերցնում և ինչվոր բան է գրում։

— Սվերդլովին կտաք այս,—ասում է նա։

Վոտքի յենք յելնում, հրաժեշտ տալիս ու դուրս գնում, մեծ մարդու մեծ հոդուց զգացված։

Նա առաջինն եր, վոր բարոյական և նյութական աղնության ձեռք մեկնեց մեզ։ Նա հասկացավ յերիտասարդության մեծ ձգտումները։

Ո՛, թող ամեն մի յերիտասարդ բանվոր հիշի ընկ. Լենինի այս խոսքը.

Բանն անունը չի։

— Նկարագրեցեք կոմյերիտների հոգևոր դրությունը՝ Լենինին ներկայանալուց առաջ և հետո։

— Ի՞նչ աղեցության տակ առաջ յկավ այդ փոփոխությունը։

ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ

Ցեխի՛ր, ում կյանքը անիծել է,
ով ճորտ է, մերկ և ստրուկ։
Աչքեն վառվում են մեր սրտերը,
սրտեն կռվի յենք մենք ձգտում։
Այս հին աշխարհը կփոխրենք մենք
մինչև հիմքը և հետո
մեր նոր աշխարհը կշինենք մենք,
ուր վոչ ստրուկ կա, վոչ դժդոհ։
Սա՛ յե վերջին կռիվը

և պայքարը մեծ։
Ինտերնացիոնալը
աշխարհը կփրկե։

Վ.ոչ վոք չի տա մեր փրկությունը,
վոչ խենթ հերոսը, վոչ աթքան.
մենք սկսք և մեր ազատությունը
կռենք ձեռքով մեր սեփական։
Վ.որպեսզի չուտ փչրենք մեր լուծը
և յետ խլենք վողջ հողը մեր—
խփե՛նք մուրճերը, տա՛նք մեր ուժը,
քանի յերկաթը տաք և դեռ։
Սա՛ յե վերջին կռիվը
և պայքարը մեծ։
Ինտերնացիոնալը
աշխարհը կփրկե։

Լ.ոկ մենք, ճորաեր ու բանվորներս
ունենք անխախտ մի իրավունք՝
ասել, վոր հողը մե՛րն է, մերն է,
կորչի հարուստը թող տրուկ։
Ցեվ յերբ պայթի մեծ փոթորիկը,
և կուշտ չները չքանան,
նորից յերկիրը և յերկինքը
մերն են ու մերը կմնան։
Սա՛ յե վերջին կռիվը
և պայքարը մեծ։
Ինտերնացիոնալը
աշխարհը կփրկե։

ՈՒՂԻՂ ԺԱՄԻ ՁՈՐՍԻՆ

Հունվարյան ցուրտ որ եր. փողոցում յեռում եր կյանքը։ Քաղաքային բանկի դուռը դանդաղ բացվեց և դուրս յեկավ յեվրոպական տարազով կոկիկ

հագնված մի մարդ։ Նա պորտֆելը ձեռքին ինչ-վոր տեղ եր չտապում։

Դրսում նրան սպասում եր ավտոն. շոֆերը նրան տեսնելուն պես բանի դցեց մեքենան, իսկ պորտֆելավոր մարդը բարձրանալով ավտոյի վրա, շոֆերին ինչ-վոր հասցե պատվիրեց։

Այս պորտֆելավոր մարդը Նեգն եր՝ անգլիական հայտնի կոմերսանտը։

Նա մեկնում եր մի ուրիշ քաղաք, վորտեղ պետք և մասնակցեր կոմերսանտների խորհրդակցությանը։

Միստըր Նեգն այդ խորհրդակցությանն անպայման պետք և մասնակցեր, հակառակ դեպքում նրա առևտրական դործերը կատանային վատ ընթացք։ Պետք եր մեկնել անպայման առաջին իսկ գնացքով։

Հիմա ժամը յերեքն և, և ազատ կարելի յե տոմս գնել։ Իսկ ավտոն արագընթաց սլանում եր յեվրոպական քաղաքի հարթ փողոցներով։

Միստըր Նեգը, վորի գլուխը չատ մտածելուց ծանրացել եր, աչքերը հանդարտ փակած ննջում եր։

Հանկարծ մեքենան կանգ առավ փողոցի յեզրին. միստըր Նեգը վեր թռչելով՝ աչքերը լայն բացեց։

Նրա դիմաց գլուխը լայց կանգնած եր շոֆերը։

Միստըր Նեգն արագորեն մեկնեց թևը և նայեց ժամացույցին. ժամը չորսն եր։

— Ի՞նչ պատահեց,— հարց տվեց նա շոֆերին։

Շոֆերը դլխարաց, հանդարտ կանգնած՝ ձայն չեր հանում։

— Հա՞մբ ես, ինչ է,— վորոտաց սրտնեղված Նեգը,— դնացքից ուշանում ենք։

— Հունվարի քսանութին, ուղիղ ժամը չորսին, հոդին են հանձնում Լենինին սը՛ր։

Միստըր Նեգը մի վայրկյան քարացավ. հատ սերդարն առամների միջև չուռ ու մուռ եր տալիս, և սերդարի ծայրին հավաքված մոխիրը թափվում եր նրա թանկագին վերարկուի և գեղեցիկ մորթե ոձիքի վրա։

Սպա պատճառած վնասուց։

— Վաղվանից կորի՛ր, ել աչքիս չերևաս։

Շոֆերը վոչինչ չպատասխանեց։

Նա հանդարտ կանչնած եր, և քամին խաղում եր նրա մազերի հետ։

Ինեզը չդիտեր, թե ինչ աներ. տասներկու տարվա ընթացքում նա վոչ մի անգամ չեր բացակայել կամ ուշացել, իսկ հիմա...ուշանում եր և մեծ վնաս ել պետք և կրեր։

— Հաղար ֆունտ-ստերլինգ կտամ, միայն թե դնա՛. դնացքից ուշանում եմ, վտազ գործ ունեմ։

Շոֆերը տեղից չշարժվեց անգամ։

Միտարը Ինեզը շատ լավ գիտեր, վոր յերկու, յերբեք, հինգ, տաս հազար ֆունտ-ստերլինգ ել տալու լինեի, վոչինչ չի դուրս գալու, ուստի և ձայն չհանեց։ Շոֆերն ել լավ գիտեր, վոր վաղն առանց մի պատուհաս յե մնալու, վաղը նրա հնոջը, յերեխաներին վտղոց կհետեն, իսկ նա ավելացնելու յե գործադուրկների թիվը և մնալու յե քաղցած, բայց լռում եր նա և դեռ կանչնած եր անշարժ։

Միտարը Ինեզը հասկացավ, վոր նրան վոչնչով չի կարող դրավել— վոչ փողով և վոչ վոսկու փայլով։ այդ ժամանակ ամեն ոեղ կանգ են առել ավտոները, և ուղիղ ժամը չորսին, ծովերից այն կողմը, հողին են հանձնում այն մարդուն, վորի հիշատակին ապրում և մխիթարավոր մարդկանց սրտերում։

Նա պատկերացրեց, վոր հիմա ամբողջ հազարավոր ավտոներ, վորոնցով Ինեզի նման միտարներ են գնում, կանչնած են գործերում, փողոցներում։ Ցնվ վոչ միտարները, վոչ պետությանը վոչ մի միջոց չունեն տիպելու կելիմին և հազարավոր կելիմներին, վոր նրանք ծածկեն դիտարկները և բանի գցեն մեքենաները։

Ինեզը չբջվեց ավտոյի բազմոցի վրա և թաչկինակը հանելով՝ մաքրեց վերարկուի վրա թափված ծխախոտի մոխիրը։

Ժամը չորսից հինգ րոպե անց՝ կելիմը դիտարկը ծածկեց և նստեց դիմի առաջ։

Ավտոն դրդռաց, լուսները վառվեցին, և առաջ ընթացավ։

Իսկ միտարը Ինեզը փոքրիկ վիբարկուի մեջ և հուզված ընկավ մտածմունքի մեջ։

— Ինչո՞ւ կելիմը՝ ուղիղ ժամը 4-ին ավտոն կանչնեցրեց, դիտարկը հանեց և ինքն ել կանչնեց։

— Ինչո՞վ եք բացատրում Լենինի հմայքը և ժողովրդականությունը։

— Բնութագրեցեք միտարը Ինեզին և կելիմին՝ վորպես տարբեր դասակարգերի ներկայացուցիչների։

ՀՈՒՆՎԱՐԻ ԻՆՆԸ

I

— Մեզ կարմիր դրոշակ պետք չի՛,—ձայն տվեց ցույցին մասնակցողներից մեկը։

Գդակը շարժելով՝ նա գնում եր ամբոխի գլուխն անցած և որորվում մարդկանց աչքի առջև։

—Մենք մեր հոր մոտ ենք գնում...

— Նրան հավատո՛մ ենք...

— Կարմիր դույնը մեր արյան դույնն է, ընկերնե՛ր,—ամբոխի վրայով դոռաց առանձին, հնչուն մի ձայն։

— Չկա մի ուժ, վոր ազատի ժողովրդին, բացի ժողովրդի եր ուժից։

Ցերը ամբոխը փողոցներից թափվեց դեպի, կամրջի մոտքերը, և տեսավ, վոր զինվորները կարել են կամուրջ տանող ճանապարհը,—յուր չկանգնեց։ Զինվորների կեցվածքի մեջ վոչինչ սպառնալի բան չկար։ Նրանք թուչկոտում եյին, ատքացնում եյին սառչող վոտները, թնդ եյին տալիս, հրում եյին իրար...

Մեկը կարճկտուր ձայնով ասաց։

— Զինվորները մրսում են...
— Հա՛...
— Բայց պետք է կանգնեն։
— Զինվորները կարգը պահելու համար են։
— Հանգի՛ստ, տղերք... Զգա՛ստ։
— Ցե՛տ գնացեք,—լսվեց սպայի ձայնը։

Մի քանիսը յետ նայեցին. նրանց յետևում խուռն բազմություն կար։ Մի քանի մարդ առաջ անցան և սպիտակ թաշկինակները ծածանելով՝ ընդառաջ գնացին սպաներին։ Գնում էին և գոռում.

— Մենք գնում ենք մեր թաղավորի մոտ...



— Ցե՛տ գարձեք։ Ցես կհրամայեմ կրակե՛լ...
— Կրակե՛լ։ Ձե՛ս համարձակվի...

Իրար հետ բացականչությունները փոխանակելով և յետևից յեկող ամբոխի ճնշմանը յենթարկվելով՝ մարդիկ առաջ չարժվեցին։

II

Նրանք, վոր գնում էին թաշկինակներով, ճամբանները ծռեցին, կորան ամբոխի մեջ։ Բայց առջևում բոլորը—աղամարդիկ, կանայք, դեռահասները նույնպես ծածանում էին սպիտակ թաշկինակները։

— Այն ըՆչ կրակոցներ են։ Ինչո՞ւ համար ե,—լուրջ խոսում էր մի ալևոր մարդ։ Նրանք չեն թողնում կամուրջն անցնել... Ուրեմն ուզում են, վոր սառցի վրայով անցնենք։

Ցեվ հանկարծ ոդի մեջ ինչվոր մի բան ցրիվ յեկավ, դարկվեց ամբոխին տասնյակ անտեսանելի մարակների պես։ Մի վայրկյան բոլոր ձայները հանկարծ կարծես մեռան։ Մարդկային զանգվածը չարունակում էր հանդարտ առաջ չարժվել։

— Դատարկ փամփուշտներ են,—խոսեց մի ձայն։

Բայց այս ու այն կողմից լսվեցին անքոցներ, ամբոխի վոտների տակին թավալվեցին մի քանի մարմիններ...

Ցեվ դարձյալ հրացանների համազարկի ձայթյուններ, ավելի բարձր, ավելի անհամաստաց։

Մարդիկ յերկու—յերկու, յերեք—յերեք վայր եյին թափվում, նստում եյին դեռնի վրա, փորները բռնում, դեսուդեն եյին վախչում կապալով, ուզում եյին, և սմեն կողմ ձյունի վրա առատ պռոթկում եյին պայծառ, կարմիր բծերը։

III

Թաղավորի բնակարանի չուրջն ամուր շղթա կազմած՝ կանգնած եյին զինվորները։ Պալատի պատուհանների տակ տեղավորվել եր ձիավոր դորքը։

— Ցրվեցե՛ք, պարոննե՛ր,—ասաց սպան։
— Ինչո՞ւ մեզ չեք թողնում,—հարցնում եյին նրան։
— Ո՞ւր։
— Թաղավորի մոտ։

Սպան մի րոպե կանգ առավ և հետո բացականչեց.

— Ցես ձեզ ասում եմ ախր—նա չկա։
— Թագավոր չկա՞։
— Չա՛, եյլ։ Ձեզ ասված ե՝ չկա, դուք ել հեռացե՛ք։

— Թագավորը բոլորովի՞ն չկա,—հառաուրեն հարցուփորձ եր անում հեգնող ձայնը:

Սպան զարձյալ կանգ առավ, բարձրացրեց ձեռքը:

— Հրամայում եմ ցրվել,—ասաց սպան ու սուրը հանեց պատյանից:

Ցրվել անհնարին եր, ամբոխը խիտ լցվել եր վողջ փոքրիկ հրապարակը, իսկ վողոցներից նրա թիկունքում ժողովուրդը դալիս եր, հա դալիս...

Հանկարծ ձայն ավեց փողի չարագուշակ յերգը...

Զինվորները չարժեցին հրացաններըը, նշան բռնեցին և բոլորը սառեցին մխրճնակ դիք կեցվածքում՝ ավլինները մեկնած դեպի ամբոխը...

Մեկի ձայնը բարձր, սարսափով դոռաց.

— Ի՞նչ եք անում, մարդասպաննե՛ր...

Սվիններն ուժգին ցնցվեցին: Մարդիկ ընկան: Գնդերն արյունով ներկվեց:

IV

Հանկարծ փողոցի միջով անցավ անակնկալ մի իրարանցում:

— Վո՞րտեղ, վո՞րտեղ:

— Կղզում:

— Զենքի մագազինը ձեռ են դցել...

— Կտրել են հեռագրատյուները, բարրիկադներ են դրել:

— Շատվո՞ր են:

— Շատվոր:

— Ա՛խ...դանե այնտեղ վրեժը հանեյին:

Ամբոխի դլխավերևը բռնեց մի մարդկային կերպարանք, և մթնաշաղի մեջ վորոտաց կոչը.

— Ո՛վ ե կամենում կռվել ազատության համար, ժողովրդի համար, մարդու կյանքի և իրավունքի համար, աչխատանքի համար: Ով կամենում ե մեռնել ապագայի համար, թող դա ոդնության:

Ամբոխի միջից մարդիկ դուրս յեկան և գնացին խոսողի մոտ: Ցավ փողոցի մեջ կազմվեց ապստամբը, անձնուրաց մարդկանց մի սեղմ բանակ:

— Այս պատմվածքի մեջ Մ. Գորկին վո՞ր թվականի հունվարի՞ն ե նկարագրել:

ՊՐԵՍՆՅԱՆ 1905 ԹՎԻՆ

Սուվորները սովորաբար հանգիստ եր լինում, իսկ մոտավորապես ժամը 1-ին սկսվում եր քնդստանքությունը: Փողոցներն ասես մեռած լինեին: Բայց դրա փոխարեն ամեն մի դարպասի, ամեն մի դռնակի մոտ, փողոցների յուրաքանչյուր խաչմերուկում—հեռագրվողների խմբեր կան՝ մանուկներ, կանայք, դեղջուկներ, առևտրականներ: Նորություններ են հաղորդում: Պատմում են, թե ինչ դատաստան են տեսնում իրենց ձեռքն ընկած դերիների հետ զորքն ու վոստիկանությունը, խոսում են հեղափոխական մարտիկների սխրագործությունների մասին:

Բարիկադները մեկը մյուսի յետևից բարձրանում են փողոցի մի ծայրից մինչև մյուսը, դեպի Պրեսնյա*) կամուրջը: Ցավ այդ բոլորը պատրաստվում եր շատ հասարակ ձևով: Ցերգելով, ծխծաղելով, կատակելով դլորում եյին հեռախոսի և հեռագրի սյուները, այս ու այն բակից դերաններ եյին դուրս բերում, սահնակներ՝ ձյունով լիքը: Բարիկադը կատարվում եր մի քանի րոպեում, ամբողջապես չրջապատված հե-

* Մոսկվայի Թագամասերից մեկը:

ռազբական և հեռախոսի լարերով։ Փողոցի լայնքով կապած պարաններից կարմիր դրոշակներ, պլակատներ էին կախում։ Իսկ մայթերի վրա անցնելու նեղ ճանապարհներ էին թողնում։

Ահա առջևի կողմը, հենց անկյունի մոտ, լսվեց մի խլացուցիչ պայթյուն։ Ծխի և կրակի հետ միասին ողն են թռչում պատռտակաձև թիուչքով ինչվոր սև բանի կտորներ։ Հետաքրքրվողների խմբից չրապնելը խլեց 16 մարդ։ Վիրավորների մի մասը փախավ, մյուս մասը՝ քաշ տվին այս ու այն բակը, իսկ ձյունի վրա սևին են տալիս չորս հոգի։ Սրանք անշարժ են։ Հինգերորդը ապշած և կանգնած դիրքում, ապա աստիճանաբար խոնարհվում և դեպի առաջ և, առանց կռանալու, ողոցած ծառի պես, յերեսն ի վայր փռվում և ձյունի վրա։ Ընկնում և և նույնպես անշարժանում։ Կողքին ճաղատաձև փոս և։ Շուրջը արյունոտ բծեր և ինչվոր բանների կտորներ—չէիտես՝ հագուստի՞ կտորներ են, թե՞ մարդկային մարմնի...

— Կազակնե՛րը,—լսվում և մի ճիչ։

Այս միհատիկ չորս վանկանի բառը մեկեն ցնցեց փողոցն ու բարիկադները։ Հետաքրքրվողները սեղմվեցին դարպասին։ Մի յերիտասարդ, ձեռքը վեր բարձրացնելով, ձայն տվեց.

— Առաջի՛ն համար։

Մի քանի մարդ, ատրճանակները ձեռներին, հավաքվեցին մոտակա դարպասի մոտ։

Յերիտասարդը դարձավ հետաքրքրվողների խմբերին.

— Իսկ դուք հեռացե՛ք... հեռացե՛ք, խնդրեմ... թե չե նրանք, վոր յեկան, դուք կփախչեք, խուճապ կառաջացնեք...

Հետաքրքրվողները մի կողմ քաշվեցին։

— Հեղափոխական մարտիկ և,—չչունչով հաղորդում եյին իրար։ Յեվ այդ չչունչից, հայացքներից յերևում եր, թե նրանք բոլորն էլ ինչպիսի համակրանքով են վերաբերվում դեպի մարտիկները։

Փողոցի լայնքով, յերկյանած չարքով գալիս եյին հետիոտն կազակները։ Յերբ նրանք կամրջին հասան, նրանց դոզչ չարքը մեկեն փայլատակեց. հնչեց նրանց համազարկը. խը՛ռո—խըռռո...խը՛ռռ.. Ասես ոսկյած չթի մի հսկայական կտոր եյին պատռում. բարիկադների մի հսկայական կտոր եյին պատռում. բարիկադներին, ջրատար խողովակներին, ցուցանակներին ու լուսամուտներին, մանավանդ դարպասներին ու դռնակներին կտկտոցով զարկվեցին հազարավոր ընկուզներ։

— Խը՛ռռ... խըռռ.. խը՛ռռ...

Դիմացի խաչմերուկում մարտիկը հանդիսա ծնկի իջավ և յերեքշաթանին*) նշանի բռնեց։ Կրակը փայլեց, և հանկարծ կրակողների չարքերից լսվեցին կանչը և ուրախ ծիծաղ.

— Կեցցե՛ս... կեցցես... կեցցես...

Կրակոցը դադարեց։ Հասարակությունը նորից փողոց թափվեց. ամեն տեղ հայտնվեցին հետաքրքրվողների խմբեր։ Հեռվում յերևում եյին դասակ առ դասակ հեռացող կազակների դոզչ չարքերը։ Նրանք տանում եյին իրենց հետ չորս վիրավորներ։

Նորից աշխատանքը յեռաց։ Նորից բարիկադ բարիկադի յեռևից բուսավ փողոցում... կամրջի մոտ բարձրանում եր վերջին բարիկադը։ Իսկ հեռվում մռայլ ու լուռ վեր եր խոյանում Պրեսնյայի աշտարակը։

II

Ցես քաղաքից եյի վերադառնում. ճանապարհս Պրեսնյայով եր անցնում։ Ինձ կանգնեցրին։

— Մի՛ գնացեք։

— Ինչո՞ւ։

— Աշտարակից հսկում են... անպատճառ կսպանեն...

---

*) Հրացան

Ցես աշտարակի կողմը նայեցի։ Աշտարակում, իրոք, մարդիկ էլին յերևում, յերբեմն էլ կրակոցի ձայն եր գալիս այնտեղից։ Զինվորներն ու քաղաքապահները, չարացած, վոր անկարող են Պրեսնյան վերցնել, քաղաքացիների վրա էլին կրակում։ Բավական եր, վոր մարդ յերեսը փողոցում, տեղնուտեղը դեսին էլին գլորում։ Կրակի տակ էլին առել մեծ փողոցն իր ամբողջ յերկայնքով, կրակ էլին տեղում բակերի վրա, պատուհանների վրա, ծակծկվում էլին դռները, դարպասները։

Ցես ականջ դրի խոսակցություններին։

— Գիշերը Կուդինեցկի կամրջի մոտ մի ուսանող ձերբակալեցին, խուզարկեցին, մոտը ատրճանակ գտան։ Հետո մի աղջիկ բանեցին, հետո մի բանվորի։ Սպան նրանցից վոչինչ չհարցրեց, չուզեց իմանալ՝ ովքեր են, ինչացու յին, ինչ են անում. միայն գլխով մի շարժում նկատեցի ու...

— Ի՞նչ։

— Գնդակահարեցին նրանց։

Մոայլ ու խիստ լռություն։

— Հապա ի՞նչպես տեղ հասնեմ։

— Ցես ձեզ կանցկացնեմ։

Մի տաս տարեկան տղա, ժիր ու աչխուժ, նայում եր ինձ վրա իր վճիտ աչքերով։ Անշուշտ կռվող բանվորներից մեկի տղան եր։

— Ի՞նչպես պիտի անցկացնես,—զարմացա յես։

— Կանցկացնեմ, յե՛կ, նրանք չեն տեսնի։

Նա տարավ ինձ դեպի անկյունը. այստեղ բարիկադը կարում եր փողոցը։

— Փորի վրա ընկնեք։

— Ի՞նչ։

— Անպատճառ փորի վրա պիտի ընկնեք, թե չե խելոք գնդակի բաժին կդառնաք։

Ճար չկար։ Փորի վրա ընկանք, սկսեցինք սողալ սառը ձյունի վրայով, առանց գլուխները բարձրացնելու, աշտարակից դիտող աչքերից ու գնդակներից պատսպարվելով բարիկադով։ Փողոցն անցնելով և մոտիկ փոքր փողոցը մտնելով, վոտքի յելանք, թափ ավեցինք մեր չորերը։

Ցես դուրդուրանքով սեղմեցի տղայի ձեռքը։ Նա ուրախ ու աչխուժ մոդեսի պես յետ սողաց չորեքթաթի՝ նոր անցորդներ անցկացնելու, մինչև վոր քաղաքապահների դարանակալ գնդակն, աշտարակից սուրալով, վոր կդլորի այդ խիզախ տղային։

ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆ

Ծովն անդադար աղմկում է հին Սեվաստոպոլի ե նրա բերդի չուրջը, ինչվոր բաներ է քչփչում թարական տորմիղի ընդարձակ նավահանգստում։

1905 թվի հունիսի 13–ին «Պատյոմկինն» զրահանավը Սեվաստոպոլից ուղարկվեց Տենդր կղզու ծոցը՝ զրահանավի վրա նոր դրված թնդանոթները փորձելու համար։

Հունիսի 14–ի առավոտյան, յերբ տեղի յեր ունենում ահադին զրահանավի սովորական մաքրումը, նավաստիները նկատեցին, վոր ճաշի համար պատրաստված միսը հոտած է, վորդերով լի։

Այս լուրը տարածվեց բոլոր նավաստիների չրջանում, զայրույթ բանկեց և «կայծից հրդեհ առաջացավ»։

— Սրիկա՛ պատներ։ Զեն հետաքրքրվում, թե ի՞նչ մսով են մեզ կերակրում։

— Բժշկին պետք է կանչել։ Թող նավից դուրս չպրտի վորդնած միսը։

— Այդ միսը չե՞նք ուտելու,—բացականչում էլին ամեն կողմից։

Հայտնվեց գլխավոր բժիշկը և, ինչպես սպասելի յեր, գտավ, վոր միսը հիանալի յե։

— Նավաստիներին յերես են տվել,—հայտարա-

քեց նա,— ջրով պետք է լվանալ վորդերը, և պատվական բորշ կլինի։

Վրա հասավ նաև տաճկի հրամանատարը և կարգադրեց.—

— Ճաշը պատրաստել, և ով վոր մխը գցնի, առնուը նշանակել և հետո ինձ զեկուցել։

Ցերը ճաշը պատրաստվեց և յերը հրամայեցին ճաշել, վոչ վոք չմոտեցավ ճաշին, վոչ վոք չշարժվեց տեղից։

Անմիջապես հայտնեցին հրամանատարին, վոր զլխավոր սպայի հետ մխային չտապեց «կարգը վերականգնել»։

— Ինչո՞ւ բորշը չեք ուտում։ Ի՞նչպես եք համարձակվում անպատվել։

Ցետ բազմության միջից հրամանատարին պատասխանեցին.

— Դո՛ւ կեր...Իսկ մենք հաց ու ջրով էլ կկշտանանք։

— Պետք է հնազանդեցնել,—վճռում է հրամանատարը։

«Պատյոմկինի» նավաստիների ամբողջ կոկատը, 700 մարդուց ավելի, տախտակամածն են կանչում և հրամայում չարքի կանգնել։

Շարքի առաջ կանգնած զլխավոր սպան մի հանդուգն և դրդռիչ ճառ է ասում.—

— Ցես քանի անգամ ասել եմ ձեզ, վոր նման անկարգություններ զինվորական նավի վրա անթույլատրելի յեն։ Այդ բանի համար ձեզպեսներին ա՛յ թե վորտեղից են կախում, և նա մատնացույց է անում կայմի ծայրը։

Ապա լավում է մի ահարկու հրաման.

— Ով ուզում է բորշ ուտի, այս կողմը գա։

Շարքից դուրս են գալիս միայն նավի հին ծառայողները, յենթասպանները։

Ամբողջ չարքը քարացած կանգնել է։

Այդ միջոցին վորոտում է մի նոր հրաման.

— Գահակախո՛մբ, վե՛ր։

— Ցեղբայրներ, ի՞նչ եք անում։ Մտաբերեցե՛ք մեր յերդումը, վոր մերոնց վրա չպիտի կրակենք, ձայն ավեց նավաստի Մատյուշենկոն՝ առաջ վազելով։

Ցեվ պահակախումբը, մի մարդու պես, հրացանները, վայր թողեց, փողը դեպի գետին։

Այդ նշանակում եր, թե չեն ուզում կրակել։

Իսկ Մատյուշենկոն նոր ուժով կանչեց.

— Ցեղբայրնե՛ր, մեր ընկերներին մենակ չթողնենք։ Վերցրե՛ք հրացանները, փամփուշտներ դրե՛ք։ Զարկեցե՛ք ժողովրդի դահիճներին։

Ցեվ կատարվեց հերոսական դործը։ Այլևս չկային ոտրուկները, այլևս չկար «խեղճ կենդանին»։ Վախը և լռությունը տեղի տվին։

Վայրկենապես նավաստիները ցրվեցին զրահանավի բոլոր անկյունները, վերցրին հրացանները, ազատեցին բանտարկյալներին, դեն չպրտեցին վարչությունը։

Ուռա՛,—լավում է «Պատյոմկինի» վրա։

— Կեցցե՛ ազատությունը։

— Կորչի՛ կամայականությունը։ Կորչի՛ ինքնակալությունը։

— Մա՛հ բռնավորներին։

Ցեվ հրացանները վորոտում են։

«Պատյոմկինի» հրամանատարը հարձակվում է Մատյուշենկոյի վրա.

— Անզգա՛մ, հրացանը վայր դի՛ր։

Ցեվ վորպես պատասխան լսում է.

— Ցես այն ժամանակ վայր կդնեմ հրացանը, յերբ դիակ դառնամ... Հեռացի՛ր նավից, սա ժողովրդի նավն է և վոչ քո նավը։

Ապստամբությունը տարածվում է։

— Նկարագրեցեք—1) ապստամբության պատճառները, 2) ընթացքը և 3) վախճանը։

— Ինքնագրեցեք նավաստի Մատյուշենկոյին։

— Համեմատեցեք այս պատմվածքը «Հունվարի 9-ը» պատմվածքի հետ և այդ երկու պատմվածքներից մի համառոտ բաղդատություն դրեցեք՝ «1905 թվի հեղափոխությունից» վերնագրով։

ԱՄՈՒՐԻ ԱՓԵՐԸ ՀՐԵՏԱՆՈՒ ԾԽԻ ՄԵՋ

Ամուր գետի ռազմական նավատորմի նավատորմիները 2·500 կիլոմետր երկարությամբ, չինական սահմանի ուղղությամբ, արշավ հանում էին խորհրդային սահմանները։ Նրանք հաճախ լսում էին չին սպաների և զինվորների բացականչությունները.

— Հե՛յ, մատրո՛ս, չուռուլ սալած կիմեռնես։

Գնդապետ էին սպաները չէին կարող և չէին

ուզում հասկանալ, որ Խորհրդային Հեռավոր Արևելքում նոր կյանք է ամբառնում, և այդ կյանքի չինարարությունը խանդարելն այնքան էլ հեշտ բան չի։

Ամուրի նավատորմի չոզենավերը դիշեր ու ցերեկ հեղքում էին Ամուրի և Ուսուրի ջրերը և չինացիների կրակոցներին չէին պատասխանում։

Սպիտակ չինացիների վոտնձգություններն ուժեղացան։ Մեր համբերության վերջն էլ եկավ։ Հեռավոր Արևելքի Հատուկ բանակն ստիպված եղավ պիտի ակտիվ պաշտպանություն։

Հակահարված տալու անհրաժեշտությունը չուռուլ սղացավ։ Զինական Պոլին փաղաքի մոտից, Սունդարի գետաբերանի մոտ, սպիտակ գվարդիականները և սպիտակ չինացիները հարձակվեցին խորհրդային հողի վրա։ Նավատորմիները ու կարմիր բանակային չինները վոչ միայն յետ մղեցին հանդուգն թշնամուն, այլև ստիպված եղան ժամանակավորապես գրավել չինական այդ քաղաքը։

Առաջին գերիները, վոր ընկան նավատորմիների ձեռքը, սարսափի մեջ էին։ Նրանց մեջ տարածել էին այն լուրը, թե բայշևիկները գերի չեն վերցնում։ Ամենալավագույնը, վոր գերիներին սպասում է, այդ մահն է Ամուրի ջրերում։

Այդ վախը յերկար չեր տևում։ Իսկ հետո «բոլշևիկ», «բայշևիկ», «բանվոր» բառերը հնչում էին ամեն խոսքից հետո։

Բնակչությունն սկզբում վախչում եր խուճապի մատնված, պահվում թիկերի մեջ և բանջարանոցներում։ Մեր ձեռին ընկած բնակիչն այնպես եր պատկերացնում, վոր իրեն տանում են մահվան գաստապարտեու։ Բայց այդ էլ յերկար չեր տևում։ Իսկ հետո՞... կարճ ժամանակից հետո յուրաքանչյուր աշխատավոր չինացի իր պարտքն եր համարում պատմել Զինաստանի բանվորների և գյուղացիների ճանր կյանքի մասին։

Հետագայում բոլոր ընդհարումների ժամանակ յուրաքանչյուր աշխատավոր չինացի առաջին հերթին ցույց եր տալիս իր բուռը—մադոնները, վորպես «անցագիր», վորպես ապացույց իր դասակարգային համերաշխության։

Այդպիսի «անցագիր» վորձեցին ցույց տալ նաև չինական սպաները։ Գերի բռնված չինական չոզենավերից մեկում սպան ածուխով սևացրել եր իր դեմքը. ձեռքը՝ բանվոր յերևալու համար։ Սակայն հենց չին զինվորները նրա ով լինելը հայտնեցին։

Հոկտեմբերի 12-ին չինական ռազմական նավերը կրակ բաց արին մեր առևտրական նավերի վրա։ Սակայն չատ թանգ նստեց նրանց այդ բանը։

Հեռավոր Արևելքի Հատուկ բանակն այդ որը տվեց իր առաջին հարվածը։ Ամուրի նավատորմղի համագարկերով դեպի չինական նավերն ու ամրություններր, կարմիր զորամասերի համերաշխ գրոհով պատասխանեց Կարմիր բանակը գաղտագծ չին դեներալներին։

Սպիտակ չինացիներն առաջինն սկսեցին կռիվը։ Հաղարավոր արկեր նետեցին նրանք դեպի մեր նավերր։ Հրետանու, գնդացրային ուժեղ կրակ բաց արին դեպի Կարմիր բանակի չարքերը։

Մի քանի ժամ կռվից հետո, Սունգարիի չինական նավատորմի նավերն իջել եյին գետի հատակր, կամ լողում եյին կրակի մեջ կորած։ Չինական կայազորր ջախջախված եր, թողել եր բազմաթիվ գերիներ և իր ամբողջ ունեցվածքը։

Լախատուսու քաղաքում աշխատավոր բնակչությունը, հատկապես չքավորությունը, չատ լավ ընդունեց կարմիր զորքերին։ Ցեղան միխինդներ, յեղավ իսկական զողում կարմիր մարտիկների և ճնշված չինական բանվորների միջև։

— Ի՞մ չահերն է պաշտպանում Կարմիր բանակը։

— Ի՞նչպես եյին վարվում մեր բանակայինները Թչնամուց գերի ընկած զինվորների հետ։

ԴԱՐԱԼԱԳՅԱԶԻ ՍԱՐԵՐՈՒՄ

Իններորդ վաչառ դասավորված եր Հասանքյանդ և Ալայազ գյուղերում՝ բրիգադի ձախ թևն ապահովելու համար։ Վաչատի հրամանատարությունը տեղեկություններ եր ստացել, որ դաշնակցական խմբերը պատրաստություններ են տեսնում հարձակվելու մեր բրիգադի վրա։

Վաչտն այդ որն անհամբեր սպասում եր հակառակորդի հարձակմանը. գնդացիրները, հրացանները և նռնակները պատրաստված եյին գործելու համար։

Վաղ առավոտյան լսվեց հրամանատարի հրամանը —«առա՛ջ»։

Կանաչազարդ ճորերով առաջ են չարժվում կարմիր բանակայինները դեպի հակառակորդի հետախույզները, վորոնք քողարկված են կանաչ ընկուզենիների տակ։

Հնչեց գնդացրի տրաքտրաքոցը և մարտիկների ուռան։ Հակառակորդի հետախույզը յետ նահանջեց դեպի Ղուդուղվանքի բարձունքները։ Կարմիր վաչտը հետապնդում եր հակառակորդի նահանջը։

Սարերի վրա չոքել եր գիշերային դաժան մթությունը, յերբ վաչտը գրավեց բարձունքները։

Վաչտի կապը կտրվել եր գնդից։ Դաշնակցական խմբերը չրջապատել եյին վաչտը։ Մնացել եր մի յելք— ճեղքել հակառակորդի չղթան և անցել դեպի Սևան։

Վորոշեցինք չարժվել Սաալու գյուղի ուղղությամբ՝ բարձրանալ դեպի Քարագլուխ։

Գյուղում անսովոր յեռուզեռ եր։ Գյուղացիներն եյ պատրաստվում եյին մեզ հետ նահանջել։ Ճանապարհը չափազանց դժվար եր։ Մի մասն մի չավիղ եր, վոր դեչեր ժամանակ միչտ կորչում եր աչքից, և դժվար եր գնդացիրները տանել։

Ժամը 3-ն եր, յերբ վաչտը սարից իջնում եր խոր ճորերի նեղ չավիղներով դեպի գյուղը։ Վաչտի առաջից չարժվում եր Հայկի ջոկը, վորն ապահովում եր վաչտի գիշերային յերթը։

Լսվեց ուժեղ գոռոց, վորից թնդաց խոր ճորը։ Ամպ մթան մեջ յերևաց մի բուռ կրակ, և լսվեց հրացանի տրաքոցի ճայնը։ Գյուղը խառնվեց իրար։ Դաշնակիների գինվորները խուճապի մատնվեցին։ Ուժեղացավ համազարկերի ճայնը։ Դաշնակցական գումարտակը կորցրել եր իր գլուխը և գյուղից դուրս գալու ճանապարհը։

Վաչտի պահպանող ջոկը մտավ գյուղը։

Կռվի տաք ժամանակն էր: Գնդակների պայթյուններից դողում էին տերևները: Մշուշապատ արշալույսն սկսում էր լուսավորել Դարալագյազի բարձր սարերի կատարները, երբ կարմիր բանակային Սեդրակը բարձրանալով սարի կատարը՝ կրակ բացեց դաշնակիների աջ թևին:

Բարձրացող արևի ճառագայթները խանդարում էին սարբերել բարձած եչերը թամքած ձիերից, և դաշնակիների խումբը Սեդրակի դումակի բարձած եչերը հեծելազորի տեղ դնելով—դլուխները կորցրած փախչում էին դեպի Քևշիշքենդ, ուր նրանց դլխավոր ուժն էր տեղավորված:

Այդ պահին կարմիր բանակային Սեդրակը, սարի կատարին կանգնած, հատուկ բավականությամբ ծաղրում էր խուճապի մատնված «հերոսներին»: Վաչոը չարունակում էր իր ճանապարհը՝ խոր ձորով բարձրանալով ձյունապատ սարի դագաթը:

Լավեց հրացանի որոգող, և հատ-հատ որոգողները փոխվեցին համազարկերի: Արփայի կողմից լսվում էր հրետանու խուլ ղորոը:

Ինդիր էր դրված պարզել՝ ովքե՞ր են սարի կատարում: Հետախուղության ուղարկեցինք յերեք մարտիկ: Անմիջապես պարզվեց, վոր 3-րդ դնդի 3-րդ դումարտակն էր, վորը մեզ էր սպասում:

Վաչոը միացավ 3-րդ դումարտակին— նպատակ ունենալով պատռել դաշնակների չղթան Սելիմի կիրճի ուղղությամբ և անցնել Սևան:

Արևը մայր մտավ. ամեն ինչ ապտա դույն ստացավ: Յերևացին կապույտ յերկնքում լուսավոր աստղեր: Լավում էր լեռնային առվակների քչքչոցը, ծառերի խորհրդավոր խշշոցը: Դումարտակն առանց ձայնի, վորպես մի անձ, չարժվում էր մթության մեջ՝ սպիտակին ավող բարակ չավիղով:

Ճանապարհը յերկար էր և անծանոթ: Մեզ հետ էին գյուղերից յեկած կոմունիստները, վորոնց Դարալագյազի ամեն մի ժայռ, ամեն մի ձոր ծանոթ էր:

Հասանք Սելիմի կիրճը:

Ջնայած ամառային ամիսներին, սառը քամին փչում էր մեր ուղղությամբ և հիշեցնում Ղամարլվի մեր հերոսամարտերը:

Կիրճը գրավել էին դաշնակները: Ջոկատի հրամանատար ընկ. Գևորգյանը հրամայեց ջոկին՝ յետ չպրտել հակառակորդի հրաձգային դասակը և ապահովել ջոկատի աջ թևը: Ինդիրը բարդ էր, բայց պետք էր լուծել մի ջոկով: Ջոկի կարմիր բանակայինների մեծամասնությունը կոմունիստներ էին: Բայլչևիկյան դրոհով, հերոսական մարտով դրավեցինք բլրակը և հաջողությամբ կատարեցինք մեր առաջ դրված խնդիրը:

Վերջալույսի մարվող ճառագայթների տակ՝ ջոկատն առանց կորստի անցավ կիրճը:

Լուսինը լուռ սահում էր լեռների վրայով: Ջոկատի հրամանատարը հեծյալներ էր ուղարկում 11-րդ բանակի 20-րդ հեծնդի հետ կապ հաստատելու համար: Անհանդիստ քամին որորում էր հեռախոսային սյուները և դժվարացնում կապ հաստատելը գործի հետ: Հեծյալները տեղ հասան:

20-րդ քայլարի հեծնդունդը դիմավորեց իրեն կրտսեր զինակիցին: Նա ճաչ և թեյ էր պատրաստել հոգնած մարտիկների համար: Մի յերկու ժամ հանդստից հետո մենք հրաժեշտ տվինք մեր մարտական յեղբայրներին և չարժվեցինք դեպի Ղարանլուխ: Գյուղացիները մեզ էին սպասում: Ներանք վախենում էին դաշնակների վերադարձից:

Գյուղի կուրակները զնացել էին դաշնակցական խմբերին միանալու:

Մենք անցանք վերջին և վճռական մարտի:

Վաղորդյան մութն էր: Ճամբարը քաղցր ու հանգիստ քնած էր սպիտակ վրանների տակ: Այդ ահագին քաղաքը լուռ էր, չէր լսվում վոչ շների հաչոց, վոչ ածքաղաղների կանչ: Միայն մեր թիկունքից բարձրացող սաղարթախիտ անտառները, գիշերային զով քամուց յերերվում ու սկսվում էին, կարծես որոր էին ասում սպիտակ քաղաքի բնակիչներին: Ելեկտրական լապտերների տակ նշմարվում էին կենդանի ստվերներ, վորոնց հանձնված էր քաղաքի ու բնակիչների պաշտպանությունը...

Բո՛ւ ո՛ւ ո՛ւ... տո՛ւ ո՛ւ ո՛ւ... տի—տո տո՛ւ ո՛ւ ո՛ւ ո՛ւ...

Լսվեց չեփորի քաղցր ու դուրեկան ձայնը:

Վեր կա՛ց... կանչեցին հերթապահները: Լուսադեմին քունը քաղցր է, սակայն չեփորի ավելի քաղցր ու դյութող ձայնն իսկույն սթափեցրեց մեզ: Սվբողջ ճամբարը վեր կացավ: Ընդհանուր աչխուժ էր տիրում: Քիչ հետո բոլոր միավորները կարգով չարված էին ճամբարի հարթ ու ընդարձակ հրապարակում:

Արևելքն արդեն չառագունել էր: Ինդիրը մի որ առաջ բացատրված էր. այժմ ել յուրաքանչյուր հրամանատար իր միավորին էր բացատրում: Բոլոր միավորներն ու առանձին բանակայիններն ունեյին առջմրցման պայմանագրեր՝ որվա պատասխանքի վերաբերյալ: Ճարժվելուց առաջ դիվիզիայի չտաբի պետն ամբողջ դիվիզիայի մարտիկներին ասաց.

— Ընկերնե՛ր, մեր դիվիզիան արդեն համարվում է լեռնային զորամաս, և վողջ կարմիր բանակի պատմության մեջ առաջին անգամն է, վոր հայկական դիվիզիայի առաջ խնդիր է դրված՝ կատարել յերթ ամենաբարձր լեռների զագաթներով: Պրոլետարական դատակարգը պահանջում է յուրաքանչյուր մարտիկից՝ ցուցաբերել մարտական բարձր կորով, համառություն և

դիմացկանություն: Այս ուղեգծի հաջող կատարումը մեր ամենալավագույն նվերը կլինի մեր մրցակից Բազվի վիչկաների հերոսներին և Անդրկենտրոնին— Նրա փոխանցիկ դրոշն ստանալու համար:

— Զգա՛ստ... Լսվեց յերթային չարժման պետի հրահանգը,—քայլով—մա՛րչ:

Թնդաց յերաժչտախումբն, ու ամբողջ զորասյունը չարժվեց առաջ: Հորիզոնը կլինչ եր ու պայծառ: Համղաչխմանի լեռան թիկունքից արեգակը նայեց Լոռվա սքանչելի ու ծաղկափթիթ սարալանջերին և կարծես նա յել վողջունեց մեր յերթը: Վարդանվվի մութ կածանով և ապա Մայմեղ լեռան յանդերով սկսեցինք բարձրանալ դեպի վեր, բարձրաբերձ ու անտառիկ լեռների ծերպերը: Հրամանատարությունը դնում եր առջևից: Մենք բարձրացանք Մայմեղ լեռան կատարը. Նրանից այն կողմ գնալը՝ չափազանց դժվարանում եր, ուստի դրեթե բոլորս հագանք «կոդտինները» (մագիլները), իսկ հրանոթներն ու գնդացիրները քանդեցինք և առանձին մասերով բարձեցինք ու չարժումը չարունակեցինք. Մայմեղն անցանք: Կանաչազարդ անտառները, ցորենի կարմրած ու ծփացող դաշտերը և կղմինդրի տանիքներն անհետացան սպիտակ մշուշի մեջ: Զորասյունը չատ եր յերկար: Մեզ պատեցին հևացող ամպերը, վորոնք լցվում էին ձորերը: Քանի քայլ չառալղով դժվար եր տեսնել վորևե բան, ուստի առաջապահ ու թիկունքի զորամասերը կորիզի հետ կապ պահպանելու համար զործածում էին սուլիչներ և ռումբեր, իսկ նոսր տեղերում՝ դրոչակներ և հրթիռներ: Հաճախակի լինում էին զազային ահազանգեր. մարտիկներն իսկույն հագնում էին հակազազային դիմակները: Ցերեկն մշուշը նոսրանում եր. արեգակն իր չողերով ժըպտում եր մեզ ու նորից ծածկում մշուշի մեջ: Անձրև չեր գալիս ու մինչև վերջն ել չեկավ, սակայն մեր վերնազգեստներն ամբողջովին խոնավացան— կարծես հորդ անձրևի տակ էինք մնացել:

Մենք համառությամբ մագլցում էինք ու մագլը-

ցում: Նվաճում էինք նորանոր զագաթներ, որոնց հեղնզատներում դեռ ձյան ահագին շերտեր կային, ու մեր առջև բացվում էին Լոռվա կուսական լեռների նոր ծերպերն՝ իրենց ամբողջ համայքով. խակ լանջերից, որոնք չզարշված էին մշուշով, լսվում էր լեռնական հովվի սրնդի ձայնը: Կոզաին ընկերոջս վառքը խլում էր. նա կանգ առավ, որ ամրացնի: Զախ կոզքիս բնկերը կատակելով ասաց—«Հը՛, չլինի թե յետ ես մընում, ամոթ ե. չե՞ս լսել, ընկ. Ստալինն ասում է՝ չկա մի բերդ, որ բայլշևիկները չնվաճեն»: Նա կոզային ամրացրեց ու ծլծաղելով ասաց.—«Խակ յես բայլշևիկներն բանակումն եմ, ապահով կաց»: Մշուշր կամաց-կամաց փարատվում էր: Նորից յերևաց արեգակի աղոտ փայլը:

Հանկարծ յերևաց յերիս տափառնակ, որոնք, ոդովելով մշուշից, բավականին մոտեցել էին մեզ: Մենք նախապես լսել էինք նրանց ձայնը և չարժվում էինք առանց աղմուկի՝ անկատելի մնալու համար: Այդ պահին մեր դեմերն ապրանչան ավին: Հրաման յեղավ խրամատավորվել: Տափառնակները մեզ արդեն նկատել էին և սկսել էին նռնակներ (վոչ մարտական) նետել: Մերոնք խրամատներից դեպի վեր բարձրացրին զենիտային գնդացիրներն ու սկսվեց կատաղի դիմամարտն ողային «թշնամու» հետ: Տափառնակները չդիմանալով մեր գնդացիրների տարափին՝ քիչ հետո վախան ու անհետացան հեռու մշուշում:

Մենք հանդես յեղավ Հալչի–Ղարա գյուղում: Գյուղի հարավային կողմում գտնվող ապառաժ ժայռի վրա նստած ե մի կիսավեր վանք: Նրա ներքևում, խնձորենու պարտեզի մեջ, բարձրանում և մանկական մատրի աղմկալի չենքը, որտեղ հեղնանք հաղարամյա վանքի դեմ:

Ճաշից ու հանգստից հետո յեղավ մերձեցման յերեկո կոլտնտեսականների հետ: Դպրոցի պատի վրա կինո ցուցադրեցինք: Ներքինում քաղղեկը զրույց կազմակերպեց մոլ մերձման մասին: Կոզավորներն իրենց կարդի դրեցին վաղուց լռած ռադիո-բարձրախոսը: Պատերին փակցված եյին բազմաթիվ վաշտային թերթիկներ, որոնք լույս եյին տեսել փոքրիկ հանգիստների ժամանակ: Գյուղի մեծ փողոցում, ուր նվագում եր նվագախումբը, շուրջպար եյին բռնել:

Ուշ գիշերին հրաման յեղավ՝ «տեղերո՛մ»: Ժամի 23–ին մենք չարժվեցինք դեպի ճամբար:

Առավոտին մենք հասանք ճամբար:

Տեղի ունեցավ հանդիսավոր զորանց: Դիվիզիայի հրամանատարը, խոսելով լեռնային յերթի գերազանց հաջողությունների մասին, ավելացրեց.—

— Դուք ապացուցեցիք, ընկերնե՛ր, փողի բանակի հրամանատարությանը, որ արժանանալու յեք փոխանցիկ դրոշին: Հուսով եմ, որ այդ դրոշը բարձր ու կանգուն կպահեք ձեր ձեռքում, իբրև ձեր հերոսական աշխատանքի մարտական նշանը:

ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

Ճակատամարտը վերջացավ: Հեռվում դեռ լսվում եյին թնդանոթների դղրդյունը և հաղթանակող զորքերի համազարկները ու փողերը: Կռվի դաշտում կուտրտված սայլերի, թափթփված հրացանների, փշրված սրերի, քանդված հափարների միջև ընկած եյին սպանվածների կույտերը, մարդկանց ու ձիերի դիակները՝ այլանդակված, հոշոտված. այդ կույտերի միջից տեղ-տեղ լսվում եյին վիրավորների խոր հառաչանքներ:

Մի հորացած ափի յեզերքին, խիտ յեղինջի մեջ, իրարից վոչ հեռու պառկած եյին յերկու պինվոր, յերկուսն էլ ծանր վիրավորված:

Նրանց համազգեստները տարբեր եյին: Մի քանի ժամ առաջ դեռ կատաղի թշնամիներ եյին, իրար դեմ կանգնած, պատրաստ՝ ամենևրով իրար խողխողելու, խակ այժմ...

Այժմ լուռ նայում էին իրար և այնպես ուզում էին խոսել, գոնե մի բան ասել, բայց ափսոս վոր իրար լեզու չէին հասկանում։ Հանկարծ ավելի յերիտասարդը դժվարությամբ մի-յերկու քայլ հաղիվ փորսող տալով՝ մոտեցավ իր թշնամուն և մեկնեց նրան իր դինու սրվակը. հետո յել աչխատում եր թաչկինակով կորի նրա վերքից հոսող արյունը։ Բայց վոչինչ դուրս չեկավ, միայն ինքն ավելի թուլացավ ու պառկեց։ Ծերբեմն մեկը, յերբեմն մյուսը ճիդ էին թափում, վոր մի քիչ վեր բարձրանան, թևի վրա. ոդնությանն էին կանչում, բայց նրանց կանչերին մոտերքից պատասխան եր տալիս միմիայն փորը ճղված մի ճիու աղեկտուր խրխինջը։

Վերջապես յերիտասարդը հոգնած և թուլացած՝ քուն մտավ։ Վրա հասավ պարզկա գիշերը. ցուրտ քամին գալիս փչում եր հեռավոր լեռներից։ Կովի դաչտում ավելի ու ավելի նվազում էին հառաչանքները. վիրավոր ձին այլևս չեր խրխնջում...

Կես գիշերին ավելի հասակավոր վիրավորը կրկին մի փոքճ արավ նստելու, բայց իզուր. արդեն բոլորովին արյունաքամ եր յեղել։ Մահվան սառնությունն սկսել եր պատել նրա անդամները...

Աչքը գցեց իր հարևանի վրա։ Ծերիտասարդ վիրավորը քնած եր խորը և մի տեսակ ակամա կուչ եր յեկել գիշերվա կորոց ցրտից։

— Պիտի սառչի,—անցավ հասակավորի մտքովը,— անպատճառ պիտի սառչի խեղճը. ինչպես ել յերիտասարդ է...

Ծերը արշալույսի դեմ վիրավորներին հավաքող խումբը մոտեցավ նրանց, յերիտասարդը զարթեց, ուզեց բարձրանա ու զարմացավ, վոր իր վրա մի վերարկու կար գցած։

Նայեց չուրջը, նայեց հարևանին։ Հարևանը, մեռած եր և պառկած առանց վերարկուի. նրա վերարկուն եր իր վրա...

Տե՛ր աստված, ի՛նչ չարչարանք սետաք և կրած լի-

ներ այդ հոդեվարքի մեջ արյունաքամ յեղող մարդը, մինչև վոր կարողանար վերարկուն հանել ու ծածկել մոտը պառկած վիրավորին։

Ծերը յերիտասարդին բարձրացնում էին, վոր տանեն, նա խորին հուզումով ու յերախտագիտությամբ նայում եր իր «թշնամու» տանջված ու կարիքած յերեսին ու չեր կարողանում հայացքը հեռացնի նրա վիճակուսի, մարած աչքերից։

ԴԱՅԼԱՐԻ ՅԵՐԵԽԱՆԵՐԸ

I

Ռումինիայի Դայլար գյուղի բնակիչները սպասում էին Մոնեսկուի բարոնների կալվածքի խրամատներում։

Նրանք չրջապատված էին բարոնների գյուղական միլիցիայով և յերեք շաբաթ եր, վոր կատաղի կռիվ էին մղում։

Զինվորները քաչ էին տվել մինչև անդամ մեծ թնդանոթները, բայց վոչ արձակելու համար. բարոններն այդ չէին թույլ տա, վորովհետև նրանց տոհմական կալվածքը կյանքից թանգ եր։ Նրանք ուզում էին միայն վախեցնել և պատժել իրենց չենթարկվող ծառաներին. նրանք սպանել չէին ցանկանում. ել ո՞վ իմչական նրանց լայնարձակ դաչտերը։

Բայց գյուղացիները կատաղի կռիվ էին մղում։ Ամեն գիշեր նրանք սպանվածների համար փոսեր էին փորում։ Ծերբեմն այդ փոսը չատ ընդարձակ եր լինում, յերբեմն փոքր։ Ծերկրորդ դեպքում յերեկոն լավ եր համարվում, բայց այդպիսի յերեկոներ հազվադեպ էին։

Փախչելով ապստամբված գյուղացիների ձեռքից, կալվածատերերը քչել, տարել էին անասունները և վոչնչացրել մթերքները։ Սկզբում գյուղացիները կե-

բակլիում եյին մանիս կոչվող խոտով, վոր պատրաստվում եր անասունների համար, բայց այդ խոտը մի քանի որ միայն բավականացավ և խոտի հետ միասին ապտավեց նրանց, յեկեն վոչ սրտի, մկանների և աչքերի ուժը:

Առավոտները դյուղացիները իրենց առաջին հայացքը պտում եյին Թշնամու վրա: Նրանք ոդակված եյին: Ցերկրորդ հայացքը նրանք դյուղի վրա, վորն ամայացել, մեռել եր: Վոչ մի տեղից ոգնություն չկար. մոտակա Զենով ու Դենիսլար դյուղերն էլ եյին կռվում:

Այն դինվորները, վորոնք չրջապատել եյին դյուղացիներին, իրենք էլ դյուղացիների զավակներ եյին, մինչև անգամ ապտատմրած դյուղացիների հետ ազգակցական կապեր ունեյին: Բայց այնուամենայնիվ նրանց վրա կրակում եյին, թեև չտեղնատով, զայրույթով, բայց կրակում եյին: Կրակում եյին վախից, հիմարությունից, յենթարկվելու սովորությից: Բայց դնդակները, արճակողի զգացմունքներից անկախ, մեռտեսակ մահ եյին բերում և հանդարտ, բայց անչեղ կերպով հնձում եյին ապտատմրների չարքերը:

Շեվ հաղթվելն անխուսափելի կեր, յեկեն չվինեյին Դայլարի յերեխաները...

Ցերը իրենց հայրերը մանգաղներով, հրացաններով, յեղաններով, կացիններով դնացին կռվելու կալվածատերերի դեմ, դյուղում մնացին միայն մայրերն ու յերեխաները:

Ոջախների կրակը մարեց, ճախարակները լռեցին, ինքնայեռները սառեցին: Դյուղն ապտատ եր: Բայց ապամարդիկ չեյին վերապատռում: Մայրերը չրջատ եյին կռացած, տխուր և հուզված: Իսկ յերեխաները ձիննները կտրել եյին, նրանք ականջ եյին դնում հեռվից լավող խուլ պայթյուններին և լայն բաց արած, վախեցած աչքերով ճիգ եյին թափում կարդալ իրենց մայրերի յերեսների վրա ապտատվելի ճակատագրի լուծումը:

Ցերը պարզվեց, վոր իրենց հայրերը չրջապատված են և սովից մեռնում են, մի քանի յերեխաներ հավաքվեցին դյուղի ծայրին և քաշուն քննարկեցին իրենց պլանը:

— Մայրիկներին վոչինչ չասենք, թե չե մեզ կծնեն...

— Ամեն մեկը թող վերցնի ինչ վոր հարիալոզ է...

— Վոչ վոք քնով չընկնի...

— Շա՛տ չուտ. հենց վոր մայրիկները կզարթնեն:

Այսպես եյին քննարկում իրենց վորոշումները լուրջ ձայներով:

II

Մյուս որը քան ու յոթերորդ անգամ դյուղացիները նայեցին Թշնամու չարքերին և լուռ դյուղին: Ցերեկվա մեռածներն ընկած եյին այնտեղ, ուր հանդիպել եր նրանց զնդակը. կենդանի մնացածները, իրենց ուժերը կռվի համար խնայելով, մեռելներին չեյին հավաքել: Այս առավոտ նրանք վորոշեցին բացարձակ կռվի դուրս գալ կուշտ ու մաքուր և քանակով գերազանց Թշնամու դեմ: Գնդակից մեռնելն ավելի հեշտ եր, քան սովից մեռնելը:

Բայց հրացանները լցնելիս, դյուղացիներն այնպես զարմանալի բան տեսան, վոր մինչև անգամ զինվորներն էլ ապշեցին և բերանները բաց ալին:

Գետնի վրա ղրած յերկու զնդացիրների մեջից, վորոնք լաժանում եյին դյուղը բարոններն կալվածքից, չարժվում եյին մի խումբ փոքրիկ յերեխաներ: Նրանք հանդարտ անցնում եյին մահարեր գիծը: Ցերեխաները չատ դժվարությամբ կարողացան անցնել խիտ, ցածր թփերի միջից և այժմ նրանց սովորական դալուկ դեմքերի վրա կայտառություն եր յերևում: Ցուրաքանչյուր յերեխա բերում եր մի մեծ հաց: Ամենափոքր յերեխաները հասակով ավելի փոքր եյին քան իրենց բանած բարոնները, վոր նրանք, դրոշակի պես

բռնած, առաջ էին չարժվում։ Դեղին, հարդանման մազերով, կեղտոտ մանկական դեմքեր, պատառոտուն չապիկով, հագիվ ծածկված բոբիկ տոտիկներ, և այդ վողջ բոբիկ խումբը, հացերը բռնած, կամաց-կամաց մոտենում էր կալվածքին։ Գյուղացիներն ու գինվորներն այնչափ միաոեսակ ապրել էին, վոր չդիտեին, թե ի՛նչ անեն։

Հանկարծ ռումինական ազան հասկացավ, վոր իր զինիները վատնդված են, և իշխանին հատուկ կատարումբյամբ հրամայեց կրակել...

Հրացանների փողերն ինքնաբերաբար ուղղվեցին դեպի յերեխաների խումբը։ Հրացանները չխշխկացին, հարյուրավոր կրծքերից յերկյուղի բացականչություններ լսվեցին...

Բայց հրացանները չպայթեցին...

Հանդարտ, անվախ, հատուկաուն քայլերով յերեխաներն իրենց հայրերի դեմն էին գնում։ Վերջից էր նում էր մի 12 տարեկան ազա-ամենամեծը։ Նա քայլում էր՝ ժպիտը դեմքին, կարծես իր մարմնով ծածկելով փոքրիկների խումբը։

Այդ ժամանակ մի պայթյուն լսվեց։ Այդ պայթյունը չկարողացավ խանգարել յերեխաներին՝ կատարելու իրենց գործը, բայց բավական էր մարելու մի փոքրիկ կյանք...

Կալվածքի դարպասի չեմքին յերեխան ընկավ— նույն Հանդարտ ժպիտը դեմքին...

Իշխանի ատրճանակի պայթյունը վո՛չ միայն յերեխայի սիրտը խոցեց, այլև գինվորների սիրտը— չէ՞ վոր նրանք էլ գյուղացիների զավակներ էին...

Ցեվ նույն յերեկոյան գինվորներն ապստամբ գյուղացիների կողմն անցան։

„ՀԱՆՑԱԳՈՐԾԸ"

Լուին փոքր է, Թանը՝ մեծ։

Ամեն առավոտ Լուին կապում էր իր կապույտ գոգնոցը, գլխին գնում կլոր գլխարիկը և չոտպում ուսումնարան։

Թանը հագնում էր լայն չալվար և բլուզ։ Նա աշխատում էր գործարանում։

Լուին գիտեր, թե ինչ է կատարվում Թաննց գործարանում, Թանն էլ գիտեր, թե ինչ է կատարվում Լուինց գյուղում։

Բայց այս առավոտ Լուին նկատեց, վոր Թանն ուշացել է, ինչ վոր բան է թագցնում։

— Ինչո՞ւ աշխատանքի չես գնում Թա՛ն,—հարցրեց մայրը։

— Կգնամ, մայրի՛կ,—պատասխանեց Թանը։

Մայրը հագնվեց ու գնաց գործի։

Լուին ու Թանը մնացին մենակ։ Թանը մի կապոց բաց արավ։ Նրա մեջ իրար վրա դարսված էին տըպված թերթեր, վորոնց ճակատին գրված էր՝ «Փարիկի 16-րդ շրջանի բանվորներին»։

Թանն ասաց.

— Վոստիկանները հսկում են... պետք է կպցնել... Չկարողացա...

— Լսի՛ր, Թա՛ն,— մոտենալով նրան չընդհատց Լուին,—յես քեզ կոգնեմ, փոքրերին դժվար կնկատեն...

Լուիի մատները դողում էին։ Նա կամաց վերցրեց մի թերթ։ Նրա տակը կար յերկրորդը, յերրորդը,, չորրորդը... Ցերեխայի աչքերն ուրախությունից փայլեցին, սիրտն սկսեց արագ խփել։

— Ի՛նչ վերցրու,—ասաց Թանը,—ավելի չես կարող կպցնել։ Հերիք է։

Նրանք միասին դուրս եկան փողոց։

— Հաջողություն եմ ցանկանում,—ասաց Թանը, և Լուին ծռվեց դեպի ձախ։

Լուին հեռու գնաց: Հասավ մի անծանոթ փողոցի: Ավելի լավ. այստեղ վոչվոք իրեն չի ճանաչի: Փողոցի ծայրին մի մեծ յեկեղեցի կար: Յեկեղեցին չինված եր չորս փողոցի մեջտեղում:

— Այս յեկեղեցու չորս կողմին ել կկպցնեմ,—մտածեց Լուին:

Նա բարձրացավ լայն սանդուխքներով և դես ու դեն նայեց. փողոցներում մարդ չկար: Հեռվում յերևում եր միայն սպիտակ դողնոց հագած մի յերեխա, վորը քաշ եր տալիս իր ձեռնասայլը:

Լուին կռացավ, կապոցից մի թերթիկ հանեց, ջրիչ քսեց, կպցրեց պատին, ձեռքով հուպ տվեց:

Հանկարծ նա իր յետևից ձայն լսեց... Առանց յետ նայելու ականջ դրեց...

— Չե՛...բան չկա:

Լուին քարե սանդուխքներով գնաց, հասավ յեկեղեցու մյուս անկյունին և դես ու դեն նայեց:

— Վախենալու կարիք չկա. վոստիկաններ վոչ մի տեղ չեն յերևում:

Կռացավ, մի թերթ վերցրեց, ջրիչ քսեց...

Այնուամենայնիվ մեկին այստեղ կանդնած ե, չնչում ե...հենց կողքիս...

Ուզեց յետ նայել, բայց չկարողացավ...

— Իհարկե, կանդնած ե... նույնիսկ յերևում են նրա դեղին բեխերը և ինչ-վոր կապույտ բան:

Լուին հանկարծ արագ շուռ յեկավ և գլուխը բարձրացրեց: Կապույտ գլխարկի տակից ուղիղ նրա վրա նայում վոստիկանի սուր, սև աչքերը:

— Բռնվեցի: Ել փախչել չեմ կարող,—մտածեց Լուին:

Ձեռքերն ու վրձինը դողացին, բայց մի վայրկյան միայն:

Յերեխան ուրախ դեմք ընդունեց և ասաց.

— Բարև, պարո՛ն:

— Դու այստեղ ի՞նչ ես անում:

— Պարո՛ն, յեթե դուք հետաքրքրվում եք, նե-դուքյան կրեք, մտեցեք անկյունին: Ահա այստեղ, դեպի աջ յես կպցրել եմ, կարող եք կարդալ: Դրանից յես բան չեմ հասկանում, պարո՛ն:

Վոստիկանը կամաց-կամաց առաջ գնաց:

Լուին կատվի արագությամբ յետ դարձավ, չանցեց կապոցը և պո՛ւկ...

Այդ ժամանակ լսվեց սուլիչի բարձր ձայնը:

Լուին վազում եր:

— Ահա, ահա կհասնի ու կբռնի,—մտածում եր նա:

Փողոցի անկյունում, փռան մոտ, կանգնած եր սպիտակ դողնոց հագած, ձեռնասայլ քշող յերեխան:

— Մո՛ւռ, պահի՛ր,—գոչեց Լուին ու կապոցը դրեց հացով լիքը ձեռնասայլի մեջ:

Սպիտակ դողնոց հագած յերեխան վախեցած յետ նայեց և վոստիկանին տեսնելով իսկույն հասկացավ, թե բանն ինչ ե:

Նա հանդարտ տեղավորեց կապոցը ձեռնասայլի անկյունում և վրան հացեր դրեց: Հետո հանդիստ սկսեց քաշ տալ սայլակը, չվշտացնելով մի ուրախ յեղանակ:

Լուին վազում եր առաջվանից ավելի արագ:

Վոստիկանը չարունակում եր սուլել:

Լուին հոգնել եր. նրա ընչաուրթյունը ծանրացել եր, վոտները դժվար եր կարողանում շարժել:

Իսկ փողոցը յերկար եր, վազում եր, վազում, ծայրին չեր հասնում: Վո՞րտեղ թաղնվի:

II

Վերջապես հասավ փողոցի ծայրին:

Հեռվից յերևում եր մի կարմիր չենք:

«Դպրոց»,—կարդաց Լուին կապույտ ցուցանակի վրա:

Իսկ վոստիկանը մոտ եր:

— Ի՞նչ կա,—հարցրեց վախեցած վարժուհին:

Լուսին վազելով ներս մտավ դպրոցի բակը և կպավ կապույտ դռնից կտրած չահել վարժուհուն:

— Ծանոթ աչքեր են,—մտածեց վարժուհին...

հա՛... Սա այն բանվորի յեղբայրն է...

— Թաղցրե՛ք լինձ, փրկեցե՛ք...վոստիկանը մոտ է. հրես կբռնի լինձ,—աղաչեց Լուսին:

— Դու ո՞վ ես, ի՞նչ ես արել:

— Հասկանում եք. յես... նա... թերթիկները...

Վարժուհին բռնեց նրա ձեռքը:

— Հասկանում եմ...պիտե՛մ...դնանք...

Ուսուցչուհին յերեխային տարավ դասարան:

— Նորի՛կ, նորի՛կ,—դոչեցին աշակերտները ծափ տալով ու թռչկոտելով:

— Կամա՛ց, կամա՛ց, մի՛ աղմկեք,—ասաց վարժուհին և Լուսին տարավ, նստեցրեց վառարանի մոտ:

— Հանի՛ք տետրակները, թելադրություն պետք է դրեք: Մի տետրակ էլ նորեկին տվեք:

Վարժուհին բարձր ձայնով թելադրում եր և չուտ-չուտ դեպի դուռը նայում:

Լսվեց նախասենյակի–դռան ճռնչոցը և մոտեցավ վոտնաձայն:

Հանկարծ դուռը բացվեց և ներս մտավ դպրոցի դիրեկտորը և նրա յետևից՝ վոստիկանը:

Դասարանը լուռ եր:

— Տեսնո՞ւմ եք, այստեղ էլ ամեն ինչ կարգին է, ինձ մոտ այդպիսի բան լինել չի կարող: Ցես իմ ողնաականներին չատ լավ եմ ճանաչում: Ցտեսություն, յերեխաներ, ցտեսություն, տիկի՛ն Սյուզան,—ասաց դիրեկտորը և դուրս գնաց: Նրա յետևից էլ վոստիկանը:

Դասը վերջացավ:

Վարժուհին բռնեց Լուսի ձեռքը և դիմեց դեպի դպրոցի յետևի դուռը:

— Շնորհակալ եմ, չնորհակալ եմ,—չչնջաց Լուսին, և ուզում եր դուրս գալ փողոց, բայց հանկարծ յետ դարձավ:

— Մի հատ մնացել է ծոցումս: Վերցրե՛ք իրրև հիշատակ,—ասաց յերեխան և վարժուհուն մի թերթիկ տվեց, վորի ճակատին տպված եր՝ «Փարիզի 16-րդ շրջանի բանվորներին»...

ՆՈՏԱ ՉԻՆԱՍՏԱՆԻՆ

Գրում եմ
հաճախ
աչքերս հեռատան—
Դեպի
անարգված,
խղճուկ Չինաստան.....
Նայում եմ
դեպի
հեռու հորիզոն—
Տեսնեմ՝ չի՞ հալվում
չորս հարյուր միլիոն:
Գաղաններն արդյոք
կախրեն յերկա՞ր,
Չինաց աշխարհին՝
հոչոտված, ակար:
Եմիգրանտները
հին Ռուսաստանի
կո՞խ կտան հողը
խեղճ Չինաստանի:
Անդլիայի հակա
դրեդնոուտները
Շա՞տ պիտի կոծեն
չինաց ափերը:
Մեկնի՛ր լինճ
ձեռդ
բարեհամական,

Դո՛ւ,
բազմամիլիոն
բանվոր Զինաստան:
Իմպերիալիզմին
վերջ տանք միասին,
Ցերիվերը
դարձնենք
վորպես բուբաստան:
Բայց Թող չսոսկա
յերբեք Զինաստան,
Զինաց սահմանից
բելոգվարդիական
բանդաները թե դան—
Հրացանը կառնենք, պեներալական
Զինաստանի դեմ՝ մենք կռվի
կելնենք:

ՋՈՆՆԻ

(ԱՍԵՐԿԱՅԱՆ ՑԵՐԵԽԱՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՑ)

I

Հեռու–հեռու չէակի ղիլ ձայնը Զոննիին և մորը վոտքի կանգնեցրեց: Մայրը նայեց դարակի վրա դրված թլթեղյա ժամացույցին: Ժամը հինգ և կեան եր: Գործարանի ծառայողները նոր եյին զարթնել:

— Մենք պիտի վազենք,—քրթմնջաց նա, իջեցնելով պատուհյդը և հանգցնելով լամպը:

Մայր ու վորդի խարխափելով իջան սանդուխքներով: Ցեղանակը պարզ եր և զով, այնպես վոր Զոննին թարմ ոդից սկսեց դողալ: Աստղերը յերկնքում դեռ չեյին մարել, քաղաքում մութ եր, վորպես մի փոսի մեջ: Զոննին և նրա մայրը դժվարությամբ եյին շարժում իրենց վոտները. նրանց մկաններում այնքան ույժ չկար, վոր կարողանային վոտները դեռնից բարձրացնել:

Այդպես նրանք գնում եյին քառորդ ժամի չափ բոլորովին լուռ, յերբ մայրը դարձավ դեպի աջ:

— Տե՛ս, չուչանա՛ս,—ասաց նա իր վորդուն մթության միջից:

Զոննին վոչինչ չպատասխանեց և գնաց իր ճանապարհով: Բանվորական թաղերում տների դռներն ամենուրեք բաց եյին: Շուտով Զոննին միացավ ամբոխին, վոր չտապ առաջանում եր կիսախավարի մեջ: Ցերը նա դարպասից ներս մտավ, չէակը նորից սուլում եր:

Զոննին նայեց դեպի արևելք: Գաղաքային տների տանիքների վրայից յերևում եր դունատ արշալույսը: Ցեվ այդ եր այն բոլորը, ինչ վոր նա տեսավ ցերեկվա լույսից, վորովհետև նույն վայրկյանին նա յերեսը շուռ տվեց և սկսեց իր աշխատանքը:

Տղան դրավեց իր տեղն ընդարձակ արհեստանոցում, յերկայն շարքերով կանգնած մեքենաներից մեկի մոտ: Նրա հանդեպ, մի արկղի վրա, արագ պտտվում եյին ճախարակների պես մեծ կոճեր, վորոնց վրա նա փաթաթում եր ոլոքը կոճերի թելը: Աշխատանքը պարզ եր և բացի արագությունից՝ ուրիշ վոչինչ չեր պահանջում: Փոքրիկ կոճերն արագ դատարկվում եյին, և նրանց փաթեթները յեթե անող մեծ կոճերն այնքան չատ եյին, վոր մի րոպե անգամ հանգիստ չեյին տալիս Զոննիին:

Նա աշխատում եր մեքենայորեն: Ցերը փոքրիկ կոճը դատարկվում եր, նա ձախ ձեռքով արդելք եր լինում գլանակի չարժումին, կանգնեցնում եր մեծ կոճը և նույն րոպեին յուցամատով բռնում եր թելի նույնպիսի ազատ ծայրը:

Այս տարբեր չարժումները կատարվում եյին յերկու ձեռքով միաժամանակ և արագ: Տղայի մատները հազիվ եյին յերևում, ինչպես հազիվ եյին յերևում անվի ճաղերը պտտվելիս:

Որինակելի բանվորից Զոննին դարձավ որինակելի մեքենա: Ցերբ նրա աշխատանքը լավ չեր դուրս գալիս, պատճառը միայն ապրանքի վատությունն եր: Ցեվ

այդտեղ վոչ մի զարմանալի բան չկար։ Նա մի որ իսկ չէր հիշում իրեն առանց մեքենայի։ Նա ծնվել էր մեքենաների մեջ և նրանց չրջանումն էլ դաստիարակվել էր։

II

Տաններկու տարի առաջ նույն այդ չուլհականոցարհեստանոցում, հենց նույն զործարանում բանվորուհիների մեջ չփոթմունք առաջացավ։ Ջոննիի մայրը հանկարծ ուշաթափվեց։ Նրան պատկերին հատակի վրա չոնգացող մեքենաների մեջ. մի քանի հատակավոր կանայք թողին իրենց զործը և մոտեցան նրան։ Ամոթ վարպետը նրանց ոգնում էր։ Մի քանի վայրկյանից հետո արհեստանոցում մի կենդանի եյակ ավելացավ։ Դա Ջոննին էր, վոր ծնվեց վորոտացող մեքենայի զոռոցի ու ազմուկի մեջ և տաք ու խոնավ ոդի հետ առաջին ներշնչումով ընդունեց նաև բամբակի բարակ մասնիկները։ Նա խակույնևեթ հազաց, վորպեսզի իր թոքերն ազատ այդ աղվամազերի զրկիից, և այդ ժամանակից սկսած՝ նույն պատճառով նա չի դադարել հազալուց։

Ջոննիի հարևան տան անուշադիր աշխատելու պատճառով մի լավ ծեծ էր կերել վերակացուից. հեկեկում էր և քիթը վեր քաշում։ Նրա դեմքը չզանորեն դողդողում էր վերակացուի դեմ առաջացած առելությունից, մինչ վերակացուն զայրացած հայացքով նրան էր նայում։ Բայց այժմ ծեծված տղայի յուրաքանչյուր կոճն աշխատում էր կարգին, իսկ ինքը բարձրաձայն սարսափելի անեծքներ էր թափում պտտվող գլանների ուղղությամբ, լավ իմանալով, վոր նրանց ազմուկը տեղում խեղդում էր և անլսելի զարձնում իր հայհոյանքը։

Ջոննին ուշադրություն չէր զարձնում իր շուրջը տեղի ունեցող վոչ մի բանի վրա։

Անցավ յերկար առավոտը և ճանճրալի որը։ Սրդեն մթնել էր, յերբ չչակը հաղորդեց աշխատանքի սվարտումը, և Ջոննին դուրս յեկավ զործարանի դարպասից։ Այդքան ժամանակամիջոցում արեգակն իր բարե-

բար տաքությունը հաղորդելով հողին՝ վերջացնում էր իր յերկնային պատյանը և հետզհետե ցած իջնելով ծածկվում էր քաղաքային տների տանիքների հորիզոնի յետևում։

III

Հետևյալ առավոտյան մայրը նորից նրան զարթեցրեց անուշ քնից։ Հետո նույն սղքատիկ նախաճաշը, նույն ճանապարհորդությունը խավարի մեջ, նույն գունատ արշալույսը տների տանիքների յետևից և նույն ծանր, դժվարին աշխատանքն ազմկալի զործարանում։

Բայց վոչ... Ջոննիի կյանքում կար և մի փոքրիկ բազմազանություն։ Այդ տեղի ուներ այն ժամանակ, յերբ նա մի աշխատանքից մյուսին էր անցնում, կամ հիվանդանում էր։ Ցերը դեռ վեց տարեկան էր, Ջոննին տանը փոխարինում էր ծնողներին։ Ցոթ տարեկան հատակում նա զործարան մտավ, կոճերի վրա թել փաթաթելու զործով։ Իսկ յերբ ութ տարին լրացավ, նա վարժվեց մի ուրիշ զործարանում։ Նրա աշխատանքը զարմանալի կերպով միոբինակ էր. նա պիտի նստեր, ձեռքին բռնած մի ճիպոտ, և նրանով պիտի ուղղություն տար իր մոտով վազող մահոդի հոսանքին, վոր մեքենայի խորքից դուրս պրծնելով՝ անցնում էր տաք գլանի միջից և գնում դեպի հեռու։ Իսկ Ջոննին նստած էր միևա միևնույն տեղում, հեռու ցերեկվա լույսից։

Ինը տարեկան հատակում Ջոննին հիվանդացավ կարմրուկով և այդ աշխատանքից զրկվեց։ Ա.ողջանալուն պես նա մտավ ապակու զործարան։ Որավարձն այնտեղ ավելի լավ էր, բայց զործը ճարպկություն և ունակություն էր պահանջում։ Այդ աշխատանքը վարժատրվում էր հատով, և Ջոննին վորքան ավելի ճարպկություն էր ցույց տալիս, այնքան ավելի ոռճիկ էր ձեռք բերում։ Տարվելով վաստակելու ծարավով, նա աշխատում էր իր ամբողջ յեռանդով և կարճ միջոցում զարձավ վորակյալ բանվոր։ Նրա աշխատանքը բարդ չէր. ապակյա խցանները պիտի անցկացներ չէրին։

Նրա դուռուց կախված եր լինում մի փունջ թել։ Վարպետի յերկու ձեռքով աշխատել կարողանա, նա չի-չը պահում եր յերկու վառքի մեջ և նստած եր մնում առավոտից մինչև իրիկուն, առանց ուղղվելու։ Ամեն որ նա այդ դրության մեջ մնում եր ճիշտ տասը ժամ, և նրա կուրծքը հետզհետե նեղանում եր և հիվանդոտ դառնում։ Այդ վտանգավոր եր թոքերի համար, բայց դրա փոխարեն՝ որպես նա պատրաստում եր յերեք հարյուր դյուժին չիչ։ Գործատրանի վարիչը շատ եր պարծենում Ջոննիով և այցելուներին մատով ցույց եր տալիս նրան։ Հանաք բան չի, տասը ժամում յերեք հարյուր դյուժին չիչ։ Ջե՛ր որ այդ նշանակում եր, որ մարդը դարձել է մեքենա, որ վոչ մի ավելորդ շարժում չի անում, վորի յուրաքանչյուր մկանն աշխատում է արագ և ատուդ։ Բայց այդ լրիված աշխատանքի հետևանքով Ջոննին դարձավ ատրպաիելի ջղային։ Գիշերը, քնի մեջ, նա չարունակ ցնցվում եր, իսկ ցերեկը նա չեր կարողանում ուղղվել, միշտ կծկված եր։

Նա դարձավ շատ դունատ, և նրա հազը ատատկացավ։ Շուտով սուր բորբոքում առաջացավ հիվանդապին կրծքի վանդակի մեջ, նրա թուլլ թոքերում, և նա կորցրեց իր տեղն ապակու գործարանում։

Ջոննին ստիպված եր նորից դառնալ այն գործարանը, ուր աշխատանքն ախտել եր կոճի վրա թել փաթաթելով։

ՍԻՄՊԼՈՆԻ ՏՈՆՆԵԼԸ

I

Առավոտ է։ Լեռներից հոսում է ծաղիկների բուրմունքը։ Հենց նոր ծագել է արևը, և ծառերի տերևների վրա տակավին չողչողում է ցողը։ Ճանապարհը, վոր ծածկված է խճով, ճղճում է լեռների մեջև։

Ավտոմոբիլ մոտ նստած է մի ուս բանվոր։ Նրա

կրծքից չքանչան է կախված, դեմքը լուրջ է, համաձակ և սիրալիր։

Ձեռքերի դաստակները ծնկներին դրած, գլուխը վեր բարձրացրած, նայում է չափանակենու տակ կանգնած մի անցորդի և ասում.

— Այս չքաղրամն ատացել եմ Սիմպլոնի համար,

պարո՛ն, Սիմպլոնյան տոնելում կատարած աշխատանքիս համար։

Ցեվ աչքերը խոնարհեցնելով կրծքին՝ նայում է մետաղի գեղեցիկ կտորին ու քնքշանքով ժպտում։

— Ե՛, ամեն մի աշխատանք ծանր է, իսկ յերբ սիրես, հետո թեթևանում է։ Այնուամենայնիվ, մեր աշխատանքը շատ ծանր եր։

Նա հանդարտ չարժեց գլուխը, նայեց արևին, ժպտաց և հանկարծ կենդանացավ:

— Մարդը գիտե աշխատել,—չարունակեց նա ակներև հպարտությամբ:—Ո՛, փոքրիկ մարդը, յերբ նա ուզում է աշխատել, անպարտելի ուժ է: Ու հավատացեք, վերջիվերջո այդ փոքրիկ մարդը կանի ամեն բան, ինչ վոր կամենա: Հայրս սկզբում չեր հավատում այս բանին: «Կարել սարերը և թափանցել յերկրից յերկիր,— ասում եր նա,—այդ ասածուն ընդդեմ բան է, քանի վոր նա յերկիրը բաժանել է սարերի պարսպով»:

— Ասածո՛ւ վորդիք,—ասում եր հաճախ հայրս,— չի՛ կարելի այդպես կռվել յերկրի հետ: Նա վրիժառու կլինի իր վերքերի համար և կմնա անպարտելի:

— Ճիվ ճիշտ վոր այդպես եր: Քանի խորն եյինք մտնում, այնքան ողը տաքանում եր ներքնուղու մեջ, այնքան չատ մարդիկ եյին հիվանդանում և ընկնում: Ու ավելի ուժեղ եյին հոսում աղբյուրների տաք ջրերը, քարերն ավելի եյին թափվում: Մեղնից յերկուսը խեղաթյուրվեցին: Գիշերները բանվորական հանրակացարանում մեղնից չատերը զառանցում եյին, հառաչում և վեր թռչում անկողնից սարսափահար...

— Հիմա յե՞լ կասեք՝ ճիշտ չեմ ասում,—ասում եր հայրս վախն աչքերին և հազալով ավելի ու ավելի հաճախ, ավելի ու ավելի խուլ:—Հիմա յե՞լ կասեք՝ ճիշտ չեմ ասում: Ասում եյի, չե՞. յերկիրն անպարտելի յե:

II

— Վերջապես հայրս անկողին ընկավ: Նա պինդ կազմվածք ուներ, յերբեք չարաթից ավելի կռվում եր մահվան դեմ, կռվում եր համառորեն, իր արժեքն իմացող մարդու պես:

— Իմ բանը վերջացած է, Պա՛ոլո,—ասաց նա ինձ մի գիշեր:—Պահի՛ր քեզ և տուն դարձիր:

Հետո ձեռքս առավ, քաշեց դեպի ինքը և ավելացրեց.

— Գիտե՞ս ինչ կա, վորդի՛ս, յես այժմ կտրծում եմ, վոր այդ այդպես էլ կլինի. մենք և նրանք, վոր գալիս են մյուս կողմից, կդառնենք իրար սարի մեջ, կհանդիպենք իրար: Ցեխ քեզ խնդրում եմ, վորդի՛ս, յերբ այդ բանը պատահի, յե՛կ ինձ մոտ, գերեզմանիս վրա, և ասա՛.—Հա՛յր, յեղավ,—վոր յես իմանամ:

Այս ասելուց հետո նա մեռավ: Մենք նրան թաղեցինք այն ներքնուղու մեջ, ուր աշխատում եր նա: Հորս մահից հետո մենք չարունակեցինք ծանր, դժվարին աշխատանքը:

— Մենք և նրանք, վոր գալիս եյին մյուս կողմից, հանդիպեցինք իրար լեռան մեջ, մահից տասներեք չարաթ հետո: Ո՛, յերբ մենք լսեցինք այնտեղ, գետնի տակ, մթան մեջ, մյուսների աշխատանքի ազմուկը, գետնի տակ մեզ ընդառաջող մարդկանց ազմուկը, յերևակայո՞ւմ եք, թե ինչ պիտի զգայինք մենք: Ջե՞ վոր յերկիրը կարող եր իր ահագին ծանրության տակ ճզմել մեզ, փոքրիկ մարդկանց, ամենքիս միանգամից:

— Շատ որեր եյինք լսում այդ զարկերը, վորոնք խուլ թնդյուններ եյին հանում. որը որին նրանք վորոշակի եյին զառնում, լսվում եյին ավելի պարզ: Մեզ սիրից հաղթողների ցնծագին խելագարությունը: Մենք աշխատում եյինք առանց հոգնելու, առանց ցուցմունքները պահանջելու: Լավ եր այս, ինչքա՜ն լավ եր: Ու ամենքս այնքան սիրալիր ու բարի եյինք դարձել, ինչպես միայն յերեխաներն են լինում: Ա՛խ, վոր գիտենայիք՝ վորքան ուժեղ բան և լինում այն ցանկությունը, վորով ուզում ես հանդիպել մարդուն մթության մեջ, գետնի տակ, ուր խլուրդի պես փորփրում եյիր յերկար ամիսներ:

Նա վոգևորվեց, մոտեցավ լսողին, կանգնեց ուղղակի նրա առջև ու չարունակեց հանդարտ ու ցնծագին.

— Իսկ յերբ, վերջապես, փլվեց քարի չերտը, և բացվածքի մեջ վայրեց կերոնի կծմիր ճրագը, յերբ յերևացին արցունքով և քրտինքով վողողված սև դեմքերը, և վորոտացին հաղթության ավազակները, ո՛,

այդ ամենալավ որն եր իմ կյանքի մեջ: Ցերբ միտս եմ բերում, ղգում եմ, վոր ղուր չեմ ապրել: Ու յերբ պետնի տակից դուրս յեկանք արևի տակ, չատերս յերբեմնիվայր պառկեցինք գետնին, կրծքներս կպցրինք հողին ու համբուրում եյինք յերկիրը, և այս այնքա՜ն լավ եր, ինչպես լավ և հեքիաթը:

— Իհարկե, գնացի հորս գերեզմանը, այո՛, գնացի: Թեև գիտեմ, վոր մեռելները չեն կարող լսել, բայց գնացի: Պետք և հարգել նրանց յանկությունը, ովքեր աշխատել են մեզ համար և մեղնից պակաս չեն տանջվել,—այդպես չե՞:

— Այո՛, այո՛, գնացի նրա գերեզմանը, վոտքովս ծեծեցի հողը և ասացի՝ ինչպես ուղում եր ինքը·

— Հա՛յր, յեղավ,—ասացի:—Մարդիկ հաղթեցին: Ցեղավ, հա՛յր:

ՍԱՅԻԴԸ

I

Սայիդի հայրը մի դոմեչ ուներ, նրանով նա մշակում եր իր դաշտը: Ցերբ չրջանի պետը խլեց նրա դոմեչը, Սայիդի հայրն այնքան վշտացավ ու այնպես տխրեց, վոր օրեր շարունակ խոսք չեր դուրս գալիս նրա բերանից: Վաբի ժամանակը մոտենում եր: Ցեթե հողը ժամանակին չվաբեր ու չցաներ, ամբողջ տարին ընձի յերես չեր տեսնի:

Սայիդի հայրը խիստ մտահոգված եր. չե՞ վոր բրինձ և հարկավոր թե՛ իրեն, թե՛ իր կնոջը, թե՛ Սայիդի համար, վոր դեռ յերեխա յեր, և թե՛ նրա փոքրիկ յեղբայրների ու քույրերի համար: Բայց միտն այդ չեր Սայիդի հոր հոգսը: Նա վախենում եր, վոր չրջանի պետը դանդաղի դրխավոր պետին, թե ինքը տուրք լրիվ չի ավել, ու պետը պատժի իրեն, վորովհետև դրա համար պատժում են:

Սայիդի հայրը մի դաշույն ուներ. ճիշտ և, դաշույնն այնքան էլ լավը չեր, բայց հայրը չատ եր գնահատում այդ դաշույնը, վորովհետև հիշատակ եր իր հորից. պատյանն արծաթապատ եր և արծաթե ողակներով զարդարած:

Այդ դաշույնը նա վաճառեց մի չինացի վաճառականի ու այդ փողով մի ուրիշ դոմեչ գնեց:

Այդ ժամանակ Սայիդը յոթ տարեկան եր և նա չտապեց նոր դոմեչի հետ բարեկամություն հաստատել: «Բարեկամություն» եմ ասում, վորովհետև այդ իրոք բարեկամություն եր: Այդ մեծ և ուժեղ կենդանին յերեխայի նշանի համաձայն հնազանդությամբ թեքում եր գլուխը դեպի ա՛ջ, դեպի ձախ կամ իջեցնում եր ցած: Նա ճանաչում եր իր փոքրիկ տիրոջը, նա ամում եր ու մեծանում նրա հետ, հասկանում ու սիրում եր նրան:

Սայիդի զվարթ, ուրախ մանկական ձայնից դոմեչը կարծես ավելի յեր ուժեղանում, ու նրա դուրթանը ճեղքելով ծանր կավահողը՝ խոր ակոսներ եր թողնում յերեսից: Հասնելով դաշտի ծայրին, դոմեչը հնազանդությամբ շուռ եր գալիս, և հին ակոսի մոտ ուղիղ գծով նոր ակոս եր չարվում:

Ցերբ չրջանի պետը Սայիդի հորից խլեց և այս դոմեչը, Սայիդն լինը տարեկան եր:

Սայիդի հայրը չատ աղքատ եր: Նա վաճառեց այն արծաթե զարդերը, վոր նրա կինը ժառանգություն եր ստացել իր ծնողներից, ու այդ փողով մի նոր դոմեչ գնեց:

Սայիդը սաստիկ վշտացած եր: Նա իմացավ, վոր դոմեչին քշել են գլխավոր հրապարակը, ու հորը հարցրեց, թե արծաթե զարդերը վաճառելիս արդյոք չի՞ տեսել դոմեչին:

Հայրը վոչինչ չպատասխանեց, ու Սայիդը վախենում եր, թե իրենց դոմեչին էլ տարել են սպանդանոց այն բոլոր դոմեչների հետ, վոր չրջանապետի հրամանով խլել եյին դյուղացիներից:

Սայիդը հիշեց խեղճ պառավ դոմեչին, վորի հետ ամբողջ յերկու տարի այնպես սերտ բարեկամ եյին յե-

դել, ու լաց լեղավ։ Ցավ նա յերկար, չատ յերկար ժամանակ բերանը պատառ չեր կարողանում դնել. կարծես թե մի բան խեղդում եր նրան։ Ջե՞ վոր նա դեռ յերեխա յեր։

Նոր դամեզը սովորեց Սայիդին, ու յերեխան չատ չուտով մոռացավ իր հին բարեկամին։ Նոր դամեզը նախորդից ավելի թուլ եր, բայց նույնպես հեզ եր և հնազանդ։

Մի անգամ Սայիդը քշում եր, քշում եր դամեզին, իսկ դամեզը մեխակածի նման տեղից չեր չարժվում։ Ցերեխան այնքան զարմացավ նրա այդ անսովոր համառության վրա, վոր նույնիսկ վատ հայհոյական խոսքեր ասաց նրան։

Սայիդը չեր ուզում վիրավորել իր բարեկամին։ Նա միայն կրկնեց այն խոսքերը, վոր նա լսել եր մեծերից, յերբ նրանք բարկացած ժամանակ ասում են իրենց դամեզներին։ Բայց այդ հայհոյական խոսքն էլ չդղնեց, դամեզը տեղից չչարժվեց։ Նա թափ եր տալիս գլուխը, կարծես ուզում եր ցած գցել իր լուծը, ծանր եր շնչում, դողում եր ու փնչացնում... Նրա կապույտ աչքերը վախ եյին արտահայտում, ընդերը բացվել եյին։

— «Փախի՛ր, փախի՛ր,—աղաղակեցին հարևանները. փախիր, Սայի՛դ, փախի՛ր, վա՛դրը...», ու բոլորն իրենց դամեզների լծերը վայր գցեցին, թռան նրանց լայն մեջքերին և րոպեի արտերի, խոտհարքների ու փոսերի միջով դաշտերն ու ճամբաները կտրելով՝ սլացան...

Սայիդն էլ ընկերների նման եր դամեզի լուծը ցած գցեց, թռավ նրա մեջքին և սլացավ, բայց յերբ գնդապանին հանդիպածին մի քիչ հեռու տարավ, նա համառությունը կորցրեց և ցած ընկավ։ Վագրը մոտիկ եր...

Դամեզը մի չարժում արավ և կանգնեց Սայիդի մոտ, տանիքի նման ծածկեց նրան իր հսկայական մարմնով և յեղջյուրներն ուղեց դեպի վագրը։ Վագրը ցատկեց. այդ նրա վերջին ցատկումն եր։ Դամեզը բարձրացրեց նրան յեղջյուրներով. վագրն իր ճանկերը խրեց նրա վիզը և մի կտոր միս պոկեց։ Բայց խոհուն պատռված փորոքիքով ընկավ գետին։ Սայիդը փըրկվեց։

Ցերբ Սայիդի հորից խլեցին այդ դամեզն էլ և սպանդանոց տարան, Սայիդը տասներկու տարեկան եր։

Նրա հայրը չկարողացավ հողի տուրքը տալ և չատ վախենում եր պատժից։ Նա էլ վո՛չ արծաթե պատյանով դաշույն ուներ, վո՛չ էլ արծաթե զարդարանքներ, վոր կարողանար վաճառել ու իր համար նոր դամեզ գնել։ Նա այլևս վոչինչ չուներ։

Վերջին դամեզը կորցնելուց հետո նա էլի մի քանի տարի մի կերպ կառավարվեց՝ ուրիշի մոտ աշխատելով։ Բայց չատ ծանր աշխատանք եր այդ, մանավանդ նրա համար, ով առաջ իր դամեզն եր բանեցնում։

Սայիդի մայրը վչխից մեռավ, իսկ հայրը հուսահատության րոպեին փախավ հայրենի գյուղից։ Նա ուզում եր Բատավիա մեծ քաղաքի մոտ աշխատանք գտնել, բայց այնտեղ նրան պատժեցին, վոր առանց անցագրի փախել ե, բանտ գրին, վորտեղ չատ չանցած՝ մեռավ։

II

Ցերբ հայրը փախավ, Սայիդը 15 տարեկան եր։ Նրա գլխում մեծ մտքեր կային։ Նա լսել եր, վոր Բատավիայում հարուստ պարոններ են ապրում, և վոր այնտեղ հեշտ է աշխատանք գտնելը։ Դուցե նա յերեք տարում այնքան փող վաստակի, վոր կարողանա յերկու դամեզ գնել։ Այդ մտքերն ուրախացնում եր նրան, Սայիդը հեռացավ հայրենի գյուղից։

Ցերբ Բատավիա հասավ, մի պարոնի խնդրեց, վոր իրեն ծառա վերցնի։ Այս մարդը համաձայնեց և Սայիդին ծառա վերցրեց։

Սայիդը ճիապան եր. բոլորը սիրում եյին նրան, և յերթ նրա խելքին փչեր գլխավոր կառապանի աղջկան ուզել, հավանական է, վոր չեյին մերժի։ Ինքը տերն

այնքան զոհ եր Սայիդից, վոր չուտով իր տան ծառան դարձրեց. նրա առճիկն ավելացրեց, և հաճախ նվերներ եր տալիս:

Իսկ յերբ անցավ յերեք տարի, Սայիդը յկավ տիրոջ մոտ և խնդրեց արձակել իրեն ու մի վկայական տալ, վոր ծառայել և լավ ու աշխիվ կերպով: Տերը չեր ուզում, վոր Սայիդը գնա, բայց չեր կարող նրա խնդիրը մերժել:

Սայիդն ուրախությամբ ճամբա ընկավ: Նա գնում եր և չեր նկատում, թե ինչ և կատարվում իր չուրջը, նրա հոգին բոլորովին այլ բաներով եր լի. նա մտածում եր տան մասին և հաչվում եր իր դանձը: Նա և՛ անգադիր ուներ, և՛ վկայական իր տիրոջից: Ուսից կախված եր նրա պայուսակը, վորտեղ դանվում եյին նրա փողերը, այնքան փող, վոր կարելի յեր յերեք դոմեզ առնել: Բայց այդ բոլորը չեր: Նրա գոտուց կախված եր արծաթազարդ պատյանով մի դաշույն:

Նա ճանապարհներին համարյա կանգ չեր առնում:

Նա չտապում եր ժամ առաջ տեղ հասնել, տեսնել իր սիրելի գյուղը, իր բարեկամներին, հարևաններին: Նրա սիրտը լիքն եր կարոտով դեպի ամբողջ Բաղուրը:

Վերջապես նա կամաց-կամաց մտավ իրենց գյուղը: Գյուղում տիրում եր ավեր ու տխրություն: Զկային նրա սիրելի բարեկամները և և հարևանները: Նրա ծանոթ տները փլված եյին, և նրանց մեջ այլևս վոչ վոք չեր ապրում: Յերկրի բնակիչները չչնջալով եյին խոսում իրար հետ: Տերերը խլել եյին դոմեշները և նրանց խեղդում եյին ծանր տուրքերի տակ:

Ի՞նչ պիտի աներ Սայիդը: Նա իմացավ, վոր ծովափնյա չրջանում ապստամբություն և ծագել: Տխուր և վշտացած՝ նա թողեց իրենց գյուղը և գնաց դեպի ծով:

Ծովին հասնելով, նա մի ճկնորսական նավ առավ ու գնաց այն չրջանը, ուր յերկրի ապստամբած բնակիչները կռվում եյին հալանդացիների դեմ:

Նա միացավ կռվող խմբերին:

Մի անգամ, յերբ ապստամբ ճավացիները նորից պարավեցին, նա թափառում եր այն գյուղի չուրջը, վոր բոցավառվում եր, և վորին հենց նոր սիրել եյին հոլանդացիները: Սայիդը դիտեր, վոր այստեղ կուտակված մի բուռը մարդիկ մեծ մասամբ իրենց գյուղացիներից են: Ուրվականի նման նա թափառում եր այրվող խրճիթների մեջ: Այդտեղ դեմ վազեց մի քանի հոլանդացի պինվորների, վորոնք դեռ կենդանի մնացած կռվողներին սվիններով քշում եյին: Նա բռնեց յայնաչեղը սվինները, առաջ, չարժվեց. կուրծքը դեմ տվեց ու մի վերջին, ահռելի ճիգ դործ դնելով՝ յետ մղեց պինվորներին: Սակայն սվինն ուժգին անցավ նրա մեջքից, և նա անչնչացած գետին գլորվեց...

Ճավա կղզու գլխավոր քաղաք Բատավիայում բռնակալ տերերի համար մեծ ցնծություն եր: Բանակը թնդանոթներով ու գնդացիրներով հաղթել եր դեղին խռովարարներին, վորոնք հանդգնել եյին ապստամբել: Նահանգապետն ուրախ լուր ուղարկեց Հոլանդիա, թե խաղաղությունը վերականգնված է, խռովարարները ճնշված: Թագավորական իշխանությունը տեղացիներին կոտորող սպաներին ու պինվորներին բազմաթիվ չքանշաններ ու խաչեր շնորհեց. յեկեղեցիներում էլ բոլոր քահանաները մաղթանքներ կատարեցին ու վտառանեցին իրենց ատածուն, վոր նա հաղթություն շնորհեց հոլանդացոց զենքին:

Բայց ճավայի գյուղացիներն այս ծանր պարտությունից հետո ապստամբության դրոշակը վայր չդրին:

Սայիդն ընկավ, սակայն նրան հետևեցին ուրիշ Սայիդներ:

— Հոդվածը մասերի բաժանեցեք և վերնագրեր դրեք:

ՄՈՒՄՈՒ

I

Մոսկվայի հեռավոր փողոցներից մեկում, սպիտակ այուններով և ծուռած պատշգամբով մի գորշ տան տպրում էր յերբեմն մի ազնվական այրի կին՝ բազմաթիվ ճորտ-ծառաներով չրջապատված:

Նրա ծառայողների մեջ ամենից աչքի ընկնողը դռնապան Գերասիմն էր՝ բարձրահասակ և վիթխարի մի տղամարդ, վոր ծննդով խուլ ու համր էր: Տիրուհին նրան բերել էր գյուղից, ուր նա մենմենակ, յեղբայրներից բաժան՝ տպրում էր մի փոքրիկ խրճիթում: Անսովոր ուժի տեր՝ նա չորս մարդու բան էր անում մենակ: Տեսնողը հաճույք էր զդում, թե ինչպես էր նա վարում, հնձում, կալսում: Բայց ահա Գերասիմին բերին Մոսկվա, յերկարաճիտ կոշիկները առան, ամառվա համար կաֆտան կարեցին, ձմեռվա համար՝ քուրք, ձեռը բահ ու ավել ավին և դռնապահ կարդեցին:

Հենց սկզբից իր նոր կյանքը բնավ դուր չեկավ նրան: Մանկությունից նա սովոր էր դաշտային աշխատանքի և գյուղական կյանքի: Տեղափոխվելով քաղաք՝ նա չէր հասկանում ինչ և կատարվում էր հետ, ձանձրանում էր և տարակուսում: Իր նոր գործը, գյուղական ծանր աշխատանքից հետո, Գերասիմին խաղ ու պար էր թվում. կես ժամում նա ամեն ինչ վերջացնում էր և բակի մեջտեղը կանգնում ու բերանաբաց նայում անց ու դարձ անող մարդկանց, կամ թե չէ քաշվում էր վորևե անկյուն և, թին ու ավելը հեռու չպրտելով՝ յերեսն ի վայր ընկնում էր դետին և ժամերով անշարժ պառկում:

Բայց մարդն ընտելանում է ամեն բանի, և Գերասիմն էլ, վերջ ի վերջո, ընտելացավ քաղաքի կյանքին: Գործը մեծ չէր, նրա պարտականությունն այն էր, վոր բակը մաքուր պահի, որական յերկու անգամ տակառով ջուր բերի, փայտ կրի և չարդի՝ խոհանոցի և տան համար, ոտար մարդիկ չթողնի և դիշերները պահապան կանգնի: Ցել, պետք և ատած, նա իր պարտականությունը յերանդով էր կատարում: Ցերեկ բակում չեյիր տեսնի չոփի մի կտոր կամ թափված աղը: Ցեխ ժամանակ, յերբ ձին չկարողանար ջրի տակառը հանել մի վորևե ցեխ տեղից, բավական էր միայն, վոր Գերասիմն ուսով հրեր, վոչ միայն տակառի տակը, ձին ինքն էլ ծուռ էր լինում տեղից: Կամ յերբ սկսում էր փայտ չարդել, կացինը նրա ձեռին զրնգում էր ապակու պես և տաշեղներն ու փայտի կտորտանքը թռչում եյին ամեն կողմ:

Այսպես անցավ մի տարի և այդ տարվա վերջում Գերասիմին պատահեց մի փոքրիկ դեպք:

Իրկնադեմ էր: Գերասիմը հանդիստ անցնում էր դետափով և ջրին նայում: Հանկարծ նկատեց, վոր մի ինչ-վոր բան հենց ափի մոտ չարժվում է ազմի մեջ: Նա կռացավ և տեսավ մի փոքրիկ չան լակոտ՝ սև ու սպիտակ բծերով, վոր չնայած իր ջանքերին, վոչ մի կերպ չէր կարողանում ջրից դուրս գալ: Գերասիմը նայեց խեղճ չնիկին, հետո մի ձեռքով վերցրեց, կռնատակը դրեց նրան և մեծ-մեծ քայլերով չտապեց տուն: Ցերը հասավ և մտավ իր խուցը, փրկած չանը դրեց տախտի վրա, ծածկեց իր հատ վերնազգեստով, ապա նախ վազեց դոմը ծղնոտի, հետո խոհանոցը՝ մի բաժակ կաթի: Վերադարձավ, վերարկուն զգուշությամբ յետ քաշեց, ծղնոտը փռեց չան տակն ու կաթը տախտակի վրա, նրա առաջը դրեց:

Վոչ մի մայր այնպես չի խնամի իր յերեխային, ինչպես Գերասիմն էր խնամում իր չնիկը: Փոքրիկ չուկն սկզբում չատ թուլ էր, նիհար և տգեղ, բայց հետզհետե լրան հավաքեց, լցվեց, իսկ ութ ամսից հետո, չնորհիվ իր ազատասարսի անխոնջ հոգատարության, դարձավ սպանական ցեղի մի լավ չուն: Նա զարմանալի կապված էր Գերասիմին և մի քայլ անգամ չէր հեռանում նրանից. բոլոր ժամանակ հետևում էր նրան, սրոչը չարունակ չարժելով: Գերասիմը նրա ա-

նունը դրեց Մումու: Տան մարդիկ բոլորն էլ սիրեցին նրան և նույնպես Մումու էին կանչում: Մումուն անչափ խելոք եր, մռռոնում, քծնում եր բոլորին, բայց սիրում եր միայն Գերասիմին: Գերասիմն էլ ինքը գժի պես սիրում եր նրան...:

II

Այսպես անցավ մի տարի ևս: Գերասիմը չարունակում եր իր դռնապանությունը և շատ գոհ եր իր վիճակից, յերբ հանկարծ մի անսպասելի դեպք պատահեց: Այն է, զարնան մի գեղեցիկ որ, տիրուհին իր տանն ապրող ազգականուհիների հետ անցուդարձ եր անում հյուրասենյակում: Ջաղջր ժպիտը շուրթերին հյուրասենյակում դրոսնելով՝ տիրուհին մոտեցավ լուսամուտին: Լուսամուտի առջև ծաղկանոց եր չինված և հենց այդ րոպեին ծաղկանոցի մեջտեղը, վարդի թփի տակ, Մումուն պառկած՝ յեռանդով վոսկր եր կոծում: Տիրուհին նկատեց նրան:

— Ա՛, — բացագանչեց նա հանկարծ, — սա ի՞նչ չուն է:

Ազգականուհին, վորին դիմեց տիրուհին, չփոթվեց և չիմացավ ինչ պատասխանել:

— Ը՛...ը դիտեմ, — կմկմաց նա, — կարծես, կարծես...Համրինն է...:

— Ա՛հ, — ընդհատեց տիրուհին, — ի՛նչ սիրուն չնիկ է. ասացեք այստեղ բերեն: Վաղո՞ւց է նրա մոտ: Ինչպե՞ս է, վոր յես մինչև հիմա սրան չեմ տեսել...: Ասացե՛ք բերե՛ն:

Ազգականուհին խնդուն քոռավ նախասենյակ:

— Տղա, ա՛յ տղա, — կանչեց նա, — Մումուին բերե՛ք այստեղ, չո՛ւտ: Ծաղկանոցումն է:

— Դրա անունը Մումո՞ւ յե, — հարցրեց տիրուհին, — շատ լավ անուն է:

— Այո՛, չա՛տ, — արտասանեց ազգականուհին.— Շո՛ւտ, Ստեփան, չո՛ւտ:

Ստեփանը, մի յերիտասարդ, վոր ապասավորի

պաշտոն ուներ, նեռվից ծաղկանոց և այն է՝ քիչ եր մնացել բռներ Մումուին, յերբ սա ճարպկորեն դուրս պրծավ նրա մատների տակից և պոչը ցցած, վազեց Գերասիմի մոտ, վոր այդ ժամանակի խոհանոցի առաջ դատարկում եր ջրի տակառը: Ստեփանը վազեց նրա յետևից և աշխատեց բռնել տիրոջ վոտների մոտ, բայց Մումուն չարունակ ծուլ եր լինում և խաբա տալիս: Գերասիմը ժպտալով նայում եր այդ քաշկռտուքին: Յերկար քաշ գալուց հետո Ստեփանը վերջապես դրուխը բարձրացրեց և նշաններով արագ հասկացրեց Գերասիմին, թե տիրուհին սհա քո չունն ուզում է, պիտի իր մոտ տանել: Գերասիմը մի քիչ զարմացավ, բայց կանչեց Մումուին, վերցրեց և տվեց Ստեփանին:

Ստեփանը բերեց նրան հյուրասենյակ և դրեց հատակին: Տիրուհին փաղաքշանքի ձայնով նրան կանչեց իր մոտ: Մումուն, վոր իր որում այսպիսի չքեղ սենյակում չեր յեղած՝ վախեցավ սասիկ և նեռվից դեռները, բայց Ստեփանի կողմից յետ մղվելով՝ դողդողաց և պատին կպավ:

— Մումո՛ւ, Մումու, արի ինձ մոտ, արի՛ տիրուհու մոտ, — ասում եր տիրուհին:—Արի՛, հիմար...մի վախի... արի՛:

Բայց Մումուն տխուր նայում եր չուրջը և տեղից չեր շարժվում:

— Ա՛հ, ինչ հիմարն է, — արտասանեց տիրուհին մոտենալով, և կռանալով՝ ուզեց չոյել նրան. բայց Մումուն դողահար դրուխը թեքեց և աստամները չիկացրեց:

Տիրուհին յետ քաշվեց և հոնքերը կիտեց: Շատ հանկարծակի չարժումը վախեցրեց նրան:

— Կորցրո՛ւ դրան, — խոսեց պատավը փոխված ձայնով, — Զգվելի՛ չուն: Ինչ կատաղածն է:

Շեվ դանդաղ չուռ յեկավ ու գնաց իր առանձնասենյակը:

Մինչև յերեկո նրա արամադրությունը վատ եր. վոչ վոքի հետ չխոսեց, թուղթ չիտաղաց և գիշերն անց-

բեց վատ: Իսկ հետևյալ որը կանչեց իր մոտ ծառայողներին ավագ Գավրիլային:

— Ասա՛, խնդրեմ,—սկսեց նա,—այդ ի՞նչ չուն եր, որ ամբողջ գիշերը հաչում եր մեր բակում և չթողեց քնեմ:

— Շունը՛... ո՞րը...: Գուցե խուլի չունը,— խոսեց Գավրիլան կմկմալով:

Զգիտեմ, խուլինն եր, թե մի ուրիշինը, միայն չթողեց որ քնեմ: Ճես զարմանում եմ, այդքան շներն ի՞նչի համար են. խուլի ի՞նչին է պետք չունը: Ո՞վ է նրան թույլ տվել, որ իմ բակում չուն պահի: Ճերկ յես մոտեցա լուսամուտին, տեսնեմ դա ծաղկանոցում պառկած, ինչ-որ կեղտոտ բան բերել ու կռծում է, իսկ այնտեղ չե՞ որ վարդեր են տնկված: Այսոր իսկ դրան չտեսնեմ, լսո՞ւմ ես:

—Լսում եմ:

— Այսոր իսկ: Առայժմ գնա:

Գավրիլան դուրս յեկավ: Դուրս յեկավ, ուղիղ գնաց դեպի Գերասիմի խուցը և սկսեց նշաններով հասկացնել, որ տիրուհին ահա նրա չունը պահանջում է անպատճառ:

Գերասիմը նայեց նրան, ցույց տվեց չունը, ձեռը տարավ-բերեց իր վզի մոտ այնպես, կարծես ոշակ եր դցում ու հարցական դեմքով նայեց ծառայողների ավագին:

— Այո՛, այո՛,—ասավ Գավրիլան գլուխը շարժելով.—անպատճառ:

Գերասիմն աչքերը ցած դցեց, հետո հանկարծ ցնցվեց, կրկին ցույց տվեց Մումուին (որ բոլոր այդ ժամանակը նրա մոտ կանգնած՝ պոչը շարժում եր անդադար և ականջները խլչում), նորից իր վզի վրա խեղդելու նշան ցույց տվեց և նշանակալից ձևով ձեռը խփեց իր կրծքին, որով կարծես հայտարարում եր, որ ինքն իր վրա յե վերցնում Մումուին վոչնչացնելու գործը:

— Ջե՛, դու կխարես, չարժեց ձեռը Գավրիլան երբև պատասխան:

Գերասիմը նայեց նրան, արհամարհանքով ծիծաղեց, կրկին ձեռը կրծքին խփեց և դուրը չրխկոցով փակեց:

— Սա ի՞նչ է նշանակում,—ասաց Գավրիլան:

— Թողե՛ք, Գավրիլ Անդրեյիչ.—ասավ Ստեփանը,—նա ասածը կանի, յեթե խոստանում է: Նրա բնությունն եդպես է: Յեթե խոստանում է՝ ել պրծավ: Եդրանում նա մեղ նման չի. ինչ որ ճիշտ է, ճիշտ է: Այո՛:

— Ե՛հ, դուցե, տեսնենք,—ասավ Գավրիլան.—իսկ մենք թող ելի պահակ մնա: Ճե՛կ, Ճերոշկա,—ավելացրեց նա, դիմելով ինչ որ խեղճ մարդու, որ այդեպան եր համարվում,—մի բան, որ գործ չունես, հետևիր Գերասիմին և ինչ որ անի, մեզ իմաց տուր:

III

Այս իրարանցումից մի ժամ հետո խուցի դուռը բացվեց և Գերասիմը դուրս յեկավ. նա հագել եր իր տոնական կափտանը: Նա իր հետ դուրս բերեց Մումուին՝ վիզը թոկ դրած: Հետո գնաց բակի դուռը: Հայաթում յեղած փոքրիկ տղաները լուռ, աչքերով հետևեցին նրան: Գերասիմը նույնիսկ յետ չնայեց, գլխարկը ծածկեց միայն փողոցում: Ապա չան հետ միասին մի ճաշարան մտավ:

Ճաշարանում Գերասիմին ճանաչում և նրա նշանները հասկանում եյին: Նա իր համար մսով կերակուր խնդրեց և նստեց՝ արմունկներով սեղանին հենված: Մումուն կանգնած նրա աթոռի մոտ՝ խելացի աչքերով նայում եր նրան: Նրա մազերը լավ հարթված եյին. յերևում եր, որ քիչ առաջ նրան սանրել են: Գերասիմին կերակուր բերին: Նա հաց փրթեց նրա մեջ, միսը կտոր-կտոր արավ և ափսեն դրեց հատակին: Մումուն սկսեց ուտել իր սովորական բարեկիրթ ձևով, դունչը հազիվ կերակրին մոտեցնելով: Գերասիմը յերկար նայում եր նրան, հանկարծ արցունքի յերկու խոշոր կաթիլ ընկան նրա աչքերից. մեկն ընկավ չան թեք ճակա-

տին, մյուսը՝ կերակրի մեջ: Նա դեմքը ծածկեց ձեռքով: Մամուն կերավ կերակրի կեսը և մի կողմ քաշվեց դունչը լիզելով: Գերասիմը յեղավ տեղից, վճարեց կերակրի դինը և դուրս յեկավ:

Գերասիմը գնում եր առանց չտապելու, Մամուլի թոկը բռնած: Հասնելով փողոցի անկյունը, նա կանգ առավ, կարծես, մտածմունքի մեջ և հանկարծ արագ քայլերով դիմեց դեպի դեսը: Ճանապարհին նա մտավ նոր կառուցվող մի ատն բակ և այնտեղից յերկու աղյուս բերեց՝ կռնատուկը դրած: Հասնելով դեսը, նա ափով գնաց-հասավ մի տեղ, ուր ցցերին կռռված յերկու նավակ եյին կանգնած: Նա Մամուլին հետ միասին ցատկեց դրանցից մեկի մեջ: Բանջարանոցի ծայրում խրված վրանից դուրս յեկավ մի կաղ ծերուկ և պոռաց նրա վրա: Բայց Գերասիմը դյուռ արավ միայն և այնպես ուժեղ թիավարել սկսեց, վոր, թեև դեպի հոսանքին հակառակ, մի ակնթարթում հարյուր սաժեն առաջ սլացավ: Ծերուկը կանգնեց, մեջքը քորեց, ապա կաղալով վերադարձավ նորից իր վրանը:

Գերասիմը չարունակ թիավարում եր ու թիավարում: Ահա Մոսկվան արդեն յետ մնաց: Ահա գետի ափերին տարածվում են մարզագետինները, բանջարանոցները, դաշտերը, պուրակները, յերևացին խրճիթներ: Գյուղի հոտ և գալիս: Գերասիմը թիերը ձգեց, գլուխը սեղմեց Մամուլին, վոր նստած եր նրա առջև չոր տախտակի վրա—հատակը լցված եր ջրով—և այդպես մնաց անշարժ, ուժեղ բազուկներով չան մեջքը գրկած: Իսկ նավակը մինչ այդ, ալիքներով կամաց-կամաց տարվում եր յետ գետի քաղաք: Վերջապես Գերասիմն ուղղվեց արագ և ինչ-վոր ցավագին մի կատաղություն դեմքին, վերցրած աղյուսները թոկով կապեց իրար: Հետո թոկի ծայրերը կապեց Մամուլի վիզը, բարձրացրեց ու բռնեց նրան գետի վրա ու վերջին անգամ նայեց նրան...: Մամուն հավատով ու աներկյուղ նայեց տիրոջ և պոչը շարժեց կամացուկ: Գերասիմը յերեսը չուռ

տվեց, աչքերը փակեց և ձեռքերը բաց թողեց...: Ու չլսեց վոչինչ—վո՛չ ընկնող Մամուլի սուր կլանչոցը, վո՛չ էլ ջրի ճողփյունը:

Ցերեկան, վոր հետևում եր Գերասիմին, վերադարձավ տուն և պատմեց ինչ տեսել եր:

— Դե, իհարկե,—նկատեց Ստեփանը,—Գերասիմը նրան ջուրը կձգի: Արդեն կարող եք հանգիստ լինել, քանի վոր խոստացել ե...:

Ամբողջ որը Գերասիմը չերևաց: Նա ճաշվա հացին չեկավ: Յերեկոյան էլ, յերբ բոլորը հավաքվեցին ընթրիքի, նա չկար:

— Ի՞նչ զարմանալի տղա յե եղ Գերասիմը,—խոսեց հատուկ լվացարարուհին, մի՞թե կարելի յե մի շան համար եղպես դնալ մահ գալ...: Ջեմ հասկանում:

— Ամեր Գերասիմն ետսեղ եր.— դոչեց հանկարծ Ստեփանը դդալով իր համար քաշովի վերցնելով:

— Ի՞նչպես, յեր՞բ:

— Ցերկու ժամ առաջ: Ինչպես չե, փողոցի դռան մոտ պատահեցինք: Նա ետսեղից եր դնում, հայաթից նոր եր դուրս գալի:

Մինչդեռ նույն այդ ժամանակ, Տ—ի խճուղով չտապով և առանց կանգ առնելու քայլում եր մի ինչ-վոր հսկա, պարկը մեջքին ու մի յերկար ձեռնափայտ ձեռին: Դա Գերասիմն եր: Նա դնում եր առանց յետ նայելու, չտապում եր առաջ, իբրև գյուղը: Ծեղծ Մումուլին ջուրը ձգելուց հետո նա վազեց իր խուցը, հապճեպով մի քանի բան-ման հավաքեց, կապոց արավ, ուսը գցեց ու հայտնվեց:

Ցերկու որից հետո նա իր տանն եր արդեն: Սրբապատկերի առաջ աղոթելուց հետո նա գնաց տանուտերի մոտ: Տանուտերը մի քիչ զարմացավ. բայց խոստումը նոր սկսվել եր. Գերասիմին, վորպես ընտիր մշակի, հենց այնտեղ ձեռը գերանդի տվին, և նա, առաջվա պես, գնաց հունձ անելու, այնպես վոր գյուղացիները նախանձում եյին միայն, տեսնելով նրա ձեռի թափն ու հնձած լասերը...:

Իսկ Մոսկվայում, Գերասիմի վախճելու հետևյալ օրը, տան ազատավորները զբաղվեցին նրանով։ Գնացին նրա խուցը, մահ չեկան՝ հետո հայտնեցին Գավրիլային։ Նա չեկավ, նայեց, ուսերը վեր քաշեց և վճռեց, վոր համբը կամ վախել և և կամ խեղդվել իր չան հետ միասին։ Իմաց տվին վոստիկանության, հայտնեցին տիրուհուն։ Վերջապես դյուղից լուր չեկավ, թե Գերասիմն այնտեղ է։ Տիրուհին սկզբում ուզեց հրամայել, վոր նրան անմիջապես չետ բերեն Մոսկվա, բայց հետո հայտնեց, վոր այդ տեսակ ապերասիմ մարդը իրեն սկի հարկավոր չի։

Ցավ մինչև այսոր Գերասիմն ապրում է մեկ-մենակ իր մենավոր խրճիթում. նա առողջ և ուժեղ է առաջվա պես. մենակ՝ չորս մարդու բան է անում ու առաջվա պես ելի լուրջ ու ծանր է։ Բայց հարևանները նկատել են, վոր նա Մոսկվայից վերադառնալուց հետո վոչ մի չուն չի պահում իր մոտ։ «Աաենք,—խոսում են դյուղացիները,—չունը նրա ինչի՞ն է պետք. գողին զոռով ել չես կարող տանել նրա դուռը»։ Այս համբավն է պատում համբի հսկա ուժի մասին։

---

1. Ի՞նչպիսի կյանք ևր տիրում ազնվական կնոջ տանը, ի՞նչպիսի բարքեր և զգացումներ։

2. Համեմատեցե՛ք այդ կյանքը գյուղացի Գերասիմի կյանքի հետ և ցույց տվե՛ք տարբերությունը։ Ի՞նչ կարող եք յեղրակացնել։

ՔԻՆԱՔԻՆԱ

Կոլումբոսից հետո սպանացիք հետզհետե տիրեցին Միջին և Հարավային Ամերիկայի մեծ մասին, Շարունակ ահագին քանակությամբ բախտախնդիր մարդիկ գիմում եյին այդ նոր աշխարհները՝ վոսկի ու հարստություն ձեռք բերելու հույսով։ Ցավ Ամերիկայում իրենց այդ նպատակին չհասնելու համար

վոչ մի բանի առաջ կանդ չեյին առնում և չատ վատ եյին վարվում տեղացի ժողովուրդների հետ. աշխատեցնում եյին, հարստահարում, ամեն չնչին բանի համար ծեծում, չարչարում ու հալածում։ Ցավ, բնականաբար, տեղացիներն ել ատելով ատում եյին իրենց կեղեքողներին, թեև մեչ հպատակվում եյին նրանց, ծառայում և արտաքուստ ամեն կերպ աչքառում եյին հաճոյանալ։

Այսպես ել Պերուի կառավարիչը, 1640 թվին, մի խիստ անսիրտ մարդ եր։ Շրջապատողները նրան հաճելի լինելու համար ինչ զազանություններ ասես անում եյին տեղացիների դլխին։ Կառավարիչը հանկարծ մեռնում և կարճ միջոցում ստրատելի տանջանքներով։ Լուր և տարածվում, վոր պերուցիք նրան թունավորել են։

Սպանիայի թագավորը նրա տեղն ուղարկում և մի ուրիչին։ Պերուցիների ականջը լուր և հասնում, թե նոր կառավարիչը՝ իշխան Գիխոնը մի մեղմ, արդար ու բարի մարդ և, բայց վոչ-վոք չի հավատում,—այնքան վախեցած եր նրանց աչքը յեվրոպացիներից։

Նոր կառավարչի գալուց մի-յերկու որ առաջ պերուցիների ցեղապետը դեչերով ծածուկ կանչում և իր բոլոր ցեղակիցներին անտառի խորքը, քինաքինի մի դեղեցիկ ծառի տակ։ Ցավ հենց վոր հավաքվում են՝ այսպես և խոսում.

— Գիտեք, վոր Սպանիայից նոր կառավարիչ և գալիս։ Գուցե սա նախորդից ավելի տանջի ու չարչարի մեզ։ Ցեկեք կրկնենք մեր յերդումն այս սուրբ «առողջության ծառի» տակ, վոր յերբեք, յերբեք հայտնելու չենք սպիտակամորթներին սրա բուժիչ հատկությունը։ Սպիտակների դեմ մեր միակ դաշնակիցը տենդն և, վորից հազարներով կոտորվում են նրանք, և միայն մի դանձ և մնում մեր ձեռքին, վոր դեռ նրանք չեն խլել, և այդ դանձն այս ծառի բուժիչ կեղևն և։ Ցերկնքի այս պարգևը պահենք մեզ։ Վա՛յ նրան, ով վախից կամ դրամից հայտնի մեր գաղտնիքը մեր կե-

ղեբիչներին. մա՛հ մատնիչին: Ցեմե այդ տնսակ մի դավաճան դանիի մեր մեջ, սպանենք նրան եւ, կնոջն եւ, յերեխաներին եւ. արե՛նք նրա ամբողջ ցեղն աշխարհս յերեսից: Ցերդվե՛նք:

«Ցերդվո՛ւմ ենք, յերդվո՛ւմ ենք,— կրկնեցին միաձայն պերուցիները.—յերդվում ենք՝ ամեն տանջանք ու մահացու չարչարանք կրենք, բայց մեր պաշտնիքը յերբեք չհայտնենք...»:

Ցերդվեցին ու իսկույն ցրվեցին. վտանգավոր եր այդպես ծածուկ հավաքվելը. սպիտակները կարող եյին իմանալ, կատածել ու պատճառ ստեղծել նոր հալածանքների:

Ցեկավ նոր հատավարիչն եր յերիտասարդ կնոջ հետ: Պերուցիք զնացին նրանց դիմավորելու. և Պետրի կանայք ծաղիկներ սփռեցին իշխանուհու առաջ, դրանց մեջն եր և Զուման, ցեղապետի դեղեցիկ ու դեռատի հարսը:

Իշխանուհին, վոր տեսավ Զումային, չատ հավանեց և ուզեց, վոր եր մոտ մնա ծառայելու: Զուման մտավ պալատ ծառայության և կարճ ժամանակի մեջ այնպես սիրելի դարձավ, վոր իշխանուհին չեր թողնում՝ մի քայլ իրենից հեռանա: Իշխանուհու այդ սերն ու վստահությունն իհարկե, պալատական սիկիհներին շատ եյ դուր չեր գալիս, նախանձում եյին նրան, հաճախ չեր բախտում եյին նրա մասին իշխանուհու առաջ, աշխատում եյին կասկած գցել նրա սիրտը, թե Զումայի սերը կեղծ է, թե բոլոր տեղացիք ատում են սպանագիներին, նա կեղծում է, ոչ գիտի՝ ինչ գավ նյութելու համար. բայց սիկինը վոչ մի ուշադրության չեր գարձնում այդ փսիսուհներին:

Անցան ամիսներ, և իշխանուհու առողջությունը խախտվեց. հիվանդությունն որ-որի ավելի չեր ատստկանում: Սպանացի բժիշկը տալիս եր իր գիտցած բոլոր դեղերը, վոչինչ չեր ողնում. հիվանդը մեկ տաքցնում եր, մեկ զովացնում, և բժիշկը վարանումով չարժում եր գլուխը՝ «Թունավորված չլինի՞»:

Թո՞ւյն. ո՞վ պիտի Թունավորեր. պալատում ամենքը վստահելի մարդիկ եյին. ատաքը միայն Զուման է, մի՞թե նա՞...

Իսկ Զուման այդ միջոցին ստատիկ տանջվում եր. տանջվում եր, վորովհետև սիրում եր իր բարի տիրուհուն, և դիտեր նրան բուժելու դեղը, բայց հայտնել չեր կարող: Ցեվ վո՛չ վոքի. չէ՞ վոր յերդվել եյին ամբողջ ցեղով, չէ՞ վոր այդ վերջին դեներն եր տեղացիների ձեռքին, վերջին գանձը, քինաքինի կեղևը...Ցեվ Զուման լուռ տանջվում եր, իսկ իշխանուհու վիճակը օրեցոր վատթարանում եր: Վերջապես բժիշկը հայտնեց, վոր մահը մոտ է: Զուման հուսահատ՝ չգիտեր ինչ անի: Հանկարծ մի միտք լուսավորեց նրա հոգին. դեղը հայտնել չի կարող, բայց հո կարող է դեղն այնպես տալ, վոր վոչ վոք չիմանա:

Իսկույն կանչել է տալիս իր ամուսնուն, ատում է, վոր իրեն վատ է զգում, կարծես տենդ ունի, և խնդրում է, վոր ծածուկ իր համար մի քիչ քինաքինի փոշի բերի:

Գալիս է դիշերը: Ամբողջ պալատը թաղված է խոր քնի մեջ. իսկ իշխանն իր սենյակում տարված է իր աշխատանքով: Զուման կամաց, վոտների մատների վրա, անց է կենում իշխանի սենյակի առաջով, մըտնում է կից՝ հիվանդի ննջարանը, զգուշ մոտենում է անկողնին, վոր հիվանդը չզարթնի, և զգուշությամբ ձեռքով ցանում է փոշին անկողնի կողքը դրած խմիչքի մեջ...

Հանկարծ մի ուժեղ ձեռք բռնում է յեռանից նրա թևը, մյուս ձեռքով փակում է նրա բերանը, վոր ձայն չհանի հիվանդի սենյակում, ու քարշ է տալիս գուրս թուլացած ու խելակորույս կնոջը:

— Ի՞նչ ցանեցիր խմիչքի մեջ,—հարցնում է իշխանը կատաղած, առանց բաց թողնելու վախից քարացած կնոջ թևը:

Ջուման լուռ եր։

Իսկույն վոտի չե կանգնում ամբողջ պալատը, ծառաները կապկպում են Թուչն խառնողի թևերը և տանում, բանտը դնում։

Ամեն կողմ լուր և տարածվում, թե Ջուման Թուչն և ավել։ Հուզվում են ուերուցինները, դիտեն, վոր խեղճ կնոջը տանջալի մահ և սպասում։

Դատարանի դահլիճը լիքն և բերնե-բերան. և՛ յեվրոպացի, և՛ տեղացի՝ ամենքն այնտեղ են։

Ներս են բերում պերուցի կնոջը չղթայակապ, և սկսվում և հարցաքննությունը։

— Դո՞ւ եյիր իշխանուհու խմիչքի մեջ փոշի յեանողը։

— Ես՛։

—Վորտեղի՞ց գտար այդ փոշին։

— Ցե՛ս ավի նրան,—Ընչում և հանկարծ բազմության մեջից մի ուժեղ առնական ձայն, և յեղապետի տղան առաջ և գալիս։

— Վո՛չ, վո՛չ, նա հանցանք չունի, նա վոչինչ չեր իմանում,—հեծում և Ջուման։

— Լռի՛ր, կի՛ն. մի՞թե կարծում ես՝ ել կարող եմ ապրել քեզնից հետո։ Ինձ հանձնում եմ դատարանին։

— Ես ի՞նչ փոշի յեր, վոր ավիր նրան. Թո՞ւն։

— Վո՛չ։

— Գուցե մի բուժիչ դե՞ղ տենդի դեմ։

Ջուման հիշում և իրենց յերդումը և սարսափած բացականչում.

—Վո՛չ, վո՛չ, տենդի դեմ վոչ մի դեղ չկա։

— Վոր դեղ չի, ուրեմն՝ Թուչն,—յեզրակացնում և դատավորը.—ուրեմն խոստովանում եք, վոր այդ փոշին Թուչն եր։

— Մենք վոչինչ չենք խոստովանում,— պատասխանում և ամուսինը հպարտ։

— Ցես միայն լռել կարող եմ,— ավելացնում և Ջուման խոնարհ կերպով։ Կանչում են բժշկին՝ հարցնելու։

— Շատ տարօրինակ բան և իշխանուհու հիվանդությունը,—վկայում և բժիշկը,—վոչ մի դեղ չի ոգնում. յես կարծում եմ, վոր այդտեղ գործում և մեղ անծանոթ դանդաղ մի թույն։

Դատավորները սարսափահար նայում են այդ յերկու Թունավորողների վրա, քիչ խորհրդակցում են ու վճռում.

— Վաղը, կեսորին կայրվեն յերկուսով խարույկի վրա։

Ու մի խոր հառաչանք և դուրս թռչում դժբախտ կնոջ կրծքից։

— Ի՛նչ յեղիր, Ջումա՛։ Մահը մեզ կապահի այս սոսկ սարկավագությունից,— բացականչում և ամուսինը վոգևորված.—մեռնենք ու լինենք ազատ։

Սակայն բոլոր տեղացիներին հրաման դնաց, վոր դան ներկա լինեն պատժին։ Յերկուսի սոսկալի մահով ուզում եյին ժողովրդին վախ ներշնչել։ Մոտյալ ամբոխը հավաքվեց արդեն վառված խարույկի շուրջը, վոր չղթայել եյին սպանցի դինվորները։ Իսկ կառավարիչը չեր ցանկացել ականատես լինել, թողել հեռացել եր քաղաքից։

Շուտով յերևաց հեռվից մի հարյուրյակ դինվոր, որանք չղջապատել, բերում եյին մահապարտներին։ Արևի պայծառ ճառագայթները խաղում եյին դինվորների սաղավարտների, զենքերի ու զրահների վրա։ Թմբուկներն սկսեցին վորոտալ...Գունդը կանգ առավ խարույկի առաջ։ Ջումային ու ամուսնուն հագցրել եյին յերկար չորեր, դլուխներին դնել եյին մի-մի տոպրակ՝ աչքերի տեղը մի յան ծակ թողած, ու թևերը կապած յեին։

Գունդը կանգ առավ, թմբուկները լռեցին, տիրեց մի սարսափելի լռություն, ահագին ամբոխը քարացել եր իր տեղը, վոչ մի չշնչյուն։ Յեվ պաշտոնյան արդեն

պատրաստվում եր մահապարտներին դեպի խարույկն առաջնորդելու, յերբ հանկարծ հեռվից ձիու դոփյուն լսվեց և մի սպա շնչասպառ մոտ վազեց ու հայտնեց պաշտոնակատարներին, վոր սպասեն, դալիս է ինքը՝ Իչխանուհին, և ասաց նրան՝ պատժի չձեռնարկեն:

«Ի՞նչ է...», «ո՞վ է գալիս», «ինչո՞ւ», շշուկն ընկավ բազմության մեջ, վոր ծովի ալիքի պես սկսեց շարժվել:

Յեվ իրավ, ահա՛ Իչխանուհու պատգարակը, վոր չորս հոգի բերում եյին իրենց ուսին: Զինվորներն իսկույն պատիվ տվին: Նա դժվարությամբ բարձրացավ իր պատիճ տեղից, հենվեց թևին ու ասաց·

— Ձես հենց նոր իմացա, ինչ վոր պատահել է, են ել գրեթե զոռով. ինձնից ծածկում եյին: Մեղապարտներին ներեն իմ իրավունքից վեր է: Բայց նրանց համար թողություն խնդրել կարող եմ, և հույս ունեմ, վոր ամուսինս չի մերժի իմ այս, գուցե վերջին, խնդիրս: Առաջմ հանդրե՛ք այդ սարսափելի խարույկը, արձակեցե՛ք Զումայի և իր ամուսնու կապանքները: Ձես պատասխանատու յեմ, նրանք չեն փախչի: Բերե՛ք նրանց ել ինձ հետ:

— Ձերկար կյանք ու առողջություն մեր Իչխանուհուն—լսվեց հանկարծ մի բարձր ձայն ամբոխի մեջից:

— Այո՛, կյա՛նք ու առողջություն,— վորոտաց ցեղապետի ձայնը՝ իրրև պատասխան.— նա պե՛տք և վոր ապրի, նա պետք և վոր առողջանա:

Ձեվ մի փոխուկի ընկավ տեղացիների մեջ. ականջ ականջի հայտնեցին իրար, վոր մի ժամից հավաքվին անտառը...

Իչխանուհին դարձավ պալատ բոլորովին ուժասպառ: Հաղիվ եր հանդստացել մի յերկու ժամ, վոր հրամայեց իր մոտ կանչեն Զումային:

Իրար համոզում եյին, վոր ձեռք վերցնի այդ անպիտանից, վոր իրար տեղը չհոգվի, բայց Իչխանուհու համբն անխախտ եր: Բերին Զումային: Իչխանուհին վոտքի վրա եր մի մեծ թիկնաթոռի մեջ, անշարժ ու տանջված:

— Զումա՛, մո՛տ յեկ,—խոսեց նա մեծ դժվարությամբ:—Ձես քեզ այնպես սիրում եյի... և չեմ կարող վրադ բարկանալ...

Զուման հուսահատությունից չգիտեր ի՛նչ աներ... Իչխանուհին կասկածում եր նրա վրա և նեղում նրան, վոր անմեղ եր բոլորովին և այնքան տանջվել եր հենց Իչխանուհու սիրուն: Ձեվ հիմա պետք և լաթ. վո՛չ մի բան՝ արդարանալու համար: Ա՛խ, խարույկից ավելի ծանր եր այս մեկը: Դժբախտ կինը լուռ ընկավ նրա վտանների ու բարձր հեծկլտալով՝ Իչխանուհու ձեռքը սեղմեց իր չրթունքին...

Բայց նույն վայրկյանին սրտագին քայլեր լսվեցին դուրսը և ուրախ ձայներ, վորոնց մեջ ճանաչեց Իչխանուհին իր մարդու ձայնը:

— Ինչ անունով յես ներում խոստացա հանցավորներին, ների՛ր նրանց,—յեղավ հիվանդի առաջին խոսքը, հենց վոր ամուսինը չեմքից ներս մտավ:

— Հանցավոր չկա, վոր ներեմ,— յեղավ կատարվարչի զվարթ պատասխանը:—Մտե՛ք, մտե՛ք, ներս մտե՛ք,—դարձավ նա դեպի դուռը:

Ներս մտան ցեղապետն ու իր տղան՝ Զումայի մարդը:

— Զուման՛,—ասաց ծերունի պերուային.— ցեղի թողտվությամբ հայտնեցի յես Իչխանին սուրբ ծառի դաղտնիքը: Հայտնեցի, վոր դու Իչխանուհու համբույրի մեջ թույնիչ դեղ եյիր դանել:

— Ինչ դե՞ղ,—բացականչեց հիվանդն ապշած ու զորովանքով,— ապա ել ինչո՞ւ եյիր լռում, Զուման՛:

—Ձերդամբ կապել եր նրա շրթունքները,— բացատրեց կնոջը: Բայց Իչխանուհին իր զգաստությամբ հաղթեց մեր յերդման ուժին: Ինքը կհասկենար յեկել եր ազատելու և նրելու իր կարծեցյալ թշնամավորողներին: Նրա աղնիվ սիրտն ուրիշներին ա-

զառելով՝ իրեն ազատեց վերահաս մահից: Մենք վայրենիներս հարգում ենք սրտի ազնվությունն ու հոգու վեհությունը: Մենք մեր «առողջության ծառը» նվեր ենք բերում իշխանուհուն:

Այդ որից յեվրոպացիք ծանոթացան քինաքինին, որ մարդկության բարիքներից մեկն է: Յեվ այնտեղ, ուր Ջումայի համար խարույկ էին վառել, բարձրանում է այժմ մի արձան, որի վրա վոսկե տառերով փայլում են հետևյալ բառերը. «Ջումայի հիշատակին, որ փրկեց մահից սպիտակամորթների բարերար Գիլան իշխանուհու կյանքը»:

ՀԱՄԲՈՒՐԳԻ ՓՈՂՈՑՈՒՄ

... Որին հեծկլտանքով թափվում էր անձրևը, ջրի հատիկներով թմբկահարում թիթեղածածկ կատուներն ու ջրատար խողովակներից դահավեժ լինում փողոցի մայթերին:

Համբուրգի ամենից յետ ընկած, խուլ փողոցներից մեկով, անձրևային այս պահին անցնում էր մի ծեր գինվոր, բոլորովին թրջված, հոգնած քայլերով, առանց ծռվելու, առանց չուրջը նայելու, ինքն էլ չգիտենալով՝ դեպի ուր:

Գնում էր ծեր գինվորը՝ գլուխը կախ, կոկորդում խեղդելով մի խորը, չար խորը վիշտ:

— Վորդիդ զործադուլ էր արել...վորդիդ փողոց էր յեկել և վորդուդ յետևից փողոց էին յեկել քաղցած, սարկացած մարդկանց հարյուրավոր զնդեր:

... Գործարանները կանգ էին առել: Քարացել էին ավտոներն ու հանրակառքերը: Գնացքները չէին սուրում ու սրընթաց թռչում Բեռլինի կայարաններով: Իսկ այս ամենի փոխարեն սոված, զայրույթով լցված հազարներն էին զրավել Բեռլինի փողոցներն ու սպառնալից աղաղակներով զրավում էին նորերը: Վորդիդ

փողոց էր յեկել թևերը քշտած, մրոտ ու հոգնած: Վորդուդ գլխավերևը բոցավառվում էր ազատության վառ դրոշակը...

...Վորդուդ սպանեցին... փողոցի մեջտեղում, հենց քարերի վրա: Յես տեսա, թե ինչպես կառավարական զինվորները (հիշի՛ր, վոր դու յել կառավարական զինվոր ես) համազարկ տվին փողոցի ծայրից և սպանեցին քո սիրելի վորդուն:

Յես տեսա նրան փողոցի մեջտեղում, քարերի վրա ընկած: Տեսա նրան ջախջախված գլխով:

Բայց հոգոտ էր վորդիդ ու խրոխտ, և նրա դուրս յեկած աչքերում չէր մարել վրիժառության և ատելության բոցը...

Նրա բարեկամն այսպես էր վերջացնում Բեռլինից զրած իր նամակը:

Սմայլի փողոցով գնում էր ծեր գինվորը՝ գլուխը կախ:

—Վորդուս սպանեցին: Ո՞վ: Ինչո՞ւ սպանեցին իմ վորդուն: Ձե՞ վոր յես յերեսուն տարի ծառայել եմ մայր Գերմանիային: Ձե՞ վոր յես ծեր եմ...

Յեվ արտասուքն առատորեն հոսելով նրա ծերացած աչքերից, իջավ այտերի վրա և միանալով անձրևաջրի հետ, նրա ալեհեր մխրուքից սկսեց կաթել կրծքին:

Գիտեմ: Հիմա հասկանում եմ... Սելպա՛ր, ծերացա՛ծ չուն, դո՛ւ յես սպանել իմ վորդուն...

Ուժասպառ ծերունին հենվեց փողոցի ելեկտրոսյանը, վորի դագաթից անձրևաջրի յերիզներն առանց կանգ առնելու հոսում էին:

Լուռ ու խոժոռած հոնքերով նստած եր կառքում քաղաքը ներքին «խոռվություններից» պաշտպանող կառավարական վաշտի յերիտասարդ սպան:

Ծածկված կառքի փոքրիկ ապակին դրսից պատվել եր անձրևաջրի մանր-մանր զնդիկներով, վորոնք բարակ յերիզներով իջնում էին լուսամուտի դոզը, տեղի տալով նորանոր փոքրիկ զնդիկների:

Մենք մյուսին հաջորդող սիզարանների ծուխը բարձրացել ու կանգնել էր նրա գլխավերևը, այնպես վոր «Նորին Մեծության» սարսն ապակի գլխի բովանդակությունը համապատասխանում էր կառքի մշուշապատ մթնոլորտին:

Այս դրությամբ դանդաղաշարժ կառքը հասավ այն այանը, վորին հենվել էր Ձերունի գինվորն ու մնացել անշարժ: Ցերը կառքը հավասարվեց գինվորի կանգնած տեղին, ապան չտիվեց տեղում, մշուշված աչքերով մի պահ նայեց մոլորված ծեր գինվորին: Կառքն անցավ, ու ապակի հայացքը կորվեց փողոցի անտվոր բնակչից:

Կառքը դղրդալով առաջ էր գնում:

— Ծերունի Վայնբերգը ի՞նչ էր անում այստեղ, ինչո՞ւ մոտալ էր, կանգնել էր մի տեսակ... հը՞մ... հասկանում եմ, կարող է պատահել, վոր նա գործ է սկսել: Վոչինչ, վատ չէ... բայց պիտես, ծերո՛ւկ, չի հաջողվի, դու չափազանց ծեր ես բայլևիկ լինելու համար: Դու չես կարող պատերից թռչել, կամ ծակից-ծակ մտնել. մեկ էլ տեսար՝ հասավ ամենատարտես ժանդարմը, և դու քո բոլոր թռուցիկներով գլխիկոնձի տվիր գժոխքի կարասը: Բայց հետաքրքիր է՝ ի՞նչ գործ ունի նա այստեղ, հետո նրա ծոցերն ինչ վոր ուռած կային: Թռուցիկնե՞ր... լա՛վ, լա՛վ... վոչինչ:

— Հե՛յ, ապաո՛ր:

Կծկված կառապանը խայթվածի նման ուղղվեց տեղում և քնատ անմիտ բարկությամբ յեթսաններին քաշեց:

Ձիերը կանգ առան:

Ներսից բացվեց կառքի փոքրիկ դռնակը, և «Նորին Մեծության» ապակի գլուխը դուրս նայեց:

— Դարձրո՛ւ ձիերը... գնի՛ր: Արա՛գ:

Սմքեն բոպե տրոզ հրամանին պատրաստ, թրջված կառապանը ձիերի գլուխը չուռ տվեց, ապտռնալից մտրակը ճոճեց նրանց մեջքերի վրա, և ձիերը վնչալով սլացան ամայի փողոցն ի վեր: Մի բան հիշելով՝ ապան նորից բաց արեց փոքրիկ դռնակն ու այս անգամ բարեհամական տոնով հարցրեց կառապանին:

— Հա՛նա, դու տեսա՞ր այն Ծերունուն...

— Ծերունի Վայնբերգի՞ն:

— Հա՛:

— Տեսա:

— Կարո՞ղ ես ասել՝ ինչո՛ւ յեր կանգնել այնտեղ այս ժամին:

Կառապանը վոլորեց բեխերը, քամեց անձրևաջուրը բեխերից և աչքերը վեր բարձրացնելով՝ մրթմրթաց.

— Ո՞վ դիտե:

— Ի՞նչպես թե՝ ո՛վ դիտե, հիմարի՛ գլուխ, դեռ համարձակվում ես այդպիսի պատասխա՞ն տալ. դու չտեսա՞ր, վոր նա բայլևիկ էր...

Ապակի աստիճ բարկացած դեմքը չփոթեցրեց կառապանին, վորն և չտապեց պատասխանել:

— Տեսա:

— Ի՞նչ տեսար:

— Վոր նա բայլևիկ էր...

— Ճես էլ այդպես եմ կարծում, Հա՛նա-մեկմացավ ապան:

— Հակառակ դեպքում, ինչո՞ւ նա այդպես մի տեսակ եր կանգնել. կարծես պատրաստվում եր ոտքը նետելու մեր կառքի վրա: Հետո նրա դեմքն էլի մի տեսակ եր, մոտալ...

— Տեսա՞ր, Հանս, մեզ տեսնելով վո՛նց տափ կացավ այդ յեռանը...

Կառապանը տեղում անհանգիստ շարժում գործեց, մի քանի անգամ ցանկացավ խոսել, չխոսեց, բայց վերջըն այլևս չկարողանալով զսպել իրեն, մեջ ընկավ կցտուր խոսքերով.

— Նն... Ներեցե՛ք Ձը... Ձերդ Մեծությա՛ն... այդ մեկը ս... սուտ է...

— Ի՞նչն է սուտ, հիմա՛ր:

— Ն.. նա տափ չկացավ...

— Հապա ի՞նչ:

— Ն...նա...եղպես եր, չես հեռվից տեսա... տեսա...

— Դու միայն քեզ նման անասունին կտեսնես, իսկ չես տեսա: Շո՛ւտ չեկ...կառապան..վերջին արհամարհական խոսքը կպցնելով կառապանի թրջված մեջքին: Նորին Մեծությունն սպան վառեց մի նոր սիգար և քաշածակերից ծուխը փչեց բաց դռնակին:

— Ցես չեմ սխալվում, ա՛յ, նա գնում է... տեսե՛ք՝ վրնց մի տեսակ մոլորված է քայլում.

— կա՛ց:

Կառքը ցնցվելով կանգ առավ:

Ծեր զինվորը չտեսից լսելով կառքի դղրդոցը՝ չուռ չեկավ և նույնպես կանգ առավ:

Բացվեց կառքի դռնակն, ու չերևտասարդ սպան ձեռքում ռետինե մարակը ճմռելով՝ չերևաց կառքի աստիճանի վրա.

— Հե՛յ...

Ծերունի վայներդը մի պահ թարթեց իր աչքերը, մաց չվարած անակնկալ հանդիպումից, հետո իրեն հավաքելով, փայտի նման ձգվեց ու կանգնեց պատից բռնած: Դաժան դեմքով, լուռ աչքերում չարախինդ մի ժպիտ, կանգնել եր սպան կառքի աստիճանի վրա և դեմքի հատուկ զննողությամբ աչխատում եր իր քիչ առաջ ունեցած կասկածներն ամրապնդել:

— Մոտեցի՛ր,— խստությամբ հրամայեց սպան:

Շփոթված զինվորը մի քանի քայլ առաջ անցավ և առանց դիրքը փոխելու՝ անկվեց սպայի առաջ:

— Ի՞նչ ունես այստեղ...

— Ի՞նչ:

Սվելի հիմար պատասխան, քան չփոթվածի պատասխանը, չի կարող լինել: Պատասխանից կրկնապատիկ հիմար, խղճալի ու ծիծաղելի չի լինում նրա դեմքը: Ահա այս դրության մեջ եր գտնվում ծերունի

զինվորը, չերբ սպան առաջարկեց իր անպատեհ հարցը:

— Պատասխանի՛ր, փուլ չեկած աղբանո՛ց, ի՞նչ ես չինտուում այստեղ: Ո՞ւմ ես կորցրել...

— Վորդուս...

— Ի՞նչ..

— Վորդուս սպանեցին: Ո՞վ սպանեց իմ վորդուն... ինչո՞ւ... Մի՞թե անարդարություն չե, Ձե՛րդ Մեծություն... չերեսուն տարի հավատարիմ չան նման ծառայել եմ իմ հայրենի Գերմանիային...

— Լռի՛ր...

Սպան ռետինե մարակը խփեց չերկարաճիտ կոշիկներին, վորի չրխկոցից ծեր զինվորի արտասվալից աչքերը վեր բարձրացան:

— Ցեթե դու համարձակվես չերկրորդ անգամ չպատասխանել հարցիս, չան նման կատակացնեմ, չան նման... դե, չո՛ւտ, ի՞նչ եյիր անում այստեղ:

— Կանգնել եյի:

—Քավթառ, ծիծաղո՞ւմ ես, լա՛վ ճանաչիր, մնացած աստմներդ ել կքաշեմ: Նո՛ւ, ասա՛, ի՞նչ եյիր անում դու այստեղ:

— Լալիս եյի....

Սպայի համբերությունն սպառվում եր: Նրա դործ դրած ճիդերն ապարդյուն եյին անցնում, սակայն նա վորոշել եր խոստովանեցնել իր վաչոի ամենահին զինվորին, չնայած նրա վրա միայն ինքն եր, վոր կասկածեց այդ փոքրիկ ժամանակամիջոցում:

— Պատմի՛ր, ի՞նչ արիր, ո՞ւմ տեսար...

Միևնույն է, ամեն ինչ գիտենք:

— Ի՞նչ գիտեք:

— Վե՛րջ տուր, պատասխանի՛ր հարցիս: Ի՞նչ եյիր անում:

— Լալիս եյի... Նրանք սպանել են իմ վորդուն: Բայց ինչո՞ւ, տե՛ր աստված... Նրա համար, վոր նրա հայրը գյուղն է իջեցրել բոլոր նրանց առաջ, ովքեր հրամայել են հանուն Հզոր Գերմանիայի...

Ել ինչո՞ւ են ժամանակ գլուխ խոնարհեցնել, ել ինչո՞ւ չդողալ՝ կորչի՛...

— Ցնդա՛ծ...

Ցեղ ապալի ռեսինե մարակն ամենայն ուժգնությամբ ճայթեց ծերունու դեմքին: Լավեց աղեկատուբ մի ճիչ և արյունլվա դեմքով ծերունին թավալվեց գորշ մայթի վրա: Արյան հոսանքը, սկավելով ուղիղ աչքի միջից, ներկեց նրա ալեհեր բեխերն ու լճացավ թաց քարերի վրա:

Ջղաձգվեց ծեր դինվորը, հառաչեց ու մնաց անշարժ:

Սպան հայհոյեց, պինդ չբևեռացնելով փակեց կառքի դռնակն ու հրամայեց քշել:

Կառքը շարժվեց:

Անձրևը թափվում եր:

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԴԱՏԸ

Սաֆրոնովկայի գյուղացիներն աղքատ եյին ապրում: Հողերը քիչ եյին. համարյա անասուններ չեյին պահում, վորովհետև կեր չունեյին: Բոլորը մինչև վերջին հատիկը, մինչև դարմանի վերջին ծիլն ուտում և ուտեցնում եյին մինչև նորը: Մի կերպ տարեց-տարի քարշ եյին գալիս, բանում եյին աղայի համար, վորմոբիլյան եյին խնդրում:

Կար ժամանակ, վոր Սաֆրոնովկան լավ եր ապրում. եվ են ժամանակին եր, յերբ գյուղացիները խոտհարք ունեյին: Բայց աղան եվ խոտհարքը խլեց: Ինչքան ել գյուղացիները վիճեցին, ինչքան ել դես-դեն ընկան, բան դուրս չեկավ: Աղան ապրում ու հարստանում եր: Իսկ Սաֆրոնովկան տարեց-տարի աղքատանում եր, հա աղքատանում:

Ամեն տարի գարնանը, յերբ մարզապետինը ծանկվում եր խոտով, և տաք քամին դեպի Սաֆրոնովկա յեր տանում իր բուրավետ ալիքները, գյուղացիները դուրս

եյին դալիս իրենց ծխոտած հյուղերից, մատնկոտ նայում եյին ծաղիկների խաոտուիկ ծովին. նրանց ուսնդներն ուռչում եյին—ազահաբար ներշնչելով խնձորածաղկի, առվույտի և դաշտային յերեքնուկի հոտը:

— Ա՛խ, ինչ կլիներ մի թափ տայինք, խոտհարքն ելի մեր ձեռքը դցեյինք...

Ու ամեն անդամ նույն անջնջելի մխաքը վառում եր գյուղացիներին:

***

Իսայ Շկվարնյովը վերադարձել եր դինվորական ծառայությունից: Նա շատ սիրում եր իրենց գյուղը, ու ցավում եր, յերբ տեսնում եր գյուղի ցեխն ու աղքատությունը:

Նա գյուղացիներին համոզեց խոտհարքի վերաբերմամբ, վոր մի անդամ ել բախտները փորձեն: Իսայը գնաց քաղաք: Ցերկար ժամանակ ենտեղ ես ու են կողմ ընկավ: Սկզբում ամեն բան լավ եր դնում: Բանը դատարան հասավ: Իսկ դատարանում թուղթ պահանջեցին, վոր իրոք մի ժամանակ Սաֆրոնովկան և յեղել խոտհարքի տերը: Եղպիսի թուղթ չերևաց: Ցեվ բանը կրկին ազայի ոգտին վերջացավ:

— Խոտհարքը ձերն ե, խոսք չկա,—ասում եյին գյուղացիներին,—բայց միայն թե որենքով, առանց թղթի չի կարելի ձեզ տալ:

— Դե վոր խոտհարքը մերն ե, են ե առանց թուղթ ել կհնձենք,—վորոշեցին իրենք գյուղացիները:—Ել չենք ուզում համբերել: Ամբողջ համայնքով կգնանք, կպատկենք գետնին ու կմեռնենք:

— Ի՞նչ կա վոր,—ասաց Իսայը,—յերբ համայնքը վորոշեց, յես ել նրանց հետ: Թե վորձանք կգա, բոլորիս միասին կգա, թե կմեռնենք, միասին կմեռնենք:

***

Ամռան պայծառ առավոտ եր: Սաֆրոնովկայում հազեղ-ենազեղ իրար ձայն եյին տալիս ճմռան սովից ազատված սակավաթիվ աքաղաղները: Վորոշված եր

ևդ որը խոտհարքը հնձել: Նախաճաշից հետո դյուղացիներն իրար յետևից, գերանդիներն ուսներին, խմբովին չարժվեցին դեպի խոտհարքը: Կանայք ու յերեխաները վազեցին նրանց յետևից:

Խոտհարքը դեռ ննջում եր. գիշերվա ցողի վրա արևն եսաեղ-ենաեղ խոտերի մեջ կապույտ ու կարմիր կայծեր եր վառում: Առաջինն սկսեց Իվան պապը, նրա յետևից Իսայը, իսկ նրա յետևից, յերկար չարքով—մյուսները: Գերանդիների համաչափ բզզոցի և ընկնող խոտի դողացող խշշոցի ձայնը բռնեց ամբողջ դաշտը: Մինչև կեսոր հնձեցին: Արեգակն այրում եր անասելի: Հնձած խոտն արագ թառամում և առատությամբ քաղցը բուրմունք եր տարածում: Իսկ այդ ժամանակ դյուղի ճանապարհին մութ ու անորոշ փոշու ամպ բարձրացավ:

— Տղե՛րք, յեկող կա,—աղաղակեց մի կին, վոր ամենից առաջ եր նկատել:

— Թող գա,—ասաց Իսայը:

Մի հանրակառք և յերկու ձիավոր ճանապարհից դեպի խոտհարքը ծռվեցին:

— Վոստիկանապետն է,—ճչացին կանայք:

Հանրակառքը մոտեցավ հնձվորներին: Ենսեղից դուրս թռան պրիստավն ու կառավարիչը:

— Եհե՛յ, լսեցե՛ք, մի բան եմ ասում,—ասաց պրիստավը, մոտենալով դյուղացիներին:

— Եղ ի՞նչ եք անում, ուրիշի խոտհարքն եք հնձո՞ւմ:

Գյուղացիները լուռ, առանց կանգ առնելու, չարունակում եյին հնձել:

— Են կողմը կա՛ց, ձե՛րդ աղնվություն,—հանդիմանաց ասաց Տրուշկան և գերանդին պատեց: Վոստիկանապետը հաղիվ կարողացավ յետ թռչել, և գերանդին սուլելով—նրա վոտների մոտ հյութալի խոտի մի լաս փռեց:

— Են կողմը կա՛ց, ձե՛րդ աղնվություն,—կրկնեց

հաջորդ դյուղացին ու մի նոր լաս փռեց վոստիկանապետի վոտների մոտ:

Նա բոլորովին չփոթվեց:

— Ե՞ս լինչ ե: Եղպես հա՛, խառնակչությո՞ւն: Անասուննե՛ր, դե՛ն գցեք գերանդիները: Ձեզ եմ ասո՞ւմ, թե՞ չե:

Բայց գյուղացիները չարունակում եյին հնձել:

Վոստիկանապետի սիրտն ահ ընկավ: Նա գլխարկը վերցրեց, թաշկինակով քրտինքը սրբեց: Աղմուկի վրա մոտ վազեցին կանայք:

— Լսեցե՛ք, տղե՛րք,—սկսեց խոսել կառավարիչը:

— Լավ բան չեք անում: Ախր սա որը ցերեկով թալան ե: Դուք ձեզ վրա մտածեցեք. ի՞նչ կասեք, որինակի համար, յեթե ձեր բակը մտնեմ և ինչ վոր դուրս գա—վերցնեմ, տանեմ:

— Գնա տա՛ր,—ճչաց Դարիա Հորաքույրը,—մինենույն ե, այնտեղ բան չես դտնի:

— Ցես գիտեմ, թե եղ ով ե ձեզ խառնում,—նորից աղաղակեց վոստիկանապետը,—եղ բոլորը Իսայ Շերկվարնյովն ե անում: Ցես վաղուց եմ նրան աչքիս տակն առել:

— Են կողմը կա՛ց, ձե՛րդ աղնվություն,—ահռելի ձայնով գոռաց Լուկան և քիչ մնաց վոստիկանապետի վոտները ել հնձի:

— Դե լավ, սպասեցե՛ք դեռ, տեսեք յես ձեզ ի՛նչ կանեմ,—դայրացած փչացրեց վոստիկանապետը և արագ գնաց դեպի հանրակառքը:

— Վորտեղից յեկել ես, ել դենը գնա՛,—աղաղակեց մեկը նրա յետևից: Դրանից հետո յերեք որ ել հնձում եյին գյուղացիները: Նրանք համարյա չեյին հանդըստանում, վոչ ուտում եյին, վոչ խմում: Գիշեր-ցերեկ դաշտումն եյին անցկացնում. իրենց մրոտ խրճիթները, ուր կյանքն այնքան դժվար եր ու դաժան, մոռացել եյին: Նրանք կարծես հարբել եյին աչքառաքից, հյութալի խոտի առատ բուրմունքից, եղ բոլոր հարստությունից: Իսկ չորրորդ որը, կեսորին, դաշ-

տում տարածվեց մի ահարեկ ձիչ,—«զինվորները գալիս են»: Կարծես խոհարարը դողոց ընկավ: Կանայք խոտ չուռ տալը դադարեցրին. դյուզացիները անհանգիստ նայում էին ճանապարհին, վորտեղ չարժվում եր մութ պատը:

Սմբողջովին կարմրած, չոքից չնչատպատ, դյուզացիների առջև կանգնած եր նահանգապետը:

Ներանք եւ չեյին հնձում, այլ լուռ ամբոխ դարձած՝ կանգնել, մռայլ հերպով նայում էյին զինվորներին և Հիպոտներ բարձած սայլերին, վորոնց չուրջը դես-դեն էյին ընկնում վոստիկանները:

— Ծունկի՛,—դադաղած գոռում եր նահանգապետը,—արհիանե՛ր, խոտնակիչնե՛ր: Ծունկի՛, ասում եմ:

Սմբոխը մի թեթև տատանվեց, բայց վոչ վոք տեղից չշարժվեց:

— Կկարդամ, ավազակնե՛ր,—նորից աղաղակեց նահանգապետը:

Սմբոխը նորից չարժվեց: Առաջ դուրս յեկավ Իսայը:

— Թույլ տվեք մի խոսք ասել,—սկսեց նա հարգանքով և հատատուն ձոնով: Մենք ավազակներ չենք, մենք մեր բարիքի համար ենք տանջվում: Խոհարարը չատ հնուց մերն եր, աղան անիրավ կերպով տիրացավ: Դատեցե՛ք մեզ, բայց օրենքով:

— Լռի՛ր,—աղաղակեց նահանգապետը: Եստեղ մոտ թռավ վոստիկանապետը և նրա ականջին ինչ-վոր փսփսաց:

— Հա՛...ուրեմն եզ դու յե՞ս Իսայ Շկվարնյովը: Եզ դո՞ւ յես դատ ուզում: Ա՛յ քեզ դատարան,—դադաղած գոռաց նահանգապետը, ձեռքը յետ տարավ և ինչքան ուժ ուներ, խփեց Շկվարնյովի յերեսին:

Կարմիրը, լերդ արյունը ներկեց դյուզացու մորուքն ու կուրծքը: Նա կռացավ և արյան հետ թքեց յերկու անդամ:

— Ծեծել, բոլորին ծեծե՛լ,—աղաղակում եր նահանգապետը: Զինվորները չբնազդաբեցին դյուզացիներին:

Ծեծի տակ առաջինն Իսայը պառկեց: Սոսկալի, ուռած, կապտած դեմքով, առանց մի խոսք ասելու, նա մերկացավ և գետին ընկավ:

— Սբիկա՛,—առաջնեքի արանքից ասաց նահանգապետը:—Հը՛, հիմա դո՞ւ ես ուզում, անասո՛ւն: Ա՛յ, հիմա յես քեզ դատ յուլյ կտամ,—քանի ծամելուց կդցեմ քեզ...սիսե՛լ,—աղաղակեց նա վոստիկաններին:

Ծեծողները յերկու վոստիկան էյին. ծեծում էյին ճաչակով, ծոր տալով, մի առանձին գաղտնապին բավականությամբ:

Իսայը չեր աղաղակում ու չեր հառաչում, միայն ամեն անգամ, յերբ գլաբար ճիպոտը խրվում եր նրա մարմնի մեջ, ցնցվում եր: Վերջը նա չեր ել ցնցվում:

— Նա հալից ընկավ, ձե՛րդ պանվություն,—ասաց վոստիկանը հիմար ժպտալով:

— Դե՛ն չպրտեցեք դրան...—հրամայեց նահանգապետը,—հետևյալին բե՛ր...ա՛յ, են յերկարամազ ծերուկուն...

Վոստիկանները բռնեցին Իվան պապին: Գյուղացիների ամբոխում հառաչանքի նման բան լսվեց: Դեմենտիի դեմքը մուգ կապույտ գույն առացավ, իսկ ներքևի շրթունքը դողաց:

— Բա պապին ինչո՞ւ համար,—բարձրաձայն ասաց նա:—Եզպես օրենք չկա, վոր ծերուկներին ծեծեն: Մարդասպաննե՛ր:

Վերջին խոսքերը նրա կոկորդում մնացին: Վոստիկանները նրա բերանը փակեցին և մի կողմ տարան: Լռություն տիրեց: Բարձրահասակ, դեղեցիկ, սպիտակ միրուքը կրծքին փռված Իվան պապը կանգնած եր նահանգապետի առջև և նայում եր նրան իր պայծառ, հանգիստ աչքերով:

— Հիսուն հատ հուժկու հարված սրան,—աղաղակեց նահանգապետը:

Վոսկիկաններն իրարով անցան, անկանոն կերպով պոկեցին նրա դռան, ու նորից դաշտում տարածվեց հարվածների սուլոցը. Իվան պապը չդիմացավ և հառաչում եր:

— Հը՛, —չարանդուխտ Փչացնում եր նահանգապետը, —դուր չի գալի՞ս...դե, հապա ե՛լի ավելացրեք:

Իվան պապն արդեն վոչ թե հառաչում, այլ ճայնով աղաղակում եր, յերեխայի նման հեկեկում եր և յերկունքներով հողը ճանկռտում:

Ծեծը չարունակվեց մինչև յերեկո, և չատ քիչ Սաֆրոնովցիներ յեղան, վոր ծեծչվեցան: Արդեն ուշ գիշեր եր, և նահանգապետը գնաց կալվածքում ճաշելու:

Գյուղացիներից յերեքին կիսամեռ դեցին սայլը և պահակներով ուղղակի հիվանդանոց տարան, հնդին ձերբակալեցին և աքսորեցին, իսկ մյուսներին թողին տները գնալու:

Զինվորները գնացին, և դաշտը լռեց: Դեղին վերջալույսը հանգչում եր յերկնքում: Իսկ Սաֆրոնովկան թաղնվեց իր դորշ խցերում, խուլ հառաչեց, դանդատվելով իր Թշվառ վիճակից:

ԴԱՐԲՆՈՑ

Ցերեկոյան, մոտ ժամի 11–ին, ըստ սովորականին, բանակի հերթապահ հսկիչները բաց արին մեր կամերայի դուռը:

Նրանցից մեկը ձեռքը դրեց տարճանակի վրա և դռան մոտ կանգնեց, իսկ մյուսը, շրջելով կամերան, խուզարկության յենթարկեց անկողինները և սուսուցեց՝ չի՞ն սղոցված արդյոք պատուհանների ճաղերը:

Հետո նրանք դուրս յելան. ծանր դուռը ճռնչալով ծածկվեց, ահագին կողպեքը կրկին կախվեց դռան վրա, և մենք մինչև առավոտ հանգիստ եյինք:

Առենք մեր կամերան այնքան ել խիստ խուզարկություն կարիք չուներ. այնտեղ զանվողներս բանտարկված եյինք մանր–մունր բաների համար, և վոչ մեկի բանտարկության ժամկետը յերկու ամսից ավելի չեր:

Այստեղ կային մաքսանենգներ, մանր վաճառականներ, գրպանահատներ, թափառաշրջիկներ:

Ցես ել, վորպես առանց անցագրի ահմանն անց կացած, պատկանում եյի թափառաշրջիկների խմբին:

— Հը՛, վո՞նց ե, բարեկա՛մս, —հարցրեց հարևանս—Ժերունի Ենգելը, —կարծեմ այնքան ել քաղցը բան չի առաջին անգամ այստեղ ընկնելը:

— Առանձին բան չկա, —հառաչելով պատասխանեցի յես:

— Այդ չատ լավ հայտնի յե ինձ, յերիտասա՛րդ: Ինձ ել տարորինակ թվաց, յերբ 45 տարի առաջ, առաջին անգամ լսեցի, թե ինչպես ճռնչաց իմ յետևից բանտի դուռը:

— 45 տարի առա՞ջ:

— Այո՛, յերդա՛յրս: Այն ժամանակ յես աշխատում եյի Աչաֆենբուրգ քաղաքի մի դարբնոցում, վորը պատկանում եր Մյուլհաուզեր ազգանունով մի դարբնի: Դարբնոցը մեծ եր, և յերեք քուրանների մոտ, առավոտյան ժամի 4–ից մինչև յերեկոյան 7—8–ը, մենք անընդհատ աշխատում եյինք:

Դարբնոցի անտրոնը Մյուլհաուզերի վորդիներն եյին: Նրանցից յուրաքանչյուրն ուներ մի հատակավոր աշակերտ, վորը 15—16 դրվանքանոց մուրճով խփում եր չիկացած յերկաթին, և մի փոքրահասակ աշակերտ, վորն անհամար կայծերով չրջապատված՝ փուքան եր փչում:

Մի քուրայի մոտ մեքենայի պես աշխատում եյինք յես, դարբնոցապետրոջ մեծ վորդին—Անտոնը և փոքրիկ Սեպլը:

Մի խանդամ յերեկոյան, յերբ աշխատանքն արդեն վերջացրել եյինք, հանկարծ դարբնոցի առաջ կանգ առավ մի հրաշալի քառաձի կառք:

Տեղացի մի իշխան իր հնոջ և աղջկա հետ դուրս էին կառքից և մոտենում մեզ:

Ներանք մոռիկ քաղաքում ապրող մի բաբեթաստեղծման անձի մոտ հրավերքի էին գնում և ճանապարհին կառքի առնին կատրվել եր:

Անտոնն իսկույն վազեց կառքի մոտ. ուզում եր չուտ նորոդել, վոր որիորդը հրավերքից չետ չընկնի:

Մենք հոդնածությունից վոտի վրա կանգնել չէյինք կարողանում: Բոլորից աշխուժը Սեպլն եր:

Նա արագ առնին դրեց քուրայի մեջ և սկսեց փուքսը փչել:

Պարոնները կանգնած էյին զարմնոցի մի անկյունում:

Մեռաքսի չոր հագած որիորդն աչքերով հետևում եր կրակոտուն կայծերին:

— Շուռպեցի՛ք,—հրամայեց իշխանը:

Սեպլն սկսեց ավելի ուժեղ փչել փուքսը: Ծերունի Մյուլհաուզերը հավաստիացնում եր իշխանին, վոր իսկույն կվերջացնենք: Անտոնը կանգնած եր սալի մոտ, չետ էլ, ահագին մուրճը ձեռքին՝ նրա կողքին:

— Սկսեցի՛ք,—հանկարծ գոչեց Սեպլը:

Կարլը, զարմնոցատիրոջ ամենախոքը վորդին և Անտոնը, դուրս հանեցին կրակից տնուս 2 կտորները և դրին սալի վրա: Փոքրիկ Սեպլը, ըստ սովորականին, ժպտալով, վորպես իր դործն ավարտած, հետու քաշվեց:

Ցեխ սկսեցին արագ զարկել յերկաթի կտորներին, մինչև վոր նրանք միացան, իսկ հետո, յենթարկվելով Անտոնի «զա՛րկ» դոռոցին, սկսեցի զարկել բոլոր ուժով:

Առաջին իսկ ուժեղ զարկից հետո զդացի, վոր հսկա մուրճի կոթը ճաքեց: Մի րոպե չես կանգ առա վորոչելու, թե ի՛նչ անեմ. չարունակել զարկերը կտրած դործիքով—չես չէյի կարող, իսկ յերկաթը միքանի րոպեյից հետո կսառչեր:

Վորոչեցի վազել և մյուս քուրայի մոտից ուրիշ մուրճ վերցնել, բայց ծերունի Մյուլհաուզերը և Անտոնը միաժամանակ բացականչեցին.

— Զա՛րկ, զա՛րկ:

Ցես մեքենայորեն առաջին զարկը տվի, իսկ յերկրորդ անգամ մուրճը վրա բերելիս, հանկարծ ահագին, 16 դրամանքանոց մուրճը կոթից սրսիվեց, թռավ, ոդում չրջան կատարեց և ընկավ փոքրիկ Սեպլի դլխին:

Սեպլն ընկավ:

Ցես սարսափեցի, բայց իշխանի և Մյուլհաուզերի կատաղի հայացքներն ինձ ստիպեցին վազել և ուրիշ մուրճ բերել:

Սկսեցի ուժեղ զարկեր տալ յերկաթին, մինչև վոր կոտրվեց:

Ցերբ Մյուլհաուզեր յեղբայրները առնին անց էյին կացնում կառքին, չես նայեցի փոքրիկ Սեպլի արյունաթաթախ դլխին: Դանդի վրա մի ահագին վերք եր բացվել և վերջին ժպիտը սառել եր նրա մանկական շրթունքների վրա: Նա դեռ չնչում եր, և նրա սիրտը դադարեց բարախելուց այն վայրկյանին, յերբ իշխանի կառապանը մարտկեց ձիերին և կառքն սուրաց օդացավ:

Ինձ չորս ամիս բանտ նստեցրին այն պատճառով, վոր չես եյի յեղել անվերջ ժպտացող խեղճ յերեխայի մահվան պատճառը:

Այդ որից անցել է 45 տարի:

Այդ 45 տարվա ընթացքում չես վո՛չ մի աշխատանքի չեմ կարողացել կպչել, վո՛չ մի աշխատանքի:

Աշխատել իշխանների՞ համար...Սեպլների կյանքի՞ դնով...Վո՛չ...

Կամերան քնում եր:

Ծերունի Ենգելը—խմաստուն մուրացիկը—դադը ժպտաց և ընկավ իր հարդե ներքնակի վրա:

Բանդի պատերից դուրս, արշալույսի կարմրադույն չողերը հանդարտ տարածվում էյին յերինքի վրա...

ՄԻՏԻՆԳ

Մոտ յերեք հազար հոգի ածխադործներ եյին հավաքվել: Կային նաև կանայք և յերեխաներ: Գալիս եյին և նորանոր խմբեր: Մթնաշաղով ժողովված գյուխների մի ծով եր այդ, վոր գնալով մեծանում եր: Անշարժ, քարացած անտառում լսվում եր փոթորկի վորոտը հեչեցնող ձայների խուլ դղրդյուն:

Եայենը ցատկեց կոճղի վրա և ճչաց.

— Ընկերնե՛ր, ընկերնե՛ր:

Բանվորների ձայները քիչ-քիչ հազստացան: Եայենը չարունակեց պիլ ձայնով.

— Ընկերնե՛ր, մեզ արգելում են հավաքվել. մեզ վրա ժանդարմներ են ուղարկում, ինչպես ավազակների վրա: Այստեղ խոսենք, վորովհետև այստեղ մենք աղատ ենք. այստեղ վոչվոք չի կարող սահիլ մեզ լսել, ինչպես չի կարելի սահիլ թռչուններին ու գազաններին:

Նրան պատասխանեցին պիլ կանչերով ու բացականչություններով.

— Այո՛, այո՛. անտառը մեզ է պատկանում: Մենք իրավունք ունենք այստեղ խոսելու:

Եայենը մի քիչ լռեց: Լուսինը լուսավորում եր մեկայն ծառերի կատարները: Բազմություն այժմ լուռ թաղված եր մթության մեջ: Եայենը համառոտակի պատմեց գործադուլի սկզբնավորության և ձայնը բարձրացնելով վերջացրեց այսպես.

— Այսոր մենք պիտի հանգենք վերջնական վորոշման: Ուզո՞ւմ եք գործադուլը չարունակել. յեթե ուզում եք, ի՞նչ եք մտադիր անել, վորպեսզի հաղթենք բուրժուազիային:

Աստղալից յերկնքի տակ տիրեց խոր լռություն: Բազմությունը թաղված եր մութի մեջ: Վերջում արտասանված խոսքերից ամենքի սիրտը ճմլվեց: Լսվում եյին հուսալքության հառաչանքներ:

Եայենը նորից խոսեց: Հիմա խոսում եր իրրև պետական.

— Մի՞թե կգտնվեն վախկոտներ, վորոնք կդավաճանեն տրված խոստումին: Մի՞թե նրանք ամբողջ մի ամիս լռությամբ տանջվեցին: Մի՞թե նորից պիտի սկսվի նրանց մուրացիկ դրությունը: Լավ չի՞ արդյոք մեռնել՝ չանալով քանդել կապիտալի բերդը, վորի հարբատահարության հետևանքով բանվորները մատնված են սովի: Հանքը ձեզ պիտի պատկանի: Դուք և ձեր նախահայրերը հանքը գնել եք ձեր քրտինքների գնով: Միայն ընդհանուր ստոր անարդարության՝ հանքը պատկանում է բուրժուաներին: Արտադրության բոլոր գործիքները, մեքենաները պիտի պատկանեն բոլորին: Իսկ կատարյալ ազատության հասնելու համար պետք է տիրող պետական կարգերը կործանել:

Եայենը խոսքը վերջացրեց հետևյալ բառերով.

— Իշխանությունը նվաճելու հարցն այժմ մեզ է հասել:

Մտահարությունները թնդացրին անտառը: Սառն ուղում մարդկանց դեմքերն այրվում եյին, աչքերը փայլում: Սովի մատնված բանվորները վճռեցին յետ խլել իրանցից զողացած հարստությունները: Նրանք այլևս ցուրտ չեյին զղում: Կրակոտ խոսքերը նրանց տաքացրին: Ի՛նչ վաեմ յերազ: Լինել դրության տեր, այլևս չտանջվել և վերջապես կյանքը վայելել:

— Դե՛հ, հերթը մերն է... Մա՛հ հարստահարիչներին:

ՀԱՅՐՆ ՈՒ ՎՈՐԴԻՆ

I

Փականագործ Միխեևի տնակը լիքը մարդ է:

— Անո՛ւշիկա, վարպետուլը քաշի՛ր, ամեն տեղ լրտեսները լիքն են,—ասաց Միխեևն իր տղային:

Անուշիկան արագ վեր թռավ տեղից, չքեր վարպետուլը քաշեց ու նորից տեղավորվեց անկյունում. նըստել է, լսում, աչք չի ճլպպացնում:

Մի յերիտասարդ բանվոր զրպանից մի կապոց թեր-

թիվները հանեց, ամենքը կուացան, սկսեցին կարդալ— «Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք: Մայիսի 1–ն աշխատանքի տոն է, այդ որն ամբողջ աշխարհի բանվորները պիտի բարձր պահեն իրենց կարմիր դրոշը»:

Անտոչկան լսում է, բառ չի բաց թողնում:

— Վաղն առավոտյան ժամի 11–ին բոլորս կհանդիպենք 5–րդ արահետում:

— Ուրեմն, մեր նշանաբանն է՝ «բազե»:

— Այո:

— Պահակները հուսալի՞ յեն,—հարցնում է մի հին բանվոր:

— Հուսալի յեն: Առաջին պահակը նստած կլինի մեր տղաներից, Թերթը ձեռին:

Համաձայնվեցին ու ցրվեցին:

II

Յերկար ժամանակ Անտոչկան չեր կարողանում քնել:

Մտածում եր՝ ինչպես անի, վոր մանակից վաղվա ցույցին: Իսկ յերբ քնեց, յերազում տեսավ մեծ ամբոխ, վորի մեջ տեղը կանգնած եր ինքն Անտոչկան, կարմիր, մեծ դրոշը ձեռքին:

Հանկարծ ամպուկից նա արթնացավ: Ինչվոր անծանոթ մարդիկ խմբված, քրքրում եյին սնդուկը, դարակի վրայի ամանեղենները եյին տնտղում, նայում ամեն ծակուծուկ, թաղ տալիս անկողինը:

— Ցեխել են,—գլխի ընկավ Անտոչկան:

Այդ ժամանակ հայրն աննկատելի կերպով Անտոչկային մի կապոց տվեց: Նա գլխի ընկավ, թե ինչ պետք է անի. մկան նման դուրս ծլկեց սենյակից:

Գարնանային զով գիշեր եր: Հեռվից թարմ կանաչի հոտ եր գալիս:

Անտոչկան վազեց դեպի մոտակա տան անկյունն ու այնտեղ պատի ու գարաջի փայտերի մեջ թաղցրեց կապոցը:

Ցերեկը նա վերադարձավ տուն, վոստիկանները գնացել եյին:

Մայրը լաց լինելով հավաքում եր ցրված իրերը:

— Կապոցն ո՞ւր է,—հարցրեց հայրը:

— Փայտերի յետևն եմ թաղցրել:

— Կեցցես, ընկե՛ր ջան, փրկեցիր,—ծիծաղեց հայրը:

III

Առավոտ եր: Անտոչկան նոր չորերը հագած՝ գնում եր 5–րդ արահետը: Նստարանի վրա նստած եր մի յերիտասարդ բանվոր, Թերթը ձեռքին:

Անտոչկան մոտեցավ նրան ու բարձր դոռաց.— «Բազե»:

— Ի՞նչ ես գոռում, ո՞ւր ես գնում, ավարա՛:

— Հայրիկիս մոտ:

— Ինչո՞ւ:

— Ասել է, վոր Թուրքիկներ տանեմ,—ասում է Անտոչկան:

Բանվորը ճամպան ցույց տվեց:

Անտոչկան հասավ նշանակված տեղը:

Ամբոխի վրա կանաչների մեջ, բարձր կրակե ծաղկի նման, ծածանվում եր կարմիր դրոշը:

Բանվոր Ալեքսանդրն ասում եր.

— Դազդյահների, կրակի մոռից, տանջված՝ մենք յեկել ենք այստեղ, վոր բարձրացնենք մեր կարմիր դրոշը: Ամեն կողմից մեզ հետևում են մեր թշնամիները, թագավորի ու գործարանատերերի ծառաները, բայց հին աշխարհն արդեն ատատանվում է, ու մոտ է այն որը, յերբ մենք...

Բայց դեռ խոսքը չեր վերջացել, յերբ մեկը դոռաց.

— Կազակնե՛րը:

Ու խմբուն ամեն ինչ խառնվեց իրար՝ թիերի ճաքճքատյունը ձիերի ամբակների տակ, խարազանների չաչյունը, կազակների գոռոցը...

Անտոչիան տեսավ՝ ինչպես Ալեքսանդրի դլխին լծալ խարազանը:

Ալեքսանդրը բռնեց ծառի ճյուղից ու հանկարծ ընկավ, ել չերևաց...Դողդողալով, ծառերի յուևը թաղնըվելով, վազում եր Անտոչիան: Ցերկար պատվեց, մինչև փողոց դուրս յեկավ: Հայրն արդեն տանն եր:

— Հայրի՛կ, վո՞նց եր, կազակներից հո դու յել չկերա՞ր:

— Իսկ դու ի՞նչ գիտես:

— Վո՞նց չե, յես ել եյի մատնակցում:

— Հայրը նայեց նրան, ժպտաց:

— Շատ ժիրն ես: Տե՛ս, գլխիդ փորձանք կդա:

Հետո չոյեց նրա մազերն ու քնքուշ ավելացրեց.

— Մեծացի՛ր ու ազորի՛ր պայքարել: Տես՝ եղ խարազանները չմոռանաս, հա՛:

ԳԱՂՏՆԻ ԺՈՂՈՎ

I

Մուքին ընկնում եր: Ա. գյուղի բոլոր բնակիչներին հայտնի յեր արդեն, վոր դեսի մոտ գանված ձորակներից մեկում այդ գիշեր գյուղական ընդհանուր ժողով եր նշանակված:

Ծածուկ ու զգուշավոր՝ բոլորը պատրաստվում եյին ներկա գանվել այդ ժողովին: Այնքան եյին տարված ու վոգևորված ժողովով, վոր ամբողջ որվա աշխատանքից հոգնած գյուղացիության աչքին չեր գալիս ուտելիքը: Բոլորն ել ուզում եյին չուտ գնալ, բոլորն ել ուզում եյին ներկա լինել: Առանձնապես վոգևորված եր գյուղի յերիտասարդությունը:

Մուքն արդեն պատել եր ամենուրեք, յերբ ժողովին մասնակցողների հոսանքն սկսեց տարածվել ժողովատեղի ուղղությամբ:

Գնում եյին բոլորը՝ չար աչքից աննկատ մնալու համար՝ մեկ-մեկ, յերկու-յերկու:

Ցերիտասարդները, գուբիացիներին հատուկ տարազով, գլխներին կոկիկ փաթաթած բաշլուղներով, վոմանք զաղտուկ, վոմանք ել ակնհայտ, կրում եյին իրենց վրա տանն ունեցած զենքերը: Դաշտերով, արտերով չտապում եյին բոլորը, կարճ ճանապարհներով չուտ հասնելու, «աղատության» հզոր կանչն ականջով լսելու:

Խորհրդավոր ձորակի ծայրին, հրացանը ձեռքին, կանգնած եր մի պահակ: Նա լևանի մտերիմ ընկեր Բեժանն եր, վոր ցույց եր տալիս յեկողներին ժողովատեղը՝ «Ցերեք թիսատակ» կոչված փոսում:

— «Ցերեք թիսատակի փոսը», ընկերնե՛ր,—կարճ ասում եր յեկողներին Բեժանը և ցույց տալիս ուղղությունը:

Շատերի ականջներին խորթ եր «ընկեր» անունը և այդ պատճառով հուզիչ տպավորություն եր անում նրանց վրա: Իսկ նրանք, վորոնք վարժված եյին «պաղտնի» ժողովների, նրանց համար անչուշտ անծանոթ չեր այդ սիրելի անունը: Սրանք գլխով համաձայնության նշան եյին անում և առաջ անցնում:

II

Կարճ ժամանակից արդեն հոծ բազմություն եր հավաքված:

Շշուկներն ու փսփսոցը քանի գնում ավելի և ավելի լսելի եյին դառնում: Տեղ-տեղ արդեն սկսել եյին խոսել բարձրաձայն:

Այլևս վոչ վոք զգուշավորության կարիք չեր զգում:

— Մեր վողջույնն ու բարևը Տարիելին,—ձայն տվին մի խումբ ժողովականներ և յետ քաշվեցին ու տեղ ավին նրան:

Տարիելը չնորհակալություն հայտնեց իրեն վողջունողներին, խառնվեց բազմության մեջ և սրան ու

նրան ձեռք տալով ու բարևելով՝ հարցուփորձ եր անում առօրյա կենցաղի մասին:

— Ո՞ւր են մեր նոր կարգերի ջատագովները,— դարձավ Տարիելն եր չուրջը կանգնողներին և նայեց չորս կողմը:

— Թե մեզ ես ակնարկում, բոլորս այստեղ ենք,— ականջին փափաց աննկատելի կերպով նրա կողքին տեղ բռնած Լևանը, վոր յերեսին քաշել եր բաշլուղը և մեջքին գցել յափնջին:

Տարիելը հաղիվ ճանաչեց վերջուն եր տարորինակ հագուստում:

— Նախագահ՛ը, ժողովը բանալու ժամանակ է,— չարունակեց ծերունու ականջին Լևանը. հուզմունքից ձայնը դողում եր:

— Նախագահե՞մ, չատ լավ,—ասաց Տարիելն ու առաջ անցավ:

— Ընկերնե՛ր, յեղբայրնե՛ր,—դիմեց նախագահը ժողովին,—ժողովը հայտարարում եմ բացված: Խոսք տանք մեր գյուղի ջահելներին, տեսնենք՝ ի՛նչ են ասելու մեզ: Համոզիչ ու խելոք խոսքերն ընդունենք ու սլինդ անեմնք մեր կրծքին...

— Համաձայն ենք...—ձայնեցին ամեն կողմից,— դրա համար էլ հավաքվել ենք:

Բոլորը լսում են: Հազարավոր մարդկանց մեջից ձայն-ծպտուն չեր լսվում, լարված հետաքրքրությամբ լսում եյին «նոր խոսքին»:

Լևանը հանկարծ դեն չպրտեց յերեսին քաշված բաշլուղը, ուսից նետեց յափնջին, մեջքն ուղղեց և ճակատը բարձր պահած՝ խրոխտ ու վոգևորված կանչեց.

— Ցեղբայրնե՛ր, ընկերնե՛ր...

Նա հետզհետե ձայնն ավելի ու ավելի ուժեղացնում եր և վատահ ու համարձակ ասեն եր տալիս իր ճառին:

Խոսում եր պարզ ու հասկանալի լեզվով. ներկա յեղբայրներին բացատրեց ժողովի նպատակը, նոր կարգերի եյության ու նշանակության, միության կարևորության ու անհրաժեշտության և գալ ապագ բոլորին,

միանալ, մեջք-մեջքի տալ այս ծանր որերում՝ բոլոր դժվարություններին դիմադրելու համար:

Մտքերը հնչում եյին պարզ: Խոսքերը դառնում եյին հատու և վճռական: Վերջում նրա ճառն արդեն ընդունեց ազատության համար մարտնչող չարքչ գյուղացիության դեկլարացիայի բնավորություն:

Ցերը հռետորը վերջացրեց իր ազդու ճառը, բոլորությունը վոգևորված՝ միաձայն թնդաց.

— Կեցցե՛ ազատությունը...

Վոգևորությունն ու հուզմունքը սահման չունեյին: Կարծես ստրկության ծանր բեռն արդեն ընկել եր նրանց մեջքից: Այդ վայրկյանին նրանք զգում եյին իրենց ազատ, վիճում, խոսում եյին այն բոլոր խնդիրների մասին, վոր արծարծել եր հռետորը: Անմիջապես հարյուրապետներ ու հազարապետներ ընտրեցին՝ ապրատամբության և նոր կարգերի գործադրման համար: Իսկ սրանց գլխավոր ու գեկավար կարգեցին Տարիել Գոլուային:

Մի գիշերվա ընթացքում Ա. գյուղում կատարվեց այն բոլորը, ինչ վոր այլ վայրերում ամիսների ու յերկար չարաչների գործ է լինում:

Ժողովականներն իրար ձեռք տալով՝ վոչնչանում են չարժումը, նոր կարգերն ու նոր կյանքը:

Բոլորի աչքերում ուրախություն եր փայլում: Արդեն ուշ գիշեր եր, բայց վոչ վոք հոգնածություն չեր զգում և գյուղ գառնալու մասին չեր մտածում:

Գաղտնի և զգուշավոր հավաքված ժողովը վերջացավ մեծ վոգևորությամբ և խանդավառ յույգերով: Անհամբեր ջահելները մինչև անգամ սկսեցին ողում ատրճանակները պարպել և խումբ-խումբ յերգելով բռնեցին գյուղի ճանապարհը:

— Ո՞ւմ գեմ եր պայքարում գյուղացիությունը:

— Վո՞րտեղ եյին ժողով գումարել և ինչու՞:

— Ի՞նչ եր ասում հեղափոխական ճառախոսը:

— Ի՞նչն եր գյուղացիներին այնքան վոգևորում։

— Նկարագրեցեք՝ ի՞նչ հետևանք ունեցան գյուղացիական ապստամբությունները։

Ի Վ Ա Ն Ե Ն

I

— Սի՛դո, ե՛յ, Սի՛դո,—կանչում եր Իվանեն իր կնոջը, վոր խոր քուն եր մտել,—ա՛ կնիկ, չե՞ս լսում։ Ես ինչ ծանր քուն և յեկել վրան,—վնթփնթփնում եր ինքն իրեն Իվանեն։

— Ի՞նչ յեղավ, ի՞նչ ե պատահել, ա՛յ մարդ, ի՞նչ ես վեր կացել ես կեսգիշերին ու ճայնդ գցել։ Ջե՞ս թողնի, վոր դիշերները գոնե հանգիստ քնենք։

— Ախր հազար ու մի գործ ունեմ, ա՛յ կնիկ, չատ պում եմ...

— Յերևի մի հայն գործ ունեցողը դու յես, վոր ճայնըդ գցել ես, ել ուրիշներն աշխատանք չունեն. վոչ ինքդ ես հանգստանում և վոչ ել ուրիշներին թողնում, վոր հանգստանան,—դժկամությամբ պատասխանեց Սիդոնան և ծանր անքաղով մի քանի անդամ հորանջեց։

— Ա՛յ անաքանդ, ախր հազար ու մի գործ ունեմ։ Շատ կանուխ պիտի գործի լինեմ, վոր ծերը–ծերին հասցնենք, պատկելով ի՞նչ դուրս կգա։ Ջրաղացը ցորեն պիտի տանեմ աղալու, արտերին ջուր պիտի հասցնեմ, արտերի անպետք խոտերը պիտի մաքրեմ։ Վո՞ր մեկն ասեմ։ Ես բոլորին պետք ե հասնե՞մ, թե՞ չե...

— Հեռո՞, յես ի՞նչ անեմ, ա՛յ մարդ. ինչո՞վ ողնեմ...

— Ա՛յն, վոր չուտ վեր կենաս, ժամանակին կերակուր դնես ոջախին, վոր յեփվի։ Ցերեկվա ուշարկածդ կերակուրն անյեփ եր...

— Ե՛հ, դու յել խոսելու նյութ չունես, ամեն րոպե բաների մասին ես խոսում, կարծես...

— Լա՛վ, լա՛վ...—ասաց Իվանեն և պատվիրեց կնոջը, վոր կերակուրը ժամանակին հասցնի։

Սիդոն վոտքի յելավ, պատուհանի վարագույրը յետ քաշեց, նայեց դուրս։

Դեռ մութն եր...

Գյուղն ամբողջովին քնած եր...վոչ մի չարժում... վոչ մի կենդանություն։ Գյուղի քար լռությունը խանգարվում եր միայն յերբեմնակի լսվող շների հաչոցով։

— «Մուղրուղո՛ւ...ղո՛ւ...»,—հեռու տեղից լսվեց աքաղաղի կանչը և անպատասխան մնաց։

Գիշերվա մութը կարծես կամաց–կամաց հրաժեշտ եր տալիս աշխարհին։

Իվանեն սիրալիր վողջույն ավեց կնոջը, պատից կախած հացի տոպրակը ձգեց ուսին և ուրախ տրամադրությամբ դուրս յելավ տնից։

II

Իվանեն դաշտային աշխատանքի մեջ եր, յերբ կինն անսպասելի՝ կանգնեց նրա առաջ և անհանգստությամբ ասաց.

— Տանուտերն ուզում և քեզ տեսնել, պրիստավից թուղթ և յեկել։

— Տանուտե՞րը,—զարմացած պատասխանեց Իվանեն և դունատվեց,—խելագարվե՞լ ես, ի՞նչ ե։ Ինչո՞ւ համար, վո՞ր մեղքիս համար։

— Ցես, ասում և, պարտավոր չեմ ամեն բան ասելու քո կարմիր–սոցիալիստ ամուսնուն... Թող բարեհաճի գնալ պրատենյակ և այնտեղ իմանալ, թե նրան ինչո՛ւ յեն կանչում։

— Տե՛ս եղ անիրավին՝ ինչպես թևեր և առնում։ Ցերեկս են ավել. չաղացել, պարարտացել՝ խոզ և կտրել, ել ուրիշի վիճակի մեջ չի մտնում։ Մի հարցնող լինի, թե ինչո՞ւ համար և եղ թշնամանքը.ո՞ւմ վիզն եմ կտրել, ո՞ւմ առուն եմ թալանել, վորի՞ն եմ վնասություն արել, ո՞ւմից կաշառք վերցրել, ի՞նչ և ուզում այդ անխիղճն ինձանից։

— Այն, վոր լեզուդ կարճ չէիր պահում և չարունակ խոսում էիր նրա դեմ և թշնամացնում քեզ հետ։ Սխալ ո՞վ է նրա ձեռքից պրծել, վոր դու պրծնելիր։ Սմբողջ գյուղը ճանաչում է նրան, բոլորն էլ նրա վատ արարմունքների մասին են խոսում, բայց ծածուկ, իրար մեջ և վոչ թե քեզ նման յերեսովը տալիս ամեն ինչ։ Սխալ չարունակ ասում էլի՝ ա՛յ մարդ, լեզուդ քեզ քաշիր, վատ որեր կգան գլխներիս. բայց ո՞վ եր լսում ինձ—յես ասի, յես լսեցի...Տե՛ս...չուրջդ նայիր ու տես, թե ի՛նչ են անում ուրիշները...պապանձվել, լռել են, վոչ վոք չի առարկում նրա դեմ. ասում են՝ կառավարության մարդ է, տանուտեր է, ի՞նչ կարող ենք անել։

— Հերի՛ք է, ա՛յ կնիկ, դու էլ մի կողմից ես սիրտս կտրատում. ի՞նչ խրատների ժամանակ է։ Բողոքել եմ և միշտ էլ կբողոքեմ ամեն տեսակի անարդարությունների դեմ,—ասաց վճռական և չարունակեց իր աշխատանքը...

— Դու դիտես, Իվանե՛, բայց մի բաղդ պահիր, վոր այսոր պիտի ներկայանաս գրասենյակ, յես չընկնես, մի նոր գործ չբարդես գլխիդ։

— Ի՞նչ ես ասում, ա՛ կնիկ, այսպիսի աշխատանքի լավ որն արտս կիսատ թողած՝ գրասենյակ վազե՞մ, ինչո՞ւ, ի՞նչ չտապ գործի համար։ Ձե՛, չեմ գնա. ի՞նչ ուզում են՝ թող անեն։ Դու միամիտ մնա, ա՛ կնիկ, լրբանաչդ պատրաստիր յերեկոյան համար, ամեն ինչ լավ կլինի,—ասաց Իվանեն իր կնոջը, կարմիր թաշկինակը կապեց ճակատին, մանգաղն առավ ձեռքը և չարունակեց իր աշխատանքը։

Սիզոնան մտազբաղ տուն վերադարձավ...

Արշեն հեռու եր...

Կիզիչ արևը կարծես կանգ եր առել յերկնակամարի վրա, Իվանեյի գլխավերևը և հանդիստ ու անտարբեր նայում եր ներքև կատարվող ժրաջան աշխատանքին...

— Ո՛վ, ո՛ւֆ, ինչ շոգ է,—բարձրացրեց գլուխն Իվանեն, մեջքն ուղղեց և ճակատից սրբեց առատությամբ թափվող քրտինքը։ Սպա հրճվանքով նայեց իր արտին, լիառատ սրտով ուրախ չունչ քաշեց և գոհ իր կատարած աշխատանքից՝ դանդաղ քայլերով անցավ դեպի պաշտում յերևացող կաղնու ծառը։

Այս կաղնու տակ նստեց մեր Իվանեն։

Տոպրակն ուսից վայր բերեց, կավե ամանով ջուրը դրեց մի կողմ, մանգաղն զգուշությամբ՝ մի ուրիշ տեղ, ծորացող քրտինքը սրբեց, թեք ընկավ կանաչ խոտին։

Հանդստացավ...ապա վեր կացավ, ձեռքերը լվաց, տոպրակից հանեց մոխրագույն թաշկինակի կապոցը, սրա միջից էլ՝ խիստ չորացած հացը և սկսեց ծամծմել։

Հացի չոր փշրանքները մնում էին կոկորդը։ Թևև չուտ-չուտ ջրի ամանը մոտեցնում եր բերանին, բայց և այնպես հացի պատառներն այնքան չոր էին, վոր դժվարությամբ էին կուլ գնում։

Այսպես, կես հացն էլ կարողացավ ուտել, ջրի ամանը դատարկեց և իր համեստ ճաշն ավարտած համարելով, խոշն ակ քաշեց, մնացորդ հացը նորից դրեց տոպրակում և մեջքի վրա փռվեց գետնին՝ մի քիչ հանգստանալու։

III

— Բարի ո՛ր,—անժպիտ կանդնեց գյուղի ատենապետը Իվանեյի գլխին, ձիավոր գլուխների հետ միասին։

— Բարև, հազար բարի,—անթավականությամբ պատասխանեց աշխատավորը՝ հագիվ իր գլուխը բարձրացնելով։

— Այս առավոտ կանչել էին գրասենյակ, ինչո՞ւ չներկայացար։

— Ա՛յ մարդ, աշխատանքի այս յեղանակին որերում ի՞նչպես արտս կիսատ թողած՝ գրասենյակ գայի, չե՞ վոր ինքդ էլ գյուղացի յես և լավ գիտես մենակ աշխատավորի վիճակը։

— Այդ իմ գործը չե. ինձ հրամայված է, և յես պարտավոր եմ ճշտությամբ կատարելու հրամանը։

— Ի՞նչ ես ուզում, ասելիքդ ի՞նչ է։

— Հենց այժմ պիտի պրիստավին ներկայացնեմ

քեզ,—չոր-չոր պատասխանեց տանուտերը և նայեց դպիրներին:

— Ինչո՞ւ, վո՞ր հանցանքիս համար, չե՞ս կարող արդյոք ասել:

— Ինչո՞ւ համար՝ չգիտեմ: «Նաչալնիկի» դրությունն է—«վորտեղ պատահեք Իվանե կեթիլաշվիլուն, անմիջապես ձերբակալեք և ուղարկեք ինձ մոտ»:

— Այս բոլորը քո բաներն են, Փիլո՛, ուրիշ վոչվոքի,—ասաց վրդովված Իվանեն:

— Ի՞նչպես, ուրեմն հանցանք ե՞լ ես բարդում վրաս: Լա՛վ, չա՛տ լավ. ինչպես տեսնում եմ, առանց մարակի գործը գլուխ չի գա:

— Ի՞նչպես, ուզում ես մարակի բաժի՞ն դարձնել ինձ: Վո՛չ, այդ քեզ չի հաջողվի. Իվանեն դեռ այնքան չի ընկել, վոր այդ օրին հասնի:

— Բավակա՛ն է, ասում եմ. չես չգիտել այստեղ խոսք ու զրույց անելու. չգիտել եմ ձերբակալելու, ձեռք ու վոտքդ կապելու և պրիստավին ուղարկելու: Այդպես և հրամայված: Ցնթե ըմբոստանաս և չուզենաս հնազանդվել, տեղն ու տեղը կարող ես սպանվել, ասված է հրամանի մեջ:

— Ինչո՞ւ, վո՞ր հանցանքիս համար, ավազակ հո չե՞մ, ո՞ւմ ինչ վատություն եմ արել, ա՛յ մարդ...

— Ո՞ւմ ինչ վատություն ես արե՞լ...դու կարծում ես՝ մոռացվե՞ց այն բոլորը, վոր դյուղացիների ականջները մտած՝ գիշեր-ցերեկ հուզում, աղմկում, զրդռում եյիր տգետ դյուղացիներին իմ դեմ, կառավարության դեմ: Մոռացա՞ր այդ բոլորը, հա՛, կարծում եյիր եժա՞ն ինսաները այդ: Կա՛րճ կտրիր, վե՛ր կաց այս րոպեիս, վե՛ր կաց,—գոռաց տանուտերը և քացով տվեց Իվանեյի կողքին:

— Գոռալդ բավական չե, քացի յե՞լ ես տալիս, չան ան՞ղ ես դնում դու ինձ, հա՞...

— Ի՞նչպես, դու համարձակվում ես...

— Զա՛նգ, թե չե մարակս կիջնի մեջքիդ:

— Ա՛յ թե ինչպես...—չարժվեց մարակն ոդի մեջ և պինդ իջավ Իվանեյի հոգնած մեջքին:

— Վա՛յ...—բռունցքը կրծքին տալով գոռաց զայրացած Իվանեն և աստամները կրճատեցնելով ատյուծի նման վոտքի թռավ...

— Կապեցե՛ք ձեռքերը,—նորից լսվեց տանուտերի կատաղած ձայնը, և յերկրորդ անգամ մարակը խաղաց...

Գղիրներն իրար անցան...

— Տո քավե՛ա, ի՞նչ ես ուզում ինձնից,—համբերությունից դուրս գալով՝ գոռաց Իվանեն և հարձակվեց. արևի ճառագայթների տակ փայլփլող մանդաղը չոզաց ոդի մեջ, և մի ակնթարթում գետին փռվեց տանուտերը...

Գղիրները սարսափից դես ու դեն վախան, տուն վերադարձան...

Իվանեն ուշքի գալով՝ նայեց իր շուրջը, տեսավ ինքն իրեն միայնակ կանգնած տանուտերի անշնչացած դիակի առաջ...

— Անպիտաննե՛ր, գոնե դիակին տեր կանգնեյնք,—ինքնիրենից Իվանեն գղիրների յետևից:

Մի րոպե կանգ առավ...նայեց հեռուները... լիառատ թոքերով ազատ չունչ քաշեց և գլուխը կախեց...

***

Այն որվանից Իվանեն թողեց դաշտն ու մանդաղը և հրացանը ձեռքն առնելով՝ գնաց մխանալու ըմբոստ վոգիներին, հեղափոխականներին:

— Վո՞ր ժողովրդի կյանքից և վերցրած այս պատմվածքը և ի՞նչ ժամանակից:

— Գյուղացիության վո՞ր խավի ներկայացուցիչն է Իվանեն:

— Ինչո՞ւ հին իշխանությունը և տանուտերը հավատում եյին նրան:

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԹԻ ԿՌԻՎԸ ՄՍՐԱ ՄԵԼԻՔԻ ՀԵՏ

Անթիվ, անհամար զորքեր հավաքեց,
յեկավ Սասմա դաշտ՝ բանակը զարկեց
ու ծանր նստեց Մ'ըսրա Թագավոր։
Ենքան ահագին բաղմությունն են որ
Բաթմանա ջրին յեկավ ու չոքեց։
ով յեկավ, խմեց, գետը ցամաքեց,
Սասմա քաղաքում մնացին ծարավ։
Ձենով Ոհանին զարմանքը տարավ։
Փուքքը ուան առավ, սարը բարձրացավ,
սարը բարձրացավ, տեսավ, ի՛նչ տեսավ—
Հերմակ վրանից դաշտը ճերմակել,
ասես՝ են ղևչեր ձմեռը յեկել,
ապխտակ ձյունով պատել եր Սասուն։

Ղեզին ջուր կարեց, կապ ընկավ ղեզուն.
Հարա՛յ կանչելով փախավ, տուն ընկավ.
— Վա՛յ, փախե՛ք, յեկավ... հա՛յ հարա՛յ, յեկավ...
— Ի՞նչը, հորեղբա՛յր, ի՞նչը, ի՞նչն եկավ.
— Ցալն ու կրակը Դավթի պինչն եկավ.
Մ'ըսրա Թագավոր յելել ե, յեկել,
յեկել մեր դաշտին բանակ ե զարկել.
Թիվ կա ասողներին, թիվ չկա զորքին...
Վա՛յ մեր արևին, վա՛յ մեր աշխարհքին...
Ձեկ վոսկի տանենք, աղջիկներ տանենք,
չոքենք առաջին, պաղատանք անենք,
գուցե թե գըթա,
մեզ սըրի չը տա...
— Դու կա՛ց, հորյեղբա՛յր, դու դարպ մի՛ անի,
գնա՛ քո ոդում դու հանդիստ քնի.
Հիմի յես կելնեմ, Սասմա դաշտ կերթամ,
Մ'ըսրա Մելիքին պատասխան կտամ։

Հագավ Դավիթ զենքն ու զրահ,
կապեց գոտին, Թուր–Կայծակին,
խաչն ել իր հաղթ բազկի վրա,
յելավ, հեծավ Առյուծ հոր ձին։
Հոր ձին հեծավ ու մտրակեց,
սարի գլխից եսպես կանչեց.
— Ով քնած եք՝ արթուն կացե՛ք,
ով արթուն եք՝ յելե՛ք, կեցե՛ք,
ով կեցել եք՝ զենք կապեցե՛ք,
զենք եք կապել՝ ձի թամբեցե՛ք,
ձի յեք թամբել՝ յելե՛ք, հեծե՛ք.
Հետո չասեք՝ թե մենք քնած,
Դավիթ գող–գող յեկավ, գնաց...
Եսպես կանչեց, ատպանդակեց,
ու, ինչ ամպից կայծակ զարկի,
Մ'ըսրա զորքի մեջտեղ զարկեց,
Ջարդեց, փշրեց մինչև կեսոր.
կեսոր արյունն ելավ հեղեղ,

քչեց, տարավ հաղարավոր
մարդ ու զինակ՝ վաղչ մխատեղ։

Կար զորքի մեջ մի ալևոր,
աչխարհք տեսած ու բանագետ.
—Տղե՛րք, ասավ, ճամբա տվեք՝
գնամ, խոսեմ յես Դավթի հետ։
Գնաց, կանգնեց Դավթի առաջ,
եսպես խոսեց են ծերունին.
—Դալար կենա՛ կուռըդ, ո՛վ քաջ,
սուրըդ կտրուկ մինչտ քո ձեռին։
Մի ծերունուս խոսքին մըտի՛կ,
տե՛ս քո խելքը ի՞նչ է կտրում։
Ի՞նչ են արել քեզ ես մարդիկ,
հե՞ր ես սրբանց դու կոտորում։
Ամեն մինը մի մոր վորդի,
ամեն մինը մի տան ճրագ,
վորդի ու կին թողել ենաեղ՝
աչքը ճամփին, խեղճ ու կրակ։
Թագավորը գորով-թրով
հավաքել ե, եստեղ բերել.
խեղճ մարդիկ ենք՝ պակաս որով,
մենք քեզ վնաս ի՞նչ ենք արել։
Թագավորն ե քո թշնամին,
կռիվ ունես՝ իր հետ արա՛,
հե՞ր ես քաշում Թուր-Կայծակին
ես անճարակ խալխի վրա։
— Լավ ես ասում դու, ծերունի՛,—
ասավ Դավիթն ալեվորին,—
բայց թագավորն ո՞ւր ե հիմի,
վոր սև կապեմ նրա սրին։
—Մեծ վրանում քնած ե նա,
ե՛ն, վոր մյոկից ծուխը կելնի.
են ծուխն ել հո ծուխ չի, վոր կա՛,
զոլորչին ե իր բերանի։
Ասին, դեպի մեծ վրանը

ատյանդակեց Դավիթն իր ձին,
քչեց, գնաց ու դռանը
դռաց կանգնած արաբներին։
— Ո՞ւր ե, ասավ, ի՞նչ ե կորել,
դուրս կանչեցե՛ք՝ գա ասպարեզ,
թե մահ չունի՝ մահ եմ բերել,
գրոզ չունի՝ գրոզն եմ յես։

— Մելիքն, ասին, քուն ե մտել,
յոթը որով պետք ե քնի,
յերեք որն ե դեռ անցկացել,
չորս որ ել կա՝ քունը առնի։
— Ի՛նչ, բերել ե, աղքատ ու խեղճ
խալխին լցրել ծովն արյունի,
ինքը մտել վրանի մեջ՝
յոթը որով հանդիստ քնի՞...
Գնել-մնել չեմ հասկանում,
վե՛ր կացրեք չուտ՝ դուրս գա մեյդան,
ենպես նրան յես քնացնեմ,
վոր չզարթնի ել հավիտյան։

Զարթնեց Մելիք։ Գլուխն ահեղ
վեր բարձրացրեց մռընչալով,
ուղեց փչէ, վոր թռցնի
հսկա Դավթին մի փչելով։
Տեսավ՝ տեղից ժաժ չի գալի,
զրմանքն ու ահ պատեց հոգին։
Արնոտ աչքերն սպառնալի
հառեց խոժոռ Դավթի աչքին։
Նայեց թե չէ, ղդաց՝ իր մեջ
ոսկը զոմչի ուժ պակասեց։
Պառկած տեղից վրա նստեց
ու ժպտալով հետը խոսեց.
— Բարո՛վ, Դավի՛թ, հոգնած ես դեռ,
տեղան նստենք, խոսենք կարգին,
հետո գարձյալ կռիվ կանենք,
յեթե կռիվ կուզես կրկին...
— Չե՛, չեմ նսեմ յես քո հացին,
գո՛ւ, տմարդի՛, վախկոտ ու նենգ,
չո՛ւտ, զենքդ ա՛ռ, հեծի՛ քո ձին,
գո՛ւրս յեկ մեյդան՝ կռիվ անենք։
— Կռիվ անենք,—ասավ Մելիք,—
իմն ե՛մխյն զարկն առաջին։
— Քոնն ե, զարկի՛,—կանչեց Դավիթ,—
դնաց, կեցավ դաշտի միջին։
Ցելավ, կանգնեց Մըսրա Մելիք,
իր գուրզն առավ, հեծավ իր ձին,
քշեց, դնաց Դիաբլենքեր
ու ենտեղից յեկավ կրկին։
Ցերեք հաղար լիդր եր քաշում
հսկայական նր միռունդը,
յեկավ, զարկեց, կոթավ փռշում
ու յերերաց յերկրի դունդը։
Ցերկիր քանդվեց, կամ ժաժք յեղավ՝
ասին մարդիկ շատ աչխարհքում։
— Չե՛, չե՛, ասին, աբնի ծաբավ
հսկաներն են իրար զարհում։

— Մեռավ Դավիթ ես մի զարկից,—
ասավ Մելիք իրեն զորքին։
— կենդանի՝ յեմ, ամպի տակից
պոռաց Դավիթ Մըսրա Մելքին։
— Հայ-հա՛յ, մռոիկ տեղից յեկա,
տես՝ վո՛րտեղից հիմի կդամ։—
Ու վեր կացավ, կանգնեց հսկան,
իր ձին հեծավ յերկրորդ անգամ։
Ցերկրորդ անգամ քշեց Հալաբ
ու բաց թողեց ձին Հալաբից.
բուք վեր կացավ, տեղ ու տարափ,
արաբ աչխարհ դողաց թափից։
Ցեկավ, զարկեց. զարկի ձենից
մռոիկ մարդիկ վողջ խլացան։
— Գնա՛ց Դավիթ Սասմա տանից,—
դուժեց պոռաց Մըսրա արքան։
— կենդանի՛ յեմ,—կանչեց Դավիթ,
մին ել արի՛—հերքին ինձ հասավ։
—Հայ-հա՛յ, մռոիկ տեղից յեկա,—
կանչեց Մելիք ու վեր կացավ։

Ցերրորդ անգամ հեծավ իր ձին,
գնաց մինչև Հոդը Մըսրա
ու ենտեղից, գուրզը ձեռին,
քշեց, յեկավ Դավթի վրա։
Ցեկավ, զարկեց բոլոր ուժով,
ծանր զարկով հսկայական.
փոշին յելավ Սասմա գաշտից,
բռնեց յերեան արեգական։
Ցերեք գիշեր ու յերեք որ
փոշին կանգնեց ամպի նման,
յերեք գիշեր ու յերեք որ
բոթը տվին Դավթի մահվան։
Ցերբ վոր անցավ յերեք որը,
են ամպի պես կանգնած փոշում

Կանդնեց Դավիթ՝ ինչպես սարը,
Գրգռուռ սարը մեզ մշուշում:

— Մելի՛ք, ասավ, ո՞ւմն է հերթը:
Սարսափ կալավ գոռ Մելիքին,
մահվան դողը ընկավ սիրտը
ու տապ արավ գոռող հոգին:
Դնաց, խորունկ մի հոր փորեց,
իջավ, մտավ վիհն են խավար,
վրեն քաշեց քառասուն կաշի
ու քառասուն ջաղացի քար:
Մռնչալով յելավ տեղից
են Սոյուծի առյուծ վորդին,
իր ձին հեծավ ու փոթորկեց,
խաղաց, չողաց Թուր-Կայծակին:
Ասաղ վադեց մազերն արձակ՝
Մելքի պառավ մայրը ջադու.
— Դավի՛թ, մազըս ա՛ռ վոսկի տակ,
եդ մի զարկը ինձ բաշխի դու:
Ցերկրորդ անգամ Թուրը քաշեց.
ես անգամ ել յեկավ քուչը.
— Դավի՛թ, յեթե կուզես, կանչեց,
իմ սրտին զա՛րկ յերկրորդ Թուրը...
Վերջին զարկի ժամը հասավ,
յելավ Դավիթ յերրորդ անգամ.
—ես մի զարկն ու ասուածծ, ասավ,
ել մարդ չդա՛, պետք ե վոր սամ:
Ասավ, յելավ ու փոթորկեց,
Թռավ, ցոլաց Դավթի հուր ձին,
ձին փոթորկեց, փայլատակեց,
ու ցած իջավ Թուր-Կայծակին:
Անցավ քառասուն դոմչի կաշին,
անցավ քառասուն քարերը ցած,
մինչև կտրեց ժանտ հրեշին,
յոթը գագ ել դինը դնաց:

— Ղենդաճի յեմ, մին ել արի՛,—
պոռաց Մելիք հորի տակից:
Դավիթ լսեց, շատ զարմացավ
իրեն զարկից, Թուր-Կայծակից...

— Մելի՛ք, ասավ, Թա՛փ տուր մի քեղ:
Ու Թափ տավ Մելիքն իրեն,
մինչև յեղավ ճիշտ յերկու կես,
մեկն ընկավ դես ու մյուսը դեն:

Ես վոր տեսավ Մըսրա բանակ,
Ջուր կտրվեց ախ ու վախից:
Դավիթ կանչեց.—մի՛ վախենաք,
ահանչ արե՛ք հալա դեռ ինձ:
Դուք ռանչպար մարդիկ, ասավ.
գուրկ ու խավար, քաղցած ու մերկ,
Հազար ու մի կրակ ու ցավ,
Հազար ու մի հոգսեր ունեք:
Ի՞նչ եք առել նետ ու աղեղ,
յեկել Թափել ոտար դաշտեր.
չե՞ վոր մենք ել ունենք տուն-տեղ,
մենք ել ունենք մանուկ ու ծեր...

Զանձրացե՞լ եք խաղալ ու հաչել
հողագործի որ ու կյանքից,
թե՞ զվել եք ձեր հանգ ու գաչու,
ձեր հունձ ու փունջ, վար ու ցանքից...
Դարձե՛ք յեկած ճանապարհով
ձեր հայրենի հողը Մըսրա.
բայց թե մին էլ դենք ու զորով
վեր եք կացել դուք մեզ վրա,
հորում լինեն՝ քառասուն գազ խոր,
թե ջաղացի քարե տակին,
կելնենն ձեր դեմ, ինչպես այսոր,
Սասմա Դավիթ, Թուր-կայծակին:

ԳՈՒՔԱՆԻ ՑԵՐԳԸ

Սրի՛, գուբա՛ն, վարի՛, գուբա՛ն,
որն եկել ե՝ ճաչ գառել,
առը չուռ տո՛ւր խուխիդ գուբրան,
որհնյալ ե աստված, հորովե՛լ:

Գաչի՛ր, յեղը, ուսիդ մատաղ,
քաչի՛ր՝ քաչենք, վար անենք.
ճիպտին արա՛, քչի՛ր, հոտաղ,—
մեր սև որին ճար արնենք:

Պարտքատերը զանդատ գնաց,
քյոխվեն կըզա, կըծեծի,
տերտերն որհնեց, անվարձ մընաց
կըպարկանա, կանիծի:

Են որն յեկան, թովչի արին,
հարկ են ուզում տերտերյան.
ի՞նչ տամ կոռին ու բեդյարին...
վարի՛, վարի՛, իմ գուբան:

Զեռս պակաս, ուժըս հատած,
հազար ու մի ցավի տեր,
ինձ են նայում մերկ ու սոված՝
մի տուն լիքը մանուկներ:

Սրի՛, գուբան, վարի՛, գուբան,
որն եկել ե՝ ճաչ գառել,
առը չուռ տո՛ւր, խուխիդ գուբան,
որհնյալ ե աստված, հորովե՛լ:

---

1. Ի՞նչ ե քյոխվա, ինչ ե «գոռ ու բեգլար»:

2. Հին կարգերի մեջ ո՞վքեր եյին տանջում աղքատ գյուղացուն, ինչ պատկերներով ե նկարագրում բանաստեղծը հքավոր գյուղացուն:

ԳԻՔՈՐԸ

I

Գյուղացի Համբոյի տունը կռիվ եր ընկել:

Համբոն ուզում եր իր տասներկու տարեկան Գիքորին տանի քաղաք՝ մի գործի տա, վոր մարդ դառնա, աշխատանք անի: Կինը չեր համաձայնում:

— Ջեմ ուզում, իմ մատաղ յերեխեն են կրակ աշխարհը մի՛ դցի, չեմ ուզում,—

Բայց Համբոն չլսեց:

Մի խաղաղ, գեղեցիկ առավոտ եր, մի տխուր առավոտ: Տանեցիք ու հարևանները յեկան մինչև գյուղի ծայրը, Գիքորի թչերը պաչեցին ու ճամբա դրին:

Փուչրը՝ Զանին, լաց եր լինում, իսկ փոքրիկ Գալոն մոր գրկին ձայն եր տալիս՝ «Գիքո՛ր»:

Գիքորը չուռ-չուռ յետ եր նայում: Տեսնում եր՝ դեռ գյուղի ծայրին կանդնած են նրանք, ու մայրը գոգնոցով սրբում ե աչքերը: Դարձյալ հոր կողքով վազում կամ առաջն եր ընկնում: Մին էլ յետ նայեց, գյուղը ծածկվել եր բլուրի յետև:

Այնուհետև Գիքորը չետ եր ընկնում։

—Աբի ահա՛, Գիքոր Ջան, արի ահա՛, հասանք Հա՛,— վորդուն կանչելով դնում եր Համբոն, չալակին մի խուրջին, մեջը միքանի հաց ու պանիր ու մի յերկու դատա ծխախոտ։

Իրիկնապահին, յերբ անց ելին կենում սարերը, մի անգամ ել յերևաց գյուղը հեռո՛ւ մչուչում։

—Ա՛յ, ապի, մեր տունն են ե՛ հա,— յուց տվավ Գիքորը՝ մատը մեկնելով դեպի գյուղը, թեև տունը իսկի չեր յերևում, ու անցան։

II

Առաջին իրիկունը հյուր ընկան մի գյուղում։ Տանուտերը Համբոյի հին ծանոթն եր։

Դեղին սամալարը թռչում եր տախտի ծերին։ Մի չահել աղջիկ չրխկացնելով բաժակները լվանում ու թեյ եր չինում։ Նա մի կարմիր սիրուն չոր ուներ հագին։ Գիքորն ենաեղ մտքումը դրավ, վոր յերբ քաղաքում փող աչխատի, իրենց Ջաննի համար մի են տեսակ չոր ուղարկի։

Մյուս որը քաղաք մտան, իչան բազար։

— Բիձա՛, եդ յերեխեն ծառա չես տալո՞ւ,—խանութի ներսից հարցրեց մի վաճառական։

—Հրամանք ես,—ասավ Համբոն ու Գիքորին են ղոշմը հրեց։

— Բեր, ինձ տո՛ւր, չես կըռնեմ,—առաջարկեց վաճառականը։

Ներսն ասում եչին բազազ Աբռեմ։

— Հինգ տարի դեռ փող չեմ տա,—ասավ բազազը

պայման կապելիս։—Թե դրուստ կուզես, դես դու պետք ե տաս, վոր քո վորին բան ե սովորելու։ Ամեր իսկի բան չգիտի...

— Վո՞րտեղից գիտենա, խազեյի՛ն Ջան,—պատասխանեց Համբոն.—վոր գիտենար, ել ո՞ւր կբերեյի։ Ցես ել բերել եմ, վոր բան սովորի...

— Կսովորի, ամեն բան կսովորի։

— Իմ դարդն են ե, աղա՛ Ջան, վոր մարդ դառնա, չեզու սովորի, գրել կարդալ սովորի, նստել-վեր կենալ սովորի, մարդ ճանաչի, վոր աչխարքում ինձ նման խեղճ ու դուրկ չմնա...

Բազազը Համբոյին միամտացրեց ու դուրս դնաց՝ բարձր-բարձր հրամայելով.—Ջայ բերի՛ք, հաց բերի՛ք սրանց համար...

III

Ու հայր ու վորդի նստած եյին լաղաղ Աբաեմի խոհանոցում:

— Դե հիմի դո՛ւ դիտես, Գիքոր Ջան, տեսնեմ՝ ինչ տեսակ տղա յես դուրս գալիս... Հենց պետք է անես, վո՛ր... յես ինչ դիտեմ... ո՛վ տեր աստված...— մռնչաց Համբոն ու չիբուխը լցրեց:

— Վախտ ու անվախտ դես-դեն չընկնես, ձեռքդ ընկած փողը քոռ ու փուչ չանես. հազար ու մի պահաություն ունենք: Քեզ էլ լավ պահի, դիշերները բաց չլինես, մրսես վոչ...

— Հացի կտորտանքն ու քարշուն կտան, կերակրի թերմացքը կտան, չատ անգամ էլ իրենք կուտեն, քեզ տալ չեն, բան չկա, կարգը եղ ե... Որեր են, կմթնեն, անց կկենան.

Շարունակում եր հայրն իր խրատը, բայց Գիքորը հորը թինկը տված՝ քնել եր արդեն:

Են յերկու որը նա այնքան բան եր տեսել, ես ու են կողմը նայել, վոր հոգնել եր բոլորովին:

Մրգով լիքը խանութները, դեզերի նման դարսած դուն-դուն չթերը, տեսակ-տեսակ խաղալիքները, ուսումնարան գնացող կամ դարձող յերեխաների խմբերը, իրար յետևից սլացող կառքերը, ուղտերի չարքերը, կանաչի բարձած ավանակները, թաթախները դլխներին կինտոները... Ես ամենի գոռոցն ու գնդոցը, ադմուկն ու ադաղակը իրար խառնված՝ դժվժում եր նրա դլխում: Ցեվ նա հոգնել եր ու հորը թինկը տված քնել:

IV

Խանութում Գիքորին ապրանք կտային մուշտարիների հետ տանելու, չիթ կծալերը, խանութը կսրբեր, իսկ պարապ ժամանակը հաճախորդ կկանչեր:

Ցեվ ահա Գիքորը հայ է տանում խանութը: կերակրամանը ձեռքին, մաշված ու դժդուն՝ մեծ-մեծ վոտնամաններ թոչ տալով, անց է կենում կամուրջով:

Նայեց ներքև: Քարվանսարաների բարձր պատերին դարկելով՝ ծառս եր լինում Կուռը, վոլորվում, պտտվում ու ճնշվելով խեղդվում, խուլ թշշում կամուրջի տակին:

Ափից մոտիկ պտտվում եր մի կանաչ նավակ: Ցերկու հոգի կային նրա մեջ. մինը ուռկան եր գցում, մյուսը՝ նավակը կառավարում:

«Ա՛յ, հիմի կհանի»— ասավ Գիքորն ու կանգնած նայում եր ձկներին: Ուռկանը դատարկ դուրս յեկավ:

— Ես մինն իմ բախտից,—ասավ Գիքորը ուռկանը գցելիս:

Գիքորի բախտը դատարկ դուրս յեկավ:

—Ես մինն էլ մեր Ջաննի բախտից:

Ես էլ դատարկ դուրս յեկավ:

— Ես մինն էլ Գալոյի բախտից:

Գալոն էլ եր անբախտ:

— Ես մինն էլ բաս...

Բայց եղ ժամանակ մոտիկ քարվանսարայի դռանն աղմուկ բարձրացավ: Մի պարսիկ կապիկ եր պար ածում յերգելով:

Ժողովուրդը հավաքվել եր գլխին ու վազում եյին չորս կողմից: Գիքորն էլ վազեց: Աշխատեց կանգնած ժողովրդի արանքը մտնել, առաջ անցնել, չկարողացավ: Վիզը ձգեց, պճեղների վրա կանգնեց ու ճղնում եր անպատճառ տեսնի, թե ինչ է կատարվում մեջտեղը:

— Ինչ ես ներս խցկվում, տո լածբա՛խ, դնա քո բանին,—ասավ մի կինտո ու զարկեց Գիքորի գլխին:

Գիքորը հանկարծ սթափվեց ու վազեց դեպի խանութ:

V

Իրիկունը Գիքորը կուչ եր յեկել խոհանոցում: Թեև արտասուքը չեր ցամաքել նրա յերեսին, դեռ այրվում եյին խաղեյինի ապտակների տեղերը, յերբ

չվշմացնելով ներս մտավ Վասոն, բազուկի աշակերտը։ Գիքորին նկատելով՝ նա իսկույն կանգ առավ ու մատները դեմքին լրջություն տալով՝ սպառնալի հարցրեց.

— Կլուբո՞ն ուշացար, տո՛, արջի քոթո՛թ, թե՞ դուբերնատորի մոտ վոտազ գործ ունեյիր...

Գիքորը լուռ եր։

— Ձե՞ս լմանում, տո՛, վո՞րտեղ եյիր, ե՛, վոր եսոր ինձ քաղցած սպանեցիր։ Վոր մեռնեյի, հեռո՞...

Եսպես խոսելով կամաց-կամաց մոտեցավ, միքիչ կանդնեց ու հանկարծ զարկեց Գիքորի ղլխին։ Գիքորը յերկու ձեռքով դլուխը պաշտպանեց ու սեղմեց պատին։ Վասոն պատրաստվում եր մի ուրիչ ձևի հարված ել հասցնելու, բայց դուրսը բարձրացավ խազեյինի ձայնը։ Գալիս եր։

— Ահա տես հիմի՝ քեզ լո՛նչ ե անում,—սպառնաց Վասոն։

«Հիմի ինձ կսպանեն»,—անցավ Գիքորի մտքովը, ու խեղճի հոգին տապ արավ։

Խազեյինն արդեն բավական ծեծել եր խանութում, այժմ մեկայն հրամայեց հաց չտան, վոր լմաննա, թե ինչ բան և քաղցածությունը։

Գիքորը կծկվեց վերմակի մեջ, գլուխը կոխեց տակը, տապ արավ։

Վասոն հաց եր ուտում։ Գիքորը վերմակի տակից յերբեմն ղռուչ ծիկրակում, թագուն նայում եր նրան, կրկին աչքերը ծածկում։ Նա են որը հաց չեր դրել բերանը, ծեծվել ու լաց եր յեղել, այժմ ել քաղցած պառկել ու քունը չեր տանում։

— Հը՛, վո՞նց ե, տոլած քունդ չի՞ տանում, հա՛, եղպես...— նկատեց չարաճճի Վասոն ու մի կտոր հաց ու պանիր տվավ Գիքորին։—Դե ա՛ռ, տեղի տակին թագուն կե՛ր, խազեյինը չիմանա։

Գիքորը հափշտակեց հաց ու պանիրը, գլուխը կոխեց տեղի տակը, թագուն ուտում եր ու մտածում։ Մտածում եր իրենց տան վրա, են որերի վրա, յերբ ազատ խաղում եր հանդերում ու լիասիրտ հաց ուտում։

մտածում եր են յերեկոների վրա, յերբ հերն ու մերը կռվում եյին իրեն քաղաք բերելու համար...և մայրը լաց եր լինում, չեր ուզում...

— Ախ, նանի՛ ջան, ինչ լավ եր սիրտդ իմացել,— հառաչում եր Գիքորը տեղի տակին ու հացն ու պանիրն ուտում ականջը սրած, թե խազեյինը հո չի գալու։

Իսկ առավոտը կանդնած եր խանութի դռանն ու կանչում եր.

— Ե՛ստի համեցեք, ե՛ստի համեցեք...

VI

Ձմեռը յեկավ։ Սառն աղմուկով ճյունախառն բուքը թռչում և քաղաքի վրայով։ Փողոցներում սուրում, սուլում, հոսան և անում։ Վզզալով մտնում և անկյուններըը, աղբատի ու տկլորի յե ման գալիս, պանդուխտ և անտեր յերեխա յե վորոնում։

Ահա գտավ Գիքորին։

Մի բարակ բլուզ հագին, խանութի դռան կանդնած ձայն եր տալիս նա.

— Ե՛ստի համեցեք, ե՛ստի համեցեք...

Հրե՛աս—չարախինդ սուլելով ցուրտը, աներևույթ թրի նման զարկեց անցավ վոսկրները, ու Գիքորը դողաց։

Առանց են ել նա շատ եր մաշված, եդքանն ել հերիք եր նրան։ Ու անկողին ընկավ։

Հիվանդ պառկած կր Գիքորը հիվանդանոցում։ Բազալ Արտեմի մայրը, պառավ դեդին որը-մի քանի անգամ ներս եր մտնում իրեն-իրեն խոսելով.

— Ի՞նչ կուզես, վորդի Գիքո՛ր։

— Ջո՛ւր...

Դեդին ջուր եր տալիս, հիվանդը դողդողուն ձեռքերով բռնում, խմում եր ու կրկին ուզում։

— Ես սիրտս հովացնում չի, դեդի՛... յես մեր աղբյուրի սառը ջրիցն եմ ուզում... յես մեր տունն եմ ջնում.. յես իմ նանին եմ ուզում։

Բազալ Արտեմը ցավի մեջ եր ընկել. նա դես-դեն

ընկավ, նրանց կողմերից մարդ դուրս, ասպարեց, վոր Համբոն դա, իսկ Գիքորին տարան քաղաքային հիվանդանոց:

Եսաեղ չաո հիվանդները կային չարքերով պառկած: Տխուր տնքում էին ու իրար հայտում անդորր հայացքներով:

Գիքորին էլ պառկացրին նրանց չարքում:

Եսաե՛ղ գտավ նրան հայրը:

— Եղ ի՞նչ ես յեղել, Գիքո՛ր ջան,—մղկտալով վրա ընկավ Համբոն:

Գիքորը տաքության մեջ չիմացավ հոր գալը:



— Գիքո՛ր ջան, բա յեկել եմ ե՞, Գիքո՛ր ջան... յես քո ապին եմ ե՛...

Հիվանդը վազինչ չհասկացավ: Նա զառանցում էր ու զառացանքների մեջ կանչում էր.—Միկի՛չ, Ջանի՛ր, ապի՛ր, նանի՛...

Եսաեղ էա, Գիքո՛ր ջան, նանը զարիել ե, վոր քեզ տանեմ մեր տունը... գալիս չե՞ս... Միկիչն ու Ջանին հրեն կտերը կանդնած քեզ ճամբա յեն պահում: Ի՞նչ ես ասում, դե խոսա ե՛, Գիքո՛ր ջան:

— Ե՛ստի համեցեք, ե՛ստի համեցեք.— բացականչեց հիվանդը, զանազան անկապ, կցկտուր խոսքեր ասաց ու ծրծաղում էր տաքության մեջ:

VII

Մի յերկու որից հետո Համբոն գնում էր իրենց գյուղը:

Նա թողել էր Գիքորին ու գնում էր: Կռան տակին տանում էր նրա չորերը, վոր մայրը լաց լինի վրան: Շորերի գրպաններում մի բուռը վայլուն հոճակներ, նախշուն թղթեր, չքի կտորներ ու մի քանի քորոց դտավ: Են ել յերևի քրոջ՝ Ջաննի համար էր հավաքել ու պահել:

Գնում էր Համբոն ու մտածում: Շատ ժամանակ չէր անցել, վոր եղ մի ևնուշն ճամփով քաղաք յեկավ էր Գիքորի հետ: Ահա եսաեղ էր, վոր նա ասավ.—Ապի՛, վոտներս ցավում են...

Ճեվ ահա այն ծառը, վորի տակ նստեցին հանգստանալու...

Ահա ևնաեղ էր, վոր ասավ.—Ապի՛, ծարավ եմ...

Ահա են աղբյուրն ել, վոր ջուր խմեցին...

Մյուս որը, յերբ Համբոն անցնում էր լեռները, հնավում յերևաց իրենց գյուղը: Գյուղից դուրս կանգնած սպասում էին նանը, Ջանին, Միկիչը, Մոսին, իսկ փոքրիկ Գալոն մոր գրկից կանչում էր.

— Ապի՛, ապի՛, հե՛, Գիքո՛ր...

---

1. Ինչու համար գյուղացի Համբոն իր մորդի Գիքորին քաղաք տարավ:

2. Ի՞նչ պայմաններով վարձեց վաճառականը Գիքորին:

3. Ի՞նչ ծառայություն էր անում Գիքորը, և ինչպես էին վարվում նրա հետ բազում Արտեմի տանը և խանութում:

ՔԵՌԻ ԳՈԳՈՐԸ

I

Մի առավոտ Սերոբենց դուռը բացվեց և ներս մտավ քեռի Գոգորը՝ բարձրահասակ ու լայնաթիկունք մի ծերուկ։ Տանտերն իր թուլացած մեջքը սյունին դեմ տված ու ձեռները քներակներին սեղմած՝ դառը մըտքերի ծովն էր ընկղմել. իսկ տանտիկինը հիվանդ էր ու անկողնու մեջ պառկած։

— Բարի լույս, քվոր վորդի՛, ո՛ֆ, ո՛ֆ,—ասաց բարի ծերունին, պատկառելի հանդարտությամբ առաջ գալով ու համբուրվելիս սև հատիկները մեղմությամբ համբելով։

— Աստծու բարին, քեռի՛ Գոգոր,— մի տեսակ դժկամությամբ պատասխանեց Սերոբը, տեղից կանգնելով ու թախծալից աչքերը նորեկի վրա ուղղելով.— համեցիր նստի՛ր։

Քեռի Գոգորն՝ առանց չտապելու՝ տեղավորվեց սյունի առջև փռած հնամաշ թաղիքի վրա ու բռնոթամանը դրպանից հանելով՝ ասաց.

— Ի՞նչ կա, քվոր վորդի՛, ինչո՞ւ յես եղպես տըխուր։

— Ե՛հ, ի՞նչ ասեմ, քեռի՛ Գոգոր, աստված զըլխիս քար գցեց—տունս քանդվեց. ձիս սատկեց... խեղդված ձայնով պատասխանեց Սերոբն ու ցուցամատով սրբեց այտի վրայով ցած գլորվող արտասուքի կաթիլը։

— Վոչինչ, վնաս չունի, վորդի, դա մի թևթև անախորժություն է, դիմացի՛ր, սիրտդ լայն պահիր. դու դեռ չահել ես ու առողջ, մի՛ հուսահատվիր։

— Ասում ես՝ մի՛ հուսահատվիր, քեռի՛ Գոգոր, ախր ի՞նչպես չհուսահատվեմ։ Ջի՛ վոր մեր ամբողջ ընտանիքն են ձիու յերեսին եր մտիկ անում ու նրա աչքառանքովն ապրում։

— Հասկանում եմ, Սերոբ ջան, յես հասկանում եմ քո նեղ դրությունը, տեսնում եմ ցավդ մեծությու-

ման չի անիլ։ Ես կրակված ջանը քեզ համար կենդանի որինակ,—ասաց քեռի Գոգորը, ալ ձեռով ամուր խփելով իր զարդուտ կրծքի չոր վոսկորներին։

— Հապա ի՞նչ անեմ, քեռի՛ Գոգոր, ասա՛, սովորեցրո՛ւ։ Դու մեծ մարդ ես, դու փորձված ես, գլխովդ շատ չար ու բարի յես անցել։ Մի խելք դի՛ր իմ գլուխըս, վոտդ պաչեմ, մի ճամբա ցույց տուր այս սարսափելի դրությունից դուրս գալու, թե չե չուտով յես կխեղդվեմ մտքերի ծովում, յես կընդվեմ, կդժվեմ կակիծի ձեռից...։

— Կդժվես, այո՛, կդժվես, վորդի՛։ Ա՛խ, ձախորդությունն ամեն բան կանի. ոֆ, ո՛ֆ,— վերջացրեց ծերունին ու խոր հառաչելով, մի պաղունց վերցրեց բռնոթու փոչուց։

— Քեռի՛ Գոգոր, աստված սիրես, ինձ ազատիր, վիշտն ուտում ե սիրտս ու մաշում հոգիս. ասա՝ ի՞նչպես ազատվեմ յես նրա ձեռից, ո՞ւր վախչեմ, ի՞նչ անեմ։

— Ի՞նչ անես. ա՛յ ասեմ, վո՛րդիս. տեղիցդ վե՛ր կաց, բահդ դի՛ր ուսիդ ու ինձ հետ արի՛,— ամեն մի նախապատասխանության վրա առանձին չեչտելով արտասանեց քեռի Գոգորն ու պաղունցում մնացած բռնոթու կիսատը քաշելով՝ բեխերը սրբեց, մորուքը չփեց ու տեղից կանգնեց։

— Արի՛, վորդի՛—չարունակեց նա դեպի դուռը դիմելով,—արի՛ գնանք աշխատելու։ Որհնված աշխատանքը կվտարտի հոգուդ թախիծն ու հալալ քրտինքը կվանա սրտիդ դառնությունը։

Սերոբը բահն ուսեց, լուռ ու հնազանդ հետևեց քեռի Գոգորին։

II

Գարնանային առավոտ եր։ Բերկար ժամանակ գնում եյին նրանք կոկոնաղարդ ծառերով հովանավորված այդիների քարքարոտ ու ծուռտիկ ճանապարհնե-

բով, մինչև վոր հասան Սերոբենց Հողաբաժնին: Այդ Հողի գլխին բարի ծերունին կանգ առավ, նստեց նրա-բանձիլ դալար կանաչի վրա, կոլացած մեջքը բարդի ծառին հենեց, մի զույգ ծոքալի «ոֆ» արձակեց ու բունթամանը գրպանից հանեց:

— Նսա՛ր, Սերո՛բ Ջան, նսա՛ր՝ մի քիչ հանգըստանանք,—դիմեց նա կողքին կանգնած յերիտասարդին:

Վերջինս ուսի սուր բահը վայրկյան Հողումը տընկեց ու քեռի Գոգորի վոտների մոտ նստեց:

— Ես Հողը քոնն ե կարծեմ, քյո՛ր վորդի:

— Իմն ե, քեռի՛ Ջան, լուսահոգի Թաթոս ամուն ընծայածն ե:

— Աստված Հոգին լուսավորի. քանի՞ տարի կլինի՝ ինչ քո ձեռքիդ ե:

— Կլինի վեց տարի:

— Հապա ինչո՞ւ յես ծուլություն արել, ինչո՞ւ եսքան ժամանակ այդի չես դցել, տեսնո՞ւմ ես՝ չորս կողմդ բոլորը տնկած ե:

— Ե՛, քեռի՛ Գոգոր, ի՞նչ ես կորցրել ու ինչի՞ յես հան գալիս: Այդի տնկե՛լ. լավ ես ասում, լա՛վ յերազ ե, յեթե բարին կատարի: Բայց ո՞վ ե տվել մեղավորին արքայություն: Եսառեղ իմ մեջքս կոտրվել, իմ սիրտս սևացել ե, դու յել ասում ես՝ այդի տնկեյիր. կասես Երամենց տղերանց պես վեց ամսվա տխպեր ունեմ յեռևիցս կպնած:

— Սերո՛բ Ջան, դիտե՞ս ինչ կա,—ասաց Գոգորը պողնոցում մնացած բունթիս կիսատը քաշելով...—ձիդ սատկեց, վնաս չունի, մենա՛կ աչխատիր: Դու դեռ յերիտասարդ ես և ուժեղ, ու քեզ պես առույգ տղամարդի համար դժվար բան չի մի փոքրիկ պերպատան կոտրելը: Առայժմ մի հատ լավ այդին այս Հողի վրա՝ բավական կլիներ քեզ համար: Ինչո՞ւ չես տնկում, ողնական չունի՞ս: Ա՛յ, յես կզատնամ քո մեծ յեղբայրը: Մի բան ասեմ, հանաք մի՛ համարիր. արի՛ հենց եսօր-

վանից սկսենք ես Հողը ձևել ու եկող ամսին անպատճառ մի տախտակ*) տնկենք:

Այդ խոսքերի հետ քեռի Գոգորը վեր կացավ տեղից, դդակը ծառի ճեղքին դրեց, չուխան հանեց, թաշկինակը գլուխը կապեց ու բահը վերցրեց:

Սերոբը մնացել եր չվարած, տեղումը նստած: Այնքան անսպասելի յեր այդ բանը նրա համար, վոր չեր կարողանում աչքերին հավատալ: Սոված Սերոբ ու սեփական այդի՝ ինչքա՜ն տարբեր բաներ, վո՛րքան իրարից հեռու հասկացողություններ են: Ցեվ այն ամենը, ինչ վոր այդ բոպեին կատարվում եր Սերոբի աչքի առջև, մի տեսակ հաճելի յերազի տպավորություն եր գործում:

Սուր բահը քեռի Գոգորի վարժ ձեռներում աչողակ բանում եր: Նոնավ Հողի սև կունձղերն իրար վրա դիզվելով, մի բարակ թումբ կազմեցին, վորի վրա կաթկաթում եր ժրաջան ծերուկի կնճռոտ ճակատից հոսող քրտինքը:

Ծեր անդամները չուտ են վաստակում: Առաջին թումբը կապելուց հետո ալևոր բանվորը բահը դեսին դցեց, կոչտացած ձեռով քրտինքը սրբեց ու բունթի քաշելու պատրաստություն տեսավ:

Սերոբն իր սլելացած աչքերի անթարթ հայացքն ուղղել եր նրա վրա և տեսողության բոլոր ուժը լարել, ուզենալով վորոշել՝ յերա՞զ է և իր տեսածը, թե՞ ճըշդիվո:

— Վե՛ր կաց, քյո՛ր վորդի,—քաղցրությամբ ասաց քեռի Գոգորը,—դժվարությունն անցավ, հիմքը դրվեց, ա՛չքդ լուս, ա՛յ, տեսնո՞ւմ ես— այդպես առաջին թումբն արդեն պատրաստ է:

Սերոբն սթափվեց: Վո՛չ, յերազ չեր այս բոլորը: Ցիշտ վոր առաջին թումբն արդեն պատրաստ եր. նրա զարմացած աչքերն այժմ չատ լավ եյին տեսնում այն

---

* Խաղողի այգում յեզած թմբերի ամեն մի չարքն առանձին՝ ասվում է տախտակ:

դալար խոտերի կանաչ մակերևույթից: Այո՛, այդու հիմքն արդեն դրված եր: Սերոբի սիրտը թնդաց ուրախությունից. հանկարծ նա զժի պես վեր թռավ նստած տեղից, անխոս վազեց դեպի ծերուկը, յերկու ձեռքով ամուր բռնեց նրա ձեռքն ու չդաձդաբար մոտեցրեց իր այրվող շրթունքներին: Նա ջերմ համբույր եր դրոշմում, նա լիզում եր այն հոգատար ձեռքը, վոր նրա բարօրության համբան եր ցույց տալիս:

Սերոբը ծերունու ձեռից առավ բահն ու մեծ յեռանդով չարունակեց նրա սկսած գործը:

---

1. Ինչ դեր ե կատարում աշխատանքը: Գարզեցե՛ք օրինակներով:

3. Ինչ պայմաններ են պետք, վոր աշխատանքն արդյունավետ լինի:

ՀԵՔԻԱԹԸ

Ըստ սովորության այդ յերեկո յել յերեխաները հավաքվել եյինք Մարգարի տանը և անհամբեր սպասում նրա խոստացած հեքիաթին:

Դուրսը ձյուն եր: Ցերկար ճնապնդի խաղից հետո մենք նստս վազեյինք այն ժամանակ, յերբ Մարգարն իր համեստ ընթրիքը վերջացնելով՝ թիկնել եր թախտին, ոջախի մոտ, ու քիթի տակ մրմռում եր մի հին յերգ:

Ոջախում ծուլ-ծուլ թչթչում եյին թաց փայտերը, լցնելով սենյակը ծխով:

Մարգարի կինը յերեխաների լվացքն եր անում, լաթերը փռելով բուխարու մոտ, իսկ մայրը ծալապատիկ նստած կրակի մոտ՝ դուրյա յեր գործում, ստեղ-ստեղ հորանջելով ու յերեսը խաչակնքելով: Ցերեխաներից փոքրերը քնած եյին, իսկ յերկու տղաները խաղում ե-

յին մեծ, բրդոտ կատվի հետ, վոր ուշադրության չդարձնելով նրանց վրա՝ հանդիստ մրտում եր:

Սմեն ինչ այնտեղ տրամադրում եր մի անդորը քնի: Միայն մենք եյինք, վոր պատրաստ եյինք յերկար ժամանակ նստել, մխայն թե Մարգարը հեքիաթներ պատմեր:

Սմբողջ դյուղում նրա նման հեքիաթ պատմող չկար:

***

Ցեվ Մարգարն սկսում է կարծես յերգելով, աչքերը գոցած, կույր աշուղի նման, սկսում է պատմել իր սիրած են մեծ հեքիաթը՝ հրեղեն Թռչունի և յերեք յղբայրների մասին: Իսկ մենք՝ չնչներս զսպած, ադահությամբ վորսում եյինք նրա ամեն մի խոսքը: Ու, չնայած դուրսը ձյուն-ձմեռ եր, մենք տեսնում եյինք մտքով մայիսյան դաշտեր ու ծաղիկներ:

... Ցոթը սարերի յետևում հրեղեն Թռչունն է ապրում իր վոսկե վանդակում: Նա արևի պես լույս է տալիս և ամբ դիպչում է նրա չողքը՝ սիրտը լցվում է քաջերի արյունով ու դառնում է անհաղթ:

Բայց նրա չուրջը հաստ, ամբակուռ պատեր են քաշած ու յերկաթե մեծ դռների մոտ սև, դաժան վիշապներ հսկում են դիշեր ցերեկ, վոր մարդիկ չտեսնեն ու չիմանան են հրեղեն լույսից:

Ցեվ ահա յերեք յեղբայրներ մեկ-մեկու յետևից գնում են այդ հրեղեն Թռչունը փնտռելու, բայց միայն փոքր յեղբայրն է գտնում ու տիրանում նրան՝ հաղթելով են ահեղահա վիշապներին: Սակայն ճամբին դավաճան յեղբայրները, վորոնց նա ազատել եր վիշապներից, խաբելով իջեցնում են նրան հորն ու թողնում մեջը. ապա առնելով նրա վաստակած հրեղեն Թռչունը՝ հետանում, գնում են...:

***

Հանկարծ դռան չեմքում չունը հայտց և վազեց դեպի փողոց՝ մխանալով ուրիշ չնչերին, վորոնք հարձակ-

լսվեց մի կնոջ ձայն.

— Մարգա՛ր, ա՛յ Մարգա՛ր...

— Քեզ են կանչում,—հայտնեց Մարգարի կինն անհագիստ, վախկոտ ձայնով:

Մարգարը կարծես քնից նոր արթնացած՝ աչքերը բացեց ու հոնքերը կնճռած ականջ դրեց, ապա մի կերպ հաղնելով տրեխներն ու գլխին դնելով վափախը, դուրս յեկավ վողոց: Դուռը բաց մնաց և դրսից մի անախորժ սառնություն յեկավ, ցնցեց մեզ:

Նա չուստով վերադարձավ ալյայլված դեմքով:

— Աղեն կանչել ա,—ասաց նա և ցրտից ու հուզմունքից սրբթսրբթալով՝ սկսեց ամրացնել իր տրեխները:

Նա գնաց, մենք ել նրա յետևից դուրս յեկանք տրխուր ու հուսահատ: Ջքացան մեր յերևակայությունից մայիսյան դաշտերը, ծաղիկները, մեզ կծկում եր ձմրան ցուրտը, իսկ մութ անկյուններից չարագուշակ փսփսուկը դաժան ապագի անունն եր տալիս, վոր մեր վատ հեքիաթը կարեց—կիսատ թողեց:

***

Բայց ինչո՞ւ այդ որվանից Մարգարը կարծես պատանձվեց, ու ել յերբեք մենք չլսեցինք նրա հեքիաթները: Յերկար ժամանակ մենք չեյինք հասկանում, բայց ահա մի որ, գարնան սկզբին մեր առաջ բացվեց տխուր գաղտնիքը:

Այդ որը յեկան յերկու աստիճանավոր՝ տոնուտերն ու նրա ոգնականի հետ. յեկան նայեցին Մարգարի տունը, հարց ու փորձ արին, ինչ վոր գրեցին:

— Ցեվել են տունը վեր գրելու,— լսում եյինք հարևաններից,— փոշ եր պարա աղին, ժամանակին չտվեց, այժմ տունը խլում են ձեռքից:

Մարգարը կանգնել եր գլխիկոր, անշարժ, քարացած դեմքով: Մեյան յերբ նրա ականջին հասավ իր յերեխաների ձայնը (նրանք կարծում եյին, թե յեկել են

հորը բերդ տանելու), մոտեցավ գլխավոր աստիճանավորին.

— Աղա՛, խնդրում եմ համբերեք...ամառը աչխատանք կանեմ, պարտքս կտամ...:

Բայց աստիճանավորը չէթողեց, վոր նա իր խոսքը վերջացնի.

— Գնա՛, քո պարտատերերին խնդրի՛ր, որենքը չի համբերում:

Նրանք դնացին:

Բայց դեռ յերկար լսվում եր Մարգարի մոր աղերսական լացը, նրա հուսահատ կոչը: Սակայն դուր եր նա ծնկները թակում, ձեռքերը բարձրացնում. Մարգարի տունը խլեցին, իսկ գարնան վերջերին նա հեռացավ մեր գյուղից:

Ահա թե ինչո՛ւ աղեն կանչեց նրան են մութը, ցուրտ գիշերը. ահա թե ինչո՛ւ կտրվեց հրեղեն թռչունի հեքիաթը և յերբոր յերդրյուր յեղբայրը մնաց մութ հորում:

***

Անցել են տարիներ:

Այն տեղը, ուր Մարգարի տունն եր, յերևում է փլատակների մի կույտ:

Միայն սևացած պատի մի բեկոր հիշեցնում է, վոր այնտեղից յերբեմն ծուխ եր յելնում: Ծաքանված և վաղուց նաև ջրհորը տան առաջ, իսկ նրա տեղը յերևում է հողի մեջ կիսով չափ թաղված մի քար:

Ցեվ ամառվա լուսինը ահռում է, անցնում՝ խորհրդավոր սավերներ ձգելով փլատակների վրա:

Ու ծղրիդներն անվերջ, անդադար կրկնում են յերգը տխուր՝

— Ա՛յսաե՛ղ... ա՛յսաե՛ղ... յերբեմն մարդիկ եյին ապրո՛ւմ... ապրո՛ւմ...:

Ու այս ժամերին թվում է՝ խաչանված ջրհորից ձայն է գալիս: Են հեքիաթի յերդրյուր յեղբայրն է, են ինքը Մարգարն է, վոր ճղնում է յելնել մութ հորից:

Իսկ չատ հեռվից, ուր ադատ հովերն են ապրում,

յոթը սարի յետևից թռչելով դալիս և չորրորդ յեղբայրը. նա սլանում և ամպերից վեր իր կարմիր նժույգով, դալիս և ազատելու Մարգարին իր խավար բանտից:

---

1. Այս դրվածքի վո՞ր մասն և իրական յեղելություն և վո՞ր մասն և հեքիաթ:

2. Ընդհատեցե՛ք իրական մասը: Ի՞նչպես և կապված հեքիաթը իրականության հետ: Բացատրեցե՛ք իմաստը:

ԱՐՏԸ

Անիից եյի վերադառնում և անցնում հայկական մի գյուղի միջով:

Գիշերը սաստիկ անձրև եր յեկել, այնքան սաստիկ, վոր շատ սլատեր ու խրճիթներ փլցրել եր:

Լուսը նոր եր բացվել: Խրճիթների յերդիկներից սկսել եյին ծխի սյուներները խիստ ծանրությամբ բարձրանալ և տարածվել տանիքների վրա:

Գյուղի վերջին խրճիթն եյի հասել, յերբ նրա դուռը ճռռաց, դռմի ներսում կովի բառաչը լսվեց, միքանի մանուկների ճիչեր ականջիս հասան, և առաջս դուրս յեկավ մի ալեզարդ ծերունի՝ բահը ուսին:

Մի վայրկյան ինձ նայեց, հետո պատերի տակով անցք ընտրեց քայլելու: Դիչ հետո գյուղից դուրս եյինք յեկել: Ցես ել նրա քայլերով սկսեցի գնալ:

Դեմուդեմ բարձրանալով՝ մինչև մշուշալից հորիզոնն եր տարածվում սև լեռնաշղթան:

Թանձր, սևագույն մշուշը ծանրացել եր ձորերի և հովիտների, լեռների և բլուրների չուրջը: Տեղ-տեղ յերկնքից գետին իջնող չեչտակի գծերը ցույց եյին տալիս, վոր խիստ անձրև եր տեղում զանազան կողմերում:

Ծերունին սկսել եր ավելի հանդարտ քայլել:

Նրա հնամաշ արեխներից ջուրը հոսում եր դուլպաների մեջ, վոտը թրջում, խոնավությունը թափանցում եր բաց կուրծքը, և վերարկուի վրա մշուշից կաթիլներ եյին դիզվում:

Անց[illegible], միտամի դիտում եյի յերկու կողքի արտերը: Շատերի մեյն միքանի ափոսներն եյին ավերվել, և մեջտեղերում լճակներ եյին գոյացել:

Միքանիսն ամբողջովին վողողվել եյին: Ջրի հոսանքներն արմատախիլ եյին արել, քշել-տարել յորենի դալար ծիլերը և հավաքել ափոսների մեջ:

Ցեխ եր գոյացել ամեն մի փոքր չավղի վրա. ամեն մի փոսի մեջ պղտոր, կարմրագույն ջուր եր կիսավել, և շատ հասկեր լողում եյին նրանց յերեսին վորպես խեղդվածներ:

— Վա՛խ, վա՛խ,— հառաչեց ծերունին և առաջ գնաց:

Բայց վնասն ընդհանրապես շատ ել մեծ չեր յերևում: Հողը դիմացել եր: Ցերևում եյին բոլորովին չփչացած արտեր անդամ, ծիլերը դիմացել եյին և այժմ գվարթությամբ սկսում եյին ցցել իրենց դլուխները:

— Ե՛հ, վառք աստծու,—խոսեց ծերունին, տեսնելով դրանք,— շատ ել վնաս չի յեղել:

— Ինչ արան ել այդպես կլինի, ծերո՛ւկ,—սրտաուղեցի նրան:

Անխոս՝ դլուխը չարժեց: Կասկածում եր. հայացքը միշտ դեպի հեռուները եյին: Այդպես քայլելով մենք հեռացանք գյուղից և հետո ծռվեցինք դեպի լեռները:

Ծռվելիս ծերունին մի րոպե կանգ առավ և աչքատեց հեռվից նշմարել իր արտի դրությունը:

—Վո՞րն և արտդ:

Այն բարձրինը:

Ինչ-վոր ջրի հեղեղատներ եյին հոսում այնտեղ, ջրակույտեր վայրկյում: Մի դուցե այդ ջրերը նրա արտի միջովն են անցել, ամեն ինչ սրբել, տարել:

Ծերունին դունատվեց:

— Տունս քանդվել է...—մրմնջաց նա:

— Մի՞թե վնասվել է:

—Զղիտեմ դեռ,—ասաց նա խեղդված ձայնով,— դուրն աչքերս չեն տեսնում... Ծերացել եմ...

Առաջ գնացինք: Մոտենում էինք: Քայլելն ավելի դժվարանում էր. վերևից գրեթե ցեխի հեղեղ էր, վոր իջնում էր ցած, խառն՝ ծլլերով, ցողուններով...

Ծերունին հևում էր. շունչը կտրվել էր: Ինչ էլ քայլեցինք: Ել կանաչ չէր յերևում, ել վոչինչ չէր մնացել. ցեխի հեղեղ և ջուր էր վոր տեսնում էինք. ավերիչ, ապականիչ հեղեղ...

Մի քանի քայլ անելուց հետո կանգ առավ ծերունին և բահը ուսից ցած թողեց:

Իր արտի կողքին էր: Ինչվա՛ս արա...

Փոսերի մեջ գոյացած ջրերը վերևից պատռել էին նրանց թմբերը, ուժգնությամբ ցած հոսել և գրեթե սրբել էին արտը:

Ցերիար, կանաչ յերիար չերտեր երբար վրա, արմատախիլ; ջարդված—ասհել էին ամեն ուղղությամբ և թաթախվել ցեխով: Վոմանք մինչև վիզը խրվել, ոտրիչները հազիվ էին յերևում...

Հողն ամբողջ կանաչել էր նրանց դիակներով...

Ցեվ անձրևը տեղում էր, տեղում ու իր խոշոր կաթիլներով ճղփացնում լճացած ջրերը:

Ընկավ բահը ծերունու ձեռքից, աչքերը մթնեցին, և նա տեղն ու տեղը, իր ընտանիքին կերակրող ցորենի դիակների կողքին՝ նստեց ու գլուխը ձեռքերի մեջ ծածկեց...

Չիս քշեցի և հեռացա: Մխիթարական վոչ մի խոսք ասելու սիրտ չունեցա:

Ցեվ յերբ հետևիցս յետ նայեցի, տեսա թշվառ ծերունուն միայնուն դիրքի մեջ, նստած իր ավերված արտի կողքին, գլուխը ձեռքերին և սլեզարդ մաղերը տեղացող անձրևի տակ...

ՄԹՆԱՁՈՐ

Մթնաձոր տանող միակ արահետն առաջին ձյունի հետ փակվում է, մինչև գարուն վոչ մի մարդ վոտք չի դնում անտառները:

Սակայն Մթնաձորում այժմ էլ թավուտ անտառներ կան, ուր վոչ վոք չի յեղել: Ծառերն ընկնում են, փտում, ընկած ծառերի տեղ նորն է ծլում, արջերը պար են խաղում, սուլում են չորանի պես, վոռնում են գայլերը, դունչը լուսնյակին մեկնած, վարազները ժանիքով փորում են սև հողը, աչունքվա փտած կաղինները ժողովում:

Մթնաձորում մուգ-կանաչ մաշիով խլեզներ կան, մարդու յերես չտեսած, մարդուց յերկյուղ չունեցող: Պառկում են քարերի վրա, արևի տակ. ժամերով կարող եք նայել, թե ինչպես է զարհում փորի մաշիը, թուլ

ձորում մարդուց չեն փախչում:

Բարձր են Մթնաձորի սարերը· դրանից է, որ ամռան յերկար որերին էլ արևը մի քանի ժամ է լույս տալիս Մթնաձորի անտառներին: Ցեվ, յերբ հեռավոր հարթավայրում արևը նոր է թեքվում արևմուտք, Մթնաձորում սովերները թանձրանում են, սաղարթի տակ անթափանց խավար է լինում, արջերը վորսի յեն դուրս գալիս, վարազներն իջնում են ջուր խմելու, իր վորջի առաջ զիլ վոռնում է գայլը, վոռնոցը հազարբերան արձագանգով զրնդում է Մթնաձորում:

Գիշեր է դառնում, և գիշերվա հետ վորսի յեն յելնում Մթնաձորի բնիկները: Արջերը տանձ են ուտում, իրար թաթով են տալիս, թավալգլոր են լինում չոր տերևների վրա, դարան մտնում, հենց վոր զդում են վայրի խոզերի մոտենալը: Արջը գիտե վարազի ժանիքի թափը, նախահարձակ չի լինում: Ցեթե տկար մի խոզ յետ մնա մյուսներից, արջը թաթի մի հարվածով ճեղքում է փափուկ վիզը, մի յերկու պատառ լափում, լեշը ծածկում է չոր ցախով ու տերևներով, քար դնում վրան, փնթփնթալով հեռանում, մինչև լեշը հոտի:

Ցեթե հանկարծ վարազները լսեն յետ մնացած խոպի ճիչը... Սրածայր թերերի պես չողչողում են ժանիքները, անչնորհք չարժումներով արջին մնում է բարձրանալ կաղնու վրա: Կատաղի ճիների պես վարազները վրնջում են, ժանիքներով ակոսում կաղնու տակ, զարկում ծառերին: Մթնաձորի ծերունի անտառապահը մի զարունքի տեսել է վարազի կմախքը՝ ժանիքը մինչև արմատը խրված ծառի բնում, ծառի ճյուղի ետևում արջի սատկած քոթոթին:

Վայրի վարազի պես եր անտառապահ Պանինը: Մի հրեշ եր նա, անտառապետի տարազով, կակարդով զբաղխարիկը գլխին: Անտառում հանկարծ կերևար, փայտահատի կողքին կկանգներ, կնայեր, թե ինչպես նա արագ կացնահար և անում ծառը: Մեկ էլ թաղատողից դուրս կգար, կմռնչար այնպես, որ արջերն էլ եյին քնից

զարթնում և վորջերում մոռոում: Լեզապատառ փախատահին մնում եր կամ վախչել, կամ ոճի պես ծրտմբռատել Պանինի մարակի հարվածների տակ:

Գյուղում Սվին լավ վորսորդի համբավ ուներ: Տան ապրուստի մի մասը նա Մթնաձորի խորքերից եր հոգում: Բացատներում միրհավ եր վորսում, արտերի մոտ՝ կաքավ ու լոր, թակարդ եր լարում աղվեսի համար, յերբեմն էլ Մթնաձորի խորքերն եր գնում, ժամերով նստում քարի քամակին մինչև վարազները ջրի գային:

Սվին նշանը ճիշտ եր բռնում, բերդանի գնդակը վարազի ճարպոտ կողքին մեծ վերք եր բացում: Վարազը թավալգլոր եր լինում, հետո խռռոցով գետին ընկնում:

Ցավ յերե Պանինից յերկյուղ չեր անում, կամ տեղյակ եր լինում, վոր անտառապահը Մթնաձորում չի, չոր ցախերից էլ մի չալակ եր անում, ծածուկ մի տեղ պահում՝ դիշերով տուն տանելու համար:

Այդ որն էլ նա վորսի յեր գնացել: Թարմ հետքեր կային ճյունի վրա: Սվին մի հետքով գնաց և հենց վոր բլրակի գլուխը բարձրացավ, տեսավ յերկու աղվես: Մինչև կրակելն աղվեսները փախան: Այդ Սվու համար վատ նշան եր, վորսը հաջող չպիտի լիներ: Մի քիչ էլ ման յեկավ, պախրայի հետք տեսավ, վնատեց ու չգտավ: Ցավ, վորովհետև այդ որը Պանինն անտառ չպիտի գար (նա լսել եր, վոր անտառապահը հիվանդ է), Սվին զերազաս համարեց մի չալակ ցախ տանել տուն:

Իրիկնադեմ եր արդեն, յերբ Սվին չալակի ցախը դրեց քարին, նստեց մի կոճղի՝ մի քիչ հունչ առնելու:

Վորսի մի չուն յերևաց, հոտոտեց Սվուն, անցավ Սվու հունչը փորն ընկավ: Ցերևաց յերկրորդ հունչը, յերրորդը, չների յետևից էլ Պանինը, ասես գետնի տակից բուսավ:

Մեկի դեմքը քաշան եր, մյուսինը՝ կարմիր ճակնդեղ: Պանինը հևքոտեց, վորպես Մթնաձորի արջ:

Ցեվ, յերբ բարձրացրեց կնուտը, Ավին եվ մեջքը ծռեց, գլուխը ձեռքերի մեջ առավ։

Ավու լեզուն կապ եր ընկել, չկարողացավ խոսել։ Ցերը ուշքի յեկավ, Պանինն եվ եր հեռացել, իր չներն եվ։

Ավին նստեց քարի վրա։ Նոր միայն զգաց, թե ինչքան խիստ եյին Պանինի մտրակի հարվածները։ Մեջքի վրա տեղ չեկացած շամփուրներով դաղել եյին, աչքատակը տաքացել եր, կակղել ուռած խմորի պես։

Միտք արեց Ավին և դոհ յեղավ, վոր Պանինը հրացանը չի տեսել, քարի արանքում ընկած։ Թիչե, կտաներ, հետո կչարչարեր։

— Հեղինակի պատկերացրած նյութը վո՞ր չրջանից է—նահապետական՞ն, թե հետհեղափոխական։

— Նկարագրեցեք Պանինին և Ավուն վորպես տարբեր դասակարգերի ներկայացուցիչների։

— Ինչո՞ւ Ավին չփորձեց պաշտպանվել։

ՄԻՐԱՆԻ ՏԱՓ

Թեկուզ անունը Միրանի տափ է, բայց և ծիրանի վոչ մի ծառ չկա այնտեղ։ Գետի ափին, քարաժայռերի ճեղքերում մացառներ կան, քրքրված ցախավելի պես դիք-դիք ցցված։ Միրանի տափի առավելությունը քամիներից պաշտպանված լինելն է և ջրի մոտիկությունը. մերոմ, յերբ գարնան սկզբին բորան և լինում, անձրևախառն քամի, չորանը վոչխարը դեպի ձորն է քշում և պատսպարան տալիս լերկ Միրանի տափի ժայռերի յետև։ Այծերը մացառներ են կրծոտում։ Վոչխարը գլուխն իրար չեքի մեջ՝ վորոճում է։ Հոտի մեջ և վոչ մի վոչխար բորան որերին գլուխը վեր չի հանի։

Միրանի տափը հիշատակելու արժանի վոչինչ չեր ունենա, յեթե նա յերկու դյուղի՝ Միրի և Մրոցի միջև անվերջ չարունակվող կռիվների, խոսք ու գրույցի առարկա չդառնար, յեթե նրանք մահակներով կռիվ չտային, յերկու հարեվան դյուղերը—Մրոցն ու Միրը։

Ցերկու դյուղերն եվ դետի ձախ ափին են ընկած, Մրոցը՝ վերև, իսկ Միրը՝ ներքև։

Մրոցն ու Միրը հավասար ծխեր ունեն և առաջներում, յերբ մահակներով կռիվ եյին տալիս Միրանի տափի համար, այնպես եր պատահում, վոր մի տարի Մրոցն եր հաղթում, հաջորդ տարին՝ Միրը, կամ յերկուսն եվ չարդված վերադառնում եյին, վորովհետև Միրանի տափի համար համարյա հավասար մահակներ եյին զարկվում յերկուստեք։

Մրոցն եվ եր այծ ու վոչխար պահում, Միրն եվ, վերի դյուղումն եվ կար յեկեղեցի, ներքևի դյուղումն եվ։ Շատ անգամ միաժամանակ եյին բացվում ուշունցի պարկերը։ Վերևի դյուղում, պատի տակ նստոտած ալեվորներից վոմանք հոնի կարմիր փայտերը մեկնում եյին Միրի կողմը, հայհոյում։

—Միրն եվ չեն ա՞, վառես խանձահատ չի դա։ Մեր աղբյուրումն են նրանք խմոր հունցում...

Գուցե հենց այդ ժամանակ Միրի ալեվորներն եվ եյին անիծում վերի դյուղերին և չահելների սրտում պապենական վոխը թեժ պահում։

Վոչ վոք չեր հիշում վոչ Մրոցում և վոչ եվ Միրում, թե յերբ ծագեց առաջին թշնամությունը Միրանի տափի համար։

Ցեթե Մրոցին եյին հարցնում, հազար ու մի պատմություն եյին անում, թե իբենց և Միրանի տափը «ինջիների» ձեռքով քաշած պլան ունեն, թղթեր կան։

— Ես և, յես իմ ձեռքերով եմ ենտեղ կուրգանի քարերը սահմանի վրա շարել...

— Իմ միտս և, վոր հորս վոչխարը պիչերն եվ եր Միրանի տափում մնում։

—Միրի սահմանը Միրանի տափից եվ չատ դեննա... են մեր հայրական հողն ա...

Իհարկե, Մրոցը միայն այդ չեր ասում և յերբեք

մեկիցմեկ չեյին խոսում, յեթե մեկը հարցներ նրանց Ծիրանի տափի մասին։ Վրա եյին տալիս, իրար հրմշտում, ամեն մեկն աչխատում եր առաջ ընկնել և չինովնիկին պատմել իր մտքինը, իր լսածը՝ հաստատելու, վոր Ծիրանի տափը Մրոցինն է։ Շատերն այնքան եյին հեռու գնում, այնպես եյին հորինում, վոր մոտին կանգնած հարևանն էլ չեր հավատում նրա ասածին, բայց լռում եր, մտքում ծիծաղում, դլխով անում, վոր չինովնիկը հավատա նրա ասածին։ Ձե՞ վոր խոսքը Ծիրանի տափի մասին եր, պետի ամին բուսած մացառների, դյուղի սահմաններն ե՛լ ավելի լայնացնելու մասին։

Բայց վեճը, շատ խոսելը և բարձր կանչելը չեր վորոշում։ Չինովնիկի գնալուց հետո Մրոցում չշուխով և շատ ծածուկ իրար մեջ հավաքում եյին այն գումարը, վորի մասին դիշերվա կերուխումի ժամանակ ակնարկել եր քաղաքից յեկած «մեծավորը» և ավելացրել։

— Ձեր ոգուտ համար եմ ասում, դուք դիտեք, մենակ ինձ համար չեմ ուզում։

Չինովնիկը Միր ել եր գնում։ Ներքևի դյուղն աչխատում եր ավելի ճոխ ընդունել նրան, սրա-նրա տանից հավաքում եյին հարմար իրեր, մի տնից մաքուր բարձ, մյուսից՝ դյուղի միակ լավ կարպետը, տունը զարդարում, հարսերի վրա բարկանում, վոր փոչի չանեն, ապա սենյակը սարքելուց, խոնարհ գլուխ տալիս յեկվորին, ներս տանում։

Վոմանք յեկողների ճիերն եյին տեղավորում, գարի տալիս և խոնարհաբար, ոամկի խղճուքյամբ, ժըպտում մեծավորի պահակի առաջ, նրան էլ լավություն անում, մտածելով, վոր գուցե այդ էլ ոգնի Ծիրանի տափի անվերջ վեճին։

Այսպես շատ տարիներ յեկել են, գնացել, յերկու դյուղից էլ շատ յուղ ու պանիր, գորդ ու կարպետ են տարել հազար ու մի չինովնիկ և տարածի համեմատ էլ հատկացրել Ծիրանի տափը՝ մերթ Մերին, մերթ Մրոցին, կռիվների աղբյուր ստեղծել, ամեն տարի մացառուտի կանաչ տերևները բացվելու հետ յերիտ դյուղումն էլ թեժացրել գայրույթը Ծիրանի տափի համար...

Մինչև Խորհրդային ռոբը յեկան։

— Ինչո՞ւ ժամանակի իշխանության ներկայացուցիչները չեյին լուծում Մրոցի և Միրի վեճը։

— Ի՞նչ դեր եյին խաղում այն ժամանակ պետական չինովնիկները։

— Համեմատեցեք հին դյուղն այսօրվա մեր նոր դյուղի հետ և ցույց տվեք տարբերությունը։

— Շարադրություն գրեցեք՝ «Հին և նոր դյուղի տարբերությունը» վերնագրով։

ԶՈՐԲԱՆ

Տունը դյուղի ծայրին է, ճանապարհի կողքին։ Յերբ դյուղը ման գաք, էլ ուրիշ ներկած դարպաս չեք ճարի։ Կապույտ ներկ միայն նրա հատ ու ամուր դարպասի վրա կա։

Յեվ յերբ բաց են դռները, փողոցից կարելի յե տեսնել բակն ու տան սրահը։

Բակում բացօթյա մի արհեստանոց կա։ Մեծ ու փոքր մուրճեր, սղոցներ, պայտարի գործիքներ, անիվների ողեր, սռնիներ, վոր չորանում են արևի տակ։

Սմեն որ մի քանի բանվոր է աչխատեցնում։ Մեկը ցեխապատ է անում, նոր գոմի պատերը չարում, մյուսը քար է տաչում, իսկ ինքն էլ իր վորդիների հետ լուսաբացից մինչև արևմուտ աչխատում է։

Իզուր չե, վոր գյուղում, յերբ մեկը լավ աչխատող է, ասում են.

— Զորբա Ոսեփի ճանկն ընկնի, մի չաբաթ էլ չի դիմանա։

Վարձը կալին և տալու ցորենով։ Իսկ մինչ այդ,

հեղաձեց բաժին և հանում: Ցեքե մի ծուռ գերան իրեն պետք չէր, տալիս է արհեստավորին, տանի՝ խանդարված հուսրի գերանը փոխի: Կալին հաշվից դուրս է դա-լու:

Բակի անկյունում դինվորական մի խոհանոց կա՝ կաթսան ժանգոտած, խողովակը ծուռ:

Մորեխի տարին մի փութ կորեկով է առել: Մոքում դրել է կաթսան հարմարեցնել արագ քաշելու, իսկ մնացած յերկաթեղենը ծախել:

Խոհանոցի մոտ ընկած է յերկանիվ մի սայլ, կոխվներից մնացած: Կարգի չե բերել, ներկել և զոդ է անում, յերբեմն էլ քրեհով տալիս:

Տանը կիս՝ պարտեզն է, դյուղի ամենալավ պարտեզը, ծառերը չարչար, զանազան տեսակի, պատվաստած: Միայն նրա այդում կան պատվաստած ծառերը:

Պարտեզի մոտ՝ բանջարանոցը, վորի մի անկյունում մեղուների տասներկու արկղ կա կարգով չարած:

Պարտեզն ու բանջարանոցը բարձր ցեխապատով է պարսպած, վորոցից միայն ծառի վերի ճյուղերն են յերևում:

Ցեքե մի հիվանդ մեղր ուզի կամ ձմեռը՝ թթու խընձոր, Ոսկիի ներկած դարպասն են ծեծելու:

— Զկա,— կասի,— ի՛նչ եր, մի քանի խնձոր— կամ՝ ճանճը ես տարի ոդուտ չտվավ,—և յեթե լավ պին տար,—ապասիր տեսնեմ,—կասի և մառանը կիջնի:

Ընդարձակ բակն ընկած է տան առաջ, վոր չորս լուսավոր սենյակ ունի, փեղկերով, ապակած: Սենյակներում գորգ ու կարպետ կա, պատերին խալի, յերկու լավ մահճակալ, սպիտակ պղնձից ինքնայեռ, ափսեներ ու բաժակներ:

Ոսկին առաջ խանութպան եր, գյուղումն եր առուծախս անում:

Այն ժամանակից և պահել և պատերազմի տարինեբից՝ խալին ու անդուկները լե՝ պինդ քաշդրել մատանի մի անկյունում:

Աստաղության հետ ամեն տարի նրա տունը լցվում է, պահածը դուրս է հանում և ավելացնում անընդհատ:

Գյուղում նրան «քոռ դայլ» են տալիս: Ցեվ յեթե խոսքը վեր է պալիս Ոսկիի վրա, մի ջահել վրա յե բերում.

— Նրա ամբարում հլա ինչի՛ր կան...

Իսկ իրեն վոր նայես, բոմփես՝ տղի պես դեռևին կկպչի, լղար՝ դարմանով պահած ձիու պես, այտուկըրնները դուրս ընկած: Նայում ես դեմքին, ասես վորդը կերած կարտոշկա լինի, աչքերը փոքրիկ, բզով ծակած, ունքերը կատարյալ բեխ, փափախի մազերից չի ջոկվում:

Բայց գործ կա: Ջուր ձի ունի, սեփական գութան, վոր նոր է առել: Ցեքե ուզենա, գութանը մենակ լծելու չափ յեղներ ունի...բայց մենակ չի լծում: Հարաքաշ է անում, յեղանց մի ջուխտն էլ դոմում պահում:

Ձեռքից յեկածը չի խնայում: Ձեռքափող է տալիս, տոկոս առնում կամ դարնան սերմացու տալիս, կալին մեկին յերկու առանում: Ցեքե դյուղում մեկը վորոշում է մի վոչխար մորթել, միսը ծախելու և յեթե մենակ ուժը չի պատում, Ոսկիը միշտ ընկերանում է, աման պատահած վոչխարն առնում և մորթում:

Ականջին է հասնում, վոր դյուղում մեկը ծախում գերան ունի կամ քար է ծախում, ուժ չունի նոր չենք չինելու, Ոսկին աչքերը ճպճպացնելով գլխին կանգնած է, գինը նաղդ է տալիս:

Ինչպե՛ս էլ գիտե հարևանի թուլլ կողմը: Մի ուռի տեսնի, կկանգնի, աչքի պոչով հինայի, մարդում կհաչվի, թե քանի տախտակ դուրս կգա և ծառի տիրոջ տեսնելիս կասի.

— Են մարագիս մի գերան ա պակաս, ծառդ ծախի՛ր՝ առնեմ:

Ծառը գեռ արմատի վրա Ոսկիի սեփականն է, մի տարի յել կմնա, յերկու տարի յել, վոչինչ, ավելի յե Հաստանում:

— Վո՞ր չքանին և վերարերում հեղինակի նկատառված պատմվածքը:

— Բնութագրեցեք կուլակ Ոսկիին, պարզելով, թե ինչպես նա կարողության տեր դարձավ:

— Ինչո՞ւ և ինչպե՞ս է դրված կուլակության վերացման հարցը:

ՔՈՉԸ

Ահա գարնան հետ և չարան-չարան,
դաշտավայրերից դեպի գոմ սարեր,
ձգվեց սայլերի, ուղտերի քարվան—
փախչում են չոլից թե՛ թուրք, թե հայեր:
Թնդում են ձորում զանգի հնչյուններ,
ձիերի խրխինջ, պայտերի դոփյուն,
մեկ-մեկի կցած անվերջ քարվաններ
քաշում և նառը, ահեղ մոնչում.
վորը տանում է ալաչխի քեչան,
կուժն ու խնոցին, ճիպոտն ու չարխան,
վորն էլ զարդարված գիր ու վինչերով՝
որորվում, անցնում լեռան լանջերով:
Բայց նառն ինքնադոհ քայլում է հանդարտ՝
բոժոժ ու զանգեր վզին ու կրծքին,
և որորելով կապերտներ ու զարդ,
գեղեցիկ հարսն է տանում իր մեջքին.
մերթ բարկանալով կանգնում է հպարտ,
մերթ փրփուր թափում կատաղած բերանով,
մերթ յերկար չուրթը կախելով բարդ-բարդ,
նա պարծենում է գեղեցիկ բեռով:
Բռնել է ճամբեն խիստ իրարանցում.
դոփում են ձիեր, սանձերը կրծում.
աղնիվ մեռածքից վոսկեմել զործած
պաղպարիներ թամքերին ճգած,
հուժկու կրծքերից կապած թալիսման,
արվեստյան ճոխ արծաթին ու վոսկին,

ճերմակ պաթխան, քողն ամպի նման—
փոփոում են սիրուն հարսների դեմքին:

Լեռների տակն է. մարդ ու անասուն
ուրախ յերդելով դիմում են սարեր,
մոռանալով ճաման քաշած վայնասուն,
ծաղիկ վինչելով անցնում են ձորեր:



Անցնում են արագ քոչ-քոչի միջով,
գարնան արևից փայլում են զենքեր,
յեվ թարմ, կենսատուր թավիշ կանաչով
բացվում են, ժպտում սարվորի դեմքեր:
Փոքրիկ յերեխան պինդ մեջքին կապած՝
խեղճ հովվի կինն էլ վազում է վոտքով,
ոգնում է մարդուն գոհ և սրտաբաց,
բախտի վորոշած ծանր վիճակով:
Մայում են, բայում գառնուկն ու մաքին,
թնդում կավերի, հորթերի բառաչ:

իսկ արտնպալով դամբչը ձագին
կանչում է դանդաղ՝ վազելով առաջ:
Վազում են հոգնած շները հոսի
յեվ լեզուն հանած թմանչին են տալիս.
լսվում է հանկարծ ձայնը լակոտի,
վոր քոչից ընկած՝ կանչէ է գալիս:

Ֆարվանի ծայրը սարերը հասավ,
Հասավ ու ձուլվեց թուխ ամպերի հետ.
վրան–վրանի յեռանից բուսավ,
ծաղիկների մեջ դույն–դույն, սիզամետ.
ալաչուխա, դաշտա անվերջ վրաններ,
շրջան կազմելով սառն աղբրի ափին,
ինչպես ծեր արծվի կարկատած բներ,
հենվեցին մեկ–մեկ բարձր քարափին:

ՉԱՏՈՅԻ ԲԱԽՏԸ

(ՀԱՏՎԱԾ)

I

... Աչունն անցավ, բարբարոս ձմեռը նորից բըռնացավ: Այս անգամ, սակայն, չքավոր Զատոյի ցավը մեյան ձմեռվա խստությունը չեր, այլ այն, վոր իր այնքան՛ն սիրած, իր միակ հույս ու ապավեն Ինձոր յեղը ձեռից գնում եր:

— Վա՛յ, ելի՛ կապվեց բախտս,—ամեն անգամ դառնությամբ հիշում եր նա: Բայց այս դառնությունն ավելի թունավորվում եր պարտատիրոջ դժոխային պահանջով:

— Փո՛ղս, փողս. քեռ չե համ յեղդ կխլեմ, համ ուտելու հացդ, ու սոված կթողամ...

Ցավ, չնայելով Զատոյի ու կնոջ աղաչանքներին, մրմնջալի պատասանքներին, այնուամենայնիվ լսվում եր նույն անողորմ և ահարեկող ձայնը, թե՝

— Փո՛ղս, փո՛ղս:

— Ապա չա՛ն, աղաչում ենք, յերկու չարաթ էլ համբերի, բալքի մի տեղից ճարենք, տանք:

— Անկարե՛լի յա, փո՛ղս, եղուց ծեղին փո՛ղս...

Զատոն ու կինը հուսահատ՝ քաշվեցին իրենց ավերակ խրճիթը, վորի մի անկյունում Ինձորն եր կապված: Այնտեղ նրանք մնացել եյին արտասած ու քարացած:

Այսպիսի վայրկյաններից մեկում Զատոյի կինը, հանկարծ զգաստանալով քարացած դրությունից, աչքերը լցված, մոտեցավ Ինձորին, վորտու նման գրկեց նրան, պինդ փաթաթվեց և չերմաջերմ համբույրներ տալով այտերին ու աչքերին, լուռ ու անվերջ արտասվեց: Զատոն նույնպես լուռ եր ու լցված, բայց աչքատում եր մատամբ թագցնել իր արցունքները և կնոջը քաջալերել:

— Լավ, Նալպի՛պ, յերեխա հո չե՞ս, ինչ ես լաց լինում:

— Ե՛, ի՞նչ անեմ, ի՞նչ ևս հոգը գլխես տամ, վոր լաց չլինեմ: Ես ա՛, ելի, մեր կարողությունը, ես էլ եղուց պարտքատերը գալու յա, վոր տանի: Ներա՛ համար եմ բերանես պատառը յես քաշել ու սրան ուտեցրե՞լ,—արտասվահեղձ հեկեկանքով պատասխանում եր գեղջկուհին և նորից փաթաթվելով՝ համբույրներ տալիս սիրելի կենդանուն:

— Դե լավ, ե՛, ամոթ ա: Վա՛հ, գո՛րթ վոր յերեխա յես դառնում:

— Ինչի՞, դու չլսեցի՞ր՝ ինչ ասեց...

— Վոր լսեցի՝ ի՞նչ. նրա հերն էլ անիծած: Շատ էլ մախեցնում եր, յեղո՞: Կթողա՞մ, վոր տանի. իմ պարագը 48 մանեթ ա, յեղո՝ հարբը-վո՞նց կհամարձակվի, վո՞նց կտանի, են հո արինս չաղ կտամ,— ուժից վեր ահամա, կեղծ վստահությամբ, կնոջ առաջ պարծենում եր Զատոն:

— Չա՛, վա՛յ գլխես, եղ եր պահես: Մեյամ քեռ աչքարհեցս լիացար, վոր արինդ էլ չաղ տաս,—մաքրում յերեսին նայելով հեկեկաց կինը:

II

Այս դառնությամբ Նարդիզը, մի առ ժամանակ հեկեկանքը զսպելով, նայում էր բոցոտվող կրակին և չէր հասկանում, թե ինչո՞ւ այս անիրավ աշխարհում մինը պետք է առատ ուտի, վոչ ցանի, վոչ հնձի, իսկ մյուսը՝ քաղցած, ծարավ, ահը սրտումը, մահը մաքուր, սրան, նրան դերի դառնա:

Իսկ Զատոն մերթ նայում էր իր սիրելի յեղբայր Ինձորի աչքերին, մերթ բախտից խռոված իր վշտադեմ Նարդիզին և ալեկոծվում դաղտնապես:

Նա տեսնում էր, վոր իր հազիվ կարկատած կամ նորոգած ծիծեռնակի բունը այսինքն՝ իր հայրական անչուք և աղքատ խրճիթը—նորից ուզում են ավերակ դարձնել և կորել ու մարել ոջախի ծուխը:

— Ո՛հ, աստվա՛ծ, ինչո՞ւ ստեղծեցիր ինձ, տանջելո՞ւ համար,—մրմնջում էր նա:

— Ա՛խ, աստվա՛ծ, աստվա՛ծ, բախտից զրկո՛ղ աստվածդ,—մորմոքելով հառաչում էր կինը:

Ահա այս ցավերով համակված՝ մարդ ու կին ամբողջ գիշերն իրենց յեղբայր Ինձորին հրաժեշտի համբույրներ տալով, անքուն աչքերով լուսացրին ու չդիտեին, թե ի՛նչպես պիտի բաժանվեին նրանից: Վորովհետև բաժանվել Ինձորից՝ նշանակում էր զրկներից խլել իրենց յերեխան և աչքերի առաջ ջուրը նետել նրան:

Առավոտը լուսացավ: Տանուտերը, վաչխառուն և սրանց կամակատարները, մինը մարակն առած, մյուսները՝ դաղանակները, ավազակների նման, գնում եյին դեպի ոդան: Այդ միջոցին Զատոն, ամենածանր մտածողության տակ, դուրս յեկավ նրանց առաջ և վշտից խեղդվող ու ընդհատվող ձայնով սիրտ արավ մեկ էլ խնդրել, վոր խղճան իրան և մի քանի որ ժամանակ տան՝ փողը ճարի: Բայց իզուր պա՛րծյալ: Ցեղը խիստ դուր եր յեկել աղային, նա վաղուց եր ասել, թե «են յեղն ամենևին աղքատի յեղ չի, հարիր մանեթ նաղդ փող արժի, ճանկս եմ դցելու»: Ու մերժեց:

Զատոյի հույսի այս վերջին թելն էլ կտրվեց: Այնուհետև աննկարագրելի յեր նրա վիշտը: Ավազակախումբը, յերբ ներս մտավ յեզը դուրս անելու, Զատոն ու կինն ամբողջապես արտասուքի հեղեղ դարձած փաթաթվեցին իրենց յեղբորը և համբույրներով հեղեղեցին նրան:

Իսկ յեկողները թոկը յետ արին սյունից և յեզը դուրս քաշեցին ոդայից, բայց կենդանին իրանից հանկարծ և թե՛ տերերին և թե՛ հափշտակողներին բավական տեղ քաշ տվեց դուրսը: Այստեղ Զատոն, համբույր ցնորվելու չափ չփոթված դրության մեջ, մի քանի վայրկյան կնոջ հետ միասին անհավատար դիմադրության փորձ արավ: Սակայն մտրակների և դաղանակների հարվածները յետ մղեցին նրանց, և յեզը քշեցին, տարան:

Իսկ Զատոն ու կինը, յեղբայրը թաղած յեղբոր ու քրոջ նման, կարծես դերեզմանատնից վերադարձան ոդան, ուր ամբողջ որը դառն հեկեկանքներով անմխիթար սգի մատնվեցին:

— Այս պատմվածքի նյութը հին դյուղի կյանքից է վերցված, թե՞ խորհրդային դյուղի կյանքից: Ինչի՞ց եք կռահում:

— Նկարագրեցեք Զատոյի և Նարդիզի հոգեկան դրությունը: Ի՞նչ կապ կար նրանց և Ինձոր յեղան մեջ:

ՀԱՐՍԱՆԻՔՈՒՄ

(«ԱՆՈՒՇԻՑ»)

Զմռան մի գիշեր կար մի հարսանիք,
Հրճվում եր անդուսպ ամբոխը դյուղի.
դյուղն եյին իջել հավիվ պատանիք՝
աղջիկ տեսնելու, պարի ու կռվի:
Ու պարից հետո լեն հրապարակ
բաց արին մեջտեղն արձակ գլխատան,

զուռնաչին փչեց կռիվ չղանակ,
ահել ու ջահել իրարով անցան:
Հարա չեն տալի՝ «քաշի՛ հա, քաշի՛»...
ու դարս քաշեցին զոռով յերկուսին—
մինը մեր Սարոն, իսկ մյուսն Անուշի
անդրանիկ յեղբայր՝ զառնարած Մոսին:
Վաղչ դյուղը կանգնեց պարսպի նման.
ջոկվեց, բաժանվեց յերկու բանակի,
ամեն մի բանակն ընտրեց վահլեման,
կանգնեց թիկունքին տղերանց մեկի:
Գոռում են, զոչում յերկու բանակից.
—Սրտապինդ կացե՛ք, մի՛ վախեք, տղե՛րք:
Իսկ նորեկ հարսի փարդի քամակից
նայում են կանգնած հարսն ու աղջիկերք:

Ու առքանում են տղերքը սաստիկ,
փեչերը հավաք խրում են գոտին,
գետին են զարկում ձեռքերը հասուցիկ,
իրար են հասնում թափով մոլեգին...
Աղաթ կա ասկյան են մուխ ձորերում,
ու միչտ հնազանդ հնոց աղաթին՝
ամբոխի առջև իջնում իր որում
գետին չի զարկիլ ընկեր իգիթին:
Ու իրար բռնած Սարոն ու Մոսին՝

քաշում են, ընկնում խոպատակուվի.
ընկնում են գետին, յելնում մխային,
դժվար և իրրև հաղթել մեկ–մեկի.
իղուր և գոռում ամբոխը հարբած,
դուր սրտատրոփ նայում աղջիկները,
և դուր և Անուշն իր չունչը կտրած՝
սառել ու կանգնել ինչպես մի պատկեր:
Անունչը կանգնա՞ծ... Սարոն նկատեց,
թունդ առավ սիրտը ու զարկեց արագ,
աչքերի առջև մըլտրը պատեց,
մոռացավ ընկերը, ադաթ ու աշխարհք:
Ու մինչդեռ Մոսին ընկերախաղի,
կատակի տալով թողած եր իրեն,
ուժ առավ Սարոն, ծնկեց կատաղի,
գետնեց ընկերին ու չոքեց վրեն:
Ամբոխը թափվեց հարա–հրոցով,
վեր թողրեց ջահել փահլևաններին,
և ուրախության աղմուկ գոռոցով
հաղթողին փեսի թափառ մոտ բերին:
Ցնծության ձայնից, ծափերի զարկից
չարժվում են, դողում պատերն ու ոճորք,
իսկ նորեկ հարսի փարդի քամակից
նայում են կանգնած հարսն ու աղջիկերք:

ԳԱՐՈՒՆ

Գարուն է, գարուն է արդեն,
Ծառերը չքնում են լուսերզ.
Դաշտերում մեր ինչքա՜ն վարդեր
Ու յելնող յերկաթի հուլեր:

Կոլխոզի դաշտերի վրա
Իջել է նարնջի արև.
Վաղջո՛ւյն քեզ, իմ ծաղկող ամա՛ռ,
Վաղջո՛ւյն ձեզ, իմ կանաչ ոստե՛ր:

Մեսրոպի մի թռչուն առույգ
Թպռում է դաչաերին, հանդին.
Ցերեկում է կարկաչող առուն,
Սրտերը ծլում են խանդից:

Արևը ժպտում է նազուն,
Ո՛, կանաչ, ո՛, կանաչ հանդե՛ր,
Տրակտորը ի՛նչ լավ է վազում,
Ի՛նչ լավ է այս թումբը քանդել:

Գարուն է, գարուն է, գարուն,
Ծառերը չքնում են լուսերգ.
Դաչաերում մեր ինչքա՛ն առու
Ու յեվնող յերկաթի հուշկեր:

ԶԱԴՐԱՆ

Հասանը զրկից իր տղային ու կրծքին զրած խաղում եր: Այդ փոքրիկ տղան իր փոքրիկ վոտներով խփում եր Հասանի կրծքին, խփում եր անդադար ու թաթիկներով ճանկրտում Հասանի կոշտ դեմքը:

Ծանր հակերից հետո Հասանին զվարճություն եր պատճառում այդ թեթև ու վոտաոստոտն ճնճղուկը:

Կինր փնթփնթում եր ու սենյակում պտտվում: Այդ նրա սովորություն եր, վորին վարժվել եյին Հասանի ականջները:

Զուլֆան աչխուժ, դեղնցիկ աչքերով յերիտասարդ կին եր, խնամում եր Հասանին և իր փոքրիկ տղային. նրանց չորքն եր լվանում, նրանց համար ճաչ եր յեփում, յերեկոներն եյ գնում եր կանանց ակումբը: Ցերբ Զուլֆան ժամանակ չեր գտնում և ուչանում եր ժողովից, չատ դժգոհում եր: Ցերբ Հասանն ուչ եր գալիս տուն, կամ տղան ճչում եր յետևից, Զուլֆան ատամիկ բարկանում եր, դեղնցիկ աչքերը մեծանում եյին, փայլում, իսկ այտերը դունատվում եյին: Հասանը

կարծես այդ բոլորը չեր հասկանում ու նրանից վոչինչ չեր հարցնում. Զուլֆան գնում եր ժողովների, ակտիվանում եր, Հասանը չեր իմանում: Ցերեկ Զուլֆան մի համարձակ քայլ եր արել. նա իր մի քանի ընկերուհիների հետ գնել եր գցել եր չադրան և ուզում եր, վոր Հասանը հասկանար:

Հասանը խաղում եր տղայի հետ և թվում եր նրան, թե ելի Զուլֆան վնթփնթում եր: Իսկ Զուլֆան տուն եր յեկել բաց յերեսով, առանց չադրայի: Նա անհանգիստ եր, պտտվում եր սենյակում, զայրանում եր տղայի վրա, նրան պոկում եր Հասանի կրծքից, իսկ տղան ելի նստում եր հոր կրծքին:

Զուլֆան մտածում եր, վոր Հասանը հիմար է, չի տեսնում վոչ մի բան, թեկուզ Զուլֆան մեջտեղից կիսվի՝ նա չի տեսնի: Իսկ ընկերուհու ամուսինը տեսել եր ու ծեծել ընկերուհուն նրա համար, վոր նետել եր գլխի չադրան: Զուլֆան ուզում եր թեկուզ ծեծվել, միայն թե Հասանը տեսներ: Հասանը հաճախ իր մտքում Զուլֆայի դեմ հպարտանում եր և բարկանում նրա վրա: Նրան թվում եր, թե կանանց ազատությունն ինքն եր ավել ու ինքն էլ ոգտագործում եր: Նա դիտեր, վոր իր կինն էլ չատ եր խոսում, Նուշն ու Սաթոն էլ չատ եյին խոսում...նա քիչ եր խոսում Զուլֆայի հետ, վորովհետև յերբ խոսում եր, Զուլֆան կռվում եր նրա հետ ու նախատում, վոր խակի չեր մտածում իր և տղայի մասին:

Զուլֆան տանջվում եր. լավ կլիներ, վոր չունենար այն չադրան, վոր հիմի յել չէպրտեր ու Հասանն էլ այդքան անտարբեր չլիներ: Զուլֆան ուզում եր, վոր կինրաժինը պատժեր Հասանին, նրա գլխին չադրա գցեր: Այն ժամանակ Հասանն էլ կիմանար, թե ինչքա՛ն դժվար ու մութն եր չադրայի տակ, թե ի՛նչպես այտերին արև չեր դիպչի ու մոմի գույն կունենար: Այն ժամանակ նա կհասկանար, թե ինչո՛ւ յե Զուլֆան ուրախացել, թե այժմ ինչպես հաճելի եյին արևն ու բաց յերեսը:

Հասանը հանդիստ ննջում եր. Զուլֆան ուզում եր

նրա կողքը ծակծկել, արբշռացնել, յերբ Հասանը արտրեց աչքերն ու նայեց շուրջը:

— Տե՛ս,—ձայն տվեց Զուլֆան՝ այլևս չհամբերելով:

— Ի՞նչը,—հարցրեց Հասանը հորանջելով:

— Չե՞ս տեսնում,— պատասխանեց Զուլֆան ու չադրան դրեց ծնկների վրայից,—ա՛յ, չադիրը, ա՛յ,— ու արտրեց վոտների տակ:

Հասանը մի վայրկյան տլլայլվեց. կարծում եր, թե Զուլֆան ելի սկսեց իր կռիվը:

— Սիր ա՛յ կնիկ, յես քնած եյի, քեղ ի՞նր նեղացրի,—ասաց Հասանն ու ծալապատիկ նստեց, իսկ աղան կախվեց նրա վզից:

— Զադիրս հանել եմ,—Զուլֆան կանդնեց ու հեղնանքով նայեց Հասանին:

Հասանը դրկեց աղայի գլուխն ու մտածմունքով նայեց նրան: Սիրտը ճմլվում եր:—

— Զուլֆա՛, յես չե՞յի, վոր ասում էլի՝ յերեսդ բա՛ց արա, ա՛յ եղպես,—ասաց Հասանն ու ժպիտը սառեց շուրթերի վրա:

— Դու չեյիր, դու ինձ չես ասել,—ճչաց Զուլֆան,—մեր պատղամավորական ժողովն ե ասել, բոլորն են ասել, դու չես ասել:

Ցեթե հազար հոգի բարձեյին Հասանի մեջքին, այդպիսի ծանրություն չեր զգա, ինչպես այժմ, յերբ Զուլֆան ճշմարտություններ եր ասում: Հասանը քորում եր ծոծրակն ու աղայի ականջին չէնջում.

— Ցես ուզում եյի ասել, համա միտս չեր ընկնում. մտքումս կար, համա չեյի ասում:

Նա կանդնեց տեղից, աչքերն արագ պտտացրեց ու մտածեց. «խեղճ չեմ մնա, չե՛»: Մոտեցավ կնոջը, խուզարկողի պես նայեց նրա աչքերին ու ասաց.

— Դու խաբար չես ինձնից. մեր ժողովներում, յերբ եղ հարցերը դրել են, են ժամանակ եմ ասել, վոր հնար եր պետք է չադիրը գցեն. Ռահիմի արևը վկա, ասել եմ. դու վոր չես գցել, յես ինչո՞վ եմ մեղավոր: Նոր ես

պտում չադիրդ, վա՛յ, վա՛յ,—արտրեց գլուխն ու նստեց իրենից ու Զուլֆայից դժգոհ:

— Դու հիմար ես,—Հասա՛ն, ա՛յ, յես կասեմ ամենքին, վոր դու հիմար ես,—ասաց Զուլֆան՝ Հասանին բարկացնելու նպատակով:

Հասանի համար այդ խոսքերը չատ դառն եյին, նա վոչվոքից չեր լսել այդպիսի նախատինք:

— Ա՛յ, մարիկ տուր, յես գնդնել եմ,—ասաց Զուլֆան թնկթնկալով, ձեռքերը յերեսին դրած: Այդ ժամանակ փոքրիկ Ռահիմն ել սկսեց թնկթնկալ, հետո բարձրաձայն լալ:

— Զուլֆա՛, Ռահի՛մ,—բացականչեց Հասանը չըճմածի պես,—լա՛վ, լա՛վ, յես վոր...

Զուլֆան ծիծաղեց, Հասանը մեջքն ուղղելով՝ ազատ շունչ քաշեց:

— Ե՛յ, Զուլֆա՛, չասես՝ յես առաջ գնացի, դու յետ մնացիր. յես ամենից չուտ քեզ կասեմ, ել չասես, հա՛,—սպառնում եր Զուլֆային՝ մատը թափ տալով:

— Ա՛յ, խմանո՞մ ես, Զուլֆա՛. դու չգիտես,— չարունակեց նա,—ախր բրիգադիր եմ, ախր հիմա մաչինա յեմ բանեցնում, հարվածային եմ. բա ինչի՞ դու եղ չես խմանում:—Նրա աչքերում կարծես մի վոլտ եներգիա վառվեց, կարծես սենյակին այնքան լուսավորվեց, վոր ել չեր տեսնում վոչ վոքի:

— Ի՛նչ լավ միտս ընկավ,—ասաց նա ծիծաղելով և բռնեց կնոջ ուսերը.—ասա, վո՞րն ա լավը, են՝ վոր դու չադիրը գցեցի՞ր, թե՞ են՝ վոր յես եմ: Զուլֆա՛, յես հիմար չեմ...

Զուլֆան հանդարտ ծիծաղում եր: Նա պիտի պատմեր իր ընկերուհուն ,վոր Հասանն իրեն չեր ծեծում, Հասանը չադիր չեր ուզում, իսկ Ռահիմին ու իրեն չատ եր սիրում:

— Ցերկուսն ել լավ են,—պատասխանեց Հասանն ինքն իր հարցին, ու Ռահիմին պատացրեց ծնկների արանքում:

ԳԱՐՈՒՆ

1.

Ահա կրկին մեզ մոտ գարուն,
Ցերեւանում ահա կրկին
գարունն անմար բույր և վառում
և բորբոքում աչխուժ զրդիռ։
Ցոթը գարուն ահա արդեն՝
հեռու սրից, ահից, մահից,
ծլում են վառ, պայծառ թռուփեր
արևի տակ խորհրդային։

2.

Գարուն, գարուն Ցերևանում,
Ցերևանում ահա նորից
ընչում և խոր, թնդում անհուն

մի խնդություն վոսկեվորիկ...
Ահա կանգնած իրար կողքի
Սրսվյանի յերկայնքն ի վեր՝
լույս են խմում գարնան չողից
ու կանաչում ծառերը մերկ։
Հիշո՞ւմ ես, սիրա, գարուն մի այլ,
յերբ անկվեցին ծառերն այս նոր,
յերբ մեր բոլիկ մանկանց նման
նրանք դեռ մերկ, նրանք տկլոր—
յերբ մեր լուսե մանկանց նման
այնպես վախտ, այնպես բարակ—
դեռ չուրջը սով, դեռ չուրջը մահ—
չարք կանգնեցին այստեղ նրանք.
մեր մանկանց պես տկլոր, վախտ
ծառերն այս, յերբ կեցան յերթի՝
չատե՞րն արդյոք հավատացին
նրանց պայծառ առավոտին.—
Տե՛ս՝ ինչպե՛ս են փթթել հիմա,
հասակ առել ու կանաչել—
տես՝ ինչպե՛ս են նրանք աճել,
մեր լուսեղեն մանկանց նման...

3.

Ահա կրկին մեզ մոտ գարուն,
Ցերեւանում ահա կրկին
գարունն անմար բույր և վառում
և բորբոքում աչխուժ զրդիռ։
Ցոթը գարուն ահա արդեն՝
հեռու սրից, ահից, մահից
բացվում են վառ, աճում այսպես
մանկիկները խորհրդային...
Ցոթը գարուն արդեն ահա
քոյ են քաչում ծառերն այս մեր...
վորթեր եյին նրանք առաջ—
հիմա կայտառ պիոներներ...
Տես ինչպե՛ս են նրանք քայլում՝

մայիսեկյան յերամ յերթի.
Նրանց դեմքին—խինդը փայլուն,
Աչքունքներին—վառքը վարդի:
Տես՝ ինչքա՜ն և քայլքը հաստատ,
Ինչքա՜ն նրանց յերթը աշխուժ,
Նրանք անդուլ, նրանք վստահ,
Նրանց սրտում կորով և ուժ...

— Այս վոտանավորը բաժանեցեք մասերի և վերնագրեք դրեք այդ մասերին:

— Ինչ հանձնաժողովներ և անում քաղաստեղծը:

— Ինչ յեղբակացություն և անում քաղաստեղծը:

— Գրեցեք շարադրություն՝ «Գարունը քաղաքում և գյուղում» վերնագրով:

ԳԱՐՈՒՆ

Փախում են նորից անտառ ու ձորակ,
ԵՒ հեղեղները խոսուն, ատնորակ
Վողջունում են լինճ գլարթ ծիծաղով:

Ջուզել ես նորից դաշտ, անտառ ու լեռ,
Գարուն ամեն տեղ նոր կյանք ես վառել,
Իմ սրտում ել ես թևերդ փռել:

Ճնվ ահա տխուր իմ մենակ անից
Գուրս յելա կրկին գլարթ ու ջահել,
ԵՒ յես չեմ կարող իմ ճիչը պահել:

Մաղկել ես սարում, անտառում, արտում,
Քացել ես իմ դեմ վոսկեզեն հեռուն...
Վողջո՛ւյն քեզ, արև, վողջո՛ւյն քեզ, գարուն.—

ՄԱՅԻՍԻ ՄՈՒՏՔԸ

Հաղթով յելար, կարմի՛ր Մայիս,
Յերեսդ վառ, ճակատդ բաց,
Սիրան և թնդում քեզ տեսնելիս,
Քեզ ենք սպասում մենք դրկաբաց:
Ճամբեդ կանաչ, ծաղիկաթմբիկ,
Գլխիդ վերև անչափ ու խիտ
Վառ դրոշակներ կամար-կամար՝
Գարդ արել են ճամբեդ համառ...
Հազար թմբուկ, շեփոր-փողեր
Վողջ աշխարհին ձեն են տալիս.
«Աշխատանքի հերոսը մեր
Հաղթանակով մեզ և գալիս»:
Հաղթով յերկար, կարմիր Մայիս,
Յերեսդ վառ, ճակատդ բաց:
Սիրան և թնդում քեզ տեսնելիս,
Քեզ ենք սպասում մենք դրկաբաց:

ՄԱՅԻՍԱԿԱՆ

Մեր աշխարհում—մայիս ու չոզ,
Մեր աշխարհում—յեռանդ ու յեռք,
Արևափայլ յերանդ ու յերգ
Մեր աշխարհում—մայիս ու չոզ:
Նոր դարերին պատգամ հուչող
Միլիոն հույզեր, մկան ու ձեռք.
Մեր աշխարհում— մայիս ու չոզ,
Մեր աշխարհում յեռանդ ու յեռք:

Հեռվում դեռ կան այնքան վայրեր,
Ուր մայիսն և արյուն, վառոդ,
Ազատ կյանքի այնպես կարոտ—
Հեռվում դեռ կան այնքան վայրեր,
Ուր կան մարդիկ, վորդիք, մայրեր՝

Արևադուրկ, ցասկոտ, աղոտ.
Հեռվում դեռ կան այնքան վայրեր,
Ուր մայիսն և արյուն, վառոդ...

Մենք քայլում ենք խիտ չարքերով,
Մենք ու նրանք՝ դեպի դալիք—
Վորպես չաչող հսկա ալիք—
Մենք քայլում ենք խիտ չարքերով:
Աչխատանքի զիլ զարկերով
Մենք կփոխենք լույս ու բարիք.
Մենք քայլում ենք խիտ չարքերով,
Մենք ու նրանք՝ դեպի դալիք...

Ջանիսը դեռ կընկնեն դեսին
Այս պայքարումը վճռական.
Մինչ հաղթանակը վերջնական—
Ջանիսը դեռ կընկնեն դեսին:
Ցեվ կուղեկցեն մեր մեծ յերթին
Դեռ քրքիջները չնական.
Ջանիսը դեռ կընկնեն դեսին
Այս պայքարումը վճռական...

Կոատանվեն ճամբի կեսին
Շարքումը մեր քանիսը դեռ,
Ջանի վախկոտ ու մեղկ սրտեր
Կոատանվեն ճամբի կեսին
Ցեվ կերազեն որերը սին
Ու կըփոխեն քանի սոեր.
Կոատանվեն ճամբի կեսին
Շարքումը մեր քանիսը դեռ...

Հաղթանակովը վերջնական
Մենք կընդենք ցավ ու դավեր,
Կխորտակենք խարխուլ նավեր—
Հաղթանակովը վերջնական:
Ցերկումը մեր մեծ, վճռական—

Մենք կըփոխենք կյանք ու ավեր.
Հաղթանակովը վերջնական
Մենք կընդենք ցավ ու դավեր...

— Նկարագրեցե՛ք, թե ինչպե՞ս կատարեցիք մայիսմեկյան առնը:

Մ Ե Ր Կ Ե

Մերկեն չքավոր անդալակ գյուղացի էր, ապրում էր իր պատանի հետ: Նիհար մարդ էր, փորը մեջքին կպած, բայց նիզակի պես պինդ, ճկուն: Մի բանով միայն տչքի էր ընկնում՝ արտակարգ ուրախ էր ու ժիր:

Ինչո՞ւ դնաց դիմադրելու, արդյոք ի՞նչ էր սպասում բայշևիկներից—ինքն էլ չգիտեր:

Ցեվ մարդն էլ չէր անցնում պատկերացնելու, թե ինչ պիտի լիներ այն նոր կյանքը, վոր բերում էին նրան:

Թե՛ քաղաքից յեկողները և թե դիմադրող գյուղացիներն ուշք չդարձրին Մերկեյի վրա: Դե, գլուխը խառն ժամանակ՝ ո՞վ պիտի զբաղվեր մի ծերուկով, վորին յերիտասարդները տարօրինակ մարդ էյին համարում, իսկ ծերերն ատում էյին.

— Ցնդած ա:

Ու բանի տեղ չդրին նրան, վոչ էլ նրա արթնացած հետաքրքրության, վորով նա առաջին որերն աչքերը լայն բացած՝ գնում էր հեղկոմի չենքի կողմը և կոմիկական ժպիտով դիտում, թե ինչ են անում, կամ յերբ գնում էր ժողով ու միտինգ և ականջները սրած՝ ունկնդրում խոսողներին:

Մերկեն չատ էր գնացել քաղաք՝ իր հավերից մի յերկուսը ծախելու, բան-ման առնելու՝ տան կարիքների համար: Հազար անդամ անցել էր քաղաքի չենքերի մո-

տով, ակումբի, դպրոցների, ցիրկի, թատրոնների պատուհանների տակից, անել էր բուլվարում լրագիր կարդացողներին, նայել էր աֆիշներին, տեսել հազար ու մի քեֆ, զվարճություն, անտղել մազափնների վիարիններին դրած տարօրինակ երեքը: Բայց այդքան ժամանակ իր ամբողջ կյանքում, մոռնալով քաղաք, յերեք նրա մոքով չէր անցել, թե այդ բոլորից մի վոչ-բիրիկ բան, թատրոնի, կինոյի մի տեսարան, լրագրից մի լուր, ակումբից վորևե զվարճալի բան և վերջապես դպրոցից մի տատ երեն կարող է հանել:

Կատարյալ անդիտություն:

Վոչ երեկ դյուղում դպրոց է յեղել, վոչ էլ ուսումնական մարդ է նայել այն կողմը: Գյուղ էր, ենպես՝ իր համար, վոնց վոր դրած էր վայրի դաշտում, այնպես էլ մնացել էր վայրի, կորած, իր բախտին: Մարդիկ ծնվում, ապրում, մեռնում էյին—ուրիշ վոչինչ:

Ցեվ Մերկեն չէր մտածում, թե արդյոք կա՞ մի ուրիշ տեսակ կյանք, կլինի՞ իր համար նոր կյանք, կտեսնի՞ նոր բան, թե այնպես էլ կմեռնի, ինչպես իր պապերը, ապուպապերը, ինչպես իր չրջապատի դյուղացիք:

Ահա թե ինչո՛ւ, յերբ նա լսեց, վոր քաղաքից մարդիկ պիտի գան հեղկոմ կազմելու, դուրս թռավ տնից՝ դիմավորելու:

Ցեկողներից վոչ վոք չնկատեց նրան, բայց նա նկատեց բոլորին և սկսեց անվրեպ հետևել, թե ի՛նչ են անելու նոր մարդիկ:

Նոր մարդիկ չքավոր գյուղացի յերիտասարդներին առաջ քաշեցին և սկսեցին նոր կյանքի հիմքը դնել:

Մերկեն հետևեց, հետևեց և հանկարծ զարթնեց: Թունդ կպավ խորհրդային իշխանության: Հատարակական վորևե ժողով լիներ՝ առաջին ժողովականը նա յեր: Ներկայացում լիներ՝ դեռ մի ժամ առաջ Մերկեն կանկվեր ողայի դռանը: Ընտրական պայքարներին Մերկեն մինչև բուկը խրված՝ լողում եր մի ջին:

Ցեվ ուրախ եր, ծիծաղում եր: Մարդ կմեռներ գյուղում, կպատահեր, վոր լուրը կբերեյին Մերկեյին:

— Մերկե՛, ախը Սոսոլը մեռավ:

— Ի՞նչ անեմ. սաղ ըլիմ ես, դու, խալխը: Մեռավ՝ կթաղենք:

Բայց ամենից շատ սիրում եր, վոր գյուղում մի նոր բան եյին սկսում: Ինչ կուզի լինի, թեկուզ ծառատունկի որ: Գնում եր, իր բահով պիոներների հետ փորում, տնկիներ տնկում, յերգեր, տեղեկություններ պատմում: Պիոներները ծիծաղում եյին: Պատահում եր, վոր վոմանք էլ ձեռ եյին առնում Մերկեյին: Ջեր նեղանում:

— Ե՛, ի՞նչ տնենք. չահել են, վնաս չունի: Ի՞նչս պակսեց:

Երճիթ-ընթերցարանի անխուսափելի հաճախորդն եր: Ցերը կարդում եյին՝ խորին ուշադրությամբ, կապույտ, պստլատան աչքերը տնկում եր ընթերցողի աչքերին և կենդանի զմայլանքով լսում չինական, հնդկական, ավստրալիական բանվորների դործադուլների, քաղաքացիական կռիվների մասին, այնպես վառ տպավորությամբ համակվում եր այդ ամենով, կարծես այդ բոլորը կատարվում եր իրենց գյուղում:

— Ի՞նչ ա ասում... Ջան-Ցո-Լինը... վա՛յ, անպիտան: Հետո՞...

Հետո ուրիշ մի լուր կդար, կինոյի սրտապրությամբ բաց կաներ մի ուրիշ պատկեր—անգլիական ածխահանների դործադուլը: Միևնույն է, այդ էլ հետաքրքիր է, կենսալից, զարմանալի: Ցեվ Մերկեն—

— Կհաղթե՞ն, չե՞,—հարցնում եր սրտատրոփ՝ խրճիթվար Մադոյանին, վորը հանդստացնում եր նրան.

— Հա՛, իհարկե:

Մերկեյի դրդմամբ շատ բան եր կարդացվում խրճիթում. նրա պատճառով գյուղացիք հաճախ ստիպված եյին իրենց գյուղի չարքաշանքի, տրակտորի և այլ խընդիրների չրջանակից դուրս դալ և լսել նաև աշխարհիս կերեսին պատահած շատ դեպքերի մասին:

Մի որ եղ լիկիայան գնաց տեսնելու, թե ո՛նց են պարապում:

— Հը՞, Մերկե՛, կուզե՞ս դրագետ դառնաս,—հարցրեց Մադոյանը կատակով:

— Հե՞չ ա, գլուխ գալու բա՞ն ա:

— Դժվար չի: Ուզո՞ւմ ես՝ նստի տես:—Նստեց, մտիկ արեց՝ ինչպես են հաստակավորները գիրկդ ա-նում: Հարցրեց՝ ո՛նց են կարդում. իմացավ, որ բավական շատ տառեր պիտի ճանաչի, որ կարդա:

— Լա՛վ, ասաց, մի ենպես կարճ ձև չկա՞, որ յերկու-յերեք տառով կարդանք:

Չե՛, դժբախտաբար չկար: Մեծ ախտոտանքով կատ կացավ:

Անճնական կյանք չուներ Մերկեն:

Տունը, իր պառավը, իր արտը, որ կիսքար ցանում եր մի լծկանատերի հետ—նրան չեյին գրավում:

Նա դրսի մարդ եր: Գեղամիջի, հասարակության: Այրվում եր ցանկությամբ՝ գործ անելու, ոգնելու, բայց վոչ ուսումը, վոչ էլ հասակը...Նա յել ուժ եր տալիս ուրիշներին խրախուսելու, առաջ մղելու: Այդ եր նրա գործը: Ցեվ քիչ բան չեր: Քանիսների՞ն նա համոզեց, բերեց լիկիայան, դրագետ դարձնել տվեց, համոզեց, որ ժողովներ հաճախեն, լսեն, սովորեն:

— Իսկ յերբ մի հրահանգիչ, մի ուսուցիչ, մի՞ կոմյերիա ճառ եր ասում, յերկար բարակ ունկնդիրներին ման ածում և չեր գտնում բացատրության խոսքը, բանաձևը,—ասենք՝ մի վնասի մասին,—Մերկեն Թրի պես կտրում եր.

— Թող բան սովորեն, մեզ պես մութ չմնան:

— Մինչև սելը չհրվի՝ ճամբեն չի դրսավի:

Կամ յերբ մեկը որևե զեղծում եր գործել, գյուղացիք խոսում եյին կոոպերատիվը փակելու մասին, Մերկեն բանաձևում եր.

— Մի լվի համար կարպետը չեն վառի:

Ժողովը կենդանանում եր, և վորոշում հանվում: Մի անգամ նստած եր քարին և մտիկ եր տալիս մարզպետնի վրա մարզանքներ անող պիոներներին: Մոտ յեկան մի քանի գյուղացիներ, նստեցին:

Մերկեն թախծալի ձայնով հանկարծ հառաչեց.

— Լավ բաներ կան, ե՛, լավ բաներ:

Գյուղացիք նայեցին նրան մի քիչ հեգնոտությամբ:

— Դու յել ի՞նչ ես գլուխդ կորցրել, տնաչե՛ն,—հանդիմանեց մի յերիտասարդ գյուղացի,—եդ լավ բաները հո նոր չեն: Վարժապետին հարցրու. ասում ա՝ Ամերիկա մի ամառում քաղաք են չինում, միջին ապրում, հետո քանդում, տանում ուրիչ տեղ: Եդ լավ բաները վաղուց են յեղել:

Մերկեն գլուխը ախուր որորեց.

— Ի՞նչ ես ասում...յեղել են... չատ եյ: Բայց, մեզնից ո՞վ եր տեսել խրճիթ, դիր, ուսում, թատրոն, չարքաշան, տրակտոր... Ես ոտիկոն, ես հրաչքները: Մեզնից ո՞ւմ են ցույց տվել, յե՞րբ են մարզատեղ դրել:

Ու հառաչում եր՝ աչքերը ախուր հեռուն գցելով.

— Ե՛, ախո՛ռ... լավ բաներ արին, չատ լավ բաներ արին, մենակ մի բանում սխալվեցին:

— Սխալվեցի՞ն,—հետաքրքրությամբ մտիկ տվին կոմյերիանները...

— Բա՛, մի բանում սխալվեցին, որ ուշ արին:

— Ի՞նչն ա ուշ, ի՞նչ ես ասում:

– Բա ի՛նչ ա՝ ուշ չի...

Ու եյ չի նայում խոսակիցներին, որ տեսնի, թե ի՛նչպես են ժպտում իր այդ խոսքերի վրա: Աստիճում են, բայց հուզված ե, չի լսում: Այդ մխոքը մեխի պես ցցված ե գլխի մեջ:

Ու ախուր աչքերը հեռուները գցած՝ կրկնեց.

— Շատ ուշացան, չատ ուշացան, չատ, ե՛...Շուտ պիտի սկսեյին:

Մի աշնան յերեկո Մերկեն մեռավ: Մեռավ ամենահասարակ կերպով: Միայն մի զարմանալի բան պատահեց:

հեց. նրան թաղելու չեկան պլաներ-ներն ու կամչեր-իտա-կանները: Թաղեցին քաղաքացիական կարգով:

Այո՛, Մելիկն չեր նկատել, վոր աշխարհը լցվում է նոր կյանքերով, վորոնց համար խակի չեր ուշ չեր:

ՄԱՐՈՆ

Են գիշեր յերկնքի յերեսին ամպեր կուտակվեցին ու գյուղի տափակ խրճիթները ննջեցին խավարի մեջ:

Գյուղում վոչ մի ճրագի լույս չեր յերևում: Մենակ Յարոյենց ոթախում մի մոմ եր վառվում դողդողջուն բոցով ու փոքրիկ սեղանի չուրջը խմբված հինգ ևս քաղվեներ պղտոր ոդի եյին խմում...

— Իմ կարծիքով լավ մինոց է դառել խալիֆա Ոհանեսը, պետք է անպայման սպանել կոլխոզի նախագահին: Ներանից զենն էլ մի հարմար որ պետք է սաղ գյուղաչը պաժար տալ կալի մեջ... Եզպեսով կոլխոզը ուժից կընկնի ու են վախթը մեր արտերը մեզ կվերադարձնեն, թե՝ առ՛ք, ցանե՛ք...—Եսպես խոսեց գյուղի տերտերն ու վերջին բառի հետ կոնձեց մի բաժակ ոդի:

— Չուր ա, մեզ կուտան այդ անիծյալները. գրանց հախիցը ուրիչ տեսակ գալ չի լինի... Ինձ սասում են՝ հին դել է, ուրիչներին չահագործում է... Բա խո ձեզ նման անոթի չուն չեմ դառնալու, տեր Վռամի խոսքերից հետո խոսեց Ոհանը և ոդու բաժակները լցրեց:

Հետո բոլորը խոսեցին եղ իննդրի չուրջն ու սկսեցին ծրագիրներ կազմել:

Աչքորակներին միայն «ժողովը» վերջացավ: Ամենքը գլուխները դուրսը, գնացին խալիֆա Ոհանի ոթախից: Սև խավարի մեջ հանդավ և մոմի ժպտուն լույսը և ներսում տիրեց լռություն: Ոթախի անկյունում պառկած Մարոն ազատ չունչ քաշեց: Նա դեռ չեր քնել:

Եդ գիշեր հորդ անձրև յեկավ գյուղի տափակ անդրի ու դաշտի դեղնացած արտերի վրա:

Գիշերը հսկա մի տերտերի նման բացեց իր սև փաթալեն ու նատեց ցորենի դեղերի, կալերի ու գյուղի պորչ խրճիթների վրա:

Ժամեր անցան և գյուղը նիրհեց խավարի մեջ՝ անշունչ ու լուռ: Ոհանի տան դուռը թույլ ճռնչալով բացվեց և մի սև ստվեր խարխափելով մտավ ներս:

— Տերտե՞ր...—ձայնեց Ոհանը:

— Յես եմ...—լսվեց տեր Վռամի ձայնը:

— Սպասե՞ց...

— Սմեն բան վերջացած է:

— Կանաչեն Հովոյի ձեռները...

— Ալեքսանն ու Մինասը ցորենի դեզն են վառելու, նրանք էլ ես և կգան:

Մարոն անկողնի մեջ լսեց նրանց խոսակցությունն ու ամեն ինչ հասկացավ: Նա ուզեց բղավել, բայց ծնոտները չշարժվեցին:

Տեր Վռամն ու խալիֆա Ոհանը փսփսալով մտան դոմը, իսկ Մարոն մթության մեջ հագավ չրջազգեստն ու թռավ տանից: Ցերը վազում եր գյուղի փողոցով, մի զույգ մեծ աչքեր փայլեցին խավարի մեջ, ու հետո սրընթաց իր կողքից անցավ Հովոն:

Մոտիկից յերեաց կրակի անսահման բոցը, վորը նոր-նոր սկսել եր թեժանալ:

— Վառեցի՛ն, վառեցի՛ն... հավա՛ր...—բղավեց նա և վազը մի քարի առնելով՝ ուժասպառ փռվեց գետնին:

Վառից արյուն եր հոսում, սակայն ինքը չեր զգում այդ: Ուզում եր միայն բղավել, ասել, վոր իր հայրն և այդ բոլորն արել, բայց մի աներևույթ ձեռք ամուր փակել եր նրա բերանը, ու նա չեր կարողանում բղավել... Նա միայն լալիս եր դառը, դառը...

Գյուղը հետզհետե ալեկոծվում եր ծովի նման: Շփոթված գյուղացիք դեսի աղետի վայրն եյին վազում, շատերը դեռևս կիսամերկ. իսկ Մարոն չարունակ լսում եր նրանց աղաղակները...

— Պաժար ե, հե՛յ... պաժար...

— Ցեսե՛լ չեմ պահի ու հիմա բոլորը կասեմ...

Կես ժամից հետո հրդեհը հանդցրած եր, իսկ գորենի հսկա դեղը՝ փրկված:

Ընդարձակ կալի մեջ լուռ կանգնել էին գյուղացիները, իսկ նրանց մոտ, գետնի վրա տարածված եր Ազատու (կոլտնտեսության նախագահի) արնաշաղախ դիակը:

Սրամը խոսում եր հուզված.

— Ընկե՛ր գյուղացիներ, մեր դասակարգային թշնամին միշտ պատրաստ է ելի եսպես սև գործեր կատարելու, բայց մենք պետք է թույլ չտանք նրան...

Եսոր նրանք սպանեցին մեր կոլխոզի նախագահին ու հրդեհեցին կոլխոզի գյուղաշեն են մաքով, վոր կոլխոզը քայքայվի... Մենք չենք ների այդ սրիկաներին. մենք չուտով կպատնենք նրանց ու կտանք իրենց արժանի պատիժը...

Աչնան տերևի պես դողում էին նրա շրթունքները, և նա դեռ չարունակում եր խոսել, յերբ գյուղացիների միջից լսվեց մի թույլ ձայն.

— Սրա՛մ, նրա՛նք սպանեցին... Հերս... տերտերը.... նրանք... սպանեցին նրան...

Մթության մեջ աղմուկն ավելի չատացավ. գյուղացիները չրջապատեցին Սարոյին...

— Կոլտնտեսության թշնամիներն ո՞վքեր են և ի՞նչպես են պայքարում նրանք կոլտնտեսությունների դեմ:

— Ի՞նչպես պետք է պայքարել դասակարգային թշնամու դեմ:

ԿԱՊՈՒՅՏ ՄՉԿԻԲԸ

(«ԶՈՒՐԵՅԻԴԱ» ՊԱՏՄՎԱԾՔԻՑ)

Կապույտ Մչկիբի դիմաց կանգնած եր. մեծ քարվանատան:

Քարվանատան չինված եր բազմաթիվ տարիներ առաջ, համարյա թե Կապույտ Մչկիբի հետ միաժամանակ:—Այնտեղ եյին իջևս նում ուխտավորները, վորոնք տարին մի անգամ հեռավոր տեղերից գալիս եյին Կապույտ Մչկիբին այցելելու: Այդ որերին քարվանատան ներկայացնում եր չափազանց աչխույժ, չափազանց կենդանի մի տեսարան: Նրա բոլոր խուցերը լիքը լցվում եյին բնակիչներով, ծխանները ծխում եյին, կերակուրների հոտը բռնում եր ամբողջ թաղամասը և մինչև ուշ գիշեր անթիվ մարդկային ձայներ զժժում եյին այնտեղ...

Ուխտավորների պետքերը բավարարելու համար, թե՛ հայաթում և թե դուրսը, քարվանատարայի պատերի տակ, իրենց չուտալ չինած փայտե կրպակներն եյին բաց անում բազմաթիվ սափրիչներ, թեյավաճառներ, մանրավաճառներ, մրգավաճառներ... Շեվ յերեկոներին, յերբ սովորաբար քարվանատարան կորած եր լինում մթության մեջ, այդ որերին սակայն, փայլփլում եր նավթի բազմաթիվ լույսերի տակ: Բացի նավթի լամպերից, իրենց բոցն եյին տարածում նաև մի քանի խոշոր չիրաները, վորոնցից մեկի վրա միս եր խորովվում, մյուսի վրա պատ եր տապակվում, յերրորդի վրա՝ ապուր եր յեփվում...

Յերեկվա չորին, քարվանատարայի հսկա ընկուզենու տակ, զանազան դիրքերով պառկած՝ մրափում եյին ջորիները, մարդիկ, եչերը, փոքրիկ տղաները...

Շրջապատի այդ անակնկալի փոքրության ու դրչության մեջ Կապույտ Մչկիբն ավելի հանդիսավոր և դունագեղ եր յերևում: Նա ամենաբարձր չենքն եր և նրան եյին յենթարկվում իր չրջապատի ցեխաանների ու նրանց բնակիչները...

Հիմա քարվանսարան չկա...

Մի քանի խարխուլ բնակարաններ, մնացած նախկին քարվանսարայից, հիշեցնում են նրա անցյալ օրերի մասին:— Շենքի մեծ մասն անհետացել է յերկրի յերեսից, վորովհետև հեռվից իր ուրույն ընթացքով ծավալվող և մոտեցող նոր փողոցը քանդել է այն, իր ճանապարհը բաց անելու համար: Այժմ այդ փողոցն արդեն ավելի յև յերկարել, քարվանսարայի վրայից և՛լ ավելի առաջ և անցել: Մի շարք փողոցներ ել յնկել են մզկիթի մյուս կողմերից: Նրանք ևս իրենց հերթին քանդել են իրենց ճանապարհի վրա կանգնած բոլոր յեկած պատերը, տները, ներքանցքները...

Կապույտ Մզկիթը, վոր առաջ այնքան բարձր եր յերևում, համեմատած իր դորշ շրջապատի հետ, այժմ յեռահարկ շենքերի կողքին շատ փոքր է թվում, թեպետ բանալին մի փոքրիկ առարկա...:

Ցեվ այդ ճիշտ է: Զրկված իր նախկին վեհությունից, այժմ նա իր գոյությունը պահպանում է իբրև պատմական հնության: Ինքը և իր շրջապատն այնքան տարբեր են իրարից և այնքան խորթ...

Այժմ նրա մուտքն ազատ է բոլորի համար—հավատացյալների և վոչ հավատացյալների: Այժմ նրա հայությունն ամենաչատը մի փոքրիկ հանգստավայր է պատահական անցորդների համար, կամ ուսումնասիրության առարկա՝ ճանապարհորդների և այցելուների համար:

Թեև այժմ նույնպես մզկիթի հայթայթում կարելի յե տեսնել թեյ ծախողի հնչուտներն ու սեղանը, թեև այժմ ել նրա խուցերում ապրում են արհեստավորներ, բայց այդ բոլորն այժմ չունեն իրենց նախկին չունչը:

Իրիկնապահ եր:

Նեզ փողոցը յերկու կողմից հողե պատերով յեզերված՝ գնում եր դեպի քաղաքի դեսերը: Անճոռնություն չկար: Միայն մի թուրք բոստանչի անխռով նստած եր ավանակի վրա՝ կանչում յեր տանում քաղաքի մեջ: Գետակերից յերկու թրքուհիներ յեկան, մատն այդ փողոցը: Նրանցից մինի յերեսը բաց եր, միայն չալը ղլխին կապած, մյուսը չադրայով եր, բայց մանելով փողոցի ամայության մեջ՝ յերեսը բաց արեց:

Նիզյարն եր: Նա ուրախ քրքջալով ու կատակելով՝ դնում եր ընկերուհու հետ:

Նրանք մատն մի մեծ չենքի բարձրապարիսպ բակը: Դիմացի վոճավոր չենքի ճակատը ցույց եր տալիս, վոր այնտեղ ապրում կամ ապրել է ինչվոր մեծատուն:

Նախկին խանի տունն եր այդ, այժմ՝ թուրք կանանց ակումբը:

Նիզյարն ու ընկերուհին մատն չենքի դռնից և բարձրացան վեր: Ճննապակած աղյուսները գույնզգույն չերտերով աչքաշժացնում եյին սառնաշաքի առաստաղը:

Վերևն ազմուկ կար: Ցեվ իրոք, յերբ ներս մտան նախասենյակ, տեսան թրքուհիների և պատանիների մի բազմություն, վոր լցրել եր սենյակները ու սրահը:

— Ահա Նիզյարն ել յկավ,—խոսեց ուրախ ձայնով մի աղջիկ, վորի կարճ կարած մազերն ու բաց յերեսը չեյին թաքցնում սակայն, վոր նա թուրք կանանց խավար դասից չե:

— Հավաքույթն սկսո՞ւմ է, Զեյնա՛բ,—հարցրեց նրան Նիզյարի ընկերուհին:

— Այ՛, չուտով, չուտով, մնացին մի քանի հոգի: Դնացի՛ք սրահը:

Նիզյարն ու ընկերուհին մատան սրահը և տեղ գրավին նստարաններից մեկի վրա:

Սրահը պատարանի յեր նման: Բայց պատուհաննե-

րի դունավոր ապակիներն ու առաստաղի սպաֆիե և այլ քարերի գունդղունդ քանդակազարդերն ու վոճական իսկական թանկերը նրան հանդիսավոր տեսք էին տալիս: Դիմացը բեմն էր, մի անկյունում՝ դրատախտակը: Մի դասնաժոռը, մի դրոշակ, հայելիներ, պլակատներ, Լենինը, դիագրամներ—այս ամենն իրար կողքի՝ սրահին տալիս էին տարօրինակ աշխուժություն:

Նստարանները յերկչար էին. մի չարքը բռնել էին կանայք ու աղջիկները, մյուսը՝ յերիտասարդներն ու մի յերկու հասակավոր տղամարդիկ:

Մուլ մռլտոցը բռնել էր սրահն ու մյուս աննյակները: Ամենքն ուրախ էին ու հնդիսավոր:

Նստարանների դիմաց սեղանի յետև նստած էին թուրք կոմյերիտներ, վորոնց մեջ և մի կոմյերիտուհի: Նրանք խորհրդակցում էին:

Նստարանների կանանց չարքում լռություն եր: Հպարտ կեցվածքով աղջիկները, սուսուփուս, չադրավոր ու չալ կապած կանայք՝ լրջություն էին տալիս հավաքույթին: Տղամարդկանց չարքն ավելի աշխույժ եր: Այստեղ նստած պատանիները կատակում էին, ծիծաղում և գողունի նայում կանանց կողմը:

— Ընկերնե՛ր, բոլորն էլ յեկել են, ախմնք,—ասաց մի յերիտասարդ՝ նախագահական սեղանին: Նա մոտեցավ նախագահական սեղանին:

Նիզյարը ձգվեց և արմունկները հենելով սեղանին, աչքերը հառեց այն կողմը:

Կոմյերիտմիության բյուրոն այդ որը հավաքույթ եր կազմակերպել՝ նոր թեկնածու անդամների ընդունման կարգը բացատրելու համար:

Զեկուցող կոմյերիտուհին բացատրեց կոմյերիտմիության նպատակները ու ընդունման կարգը: Նա հնչուն ձայնով և վստահ չեշտով համոզում եր դեն դցել չադրան, սովորել, մտնելով կոմյերիտմիության շարքերը՝ լուրջ պատրաստվել՝ թեկնածուից իսկական անդամության անցնելու համար:

Նախագահը կարդաց թեկնածուների ցուցակը, վորի մեջ կար նաև Նիզյարի անունը: Սա կարմրեց և գլուխը կախեց: Անհամեմատելի կերպով նա արդեն բացել եր դեմքը:

Նիզյարը յետ նայեց բնազդաբար:

Ջարմանք, թե՞ սարսափ...յեւեւի նստարաններից մեկի յետևը նկատեց Ասադին, իր ամուսնուն, վոր դեղնած, պղնձագեմ, արձանի պես անշարժ՝ դիտում եր սրահը:

Նա դեմքը չրջեց դեպի նախագահական սեղանը, բայց ել վոչինչ չեր տեսնում: Գողի ղողացումով նա սեղմեց Ջաֆմայի ձեռքը և աչքով արեց: Ջաֆման յետ նայեց և նկատելով Ասադին՝ փսփսաց.

— Վոչինչ, մի բան կանենք, մի՛ չփոթվի:

— Լավ չեղավ,—չընկայ Նիզյարը,—ի՞նչ պետք եր եստեղ գալը...

— Չենց մի անգամ թող ամեն բան իմանա, վերջը նա դնա,—ասաց Ջաֆման վճռական ձայնով:

Նիզյարը բնազդորեն յերեսը կիսով չափ ծածկեց ու կծկվեց: Իր անելիք քայլերը—չադրան դցելը և կոմսոմոլ մտնելը, վոր հետևից, Ասադի բացակայությանը, նրան հետ եյին թվում, այս րոպեիս բարձր ժայռի պես կանգնեցին նրա առջև՝ իրրև մի անհաղթելի ճանապարհ:

Թե ինչ եր կատարվում չուրջը, չեր լսում: Նա միայն զգում եր իր սրտի բաբախոցը:

Ջահահարության տարրերը դեռ չկորված՝ նախագահը կարդաց հանկարծ Նիզյարի անունը: Ջաֆման բրդից նրա կողը, վոր վեր կենա: Նիզյարը կարկամեց, ավելի կծկվեց ու մնաց նույն դիրքում:

— Հը՛, ի՞նչ յեղավ,—հարցրեց նախագահը,—ամաչո՞ւմ ես:

Բոլորը ծիծաղեցին, և ծափահարությունը սաստկացավ:

— Ասե՛ք վեր կենա: Ընկե՛ր Բայրամ կգա, վե՛ր կացնի, մի՛ քաշվեք,—ձայն տվին դեսից դենից:

Նիզյարը լաց եր լինում

— Ե՛, չեղավ, եղպես կամսոմոլ չի լինի: Լա՛վ մատնեցե՛ք ձեր անելիքի վրա,—հանդիմանեց նախագահը և ներողամիտ ժպտաց ու սպասեց հեռևանքին:

— Դե վեր կաց, ամոթ ե: Մի՛ վախի, վեր կաց,—ասաց Ֆաթմանն: Նիդյարը աչքերը սրբեց և վեր կացավ: Ֆաթմանն ձեռը դրեց նրա չադրին, վար բռնա, բայց նախագահն ազդեցը:

— Վա՛չ, մի՛ զորեք,ի՛նքը թող բռնա՝ թե ուզում ե:

Նիդյարը դեն դրեց չադրան և յերեսը բացեց: Ծափահարությունների ատրաձը ատատկացավ կարկուի պես և պլպղրեց Նիդյարի հոգեկան խոռվքը:

ՆԱՐԳԻԶԸ

Նա քնարվեց գյուղխորհրդի անդամ, գնաց մինչև խրճռւդների համահավաստանյան համագումար:

Նա՝ Նարգիզը:

Յերեսունի մոտ մաշված մի կին եր նա՝ ճկուն մարմնով, թախծալի ժպտի տոլքերը՝ խոշոր սև աչքերում:

Համագումարի նախորյակին նա ճամբա ընկավ Յերևան իրենց հարևան Սոսոյի սայլով, վոր մի քանի գյուղացիների հետ քաղաք եր գնում:

Սոսոն հատա չրթունքներով չվացրեց մի յեղանակ, աչքերը ճամբին դրեց, հետո դլուխն որորեց և ասաց ինքն իրան.

— Կնանիք զորում են, հա՛...

Նարգիզը բատարակի կին եր: Յերբ նրան պատդամավոր եյին ընտրում՝ ամուսինն ամոթխած ժպտով նայեց իր ընկերներին.

— Ա՛յ տղա, ձե՛ռ քաշիք: Նարգիզն ի՞նչ կարա անի:

— Նարգիզը սարը չուռ կտա: Եդ քո բանը չի,—ձայն տվին բատարակներն ու ծափահարեցին:

— Դուք եք իմանում,—ձեռը թափ տվեց ամուսինը,—խելքս չի կտրում:

— Ընկեր Նարգի՛զ, ընկեր Նարգի՛զ...

— Լա՛վ, լա՛վ, քվեարկում եմ: Ո՞վքեր համաձայն են...

Բոլորը մի մարդու պես ձեռք բարձրացրին:

Ամուսինն էլ ձեռը բարձրացրեց:

Ցեվ ահա Նարգիզը Յերևանում ե: Տեղավորվել ե նոր հյուրանոցում և դուրսը դրոսնում ե:

Աբովյան փողոցով մարդկային բազմություն ե հոսում: Փնջվում են, քանդվում, խումբ-խումբ, մինակ անցնում անտարբեր, անուշադիր, չատերը՝ քմծիծաղը կախ:

Այդ բազմության մեջ աննկատ անցնում ե Նարգիզը՝ ածուխի ժպիտն աչքերի մեջ, արևոտ դեմքը չքնքուշ չենքից-չենք: Մեկ-մեկ դիտում ե խանութները, ցուցանակները, կանդնում և վիտրինների առջև, վոչ վոք այնքան բաներ չի նկատում, վորքան Նարգիզը: Վոչ վոք չգիտե՝ ինչ մեծ հաճույք և տյրվում նրա սրտի մեջ չնչին առարկաներն անդամ դիտելիս: Վորքան մեծ են այն նեկնելի քնքշամանները, սառչե ծաղիկների նման ապակեղենը, կտորեղենների դունագեղ չքվեժնը վիտրինների վերից վար: Բոլորը փայլուն, չքնդ, ժպտուն: Ո՞վ ե ասում, թե դրանք հատարակ բաներ են: Դրանց բոլորի մեջ ժպիտ կա, կանչ՝ դեպի նոր կյանքը, դեպի ապագան:

Նարգիզն ապրում ե, ապրում այդ բոլորը՝ չոշափող դգացումով, ֆիզիկական ախորժանքով: Ցեվ այնքան խորն ե այդ զգացումը, այդ իրերի կենդանի ապրելությունը, վոր նա խանդաղատում ե:

Աչք Նարգիզը նոր ե կյանք դուրս յեկել: Նա նոր ե գրել-կարդալ սովորել և արդե մանչ կյանքի չքնաղությունը. և ահա ազատության ծծում ե կյանքի, իրերի հաճույքը:

Վերադարձավ հյուրանոց:

Այնտեղ վերնը պատդամավոր կանանց սենյակ եյին հատկացրել: Նարգիզը որվա ուրախությունների արդյունքն՝ նեղս մտավ:

Ցերեկվա բոլորը գնացին համագումար:

Մանելով թատրոնի շենքից ներս՝ Նարգիզը զնաց, չքնեց ցուցահանդեսը, ուր դրած էին յերկրի վողջ արդյունաբերության արտադրանքները, գույնզգույն, փայլուն կոշիկներ, ծխախոտ, տեքստիլի նախշուն կտորեղեն, մարմար, սապոն, արթիկատուֆ, յերկաթեղեն, բամբակ...

Ապա, խռնված բազմության արանքով, սահեց ներս: Պատգամավորները ծեփ էին ավել սրահը, վոր գոռում էր նրանց մոլտոցից: Նարգիզը ներս մտավ ու նստեց:

Բեմը լցվեց: Համագումարը բացվեց Ինտերնացիոնալի թնդյունով, վոր արձակեց կարմիր բանակային որկեստրը պատշգամբից: Հետո լսվեցին նորընտիր նախագահության անունները, և մինչ Նարգիզը ուշքի կգար՝ ինչ վոր ծափերի մի մրրիկ թռցրեց նրան բեմ: Ծափերի կարկատի տակ՝ նստեց կարմիր սեղանի յետև և իր չուրջը տեսավ բանվոր-գյուղացի ազամարդիկ, թուրք ու յեղդի կանայք:

Բեմը չառագանել էր արյունոտ արշալույսի պես: Այնտեղ հրդեհվում էին դրոշները, վառ վարագույրներն ու սեղանը՝ կարմիր ծածկոցով:

Պատշգամբից չողչողացին չեփորների կրակները, հետո սրահում էլեկտրական կարմիր լույսի մեջ պայծառ երևս տվին հսկային կենցի լուսաթաղկները:

Ներս մտավ Անդրժողկոմխորհի նախագահը, և սրահում պատմեց վարուցանքի ծավահարության: Բանախոսները չափրնցին վոգևորությունը. ծափերի, ուռաների մրրիկի մեջ ճայլում էին՝

Տրա-տրա-տա...

Տրա-տրա-տա...

Ու բեմի, սրահի, դրոշների այս կարմիր բոցերի մեջ Անդրժողկոմխորհի նախագահը խոսում և համաչափորեն հրդեհի մասին:

Այս ամենը տեսնում, լսում և Նարգիզը և ժպտում ինչպես համեստ ծաղիկ, վոր գալս է յեկել արևերես, կարմիր թաչինակը գլխին:

Դիտե՞ նա, թե ինչ հրդեհի մեջ է այժմ...

Ժպտում է Նարգիզը, իսկ նրա չուրջը կարմիր վարագույրների հրդեհի մեջ դրոշների բոցերը ժպտում են մի ուրիշ ժպիտով: Կայծակն է ցոլում նրանց մեջ, գալարվում մեծ փոթորիկը, վոր պայթելու չե ամբողջ աշխարհի գլխին:

— Նկարագրեցեք նոր տիպերը և նոր կենցաղը, հենվելով ձեր կարդացած հոդվածների վրա:

ԳՆՈՒՄ ԵՆՔ ԼԱԳԵՐ

Շեփո՛ր, թմբուկնե՛ր...
Ալ դրոշակը վե՛ր...
—Դե, պլոներնե՛ր,
Գնում ենք լագեր:
Կտրում ենք սարեր,
Թռչում առուներ,
Թիթեռների պես
Թռչում ենք մենք վեր:
Ճամբեն կես արինք...
Հանկարծ մի նշան՝
Հանգստի հրահանգ...
Ու մի չունչ առած
Իսկույն կանգ առանք,
Ճամբից դուրս յեկանք:
Ցրվել ենք դաշտում,
Վոնց վոր մի բանակ...
Մի խումբը պառկել՝
Ծառը գլխի տակ.
Շատը նստել է,
Կոչիկն է հանել...
Ու թմբուկ, փողեր,
Սառ ջրի կարոտ՝
Առուն են իջել,

Լվաջվում արագ,
Ինում անհամբեր...
Հանկարծ մի նշան՝
Շարվելու հրահանգ...
Շտաբն էլ փոշոտ·
Պատրաստ են շարքեր...
Ու թմբուկ վաղեր,
Կանչում են, հնչում.
— Դե՛, սլիոններնե՛ր,
Ցեղե՛ք մի չա պատրաստ—
Ալ պրոլետը վե՛ր,
Գնում ենք լազեր:

— Պատմեցեք ձեր հիշողությունները լազերի մասին.
ա. ինչպես հավաքվեցիք և գնացիք.
բ. կյանքը լազերում.
գ. վերադարձը լազերից:

ՃԱՄԲԱՐԻ ԳԻՇԵՐԸ

Խարույկը զվարթ բոց և արձակում,
Ցեվ ճթճթում են փայտերը կեռված,
Գիշերվա մթնում տղա ու աղջիկ
Շրջապատել են խարույկը վիննած:

Զեկույց և կարդում բաղավոր Համոն.
Պիոներները լսում են նրան.
Պատկերանում են վինարարության
Նվաճումները և թափին անսահման:

Ահա բարձրացավ Մոսկնիատոպրակը
Իր հազարավոր կուռ բանվորներով,
Ահա Դնեպրոստրոյն իր տուրբիններով՝
Ուկրաինայի հրավառ սրտում:

Ահա յերկնում են տրակտորն ու ավտոն
Մեր հսկայական գործարաններից,
Սոցիալիստական գաշտերի վրա
Շարձակման յերգ են հյուսում քերքբալից:

Բայց... այնտեղ, հեռու՝ հինգ—վեցերորդում
Չեծում է մատսան՝ գյուղացի, բանվոր,
Տառապում քաղցից՝ աքսորում, բանտում,
Սովամահ լինում անզործ՝ ամեն որ:

Մանուկներն այնտեղ հիվանդ են քաղցից
Ու ընդացավով տառապում, մաշվում,
Մեռնում են նրանք, ո՛, տասնյակներով,
Ու նվագում է սերտնդը մանուկ:

Եյ վե՛ր, վտաքի՛, հե՛յ, պրոլետարիա՛տ,
Հերիք է տանել լուծը գզվելի,
Հե՛յ, սլիոնե՛րիա, պատրա՛ստ ես արդյոք
Փչրել, խորտակել բիրտ բուրժուներին:

«Պատրա՛ստ ենք»—գոռաց գունդը մանկական,
Փայլեցին դեմքեր հրավառ փայլով,
Ամեն մի հոգի կարծես բռնկվեց
Ու դարձավ խարույկ բոցավառ, ըմբոստ:

ԱՄԱՌ

Ամառ է: Կարծես կրակ է բարձրանում
գետնի յերեսից և հուրհուրատում.
վոչ չունն է հալում, վոչ ճըճին յերգում,
պորան էլ է լռել, էլ չի կռկռում:
Ամենքն էլ փախել, հով տեղ են գտել,
իրենց բներում լռել, պապանձվել,
միայն մի հատիկ մարդ է յերևում

խոր ընկած դաշտում, առվի եզերքում:
Կանգնած է մարդը արևի տակին,
վոտն ու ծունկը բաց, բահը իր ուսին.
մի չալիկ մխայն ունի նա հագին,
և մի սպիտակ թաստակ կա գլխին:
— Բայց ի՞նչ մարդ է նա և ի՞նչ է չինում,
արևի տակին ինչո՞ւ չի այրվում:
— Նա այգեպան է. բոստանն է ջրում,
սեխն ու ձմերուկը նա չի հասցնում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏՈՆ

(ԽԱՂ—ԲԵՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ)

Մեծ սենյակ–հրապարակ, վորտեղ տեղի չի ունենում մայիսմեկյան առնախատարուբթյունը: Սենյակը զարդարել փոքրիկ դրոշակներով և ծաղկաշղթաներով:

Ցերեկ բեմ կա, այն էլ զարդարել: Ետրքում, բարձրության վրա, չերկրորդ վարագույրի չետևը դնել Լենինի նկարը, կամ կիսանդրին: Ամենուհետև չերևացող ծովային տարածությունն ու չոգենավը ծածկված է առաջին վարագույրով:

Հրապարակի վրա հավաքված են խաղաթ հագած բանվորներ և բանվորուհիներ՝ կարմիր դրեհաչորով: Տանում են պլակատներ՝ հետևյալ մակագրություններով. «Մայիսի 1–ը աշխատանքի տոնն է»: «Մայիսմեկյան վողջույն բոլոր յերկրների բանվորներին»: «Ցերկրորդ հնգամյա պլանն իրագործելով՝ մենք առաջին տեղը կդրավենք ամբողջ աշխարհում»: «Բոլոր յերկրների աշխատավորների զավակները մի ընտանիք են կազմում»:

Խմբերգ

Մայիսի մեկին—
աշխատանքի տոն,
վողջույն ամենքին:
Տղե՛րք, աղջի՛կք,
վողջ բանվորներին
բոլոր վայրերի:
Բայց թողեք լողունգ՝
տանջված մարդկության—
«Բախտ, ազատություն
համաշխարհային
Մայիսն է տալիս»:

Գալիս են գեղջուկներ և գեղջկուհիներ գունավոր դրեհաններով: Նրանց պլակատի վրա՝ «Բոլորը դեպի կոլխոզ»:

Բանվորներն ուրախ վողջունում են:

Մասսայական քայլերգի հնչյունների տակ

Արտասանություն

Հիմնում ենք մենք գործարաններ,
մեքենաներ անհամար,
անդասակարգ հասարակակարգ տանում
նոր պլանով մեր հնգամյա:
Կոլեկտիվում, կոլեկտիվում
միահամուռ կաչխատենք,—
ու կատանանք հարուստ բերք:
Այն ժամանակ թշնամիք մեզ
ել չեն անի վտանգատակ.
նրանց դողալ կտեսնենք մենք,
մենք կլինենք համարձակ:
Աչխարհն ամբողջ մեր Միությունը
կնորածևի.
վողջ աշխատավոր ժողովուրդներին
մի կոչով կասենք.
«Կառուցե՛ք ազատ կյանք ու աշխատանք,
ինչպես Խ.Ս.Հ.Մ.
մենք ձեզ որինակ՝
գործեք մեր ձևի»:

Մարշի հնչյուններ դաշնամուրով: Հրապարակ են գալիս կարմիր բանակայինները: Մյուսները՝ «Ուռա՛, կեցցե՛ կարմիր բանակը: Կարմիր–բանակայինները մեր լավագույն բարեկամները և մեր պաշտպաններն են»:

Հեռվից լսվող յերգ

Ամբույխով վառենք Գալիս է ահա
դիշերները կապույտ. մի դարաշրջան,—
մենք պիոներներ ենք, միշտ յեղիր պատրաստ,
բանվորի սերունդ: պիոներ ժրաջան:

Հրապարակ են գալիս պիոներները պլակատներով. «Պրոլետարնե՛ր բոլոր յերկրների, միացե՛ք», «Կեցցե՛ մայիսի մեկը»:

Հեռվից լսվում է չոգենավի չչակի ձայնը: Բոլորը չարքի կանգնած՝ ապտասանում են.

— Հեռվից յեկած Ուրախ ու վառակ
հյուրերը են գրանք. Մայիսը առնենք,
Քանկագին հյուրերը, ազնուկ, յերգ ու տաղ
դուք բարով յեկաք: մեր շուրջը փռենք...

(Շոգենավի կողմը ձեռքով են անում): Յեկե՛ք դուք, յեկե՛ք...

Շչակի ձայնը ավելի պարզ և լավում:

Նավաստիները յերգում են: Շոգենավի ձայներ՝ «ժի, շի—ժի» (չըչյուն առաջացնող թղթերն իրար չխեղում):

Գաշում են վարպետները, յերեում և շոգենավը: Տախտակամածի վրա—չինացի, հնդիկ, յապոնուհի: Առաջամասում կանգնած են կապիտանը (նավապետը) և նավաստիները:

Ոտաբերկրյա հյուրերն ապտասանում են.

— Հեռու վայրերից Կեցցե՛ ձեր ազատ
տանջված մարդկության՝ անպուլ աշխատանք:
ամեհի յերկրի Բյուր միլիոններ
բանվոր—գյուղացուն անկար, անազատ՝
վողջո՛ւյն, ջերմ վողջույն: ձեզ են ապտում,
ձեր հույսով վառվում: կապիտալիստի—
Ոգնեցե՛ք, վոր մենք չար գահիճների
մեր դեմ կատազած ուժը խորտակենք:

Ընդհանուր խմբերգ

Բոլոր աղգերով պիտ դիմավորենք
Մայիսի մեկին.
մեր մեծ տոնն է այդ, տոնն ապատության
և աշխատանքի:

Հիմյուրերն լծնում են ավ: Փողային որկեստրի նվագ:

Պար.— Բոլոր աղգությունների ներկայացուցիչներն առանձին—առանձին պարում են համաչափ, յերգի և ծափի տակտով: Ուրախանում, ծիծաղում են: Հանկարծ մթնում է: Գաշում են 2—րդ վարագույրը: Բոլորը խմբվում են Լենինի կիսանդրու շուրջը և վառ լույսի տակ յերգում.

Հեռու չեն այն որը, յերբ բաժան—բաժան,
յերկրներն արդեն պետք է միանան,
ոսհմաններն արդի պետք է վերանան:
Մեծ առաջնորդի վեհ պատգամներով
մենք կիսատուցենք կյանքը նոր ձևով:
Մենք՝ ազատ յերկրի ազատ զավակները՝
ապատապրված վեհ աշխատանքի
խինդն ենք տարածում
ամբողջ աշխարհի բոլոր կողմերում:

Ցերգեցիկ խումբը յերգում է ինտերնացիոնալ՝ փողային նվագախմբի ձայնակցությամբ:

ՑԱՆԿ

		Եջ
1.	Կրտսեր Կայծի նամակը յերեխաներին	3
2.	Առաջինն ու վերջինը, «Լուսաբերից»	5
3.	Պատանի Ռազմիկները, Վ. Մխրաքյան	8
4.	Ուձո —	11
5.	Փոքրիկ նավաստին, «Լուսաբերից»	15
6.	Ախտատանքի յերգը, Հ. Հակոբյանի	19
7.	Յերբ թափվում եյին ջրերը	20
8.	Բանվեցին Ն. Զարյան	23
9	Վերջին խոսք	24
10.	Հրաման Թարգմ. ռուս.	31
11.	Լուսաբացին, Հ. Հակոբյան	37
12.	Ընկերները, Զարենց	38
13.	Հոկտեմբեր, Յակովլև	40
14.	Տուֆի ու յերկաթի յերգը, Վ. Գրիգորյան	44
15.	Հարվածայինների քայլերգը, Թարգմ. ռուս.	44
16.	Հայաստանի խորհրդայնացումը, Ս. Դավթյան	46
17.	Տողեր Ալլահվերդուն, Ա. Սիմոնյան	49
18.	Տոնակի ճամբին, Վ. Մելիքյան	51
19.	Զորագնում	57
20.	Լուսերը, Արագի	57
21.	*** Գ. Սարյան	61
22.	Առաջին քննությունը	62
23.	Սիբիրում	67
24.	Ռուշանի քաջափը, Ն. Զարյան	68
25.	Յեղկերուն, Հ. Թումանյան	69
26.	Բրիտահայոր Կոլումբոսը, «Լուսաբերից»	71
27.	Փոքրիկ Վալոդյան, Թարգմանություն	79

28. Լենին, Յեղ. Զարենց 82
29. Իլիչի մոտ, Քարգմ. 85
30. Ինտեռնացիոնալ 87
31. Ուղիղ ժամը 4-ին, Զօրին 88
32. Հունվարի 9-ը Մ. Գորկի 91
33. Պետնյան 1905 թվին, Սիրաֆիմովիչ . . . 95
34. Ապստամբութիւն, Քարգմ. ռուս. 99
35. Ամուրի ափերը հրետանու ծխի մէջ . . . 102
36. Թարալեգյազի սարերում 104
37. Մշուշապատ գագաթների վրա 108
38. Թշնամիները 111
39. Դալլարի լերկխանները, Քարգմ. 113
40. Հանցագործը 117
41. Նոտա Զինաստանին, Մայակովսկի 121
42. Ջոննի 122
43. Սիմպլոնի տոնելը, Մ. Գորկի 127
44. Սարիղը, Մուրա-տելի 130
45. Մուտու, Ի. Տուրգենև 136
46. Բլինաբինա, «Լուսաբերիչ» 144
47. Համբուրգի փողոցում, Ստաֆի 152
48. Գյուղացիների դատը, Ի. Տուրգենև . . . 158
49. Դարբնոց, Կարիգալ 164
50. Միխինդ, Զոլա 168
51. Հայրն ու վորդին, Քարգմ. Սերիկի . . . 169
52. Գաղտնի ժողով, Կիպլինգ 172
53. Իվանեն, վրացերենից 176
54. Սասունցի դավթի կռիվը Մսրա Մելիքի հետ-Հ. Թ. 182
55. Գութանի յերգը, Հ. Թումանյան 190
56. Գիքորը Հ. Թումանյան 191
57. Ջևոի Գազորը, Արշ. Շահնազարյան . . . 200
58. Հնգիաթը, Աբեղի 204
59. Արտը, Վ. Փափազյան 208
60. Մրնաձոր, Ա. Բակունց 211
61. Ծիրանի ոտի, Ա. Բակունց 214
62. Զորքան, Ա. Բակունց 217

63. Քոչը, Վ. Միրաքյան 220
64. Զարոյի Բախտը, Ճուղուբյան 222
65. Հաբսանիքում, Հ. Թումանյան 225
66. Գարուն, Ա. Սինայյան 227
67. Զաղրան 228
68. Գարուն, Յե. Զարենց 232
69. Գարուն, Վ. Տերյան 235
70. Մալխի մուտքը, Լ. Մինրալյան 236
71. Մալխասկան, Ա. Վշտունի 236
72. Մերկե, Դ. Դեմիրճյան 238
73. Մարոն, Ա. Շահրազ 242
74. Կապույտ մզկիթը, Մ. Արմեն 245
75. Նիգյարը, Դ. Դեմիրճյան 247
76. Նարգիզը, Դ. Դեմիրճյան 250
77. Գնում ենք լաչեր, Լ. Մ. 253
78. Ճամբարի գիշերը, Կ. Ն. 254
79. Ամառ, Ղ. Ալայան 255
80. Աչխատանքի տոն, փոխադր. 256

ՀԱՍՏ. ՀԱՆՐԱՊԵՏ. ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿՈՀԳՐԱՏ

ՀՀ Ազգային գրադարան
NL0241682

9/100

275

ՓԻՆԸ՝ 2 ռ. 50 կ.
ԿԱՋՄԸ՝ — 50 կ.

ՀԱՅՏԱՏԱՐԱՆ ԵՎ ՀԱՅԿ ԼՈՒՍԱՎՈՐՉԱԿԱՆՍՏԻ
ԿՈԼԼԵԳԻԱՑԻ ԿՈՂՄԻՑ

УЧЕБНИК

Армянского языка

IV год

гиз ССРА Эривань 1933